

Մըզաւիւնք?

Վ Է Պ

ՀԱՄԻՏԵԱՆ ԿԵԱՆՔԷ

ՇԵՂԻՆԱԿ

ՃԷԼԱԼ ՆՈՒՐԻ

Յրահանգի Բնագիւղի
Թարգմանից

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ



ԿԱՄՈՒԹՅԱՆ ՍՈՒԼԵՐՈՒՆԵՐ

894.35

ՏՂ - 97

Կ. ՊՈԼԻՏ
1911

~~Wheat~~

UP - 7952-57

2915-39,

10 NOV 2011

ՃԷԼԱԼ ՆՈՒՐԻ

894,35
8-97 47

1025
ՄԱՂԱԽԱՆՋ?

ՎԷՊ ՀԱՄԻՏԵԱՆ ԿԵԱՆՔԷ

1001
3507



1911

ԿՊԱՅՐ. ՕՆՆԻԿ ԵՎԵՐՍՅԱՆԻ ՆԵ ՈՐԻՐ
Կ. ՊՈԼԻՍ

ԱՌԱՋԱԲԱՆ

«ՄՂԶԱԻԱՆՋ?» Ի ՀԱՅԵՐԷՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ

✱

Համիտեան ժամանակաշրջանը հայկական պատմութեան ամէնէն վշտագին շրջաններէն մէկն է վտահաբար, որովհետեւ, Հայերը այդ շրջանին ունեցած են բազմաթիւ մարտիրոսներ. և մենք՝ թուրքերս՝ կրկնապէս վշտահարուած ենք՝ բռնաւորին հրահանգով գործուած բոլոր ոճիրներուն համար:

Նախ, մենք Հայերը չենք կրնար ուրիշ բան նկատել՝ բայց եթէ եղբայրներ. իրապէս՝ չափազանց սերտ խնամութիւն մը՝ լեզուի խնամութիւնը՝ մեզ կը կապէ անոնց:

Մարաջախտ Մօլթքէ, այն ամէնէն հանճարեղ ճամբորդը որ բովանդակ մեր երկիրը պտըտած ըլլայ Մահմուտ Բ. ի օրով, չէ՞ ըսած թէ՝ երկու տեսակ թուրքեր կան, իսլամ թուրքերը և քրիստոնեայ թուրքերը, — այսինքն Հայերը:

Երկրորդ, Համիտի օրով Հայերը ջարդուած են մեղսակցութիւնովը մարդոց՝ որոնք անարժանաբար կը կրէին «թուրք» անունը:

Ուրեմն Համիտեան Նըջանի կեանքէն այս վէպիս հայերէն թարգմանութիւնը կը ձօնեմ մեր Հայ եղբայրներուն:

ՃԷՍ.Ա.Ղ. ՆՈՒՐԻ



ԷՔՐԷՄ ՊԷՅԻՆ

ԾԵՐԱԿՈՒՏԱԿԱՆ, ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱՐԱՐ

Վսեմաւում եւ սրելի Վարդեւս .

Այս գիրքը «Մղձաւանջ ?» խորագիրով մկրտելի առաջ՝ ձեզի կարդացի անկէ մասեր: Չեր ձիշի ֆնկա-դասուքիւնները, ձեր ա՛յնչափ կուրք դիտողութիւնները՝ զիս մղեցին ֆակի մը կէտեր արագրելու: Չափազանց շնորհապարս եւ ձեզի եւ կը հաւանաւսկիւն ա՛յխասու-քիւնս ձօնելու մեր դպրութեան Հանրապետութեան կախազանկին:

«Մղձաւանջ ?»ը, սիրելի վարդեւս, բառին սովորա-կան առումովը վեպ մը չէ. ձիշի է որ անոր յօրինուածքը երեւակայածաւ է. հոն կայ դիւզագնունի մը, Միւրդի Իռեւ, որ կարեւոր դեր մը կը խաղայ եւ գիրքին ան-բողջ ծրագիրը վիպական է: Բայց «Մղձաւանջ ?»ով էս ուզած եւ մեր զարգացած հասարակութեան ներ-կայացնել ձշնարիս նկարագիրը, ձշնարիս դիւնագծու-քիւնը մեծ եւ չարաշուք, հանձարեղ եւ յիւսար մար-դու մը, որ, ԺԹԵ դարուն ընթացքին եւ ԻԵ դա-րուն սկիզբը՝ Հին եւ Միջին Դարերու դասական միա-պետներուն ձեռովը կրցաւ կտաւարեղ միանգամայն եւրոպական եւ ասիական կայսրութիւն մը:

Ին ձգտունս էր քերեւս՝ գրել պատմութիւնը այս արժանաւոր հակին եւ իր ստակալի ժանանակաշրջանին. բայց, աւա՛ղ, անոր հաւան, պէտք էի գեթ 30 տարի հեռանայ մեր ժանանակներէն եւ տրանսպորտութեան սակ ունենայ մեր կոսիկին Վեհապետին չարաշուք գա-

հակադարձեան վերաբերող բոլոր խորհրդաւոր, փաւե-
րակաւ եւ անթիւ փաւերաթուղթերը:

Հետեւաբար շեցի այդ ծրագիրը:

Մեծ գրագիտներ, ինչպիսի աստուածային Անաթոլ
Ծրանը, պատմութիւնը ժողովրդականացնելու արուես-
տին մեջ գերազանցած են, զայն գրական, հրատարակչ
եւ ֆինանսական դարձնելով, երբ կարելի է այս բացա-
րութիւնը գործածել:


Պե՛սք չի կայ ըսելու թէ, այդ տեսակ յաւանմու-
թիւններ չունիմ ես: Բայց ուրախ եմ՝ այս գիրքը
գրած ասելն մտնած չըրարուս հասնար թէ՛ պատմական
դեպք մը երբեմն աւելի՛ աղիկ ներկայացուած է, աւելի՛
աղիկ սպասուրել տրուած միտքերու մեջ եւ յստիս սիր-
տերու՝ Անաթոլ Ծրանի մը, Ժան Ռիշթեկի մը կողմէ,
քան վիպուած պատմագիտի մը:

Ես, Վաւենաշուֆ, անկեղծ եմ, եւ որչափ կարելի
է, խղճամիտ. այս վեպին մեջ, ինչպիսի Համիտ, գոյու-
թիւն ունէր նաեւ Միւրդի Իռեմ. մնաց որ Միւրդի
Իռեմ սակաւին կ'ապրի:

Շատ հոգս չեմ ֆինանսները: Գիրքի մը մեջ, ուր
պատմական ճշմարտութեան կ'ընկերակցուի ֆինանսը, պե՛տք
է հետեւիդ սա կ'աւան մեթոսիւն, ըրրալ ունակութիւն,
բնապաշտ, եւ այլն:

Վոյրթոն ըսած է. «Բոլոր ստեղծող շար եմ, բացի
ձանձարացուցիչ ստեղծող»: Պիտի միտքարուստ եւ ինք-
զինքն երջանիկ պիտի նկատեմ, երբ գիրքս այս վերջին
տեսակին չըրրայ:

Բէրթէվ Նիալ Մայր-Թագուհին՝ մասնաւորապէս
Մեծ-Եպարքոս Մահմուտ Նէտիմ փաշաի պաշտո-
նանկուծեանէն խլելը՝ զգալապէս տխուր վիճակ մը
կ'անէր. ինքզինքը ընկճուած կը զգար: Արդէն
անկայուն առողջութեան մը տէր էր, և՛ ո՛չ քա-
ջութիւնը, ո՛չ ալ կամքը ունէր ուժ տալու նոր
Մեծ-Եպարքոսին դէմ նիւթուած դաւերուն:

 Պիւլպիւլ Գալֆա, ինք ալ չափազանց զգած-
ուած այդ պաշտօնանկուծեանէն, մօտեցաւ իր տի-
րուհիին: Մայր-Թագուհին, խորատուգուած իր
խոկումներուն մէջ, ուշադրութիւն չընծայեց անոր,
և հակառակ իր սովորութեանը, զանց ըրաւ բարեկ-
շարժում մը ընել Արքունիքին գլխաւոր պատուա-
կալ տիկինին: Պիւլպիւլ Գալֆա յարգալիք կերպով
ծունկի եկաւ Թագուհիին առջև, որ ծնունդ տուած
էր «Աստուծոյ Շուք»ին, և քնքշօրէն անոր ոտքը
համբուրեց:

—Է՛, բարի լո՛յս, Պիւլպիւլ, ըսաւ այրի Սուլ-
թանուհին, գլուխը վեր առնելով, սիւրբուած ներ-
կայութեանէն անոր՝ զոր գորովագին կը սիրէր: Ի՛նչ
կ'ըսես այս բոլոր տակնուվրայութիւններուն: Արդ-

ևօք իմ աղուս խնդութիւնը աճնչափ կը ստատկանայ որ՝ ա՛լ չի կրնար իր բարեկամները զանազանել թշնամիներէն: Ելեր Մահմուտ Նէտիմ փաշայի ծառայութիւններուն երես կը դարձնէ: Եւ ի՞նչ կ'ըսես անոր տեղը անցնողին՝ նոր Մեծ-Եպարքոս Միթհատին համար:

Յանկարծ, զուռ բացուեցաւ: Միւրդի Իռէմ, խիստ մանկամարդ, խիստ զեզանի Չէրքէզուէի մը սրահ մտաւ և իբր նախարան սովորական եռակի բարեհներու արարողութիւնով, Մայր-Թագուէիին երկարեց հինգ զրոշմով կնքուած ծրար մը, զոր կը զրկէր խեղճ պաշտօնագուրի Մեծ-Եպարքոսը, իր ֆոնաֆին Չէրքէզուէիներէն մէկուն միջոցով:

— Պիւլպիւլ, ըսաւ Սուլթանուէին, կարդա՛ աղ նամակը և համաոտակի ըսէ ինձի— ճհ, որչա՛փ անհանգիստ կը զգամ ինքզինքս— ինչ որ այդ սիրելի մարդը կը գրէ մեզի: Որչա՛փ կը զթամ իր վրայ: Այո՛, այո՛, ճի՛շդ է, իմ զաւակս բարի չէ, այսօրերս բոլորովին խենթեցած է:

Պիւլպիւլ Գալֆա, որ նախապէս իր հրահանգները ստացած էր, մեծ հանդարտութիւնով կարդաց Եպարքոսին աղերսագիրը, բողոքարկու և ջախջախիչ աղերսագիր մը, լեցուն զգայազունց յայտնութիւններով:

Սուլթանուէին մանկամարդ Չէրքէզուէիին Միւրդի Իռէմի հրամայեց մեղմօրէն չիել իր ոտքերը, սովորականին պէս, և Պիւլպիւլին հրամայեց ըսել իրեն թէ՛ ի՞նչ կը խնդրէր իրմէ՝ իր սիրելի և մեծ Վէզիրը:

Ահ, Վեհափառ, ըսաւ Պիւլպիւլ, Յայտնութեան մէջ ըսուածին պէս, աշխարքի վախճանին ենք հասեր: Մեր յարգելի հօճաները չա՛տ իրաւունք ունէին՝ մեզի մէկիկ-մէկիկ ցուցնելով այդ վերջին օրուան նշանները:

Բէրթէվ Նիալ մեծ Սուլթանուէին հետզհետէ կը տխրէր: Սուլթանուէին հրամայեց Միւրդի Իռէմի պատրաստել գաւաթ մը օխշանուր և անմիջապէս դալ նորէն ոտքերը չիել: Միւրդի Իռէմ հնազանդեցաւ և քանի մը վայրկեան ետքը վերադարձաւ աղերսագիրին ընթերցումը զինքը չափազանց կը հետաքրքրէր:

Գիտէ՞ք, ո՛վ իմ մեծապանծ տիրուէիս, վերսկսաւ Պիւլպիւլ, ինչո՞ւ Միթհատ փաշա Սատրաղամ անուանուած է: Ահա՛ թէ ձեր հաւատարիմ և յաւիտեան անձնուէր Վէզիրը ի՞նչ կը հաղորդէ. ան մեր Օգոստափառ Վեհապետը պիտի գրկէ իր Քաղաքային Աստիճանէն, ան պիտի ջնջէ իր բոլոր եկամուտները, և, Մահմուտ Նէտիմ փաշային պէս՝ զինքն ալ պաշտօնանկ և գահընկէց պիտի ընեն:

— Յետո՛յ:

— Յետոյ Միթհատ փաշա պիտի սպաննել տայ բոլոր իշխանները և իշխանուէիները, ձուռնուրիյիք (Հանրապետութիւն) հոչակելու համար...

— ձուռնուրիյիք ըսուածը ի՞նչ է որ...

— Տխմարութիւն, Վեհափառ, Թագաւորութիւն մը՝ առանց Թագաւորի, առանց հովիւի ոչխարներու հօտ մը, թագաւորէն աւելի զօրաւոր

Մեծ-Եպարքոսով մը, Նախագահ մը, ինչպէս կ'ըսեն :

— Եւ ո՞վ պիտի ըլլայ այդ Նախագահը :

— Չի գուշակեցի՞ք : Միթէ՞նա ի՞նչքը : Շշուկը արդէն տարածուած է . բոլոր սրճարաններուն մէջ ասոր վրայ միայն կը խօսին : Վստահարար Ֆրէնկները այս բաներուն վրայ մեզմէ աւելի տեղեկութիւն ունին :

«Օխլամուք»ը յաջողած չըլլալով հանգստացնել Սուլթանուէին, երկրորդ մը յանձնարարեց ան :

Կուրծքը կ'երևէ՞ր ջրածգօրէն և աչքերը արցունքով կը լեցուէին . բայց ջանալով պահել իր պող-արիւնը, յաջողեցաւ ինքզինքը բռնել :

Միւրդի Իռէմ ալ տխուր էր նոյնպէս և ուշադիր : Պիւլպիւլ կը շարունակէր պաշտպանել պաշտօնանկ Վէզիրը, իր խօսքերը ազգու էին և դէմքը տփուրէնած :

Փայլուն աչքերով պզտիկ թխադէմ գերուէի մը, բացաւ դուռը, մօտեցաւ Մայր-Թագուէիին և խիստ յարգալից կերպով ըսաւ անոր թէ՛ Նորին Վսեմութիւն էլչի պէյը պալատ դրկած է սքանչելի թուրքերէն խօսող եւրոպացի խիստ բարձրաստիճան տիկին մը, Սուլթանուէիին հաղորդելու համար կարեւոր խնդիր մը :

Սուլթանուէին յայտնապէս յուզուած էլչի պէյին հողածութենէն, հարցուց թէ՛ այդ տիկինը՝ Օրիորդ Բէրտիքարիս կոչուող այն եւրոպացի կինն էր՝ զոր Նորին Վսեմութիւնը միշտ Պալատ կը դրկէր :

Վրացուէին հնազանդեցաւ երկիւղածօրէն . գնաց տեղեկանալ և եկաւ ըսել Նորին Բարձրութեան թէ՛ էլչի պէյին կողմէ կեող տիկինը ճիշդ նոյն Օրիորդ Բէրտիքարիսն էր, զրաւիչ եւրոպացուէի մը, որ Անաւուտ-Քէօյցի Յոյնի մը պէս թուրքերէն կը խօսէր : Գերուէին փութացած էր արքունական մեծարանքներ ընել Օրիորդ Բէրտիքարիսի, որ իբր չնորակալութեան նշան հանդէպ ազնիւ Վրացուէիին, անոր նուիրած էր քանի մը աղամանդներով զարդարուած փերուզակէ սիրուն մատիկ մը :

Վրացուէին, կիւլ, 13 տարու աղջնակ մը, յափշտակուած, կ'ոստոստէր Օրիորդ Բէրտիքարիսի շուրջը, իր երախտագիտութիւնը յայտնելու համար :

Նորին Բարձրութիւնը՝ Օրիորդ Բէրտիքարիսը ընդունեց եւրոպական ճաշակով կահաւորուած սրահի մը մէջ, որ Վոսփորի վրայ կը նայիր : Սուլթանուէիին քով կը գտնուէին Պիւլպիւլ և Միւրդի Իռէմ :

Սուլթանուէին սովորականին համաձայն սկսած էր խօսիլ պալատին, օդին, ծոռնիներու սովորութիւններուն, նորածեւութեան, Քարա - Բուլաքի ջուրին և այլնի մասին : Մեծ առագաստանաւ մը կ'անցնէր Սարային քարափին շատ մօտէն : Սուլթանուէիին հրամանին վրայ, քովը գտնուող չորս անձերը մօտեցան պատուհանին, աւելի աղէկ տեսնելու համար առագաստանաւը : Կասկած չկար թէ՛ առագաստանաւը Քասթիմունիի ծովափներէն կու գար, որովհետեւ աստղճ բեռցած էր : Երկու-երեք

վայրկեան հտըը անհետացաւ ան, և ազնիւ Եւրոպացուէին, Օրիորդ Բէրտիքարիս, Նորին Բարձրութիւն Մայր-Թագուէին ներկայացուց՝ իր տիրոջ Էլչի պէյին յարգանքները և մեծարանքները:

— Չափազանց զգածուած Նորին Վսեմութիւն Էլչի պէյին փափկանկատ հոգածութենէն, ըսաւ Սուլթանուէին, կը մատուցանեմ իմ ամէնէն անկեղծ բարեւներս: Ան ճշմարտապէս մեծագոյն բարեկամն է Թուրքերուն: Ահ, եթէ անոր խօսքը մտիկ ընէին: Այո՛, Մեծ-Թուրքին ճշմարիտ բարեկամն է ան: Նորին Վսեմութեան պէս մեզի ազուր խորհուրդներ տուող ուրիշ Էլչի պէյ մըն ալ կայ: Երբ Էլչի պէյը իր բոլոր ուժով կը պաշտպանէր Մահմուտ Նէտիմ փաշան, զանձը լեղուն էր, ոսկիէն կը յորդէր ան: Չեր տիրոջ մէկ խորհուրդին վրայ էր որ, Օրիորդ, Մեծ-Եպարքոսը, իրը իր պետին անձնուէր և աչք-բաց պաշտօնատար մը, Էրէյլի մէջ զաւկիս ունեցած հանքերուն, ինչպէս նաև նաւերուն բոլոր ծախքերը վճարել կու տար Ծովային Նախարարութենէն և եկամուտները մեզի կը հասնէին անեղծ... Ասիկա՛, տե՛ս, անոր խելացի ըլլալուն էր. մինչդեռ աս նորին երեսէն չենք գիտեր թէ ի՞նչ պիտի պատահի: Միթհատ փաշաի ըսել ուզածը ան չէ՞ որ Սուլթանին Գանձին մէջ դահեկան մը չի կայ: Ո՞վ կընայ ատանկ բան մը ըսել: Մահմուտ Նէտիմ փաշաի վէզիրութեան օրով՝ զրամը կը յորդէր: Նախարարութեան պաշտօնակները չէին բաւեր ոսկեղրամները համբելու համար:

Բոլոր այս Չէրքէզուէիները Պետութեան վրայ դարձած կալուածներ զնած էին, առանց գրպաննունը զրամ մը հանելու: ՔԱՆ նուարուստ ևն հիմա: Անոնք 5 էն մէկ շահի եկամուտ մը ունին: Ահ, Մահմուտ Նէտիմ ասանկ բաներու զաղտնիքը զիտէր: Ան անձնուէր աչք-բաց, ասպետական էր: Աս նորը դաւաճան մըն է, անչնորճքին, խայտառակին մէկը:

— Ճիշդ ատոր համար է, յարեց Օր. Բէրտիքարիս, Բարձրագոյն Դրան մէջ անցած զարձանները, բոլոր զաւարտութիւնները ձեզի տեղեկացնելու համար է որ՝ Նորին Վսեմութիւն Էլչի պէյը, ձեր ծառան, զիս զրկեց, և ես չատ, չատ բաներ ունիմ փոելիք «այն հողին վրայ» ուր կը հանդէպն Չեր Բարձրութեան ոտքերը»: Գիտէ՞ք, Վեհափառ, թէ Միթհատ փաշան չատ նենդ նպատակներ ունի, թէ կը փորձէ ինքզինքը զիքզաղոր հոշակել:

— Ի՞նչ ըսել է զիքզաղոր:

— Չեր բարձրութիւնը վստահաբար իր ծառայէն աղէկ գիտէ թէ ի՞նչ ըսել է զիքզաղոր: Ազրայիլին նամանոց արարած մըն է ան, զժոխային անձնաւորութիւն մը: Դիքզաղորը ան է՝ որ կը հարածէ Թագաւորը, անոր աթոռը ինք կը գրաւէ, սպանել կու տայ իշխանները և սուլթանուէիները և որ...

— Չըսէ՞ք որ Տէճճայլի Թագաւորութիւնն է աղ:

— Վեհափառ, հիմա ալ դուք ինձի ներեցէք հարցնել թէ՛ ի՞նչ է Տէճճայլը:

— Տէճճայլը, սիրելի զաւակս, յարեց լըջօրէն՝

պատաւ բայց միշտ գեղանի Մայր-Սոււթմանը, դժուարագէտ արարած մըն է: Երբ աշխարհի վերջը գայ՝ ա՛ն պիտի տիրէ: Յիսուսին հակառակն է ան:

—Սաղայէլը:

—Ճի՛շդ ան: Ան իր թմբկահարներովը և նուազածուններովը բոլոր փողոցներէն պիտի անցնի, և ո՛վ որ համարձակի զայն տեսնելու համար պատուհանէն դուրս նայիլ, անմիջապէս անոր ճակտին վրայ երկու կոտոջներ պիտի բուսնին, այո՛, երկու կոտոջներ:

—Միթհատը այդ Սաղայէլը ըլլալու է, ըսաւ Օր. Բէրտիքարիս. պալատին աստղագէտին ըսննք որ՝ Միթհատին աստղը նայի անգամ մը: Վերջապէս էլչի պէյը պարտականութիւն զբաւ վրաս՝ ինդրեկ Ձեր Բարձրութենէն, որպէսզի կարելին ընէք Մահմուտ Նէտիմ փաշաի վերահաստատութեանը համար, այդ անմեղ, անկեղծ, հաւատարիմ-ճառայ Վէզիրին, ո՛չ թէ միայն Ձեր Վեհափառութեան և իր Օգոստափառ որդիին, այլ նաեւ յետին ստրուկին Անոր՝ որուն կը փոխանորդէ այսօր Մարգարէն, չնորհիւ Բարձրեալին:

—Կարծէք թէ, Օրիորդ, հաւատացեալ («միւսլման») մըն էք: Կեցցէ՛ք, կեցցէ՛ք, սիրելի որդի: Բովանդակ ազդեցութիւնս պիտի գործադրեմ, վստահ եղէք, Նորին Վեհափառութիւն՝ իմ զաւկիս մօտ, հեռաւոր նահանգ մը զրկելու համար նոր Մեծ-Եպարբոսը, սպասելով իր վերջնական դատապարտութեան. և պիտի ջանամ անմիջապէս վերադարձնել Մահմուտ Նէտիմ փաշան:

—Գիտէ՛ք, Վեհափառ, Նորին Վսեմութեան Զօրավար Իկնաթիէֆի՛ էլչի պէյին հայրենիքը՝ մուշտակեմներու երկիրն է:

—Օ՛հ, այո՛, չէ՞ որ Նորին Վսեմութիւնը քանի՛ անդամներ այդ տեսակ նուէրներ զրկած է ինձի: Անոնց մասին չափազանց չնորհապարտ եմ իրեն:

—Նորին Վսեմութիւն էլչի պէյը, Տիկին, Ձեր Վեհափառութեան զրկած է սնտուկ մը, ուր կան Ձեզի համար հինգ մուշտակներ, և բազմաթիւ առարկաներ, մատնիներ, մանեակներ, օղեր՝ Ձեր գերուհիներուն համար:

—Շնորհակալութի՛ւն, հազար չնորհակալութիւն, Օրիորդ, կ'աղաչեմ Նորին Վսեմութեան յայտնեցէք երախտագիտութիւնս: Ըսէք որ՝ անհոգ ըլլայ:

—Ի՛նչ Դեսպան, բարեկամ մեր ժողովուրդին, յարեց Պիւլպիւլ:

Օր. Բէրտիքարիս շատ մը խոնարհութիւններ ըրաւ Նորին Շնորհալի Բարձրութեան, որմէ հրաժեշտ առաւ և մեկնեցաւ Հարէմին յատուկ ձեւակերպութիւններով:

Վայրկեան մը ետքը, Նորին Բարձրութիւնը, ինչպէս նաեւ իր շուրջը գտնուողները, բացի ամենասիրուն Միւրդի Իռէմէն, մոռցած էին Պետութեան գործերը և խեղճ Մահմուտ Նէտիմ փաշան: Անոնք կը մրկէին սնտուկը բանալու փափաքէն, տեսնելու համար թէ ի՛նչ կը պարունակէ ան:

Օր. Բէրտիքարիս չէ՛ր ըսած որ ան կը պարու-

նակէր քանի մը մուշտակներ ու զանազան մանր մուշտ առարկաներ : Որչափ ազնիւ էր Օր. Բէր-տիքարիս. իրաւցնէ՛, մէկ սնտուկ մը չէ որ աեսան գաւթիթին մէջ, այլ երկուք, երեք. հէնց սնտուկ-ներ...

Սնպէր ազա, Գանդէր ազա, ճէվհէր ազա, Տիլալէր ազա, երկայնահասակ չորս սեւամորթ ներքինիներ, վերջապէս բացին զանոնք :

Աստուածս, ինչէր չէր պարունակեր ան :

Կապոյտ աղուէսի մուշտակներ, սոկիհիւս հրաշալի կերպաններ, սքանչելի «տանթէլ»ներ, գոհարեղէններով զարդարուած սքանչելաքանդակ «եւթազան» մը (վստահաբար Միթհատի գլուխը կտրելու համար) աղամանդադարդ ժամացոյց մը, «մետայ-հօն»ներ, «սամալար» մը, ծաղկանօթներ, գեղոր-ներ, խաղալիքներ և ուրիշ շատ մը առարկաներ, Հարէմի աղջիկներուն բաժնուելու սահմանուած :

Տօլմա-Պաղչէի պալատին մէջ ուրախութիւնը չափ ու սահման չունէր : Դեսպանը բոլոր խօսակցութիւններուն առարկան էր : Մինչև երկինքները կը հանէին զայն : Ի՛նչ ազնիւ, առատաձեռն Դեսպան, բարեկամ Թուրքիաի, Թուրքերուն և Մեծ-Թուրքին : Մհ եթէ միայն Մեծ-Եսպարքոս Միթհատ իր հայրենիքը Դեսպանին չափ սիրէր :

Նորին Բարձրութիւն Մայր-Թագուհին շուրջը զանուտղները համոզուած էին որ ուշ կամ կանուխ Փատիշահը Նորին Վսեմութեան՝ Ռուսիաի ազնիւ ու մեծապանծ Դեսպանին միտքը պիտի հասկնար

և պիտի վտարէր Միթհատ անուն անպիտան անձը : Մեծ-Սուլթանուհին, հմայուած զօրավարին կողմէ՛ նուիրուած ընծաներէն, ուղեց վերջին անգամ մըն ալ տեսնել զանոնք :

Մուշտակեղէնները փոխադրել տուաւ կահ-կարասիները պարպուած սենեակ մը :

Ուշադիր ակնարկով մը սկսաւ զննել զանոնք, մանաւանդ կապոյտ աղուէսի սքանչելի մուշտակները, որոնք ա՛յնչափ հազուագիւտ էին Պոլիս :

Անոնցմէ մէկը բանալով, մէջը գտաւ իր հասցեով ծրար մը : Որովհետեւ կարող չէր գիտեր, խնդրեց Պիւլպիւլէն բանալ պահարանը և ըսել իրեն թէ՛ ի՛նչ կը պարունակէր ան :

Պիւլպիւլ Գալֆա ծրարը բանալով ապշեցաւ : Մէջէն ելաւ ոտանաւոր ուղերձ մը՝ եղանակովը մէկտեղ, Նորին Բարձրութիւն Մահմուտ Նէտիմ փաշայի կողմէ, նախկին և ապագայ Մեծ-Եսպարքոս, ծառայ Նորին Բարձրութիւն Մայր-Սուլթանուհիին, իր Օգոստափառ զաւկին և նոյն իսկ «Բարձրալին Շուք»ին տան ամէնէն զղուելի արարածին :

1001
1058



Բ.

Նորին Բարձրութիւնը, Սուլթանին մայրը, երկու օրէ իվեր հիւանդ էր և անկողինի կը ծառայէր: Դեսպանը ինքն ալ հիւանդ էր: Անկասկած կապակցութիւն մը կար այս երկու մեծ անձնաւորութիւններուն հիւանդութեանը միջև:

Մար-Սուլթանուհին օրուան մէջ քանի մը անգամներ լուր առնել կուտար էլլի պէյլին մասին, որ իր կարգին չէր թերանար նոյնը ընելու հանպէպ Սուլթանուհին: Օր. Բէրտիքարիս, հետեւաբար, կիօցի դերը կը կատարէր Պալատին և Դեսպանատունին միջև:

Սուլթանուհին կանչեց Միւրդի Իոէմը. սիրուն ու նրբամարմին Չէրքէզուհին, որ իր Տիրուհիին ոտքերը չփելու արուեստին մէջ կը գերազանցէր:

— Միւրդի Իոէմ. ըսաւ Մայր-Թագուհին, քու հայրենիքիդ պատմութիւններէն մէկը գրուցէ ինձի և միանդամայն ոտքերս չփէ. թերեւս այդ կերպով կարենամ քննալ: Քու հայրենիքիդ Չէրքէզներու հայրենիքին պատմութիւնները կը նմանին իմ հայրենիքիս՝ Վրաստանի պատմութիւններուն: Անոնք իմ հայրենի օճախս կը յիշեցնեն ինձի:

Միւրդի Իոէմ հնազանդեցաւ իր Տիրուհիին, և, Հարէմներու սովորութիւններուն համաձայն, անոր պատմեց հետեւեալ պատմութիւնը.

— Վեհափառ: Կովկասի մէջ խեղճուկ գիւղ մը կար: Ռուսերն էին որ այդ վիճակին հասցուցած էին զայն: Անոնք բռնի ուզեցին զայն պարպել, որպէսզի ետքէն Խաղախներ ընակեցնեն հոն: Անոնց կողմէ գործադրուած չարչարանքի միջոցները աներեւակայիքի էին և Չէրքէզ ազգը գունդ-գունդ կը գաղթէր, զէպի իրեն աստիճական ճանչցուած երկիր մը՝ Թուրքիա: Այդ խեղճ անձերուն թշուառութիւնը աննկարագրելի էր: Զիւններուն մէջ, այդ դժբաղդները ո՛չ պատառ մը հաց ունէին՝ իրենց զաւակները սնուցանելու համար, ո՛չ հագնելիք ցնցոտի մը, ո՛չ ալ քիչ մը ղեղ՝ մաքառելու համար տենդին դէմ:

«Անոնք կը զաղթէին զէպի Օսմանցիներու երկիրը, զէպի գթութեան երկիրը, զէպի Սուլթաններու և Խալիֆաներու երկիրը: Այդ Խալիֆաները, իրենց ժողովուրդին պէս, ծանօթ էին իրենց առատագուծ նկարագիրով. անոնք նոյն իսկ հիւրընկալած էին ո՛չ միայն Իսլամներ, ինչպէս Չէրքէզներ, այլ Հրեաներ ալ, որոնք դարերէ իվեր կը չարչարուէին և կը հալածուէին սպանիական կը չարչարուէին կողմէ: Խալիֆաները հիւրընկալած էին նաև Քրիստոնեաները, Բողոմիացի Խաղախները, Հունդարացիները և Վրացիները:

«Չէրքէզներու այդ գիւղին մէջ, Վեհափառ,

ձան Միրզա անունով մէկը կար, քաջարի ծերունի մը, ազնուական սերունդէ, բայց որ ազքատ ինկած էր: Ռուսերը անոր ընդարձակ հողերէն միայն չնչին բաժին մը ձգած էին իրեն մշակելու, որով, հակառակ իր դիրքին և ընտանեկան աւանդութիւններուն, հարկադրուեցաւ ճամբայ տալ իր բոլոր ծառաներուն: Ինք, կինը և 20 տարեկան տղան՝ կ'աշխատէին մնացած արտին մէջ: Իր կինը սր մը աղջիկ մը աշխարհ բերաւ և անկողինէն չելած մեռաւ: Ծան Միրզա և որդին՝ որոնք ինքզինքնին հազիւ կը հոգային, շատ լայն չունչ մը չէ որ առին նոր ծախքերու այդ հեռանկարին առջև):

Իր յիշատակները քրքրելով՝ գերուհին չէր կրնար արցունքները զսպել և Սուլթանուհին զայն կը գնէր ուշադիր:

«Սակայն հինգ տարի նայեցան աղջկան, շարունակեց գերուհին: Մն ցեղով Ձէրքէզ էր, որովհետեւ ձան Միրզա երկրին հոչակաւոր պետերուն սերունդէն էր: Հայրը և եղբայրը որոշեցին երթալ մօտակայ քաղաքը, ուր կը գտնուէր խիտ հարուստ, խիտ առատաձեռն և ասպետական ազնուական անձնաւորութիւն մը, որ ձան Միրզա ընտանիքին վաղեմի ծանօթ մըն էր Սյզ հարուստ անձը ո՛րեւէ ժառանգորդ չունենալով, անշուշտ պիտի որդեգրէր աղջիկը. եթէ չորդեգրէր՝ գէթ կրնային զայն անոր յանձնել: Ատով ծառայ մը աւելի ունեցած պիտի ըլլար ան իր Հարէմին մէջ: Երբ ձան Միրզա հասաւ «քօնաք»ը հարուստ և

ազնուական Պէհատիր պէյի, նախահայր և («այիպ») Հաւասայեալներու Իշխան Կովկասի Սուլթան Կոչուող հոչակաւոր Շամիլի, որ հայրենիքը և ազատութիւնը զիւցազնորէն պաշտպանած էր ռուս միապետութեան դէմ, պատմեց իր հին բարեկամին՝ իր արկածները, իր գիւղին և անոր բնակիչներուն վիճակը: Իր կարգին, Պէհատիր պէյ, արտասուաթոր աչքերով ձան Միրզայի պատմեց իր ցաւերը: Երկարօրէն ծանրացաւ հարստահարիչներու վայրագութեանը վրայ, ինչպէս նաեւ վեհանձնութեանը և մեծողութեանը վրայ անոնց՝ որոնք ասպնջականութիւն ցոյցած էին խեղճ Ձէրքէզներուն՝ Մահիլի երկրին մէջ: Պէհատիր պէյ պատուի խօսք տուաւ իր զաւկին պէս մեծցնել աղջիկը, և իրը նպաստ՝ ձան Միրզայի տուաւ հարիւր ռուպլիի գումար մը Պէհատիր պէյ միտքը կը գնէր այդ աղջիկը նշանել իր թոռանը՝ Էմիր Աթէշի, հերոս Շամիլի զաւկին, ճշմարիտ ասպետ մը, վեհանձն, զարգացած և որ նիւթի արուեստին մէջ կը գերազանցէր: Զիարչաւի մէջ, իր ձիուն վրայէն կրնար թռչուն զարնել ան, գրեթէ առանց նշան աննելու, կամ, կրնար առանց կանգ առնելու՝ ժողովել ճամբուն վրայ գետեղուած հաւկիթներ. անմրցելի ձիամարդ մըն էր:

«Ձէհրա համակրելի աղջնակ մըն էր, խարտեաչ մազերով, կապոյտ աչքերով և հպարտ նայուածքով մը՝ որ կը մատնէր իր երակներուն մէջ հոսող ազնուական արիւնը:

«Պէհատիր պէյ, հարուստ և ազնուասիրտ,

հոգեւին նուիրուեցաւ Զէհրաի դաստիարակութեանը և ան իր զլխաւոր մտազբազումը եղաւ : Տղան մեծցաւ իշխանուհի մը պէս . տասերի տարեկանին , արդէն կը կարդար ու կը գրէր թուրքերէն և ֆրանսերէն : Զափաղանց երաժշտասէր , ձայնը վճիտ ու ներդաշնակ էր :

«Օր մը , Շէհիտ պէյ անունով հարուստ բայց ուսման և անշնորհք անձնաւորութիւն մը , Զահրաի ձեռքը խնդրեց : Պէհատիր պէյ ընդդիմացաւ այդ առաջարկին՝ վճռական մերժումով , և անոր հասկցուց թէ՛ Զէհրան ազնուական էմիր Աթէյին պիտի տար :

«Շէհիտ , զայրացած , Շամիլի ծնողքը՝ Պէհատիր պէյը մատնեց ոռւս ոստիկանութեան՝ իբր կովկասի թագաւորութեան թեկնածու : Ան ամբաստանեց Պէհատիր պէյը թէ՛ էմիրի հետ համախոն՝ Շամիլի գաղափարը կը հետապնդէ գաղտնարար : Պէհատիրի տունին մէջ գողունի դնել տուաւ զէնքեր և ուղւամարտիք : Պէհատիր պէյ զաւսանողութեան ենթարկուելով և վերջապէս պատերազմական ատենանին կողմէ գատապարտուելով աքտորուեցաւ Սիպերիա՝ Թօպուք . կինը ձամբան մեռաւ : էմիր Աթէյ յաջողեցաւ փախչիլ կովկասէն և Սօբում-Քայէն նաւատաւ՝ զէպի Թուրքիա

«Այն ատեն , չափազանց վրէժինդիր Շէհիտ պէյը զիմնց Զէհրաի հարազատ հօրը , զայն գնելու համար : Ընդմիջ Միրզա նախ Շէհիտի պատասխանեց թէ՛ գրեթէ որ և է իրաւունք չունէր իր աղջկան

վրայ և իէ անոր ձեռքը խնդրելու համար պէտք էր զիմնը Պէհատիր պէյի : Շէհիտ պէյ այն ատեն պատմեց Պէհատիրի արկածները և ջանաց Միրզան վախցնել ոռւս ոստիկանի մը միջոցով , զոր նախապէս զբամով սիրաշահած էր . յետոյ վշտակիր հօրը առաջարկեց հազար ոռւսպիլի ազուորիկ գումար մը , Զէհրան գնելու համար :

«Հազար ոռւսպիլ . ազ հարստութիւն մըն էր գիւղացիի մը համար : Վերջապէս հազար ընդդիմութիւններէ ետքը , ձան Միրզա հաւանեցաւ իր աղջիկը՝ Զէհրան ծախել և յետոյ զայն ամուսնացնել մեծաշուք հրոսին հետ :

«Ռուս ոստիկանը , ինչպէս նաեւ Շէհիտ պէյ , զիմեցին տեղակալ Պէհատիրի , ուզելու համար մանկամարդ աղջիկը : Այս վերջինին ընտանիքէն ոչ ոք տեղեկութիւն ունէր այս մեքենայութիւններէն : Զէհրա սկսաւ լալ , ինչպէս նաեւ ընտանիքին բոլոր անդամները : Մանկամարդ աղջիկը կը հեծկտար և գոռալ ճչելով իր ազատութիւնը կը պահանջէր : Զէհրա մերժեց նուիրուիլ թեկնածուի մը՝ որ առգակի մը ձեւերը ունէր Ո՛չ , ո՛չ , կ'ըսէր ան , չե՛մ ուզեր զայն , չե՛մ ուզեր կնութեան կրթալ այդ անսիրտին :

«Հակառակ տեղակալ Պէհատիր պէյի բողոքներուն , ոռւս ոստիկանը զայրացած , երկու անգութ ոստիկաններու օգնութիւնով՝ բռնի առնէն փախցուց Զէհրան , հակառակ իր լացին և վայնասունին . անոնք Զէհրան առաջնորդեցին անշնորհք պանդոկ մը :

«Շէհիտ պէյ ոստիկաններուն խոստացած գուժարին հաշիւը կարգադրեց և ջանաց միխթարել իր գոհը :

«Պանդուր ազտոտ որջ մըն էր, իսկ ստորնայարկը ախոտ մը : Մանկամարդ աղջիկը այդչափ դառն կեանքի մը տոկալու անընդունակ էր :

«Շէհիտ պէյի դիտաւորութիւնը նախ ամուսնանալ էր մանկամարդ Ձէհրաին հետ, բայց խորհրդածելով, գաղափարը ունեցաւ զայն շահագործելու, որովհետեւ ան գեղանի, զարգացած և մանաւանդ երաժշտագէտ էր : (Ձէհրան իրեն արժած էր 1500 ուռպի) : Սուլթաններու երկրին՝ Սթամպուլի մէջ հաւանականարար հազար ոսկի տուող կ'ըլլար այդ արարածին. հետեւարար որոշեց Պոլիս երթալ և հոն ծախել իր նշանածը :

«Շէհիտ Ձէհրան խարեց, ըսելով թէ Իսլամներու երկիրը պիտի հաստատուի և թէ հոն իրեն հետ պիտի ամուսնանանայ մեծ հանդէսով . . .

«Մանկամարդ աղջիկը վիշտէն ընկճուած, կը հալումաչէր կամաց-կամաց :

«Վարժուած գգուուելու, մեծցած հանգիստի ու փափկութեան մէջ, ան չէր կրնար տոկալ այդ թշուառ կեանքին : Զրկուած իր գիրքերէն ու նուագէն, չունէր որեւէ սիրտանք, և կը յուսահատէր : Ինչ որ մանաւանդ կը հալածէր զինքը, Շէհիտ պէյի՝ այդ անմիտ փայրենիին հետ ամուսնանալու մղձաւանջն էր, յաւիտեան կորսնցնելով էմիր Աթէշը : Երբ կը քնանար, կը մատնուէր

ամէնէն դժնդակ երազներուն : Կը տեսնէր Շէհիտ պէյը, որ կը գործէր ուսու ոստիկաններուն հետ . . . Իր անողջութիւնը օրէ-օր կը փոխուէր» :

Յուզումը կը խեղդէր ձայնը Ձէրքէզուէին . բայց Նորին Բարձրութիւնը բարեացակամ շարժումով մը կը քաջալերէր զայն շարունակելու :

«Վերջապէս, յարեց Ձէրքէզուէին, Շէհիտ և Ձէհրա այդ չարաչուք տեղէն մեկնեցան և Սեւ Ծովի նաւահանգիստներէն մէկը գացին : Հոն՝ աղի մաքսանենդութիւն ընող պզտիկ առագաստանաւ մը նստան, երթալու համար այն քաղաքը՝ ուր կը գտնուէին Սյա-Սօֆիան, Մարգարէին վերարկուն և Նշխարները :

«Ճամբորդութիւնը տաժանելի եղաւ : Սեւ Ծովը — այդ չարաչուք ծովը — փրփրած էր և փոթորիկը կ'ոռնար : Խաւար հորիզոնը ատեն-ատեն կը լուսափայլէր փայլակներէն : Փափկասուն Ձէհրան, զրկանքներէն ու վիշտէն հալումաչուած, մահուան մօտ կը զգար ինքզինքը : Հասան Սամսոն, թրքական ծովափունքին վրայ

«Ձէհրա, յոգնած, խոտլած՝ խամրած ծաղիկի մը կը նմանէր : Այդ քաղաքին մէջ տասը օրուան հանգիստէ մը ետքը, ճամբայ ելան դէպի Պոլիս : Այս անգամ ճամբորդութիւնը այնչափ տաժանելի չեղաւ :

«Վերջապէս, արշալոյսին, հասան Քալաթ, Վոսփորի մուտքը : Ձէհրա ինքզինքը աւելի լաւ կը զգար : Մածկուած հաստ զրատով մը, գունատ ու

ազազուն, նստած էր գեկին կողմը, դիտելու համար ա՛յնչափ մեծավայելուչ Վոսփորի շքեղ տեսարանը, ա՛յնչափ տարբեր կովկասի լեռներուն շքեղութենէն:

Մովի թեւ մը—իր թէ գետ մը ըլլար ան—խաղաղ ու լռակեաց, երկու ափունքներով՝ որոնք զարդարուած էին շքեղ ամառանոցներով և հին զղեակներով, կանաչագեղ բնութիւն մը, սիրուն նաւեր՝ որոնք կ'ափօսէին այդ միապաղաղ և ո՛չ թէ Սեւ-Մովի նման խոռվայոյզ ջուրը, օդին մէջ ճախրող հսկայ թռչուններ, ջուրին վրայ սահող թեթեւաչարժ նաւակներ՝ կազի նման թափանցիկ չղարչներ հազած նաւավարներով, բոլոր ասոնք կը զմայեցնէին մարկամարդ գերուհին:

«Ձէնրա շունչ առաւ և սկսու վերապրել: Իր հայրագիրին քովէն բաժանուէն իվեր՝ առաջին անգամը ըլլալով յոյսը մտաւ իր սիրտին մէջ:

«Սեւիայն, հողին տխուր էր: Կը խորհէր իր երկրին, կովկասի լեռներուն, իր հայրենի օճախին վրայ, և մանաւանդ իր սիրելի և գործագութ հօրը՝ Պէհատիր պէյի և իր նշանածին վրայ... Սկսաւ մեղմիւ լալ, դիտելով պարզուած տեսարանը Սթամպուլի, իր վեհաշուք մզկիթներով և երկնասրաց «մինարէ»ներով, մշտակապոյտ Մարմարաի հեռաւոր հորիզոնը, Ռսկեղջիւրի փախստեայ տեսարանովը: Յետոյ տեսաւ նաւահանգիստին մէջ անցողաբձր անհամար մեծ ու պզտիկ նաւերուն, մահիկը և աստղը կրող զրօշակներով, վերջապէս,

ծովին մէջտեղէն ցցուեցաւ ճերմակ աչտարակ մը, Գրգ-Գուլէսին: Այս բոլորը՝ մանկամարդ Ձէրքէզուհին համար կը կազմէր եզական ու յափտակիչ համայնապատկեր մը, երազային տեսարան մը:

«Վայրկեան մը տեսարանին գեղեցկութենէն չմոռած, ան ընկղմեցաւ իր տխուր խոկումներուն մէջ: Իրեն և իր կարծեցեալ նշանածին ուշադրութիւն զարձնող չէր ըլլար: Շէնիտ կը շատախօսէր նաւին մէջ զանուող անձերուն հետ, և իր ուսպիները կը փոխանակէր թրքական զրամներու հետ:

«Յորեկուան միջոցին, հասան Պոլիս: Թեթեւաչարժ նաւակ մը՝ զիրենք պիտի փոխադրէր Պէյիք-Թաչի նաւամատոյցը:

«Օրը ուրբաթ էր: Այն միջոցին՝ երբ նաւէն կ'ելլէին, Ձէրքէզներու և Ալպանացիներու զօրագունդեր, զօրահանդէսի համազգեստներով զգեստաւորուած, կ'անցնէին մեծ պողոտայէն, առջեւին ունենալով նուագախումբ մը, որ Սէվասթափօլի քայլերքը կը զարնէր:

«Յանկարծ, յուզուելով իր հայրենակիցները տեսնելէն, Ձէնրաի վիշտը կրկնապատկուեցաւ:

«Սուլթան Ապտիւլ-Ազիզ այդ օրը Օրթա-Բէօլի մզկիթը Սէլամլըքի կ'երթար ազօթքի: Եւ Ալպանացի և Ձէրքէզներու այդ զօրագունդերը իրեն կը հետեւէին, որովհետեւ անոնք կը վերաբերէին կայսերական անձնապահ գունդին, ինչպէս նաև օսմանցի խազախներու, վիշապակիրներու բազմաթիւ իր

սօրնիազները, բաղկացած Բոլոնիացի կամաւորներէ, որոնց օղածուի թեզանիքներով հին տարազները, մահիկով և աստղով զարդարուած ֆաշիստները՝ ամէնուն ուշադրութիւնը կը գրաւէին: Անոնք կը քալէին մահիկին քով խաչ կրող շքեղ ու պատկանելի իրենց զրօշակին տակ, զոր նուիրած էր Սուլթան Ահմէտ Գօշ (*): Եւ որ այդ ատենէն իսկը զանոնք առաջնորդած է միշտ մեր կողմը՝ մեր յաւիտենական թշնամիներուն դէմ):

.

Միւրդի Իռէմի պատմութեան ուշադիր, Նորին Բարձրութիւն Մայր-Սուլթանուհին քունը կը փախէր: Պատմութիւնը այնչափ սրտաուռ էր որ ինք ալ խեղճ աղջկան հափ կը յուզուէր:

— Այսօր շատ տխուր եմ, ըսաւ Մայր-Թագուհին Միւրդի Իռէմի, որ կը շարունակէր՝ պատմելով մէկտեղ իր պատմութիւնը՝ չփեկ իր տիրուհին ոտքերը: Պարս'պ տեղը կը վշտակրիմ, անանկ չէ, սիրելի զաւակս, որովհետեւ ասոնք բոլորը երեւակայական են. աղէկ կ'ըլլայ որ այս պարագան յիշեմ, որպէսզի զաղրիմ այնչափ վիշտ զգալէ:

Այն ատեն, Միւրդի Իռէմ, չկրնայով զսպել իր արցունքները, սկսաւ հեկեկալ, և ծունկի գալով Սուլթանուհին առջեւ, գոչեց.

— Ո՛հ, ո՛հ, ասիկա ո՛չ երեւակայական հէքեաթ

(*) Նուիրուած 1794 ին, Բոլոնիացի փախստականներու թուրքիա ապաստանած տտենս

մըն է, ո՛չ ալ քմայք մը: Այդ տարարաղը Զէհրան, Պէհատիր պէյի որդեգրուէին, որ այս միջոցին ձեր ոտքերուն առջեւ կը գտնուէի, անիկա... ո՛վ սիրեցեալ Վեհափառ, անիկա ձեր անմխիթար գերուհին է, և այն Դեսպանը զոր այնչափ կը սիրէք, մեր հարստահարիչներէն մէկն է...

Մայր-Սուլթանուհին, չափագանց յուզուած, Միւրդի Իռէմին հետ սկսաւ լալ և ողջագուրեց զայն, մխիթարելու համար հազար զգուանք չռայլելով:

Դուռը բացուեցաւ, Կիւլ Նորին Բարձրութեան կը ծանուցանէր թէ՛ Օր. Բէրաթարիս կ'ուզէր ներս գալ:

— Վռնտեցէ՛ք այդ խարերան, այդ դաւաճանը, վռնտեցէ՛ք, գոչեց Սուլթանուհին, հրամայողաբար. թող անգամ մըն ալ ոտք չդնէ ան Սուլթաններուն պալատը:

Կիւլ, տխուր և ընկճուած, դուրս ելաւ ու գոցեց դուռը, նայելով մատին վրայի փերուզակէ մատնիին, յիշատակ օտար... առատաձեռնութեան...

Գ.

Իր դաւերուն վիժիլը տեսնելով, Դեսպանը պաշտին մէջ գաղտնի հետազօտութեան մը ձեռնարկեց, Պիւլպիւլին միջոցով. կասկածեցաւ որ Միւրղի Իոէմ Մայր-Սուլթանուհին միաքին վրայ յոռի ազդեցութիւն գործած ըլլայ, իր քաղաքականութեան մեծ գիծերուն դէմ:

Տօլմա-Պաղչէի մէջ տեղեկութիւն չունէին թէ՛ դուրսը ի՞նչ կը դառնայ: Միթհատ փաշա, Մեծ-Եպարքոսը, օրէ-օր պալատին մէջ իր ազդեցութիւնը կը կորսնցնէր:

Մահմուտ Նէտիմ փաշա, թէեւ պաշտօնանկ, սակայն յարաբերութեան մէջ էր Վեհապետին հետ: Միթհատ, թէեւ կարող և իմաստուն, շատ միամիտ էր, և չէր գուշակեր իր նախորդին դաւերը, ոչ ալ այն թակարդը՝ զոր ան իրեն համար կը լարէր:

Մահմուտ Նէտիմ, օգտուելով իր յաջորդին վատահումեանէն, զայն ամէն օր աւելի կը սեղմէր չարողի և հնարամիտ դաւերու ցանցի մը մէջ, որ պատի վերջնասր Մեծ-Եպարքոսին պաշտօնանկու-

թիւնովը և Մահմուտը Սուլթանին սիրելին պիտի դարձնէր:

Պիւլպիւլ Գալֆա իրեն շատ հաւատարիմ էր. Պիւլպիւլ կը ծառայէր անոր և չէր թերանար ուշիմարար օրը-օրին տեղեկացնել իրեն՝ իր տիրոջ՝ Սուլթանին՝ արարքները և շարժումները:

Դեսպանը կ'ուզէր, ինչպէս որ ալ ըլլար, Միւրղի Իոէմը աքսորել տալ էսկի-Սարայ: Արդէն, Պիւլպիւլի յարատեւ դիմումներուն չնորհիւ, անոր հոն պատրաստել տուած էին Յ սենեակով պզտիկ յարկարածին մը: Եւ չէին արտօներ չնորհալի Չէրքէզուհին՝ մօտենալ իր ամենագօր Վեհապետին: Ապտիւ-Ազիզ, Միւրղի Իոէմի զարնուած, ատեն ատեն կանչել կու տար զայն, և հազնեհարները (պատուակալ տիկին) միշտ անոր կը պատասխանէին թէ՛ Միւրղի Իոէմ փոխանցիկ հիւանդութենէ մը վարակուած էր, տեսակ մը «էքզիմա»է:

Վերջապէս, կերակի առտու մը, տեղափոխութեան Իրատէն ելած ըլլալով, այն նաւակը՝ որ Միւրղի Իոէմը էսկի-Սարայ պիտի փոխադրէր՝ կը սպասէր Տօլմա-Պաղչէի քարափը: Չէրքէզուհին հրաժեշտ առաւ իր ընկերուհիներէն:

Յանկարծ, Մայր-Սուլթանուհին կանչել տուաւ մանկամարդ երեսանկալը: Աչքերը արցունքով լեցուած, Սուլթանուհին Միւրղի-Իոէմի խոստովանեցաւ պալատին մէջ դարձած դաւադրութիւնները, էլչի պէլին մեքենայութիւնները, նախկին Մեծ-Եպարքոսին խառնակչութիւնները: Յետոյ,

Սուլթանուհին խրատեց Միւրզի Իռէմը թէ՛ աւելի աղէկ կ'ընէր նախընտրելով երթալ երկրորդ գահաժառանգ իշխանին՝ Համիտ էֆէնտիի «քէօշկ»ը, փոխանակ խափանուելու էսկի-Սարայի մէջ, ո՛վ գիտէ քանի՛ տարիներ :

Սրդէն, իշխան Համիտ էֆէնտի քանի՛ քանի՛ անգամներ խնդրած էր Սուլթանէն՝ իրեն զրկել մէկ քանի հարձեր : Ապտիւլ-Աղիզ արդէն հրաման ըրած էր որ կայսերական կանանցի 3,500 կիններուն մէջէն ընտրեն հինգ գեռատի աղջիկներ, Համիտ էֆէնտիի օրինաւոր հարձերը ըլլալու համար :

Երկրորդ գահաժառանգը շատ մտերիմ յարաբերութիւններ ունէր Սուլթանին մօրը հետ : Իր նեղութեան վայրկեաններուն, — որմէ շատ անգամ կը բռնուէր, — ան կը դիմէր Բէրթէվ Նիսալ գատընի՛ Մայր-Սուլթանուհիին, և զայն կը շահագործէր անխնայ :

Իշխանը կը բնակէր Եւրոպական Անուշ Զուրերը՝ Բէաթ-Հանէ՛ քանի մը սենեակներով և պզտիկ պարտէզով համեստ «քէօշկ»ի մը մէջ : Հոն, գրեթէ աքսորականի կեանք մը կը վարէր :

Սուլթանը պատրաստութիւններ կը տեսնէր, հաստատուելու համար Սաւս-Սալասի մեծ «քէօշկ»ը, Անուշ Զուրերու գրաւիչ պուրակին մէջ :

Այդ գիշերը փոխանակ էսկի-Սարայ երթալու, Միւրզի Իռէմ իր չորս ընկերուհիներուն հետ, տաննակ մը ներքիններու հսկողութեանը տակ, գնաց Անուշ Զուրերը :

Հալու փափաք ունէր : Իրեն անձանօթ չէր թէ՛ իշխան Համիտ էֆէնտի բժականդիր նկարագրի տէր մէկն էր, և՛ ո՛չ մէկէն կը սիրուէր : Սուլթանը զայն չէր սիրեր, և այդ հակակրօնութենէն կը ծնէր դժպտահ և յաճախ վրդովիչ կացութիւն մը :

Միւրզի Իռէմ Տօյմա-Պաղչէի պալատին մէջ կը փայլէր՝ որչափ իր տաղանդով, նոյնչափ իր գեղեցկութիւնով : Օրիորդ Տօնժէ, Մայր-Սուլթանուհիին ծառայութեանը մէջ զանուող դաշնակի ուսուցչուհի մը, գաղտնաբար ֆրանսերէնի դաս կու տար իրեն : Միւրզի Իռէմ կը կարգար և գոց կը սորվէր դասական հեղինակները : Գիտնալով որ Օրիորդ Տօնժէ մինչև և ետքը իր քովը չպիտի մնար, իր ջանքերը կը կրկնապատկէր ու եռանդով կ'ուսանէր : Քաղաքականութեան ալ կը հետեւէր, և գաղտնօրէն, Օրիորդ Տօնժէ իրեն կը բերէր Բարիզեան մեծ պարբերականները, հանդէսները, պատկերազարդ թերթերը :

Կատարեալ երաժշտագէտ և խիստ գեղանի, Միւրզի Իռէմ Հարէմի արուեստագիտուհիներուն մէջ առաջին կարգին վրայ կը գտնուէր : Հարէմի մէջ Սուլթանին թատերախումբը շատ հետաքրքրական, շատ ինքնատիպ էր : Ճիշդ է որ, Ապտիւլ-Մէճիտի գահակալութեան օրով եղածին պէս այդ թատերախումբը կազմուած չէր էրիկ-մարդու համազգեստով զգեստաւորուած Չերքէզ և Վրացի գեռատի աղջիկներէ, բայց ան ունէր կոկիկ ու չնորհալի համազգեստ մը, պճնուած կարմիր ֆէսով

մը, որուն վրայէն կը կախուէր մեծագանգուած կապոյտ ծոպ մը: Եւ այս արուեստագէտներու խումբը՝ հիանալի կազմութիւն մը ունէր. 50 է աւելի կատարեալ շնորհալիութեան և գեղեցկութեան տէր աղջիկներ՝ իրենց տաղանդովը և հրապոյրովը իրարու հետ կը մրցէին. անոնց մէջ կը գտնուէին երգչուհիներ, պարուհիներ, ձեռնածուներ, ֆարս-կիօզներ, հտպիտներ, և այլն...

Միւրդի Իռէմ մաս չէր կազմեր այս թատերախումբին: Իբր գաշնակահարուհի, երբեմն կը նուագէր Սուլթանին: Բայց այս վերջինը, կը նախընտրէր նուագի ընկերակցութիւնով աքաղաղներու կոխը: Օր մը նոյն խօսք իր հաւնոցին աքաղաղներէն մէկը պրակած էր կայսերական Օսմանիէն աստիճանին երկրորդ կարգի պատուանշանովը: Հակառակ իր Հարէմին մէջ երեք ու կէս գուճարտակ կիներ ունենալուն, կը պատահէր որ նախընտրէր պալատին մէջ մինակ մնալ, իր սիրելիներուն հետ, քանի մը երիտասարդ տղաք, նրբացած դրանիկներ, ընդունակ միայն իրենց տէրը քիչ մը կարենալ զուարճացնելու, իր հաճոյքի վաշդկեաններուն, լաւ հագուած, բայց հասարակ մահկանացուներէ բոլորովին տարբեր կերպով... օ՛հ, այո՛, քիչ մը... կնոջականացած ձեւով...

Իրենց կարգին, Հարէմի կիներն ալ, հազար միջոցներ կը հարէին զուարճանալու: Իրենց յարկարաժիններուն մէջ խմբուած, խզուած աչխարհի հետ ամէն յարարերութենէ, անոնք ալ ունէին

ուրիշ սովորութիւններ, ուրիշ բարքեր, ուրիշ ունակութիւններ:

Ամիսը կամ երկու ամիսը անգամ մը, այս գերուհիները զուրս կ'ելլէին պտոյտ մը ընելու, կա՛մ Եւրոպական, կա՛մ Ասիական Անուշ Զուրերը: Չէ՞ որ Նորին Վեհափառութիւնը փոխառութիւններ կ'սքած էր, և շարունակ վերանորոգուող 50% հանման զինով և 10% տոկոսով փոխառութիւններ, քսանի չափ «քէօզի»եր շինելու համար Պոլիսի շրջակայքը, թէ՛ Եւրոպական և թէ՛ Ասիական ցամաքներուն վրայ: Այդ «քէօզի»երը պալատականներու պտոյտին յատկացուած էին:

Սարայլիները կը կրէին շողջողուն գոյներով աքանչկի ֆերանիներ և ձերմակ եաշնագներ, և երբ ամայի փողոցի մը մէջ նշմարէին գեղեցիկ ու շնորհալի շարժուձեւերով երիտասարդ մը, անոր կը նետէին իրենց թաշկինակները՝ իբր սիրաբանութեան նշան:

Երբեմն անոնք այդ երիտասարդը մէկ կողմ կը քաշէին, և ան ատարկան կ'ըլլար իրենց գոհիկ կատակներուն. իրենց խօսքերը նրբամիտ էին: Հարէմի մէջ ամիսներ անցընելով՝ նորանոր սրբանութիւններ կը հնարէին այդ կիները:

Երբեմն այս խեղճ արարածները Սարայլին «հագնէտար»ներուն մեղսակցութիւնովը կը փախչէին գաղտուկ, և կը պահուէին շարաթներով: Այն ատեն, անոնք կը դառնային պալատին նախկին բնակիչներուն հիւրերը. ատիկա թխնա՞ կը կոչուէր:

Աստուած գիտէ թէ այդ միջոցին ի՞նչ կ'ընէին այդ կիները՝ այդ ազատագրուածներուն քով...

Բայց Միւրդի Իռէմ ուրիշ բնաւորութեան տէր աղջիկ մըն էր: Զարգացած և պարկեշտ մեծցած, ան իր ամբողջ ժամանակը կ'անցընէր կարդալով և թղթատելով Օրիորդ Տօնժէի իրեն տուած գիրքերը: Նուրբ ու փափուկ միտքի տէր, բնականէն երազուն և ծայրայեղ զգայականութեան մը անձնատուր էր: Երբեմն կ'ատէր կեանքը, երբեմն գայն կը գտնէր աղուոր ու շահեկան: Ինչ որ զինքը կը տխրեցնէր երբեմն, այդ երազանքներուն մէջ, չկրնայ գտնելն էր բարեկամուէի մը, ընկերուէի մը՝ զինքը բոլոր սիրտովը սիրելու կարող, և որուն կարենար խոստովանիլ իր վիշտերը, կարենար բանալ իր հոգին:

Կը զգար որ ինք Հարէմի կեանքին համար պատրաստուած չէր երբեք, ո՛չ ալ ստեղծուած իրենին նման կեանք մը վարելու: Իր ժամանակին մեծ մասը կ'անցընէր բողոքատուութիւններ ընելով իր և ազատ արարածներու կեանքին միջև:

Ի՞նչ օգուտ, կ'ըսէր, այս գեղեցկութիւնը, այս դաստիարակութիւնը, այս խնամուած զարգացումը, քանի որ մարդ ինծի պէս գերի է, գերի նախ մեր քօղին տակ, յետոյ գերի պալատի մը մէջ:

Այս աշխարհը, այս երկինքը, այս երկիրը, այս ծովը, իրենց բոլոր հրաշալիքներով, կեանքը իր աղազան եռուզեռով, այս բոլորը մեզի համար չեն: Ես ա՛յնչափ ազատ եմ, որչափ թուզուն մը իր վանդակին մէջ:

Ես և իմ 3,500 նմաններս (և դեռ որչափ ուրիշներ) ուրիշ լքանի չենք ծառայեր, բայց եթէ մեր տիրոջ քմահաճոյքները գոհացնելու:

Ի՞նչ կ'ըսեմ, Սուլթանին 50 միլիոն հպատակները իր անձնական գանձը լեցնելու համար չե՞ն աշխատիր:

Ո՛չ, միայն իր անհամար հպատակները չէ՛ որ կ'աշխատին իրեն համար. իր յաջորդներուն հպատակներն ալ պիտի աշխատին Ապտիւլ-Ազիզի համար, որպէսզի դեռ դարէ մըն ալ աւելի ժամանակամիջոցի մէջ՝ կարելի ըլլայ վճարել այն պարտքերը՝ զորս կնքած է:

Այսպէ՛ս կը խորհէր Միւրդի Իռէմ՝ Նորին Բարձրութիւն Համիտ Էֆէնտիի «քէօչկ»ը գացած միջոցին:

Սիրտը ուժգնակի կը զարնէր, գէմքը տոճուէնած էր. իր արդուզարդը, որ շատ անխնամ էր, կը մասնէր իր խռովքը:

Երկու ժամէն աւելի ճամբորդեց, հասնելու համար Անուշ Զուրերու «քէօչկ»ը:

Երկրորդ գահաժառանգին մէկ («հագնէտար»)ը, որ մատակարարուէի մը երեւոյթը ունէր, ընդունեց ապագայ հինգ հարձերը:

Համիտ Էֆէնտի արդէն շատ լաւ կը ճանչնար Միւրդի Իռէմը, որովհետեւ, երկար ատենէ իվեր իր հաչուն տեղեկատուութեան պաշտօն մը հաստատած էր իր հօրեղբորը՝ Սուլթան Ապտիւլ-Ազիզի պալատին մէջ: Համիտ տեղեկութիւն ունէր Դես-

պանին և անոր միւս-եսը եզող Մահմուտ Նէտիմ փաշայի բոլոր դաւադրութիւններէն :

Այս քմահաճ և վախկոտ իշխանը, տեղեակ այն դերին՝ զոր Միւրդի Իռէմ խաղացած էր իր մեծ մօրը՝ Սուլթանուհիին քով, անհամբեր էր դայն տեսնելու :

Համիտ Էֆէնտիի պզտիկ պալատը ուրիշ պալատներու չէր նմաներ : Օրինակի համար, Տօրմա Պաղչէի մէջ, աղջիկները ե՛րբ որ ուզէին՝ կրնային հաւաքուիլ և ժամանակինն անցընել իրենց հաճոյ թուած եղանակով : Ատանկ չէր Անուշ Զուրերու «քէօչկ»ին մէջ :

Հոն, տէրը ամէն բանէ տեղեկութիւն պէտք էր ունենայ : Եթէ երկու աղջիկներ—թէեւ աղջիկները մեծ թիւ մը չէին կազմեր—քովէ-քով գային, երրորդ մը պարտաւոր էր անմիջապէս տեղեկութիւն տալ իր տիրոջը : Լրտեսութիւնը հոն գիտակցօրէն կազմակերպուած էր : Համիտ Էֆէնտի, ամբողջ պալատին մէջ, թէ կիներուն և թէ այրերուն մէջէն իր շատ մը լրտեսները և գործակալները ունէր :

Ան մտերիմ յարաբերութիւն կը մշակէր բոլոր ականաւոր անձնաւորութիւններուն, բոլոր վէզիրներուն հետ. մեծ հաճոյք կը զգար, չափազանց նրբամտութիւնով ու քաջքշուքներով, անոնց հետ քննադատելէն՝ արարքները և ընթացքը և մանաւանդ շտայլութիւնը Սուլթանին և սովորութիւնները առաջին գահաժառանգ Մուրատ Էֆէնտիի :

Համիտ Էֆէնտի հրաման ըրաւ իր «հագնէտար»ին որ՝ այդ գիշեր սովորական սուրճը մեծարել տայ Միւրդի Իռէմի միջոցով : Միւս հարձերը անկէ ետքը պիտի ընդունուէին :

Միւրդի Իռէմ մեծապէս կը սոսկար իշխանէն : «Հագնէտար»ը ինամածու կերպով և մեծ փափկանկատութիւնով վարժեցուց Միւրդի Իռէմը : Տիրոջը կողմէն իրր առաջին նուէր անոր ընծայեց կիտուածաչէն պզտիկ ոսկի ժամացոյց մը, որուն կափարիչին վրայ կար ողբացեալ Սուլթան Մէճիտի պատկերը :

Մանկամարդ աղջիկը չէր կրնար յաղթել այն վախին՝ զոր իրեն կը ներշնչէր Համիտ Էֆէնտի, որ իր աչքին ուրուականի մը տպւորութիւնը կը գործէր :

Վերջապէս, անոր տունն ոսկիէ այն պզտիկ ակօսէն՝ որով սուրճ պիտի մատուցանէր իր նոր տիրոջը :

Գնա տիրոջդ ծառայէ, ըսաւ անոր՝ «հագնէտար»ը :

— Բայց, տիկին, պատասխանեց Միւրդի Իռէմ, գաւաթին մէջ սուրճ չի կայ :

— Քալէ՛, քալէ՛, գոչեց խստաղէմ պատուակալ տիկինը :

Դուռին առջեւ այն սենեակին՝ ուր կը գտնուէր նորին Բարձրութիւնը, «հագնէտար»ը կեցուց զինքը՝ երկու մէթր հասակով ներքինի մը՝ Միւրդի Իռէմի բռնած ամանին մէջ լեցուց սեւ հեղուկը՝ որ իշխանին պիտի մատուցուէր խմելու համար :

Խոտադէմ, մեղամաղձոտ, հիւանդագին, Համիտ
Էֆէնտի ոտքի էր, հին սազրապներու արձան-
ներուն պէս: Ան առաւ սուրճի գաւաթը և ըսաւ
իր նոր գերուհիին.

— Անունդ ի՞նչ է, աղջիկս:

— Ձեր ծառան Միւրզի Իոէմ, Տէր:

— Քու ընտանեկան անունդ ինչ է:

— Չէ՛րա, Տէր:

— Գո՞հ ես այս պալատէն:

— Չափազանց դո՞հ, Տէր իմ, Աստուած պահէ

Չեզ:

— Գնա հանգստացիր այս գիշեր:

Միւրզի Իոէմ համբուրեց իշխանին վերար-
կուն և դուրս ելաւ:

Արտասովոր կերպով հմայաթափ եղած էր
Միւրզի Իոէմ:

Համիտ Էֆէնտին համակրելի չէր գտած:

«Քէօչկի»ին տեսարանը տխուր էր: «Հագնէտար»ը
սովորութիւն ըրած էր իրեն՝ գերուհիներուն խօս-
քերը տեղեկագրելու և այս վերջինները իրենց
կարգին շատ մը խօսքեր կ'ընէին պատուակալ տի-
կիներն և նոյն իսկ իշխանին հարձերուն մասին: Այս
պալատին մէջ, ամէնքը կը նմանէին իրենց տիրոջը,
բացի Միւրզի Իոէմէն և չորս նորեկներէն:

Ներքինապետը, Էնտէր Ազան ալ, գաղտնի
օտտիկանի մը ձեւերը ունէր և երկար ժամեր կ'ան-
ցընէր խոհանոցին մէջ, մօտէն հսկելու համար խո-
հարարներուն վրայ:

«Հագնէտար»ը, իշխանին հրամանին վրայ,
Միւրզի Իոէմը գետեղած էր մեծ սենեակի մը և
միւս չորսը աւելի պզտիկ սենեակի մը մէջ: Պատ-
ուակալ տիկինը առաջին գիշերը Միւրզի Իոէմի
հետ պիտի անցընէր:

Պէհատիր պէյի խեղճ աղջիկը, չափազանց ջղայ-
նացած ու գերագրգռուած, կը փափաքէր այդ
գիշերը մինակը իր խոկումներուն հետ անցընել.
փափաք ունէր լալու, անվերջ լալու:

«Հագնէտար»ը, Դօնչէ Ֆէմ Գալֆա, խորա-
մանկ, նեղամիտ և խառնակիչ պառաւ կին մը,
խարտեաչ գերուհիին հազար հարցումներ կ'ուղղէր:
Դեռատի աղջիկը սխաւ լալ: Դօնչէ Ֆէմ չի թե-
րացաւ անմիջապէս հաղորդելու իր տիրոջ. յետոյ
վերադարձաւ շարունակելու խօսակցութիւնը:
Միւրզի Իոէմ քնանալ ձեւացուց: «Հագնէտար»ը
ձեռքը աչտանակ մը, ատեն-ատեն կ'ելլէր հսկելու
հարձին հանգստութեանը:

Միւրզի Իոէմի բարկութիւնը և վիշտը սաստ-
կացան: Մէկէ աւելի անգամներ փորձութիւնը
ունեցաւ անձնասպան ըլլալու, բայց յանկարծ
կեանքը անուշ կու գար իրեն և կը հրաժարէր այդ
զաժան որոշումէն:

Պէհատիր պէյի վրայ կը խորհէր և սրտագին
կ'անիծէր զաւաճան Շէհիտը, չարագործ գերեվա-
ճառը:

— Օ՛հ, Աստուածս, կ'ըսէր, կրնամ ինքզինքիս
տէրը և սաղատ ըլլալ վերջապէս:

Ղօնչէ ֆէմ այդ գիշեր խիստ ազդու հրահանգ ունէր ընաւ չի քնանալու :

Իր կարծիքով, այդ աղջիկը ընաւ չէր յարմարեր իր տիրոջը : Անոր պէտք էին աւելի՛ միամիտ, աւելի՛ հլու աղջիկներ, և ո՛չ թէ անբացատրելի նկարագիրով սատանուէիներ, ինչպէս այդ Չէրքէզուէին, որ օտար լեզուներ կարդալ, գրել և խօսիլ գիտէր և որ ամէն բանի տեղեակ էր :

Ամբողջ այդ գիշերը, Ղօնչէ ֆէմ մէկէ աւելի անգամներ անկողինէն ելաւ՝ իշխանին քովը երթալու համար :

Համիտ էֆէնտի ինքն ալ չէր քնանար. երկու ժամը անգամ մը կլին կը փոխէր :

Միւրդի Իռէմ, իր անկողինինն մէջ, միակ մենաւոր տեղը՝ զոր կրցաւ գտնել, մինչեւ արշալոյս անիծեց ամբողջ աշխարհը. խոր զգուանքով մը կեանքին համար՝ զոր դժնդակ կը գտնէր :

Նիւրխանն, եսին այդ վերջնական և անվերազարթնեցողիչ անէացումը, իր աղանդին կը գերէր այս խեղճ տարատնկուած ծաղիկը, որ կը թարչամէր... ազատ աճիլ չկրնալուն համար. Եւ, Հնդկաստանի Փաքիրներուն պէս, պաշտեց Անէու-թիւնը և ըզձաց անոր :

4.

Անուշ Ջուրերու «քէօշի»ին դուռին առջև կառք մը կանգ առաւ. կառքին գոնակը բացուեցաւ և երեւաց Օրիորդ Տօնժէ, որ այցելութեան կու գար իր աշակերտուէիին՝ Միւրդի Իռէմի : Ներքինապետը, էնտէր աղա, դէպքը տեղեկացուց Ղօնչէ ֆէմի, որ զայն հաղորդեց էֆէնտիին :

Քանի մը վայրկեանի խորհրդածութենէ և վարանումէ ետքը, Նորին Բարձրութիւնը արտօնութիւն շնորհեց ուսուցչուէիին՝ տեսնելու իր սիրեցեալ աշակերտուէիին և նոյն իսկ նախաձայնելու անոր հետ :

Իշխանը իր նոր հարձին համար կահաւորել տուած էր պզտիկ սրահ մը : Տեղեակ ըլլալով որ Միւրդի Իռէմ դաշնակահարուէի մը և վէպերու ջերմ ընթերցող մըն էր, իշխանը չէր մոռցած մատենադարանով մը և պոչաւոր դաշնակով մը զարդարել սրահը անոր՝ որ իր հարձը պիտի ըլլար :

Հետեւաբար, Միւրդի Իռէմ իր սիրելի դաստիարակուէին Օրիորդ Տօնժէն ընդունեց իր զարդասենեակին մէջ. Հանդիպումը սրտատուչ եղաւ : Երկուքին ալ աչքերը արցունքով լեցուեցան :

Օրիորդ Տօնժէ յիսուննոց աղջիկ մըն էր . թէև զուկցերիական հպատակ , բայց ծագումով Ֆրանսացի էր : Ազնուական աղջիկ մըն էր ան : Կարող դաշնականար մը ըլլալէ զատ , օժտուած էր նաեւ նուրբ զգացումներով : Ուսուցչուհին չթերացաւ պատմելու իր սիրելի աշակերտուհիին . ինչ որ իր մեկնումէն իվեր անցած դարձած էր Տօլմա-Պաղչէի պալատին մէջ : Յետոյ իր աշակերտուհիին հարցաքննեց իր նոր կեանքին պատահարներուն մասին և անոր հարցուց թէ ի՞նչպէս կը գտնէր Էֆէնտին :

Միւրդի Իոէմ խոստովանեցաւ անոր թէ՛ չափազանց կը հիանար իր տիրոջը իմացականութեանը վրայ բայց չէր կրնար ըմբռնել այն անբացատրելի և ստորին սխալները . որոնք կ'աղարտէին այդ նուրբ և խորատես միտքը . ատիկա արդիւնքն էր անոր՝ սիրտէ և զգացումէ զուրկ ըլլալուն : Միւրդի Իոէմ ալ անոր աչքին հաճոյ էր , բայց չէր կրնար անոր նուիրուիլ հոգեւին : Անանկ կ'երեւար որ՝ կը կրասկածէր անոր խորաթափանց սրատեսութեանէն , որ կրնար թերեւս վնասել իր այսօրուան ստացատիրոջ և վաղուան ամուսինին :

Համիտ կը սիրէր իր հարճը իր հասկցած կերպով , շատ մակերեւութային կերպ մը , որ չէր կրնար զինքը արդիւի զայն սպաննելէ , իր վայրագութեան մէկ նոպային , ինքնամոռացութիւնով կամ բարբարոսութիւնով :

Նրբ որոչէր վերջ տալ զժրաղղի մը կեանքին , նրբամտութիւնը կը հասցնէր մինչև զայն նախա-

պէս բարիքներով և պատիւներով խեղդելու աստիճանին :

Անոր դաժան բնաւորութեան իր դէմքին տուած սարսափելի երեւոյթէն զատ , խեղճ Չէրքէզուհին զժնէ կը գտնէր Էֆէնտին :

Իր արծուկտուց քիթը , իր ոսկրուտ մարմինը , իր նենգաւոր նայուածքները , Միւրդի Իոէմի աչքին զայն խորշելի կը դարձնէին : Համիտ իր միտքը կարդալու ո՛րևէ առիթ չէր տար : Վիճարանիլ իրեն հետ , կը նշանակէր ճատրակ խաղալ . հազարաւոր դարձուածքներով՝ կը ջանար թափանցել իր խօսակիցին միտքին : Հետեւարար ո՛չ ոք կրնար պարծենալ անոր կարծիք մը յայտնած ըլլալը լսելուն համար : Իր խորամանկ միտքը զուրկ չէր նրբաղիտութենէ : Կը վախնար գիտութենէն , որովհետեւ անոր մէջ առաւելապէս կը գտնէր ոճիրները շացնելու և մարդիկը աւելի չարագործ դարձնելու ատաղճը :

Վերջապէս , զժրաղղ աղջիկը խոստովանեցաւ իր բարեկամուհիին թէ՛ մինչև հիմա կրցած էր հնարել հազարաւոր պատրուակներ՝ յապաղեցնելու համար իր անձնատուութիւնը Համիտ Էֆէնտիի և թէ՛ դեռ կը ջանար գտնել ուրիշ փախուստի ճամբաներ : Բայց , աւանդ , պիտի գար սակայն օր մը , երբ դէպքը չպիտի կրնար յետաձգուիլ :

— Դժբաղղ չե՛մ , ըսաւ Միւրդի Իոէմ , զժրաղղ իմ սկզբունքներուս և դատարարակութեանս ա՛յնչափ հակառակ կեանքիս մէջ : Չեր և Կովկասի իմ

ուսուցչուհիներուս չնորհիւ՝ միաքս զարգացուցի և բարոյապէս բարձրացայ, իմ անհատականութեանս ճանաչումը ունենալով: Ամբողջ այս պալատին մէջ, քիչ մը զարգացած միակ աղջիկն եմ ես: Բայց, այդ զարգացումը և բարիին ու չարին ճանաչումը ուրիշ բանի չծառայեցին՝ բայց եթէ մեծցնելու իմ դժբաղդութիւնս:

«Բարոյական նախանձախնդրութիւնները չեն յարմարի Սարային արդեւարանին: Իմ ընկերուհիներս երջանիկ են, նոյն իսկ շատ երջանիկ. որովհետեւ չեն գիտեր թէ, կայսերական պալատներուն հակա-յական պատերէն դուրս՝ կայ ազատ կեանք մը, զոր կրնային վայելել:

«Քիչ մը գգուանք վեհապետին կողմէ, քանի մը գոհարեղէններ, զգեստներ և ետքէն ալ թերեւս ամուսին մը, ահաւասի՛կ իրենց մեծագոյն փափաքը, և ինչպէս որ կը տեսնէք, իրենց փափաքները ցնորստեալութիւններ չեն...

«Բայց դուք և իմ սիրելի ուսուցչուհիներս՝ զիս դաստիարակելով, զիս վարժեցնելով կեանքի մը՝ որ չէր իմ ծագումէս ինծի վերապահուածը, զիս այս դժուրակ ճակատագիրին մասնեցիք:

«Ես ուրի՛շ կեանք մը կ'ուզեմ: Ես կ'ուզեմ՝ զայն, որովհետեւ գիտեմ որ գոյութիւն ունի ան և հազարաւոր էակներ կը վայելեն զայն. ես այդ կեանքին համար նոյն իրաւունքը ունիմ, թերեւս թշուառ կեանք մը, բայց ազատ, ազա՛տ, քանի որ ես տառապանքին երեսէն ասպտամբ մըն եմ, ըմ-

բոստ մը ճակատագիրին դէմ, հակառակ իր կամքին զայն վարող ուժերուն դէմ, դէ՛մ բնութեան՝ որ ծնունդ տուած է ինծի՝ ապրելու համար չղթա-յակապ»:

Եւ Միւրզի Իռէմ ձեռքերը կը գալարէր:

Օրիորդ Տօնժէ, լուռ, կ'ունկնդրէր իր աշակերտուհին, մեծ ուշադրութիւնով:

— Ըշմարիտ չարիք մը չէ՞ որ՝ ինծի պէս աղջիկ մը անչնորհքի մը խաղալիքը ըլլայ, ենթարկուած ըլլայ իմինիս այնչափ հակառակ բնաւորութեան մը, որ բան մի չի հասկնար իմ կեանքէս: Ինչո՞ւ, հակառակ բովանդակ կամքիս, չունիմ ո՛չ իրաւունքը, ո՛չ ալ միջոցը սիրելու, ապրելու և ճամբորդելու, ի՛մ բնաւորութիւնս և ի՛մ նկարագիրս կրող էակի մը հետ, որմէ յարգուէի և սիրուէի:

Միւրզի Իռէմ տրտմամբախիժ դէմքով մը իր անուշ ձայնը փոխելով ըսաւ. «Եթէ ինքզինքս ազատագրելու համար կազմած ծրագիրս վիժի, առանց վարանումի անճնասպան պիտի ըլլամ: Այսպէս, աւելցուող վայրի քրքիջով մը, պիտի ազատագրուիմ ամօթալի կեանքէ մը, որ կը ճնշէ իմ անճնասիրութեանս, իմ հպարտ և անասնձ հոգիիս վրայ: Ես տեսայ իշխանին՝ տասնեակ մը զեղանի վրացուհիներու կանանցի մեծ աւագանին մէջ յուշ-կապարիկի դեր կատարել և իր հարձերուն պարկ տալը: Չկլլաք երեւակայէք որ ստոր մէջ արուեստագիտական գոհացում մը կը գտնէր ան: Չգալի

տարբերութիւն մը կայ Հարէմի այդ գաղտնի տեսարաններուն և հին Յունաստանի, Ալեքսանդրիաի և Նոյն իսկ անկեալ Հռոմի տեսարաններուն միջև: Ատոր համար է որ իշխանը այլասերած է, փակուած պալատի մը մէջ, իր տրամադրութեանը տակ ունենալով հազարաւոր կիներ (աժան սէրեր՝ որոնք չեն կրնար հրապոյր մը ունենալ): միայն հրաման մը տալ կը մնար իրեն: Մինչև անգամ եթէ հրէշուծիւն մը գործէ, իր վրայ չկայ հսկող մը՝ որ կարենայ զայն քննադատել: Ան բացաբձակ կամքի տէր և ամենակարող է: Մահմուտ Նէտիմ փաշա, իր վէզիրը, մեծագործութիւն կը սեպէ փաշա, իր վէզիրը, մեծագործութիւն կը սեպէ զայն այդ բանին մէջ քաջալերել և ծափահարել:

«Թրքական առած մը կ'ըսէ թէ՛ եթէ մէկուն քառասուն օր խենթ ըսես, վերջապէս կը խենթ թե՛նայ:

«Հետեւաբար, եթէ մարդ իր բովանդակ կեանքին մէջ ո՛րեէ կշտամբանք, ո՛րեէ պարսաւ, ո՛րեէ քննադատութիւն չի լսէ՝ որո՛ւ կողմէ որ ալ ըլլայ՝ իր անձին և իր գերիվեր կազմուածքին մասին արտասովոր գաղափար մը չի կազմեր»:

Միւրդի Իռէմ, գերայուզուած, կը կակաղէր: Ան իր զայրոյթին մէջ աւելի սիրուն էր:

Էնտէր աղա մտաւ այն սալօնը՝ ուր կը գտնուէին երկու բարեկամուէիները և ընդմիջեց անոնց փոխադարձ խոստովանութիւնները: Նորին Բարձրութիւնը իրեն հրամայած էր Օրիորդ Տօնժէի հրամցնել անու - տուտի օչարակ, որ Աէրէզի

spécialité մըն էր: Անպատակ չէր իշխանին հաճոյակատարութիւնը: Երկու աղջիկները չէին խարուած. իրենց երկարատեւ խօսակցութիւնը՝ զերծ չէր եղած մեքենայութիւններէ: Իշխանը, զրգուած իր յիմարութենէն, կասկած ունէր թէ՛ անոնք կը զաւէին իր ապահովութեանը և հանգիստին՝ զէմ:

Դժբաղդաբար, էնտէր աղա, Նորին Բարձրութեան արքունիքին ներքինին, կարճամիտ արարած մըն էր. ան սենեակէն մեկնեցաւ՝ առանց բան մը կարենալ հասկնալու երկու բարեկամուէիներուն խօսքերէն:

Խիստ բնական հոգատարութիւնով մը, Օրիորդ Տօնժէ ջանաց հանգստացնել մանկամարդ աղջիկը և համակերպութեան իմաստուն յորդորներ տուաւ անոր, միանգամայն ջանալով անոր քիչ մը վստահութիւն ներշնչել ապագային համար:

— Գիտութիւնը մխիթարութիւն մըն է, ըսաւ դաստիարակուէին Միւրդի Իռէմի, զարգացէք ա՛լ աւելի, և գերութեան ձեր երկար ժամերը աւելի պիտի թեթեւան: Ուսումը միտքին համար հանգստացում մըն է, և գիրքերը, նոս՛ւ ձեր հանգիստին թշնամիները ըլլալէ, բարեկամներու տեղը պիտի բռնեն ձեր մենութեան ժամերուն մէջ, որոնք առանց անոնց շատ ունայն պիտի երեւան ձեզի:

«Մտի՛կ ըրէք խօսքիս, կ'աղաչեմ, սիրելի աղջիկս՝ Արեւելքուէին, բաղդատուելով իր Արեւմուտքի քրոջ նեա, ձեր կարծածին չափ դժբաղդ չէ:

«Հակառակ իր սահմանափակ ազատութեանը, իսլամ կինը, իրաւունքի տէսակէտով, հարիւր անգամ աւելի ազատ է Եւրոպացուհիէն. այս վերջինը, գրեթէ օրինականապէս անհատականութիւն չունի. ան միշտ և ամէն տեղ ստորադաս է իր ամուսինէն. իր ամուսինը զինքը երջանիկ ընէ՛ կամ ոչ կինը ստիպուած է հետեւելու ամուսինին, ո՛ւր որ երթայ ան, մինչեւ իսկ հեռու գէշ երկիրներ. այսպէս կը տրամադրէ մեր օրէնքը»:

«Իսլամուհիին ինքն իրեն համար կրնայ հարստութիւն մը ունենալ. կրնայ գնել, ծախել իր ստացուածքը և անոր հոգը ստանձնել. մինչդեռ Եւրոպացուհին, համաձայն օրէնքին, իր բովանդակ կեանքին ընթացքին, կը մնայ իր ամուսինին խնամակալութեանը տակ»:

Սոսակցութիւնը ընդմիջուեցաւ Միւրդի Իռէմի պզտիկ զարդասենեակէն յանկարծակի ներս մտնելովը Համիտ Էֆէնտիի: Իշխանը շատ ազնուական վարմունք մը ունեցաւ հանդէպ Օրիորդ Տօնժէի և ետանդագին գովարանեց անոր երաժշտական տաղանդը:

Օրիորդ Տօնժէ նստած էր իշխանին դէմը, մինչդեռ Միւրդի Իռէմ և Ղօնչէ Ֆէմ՝ ոտքի կը կենային, ձեռքերին կուրծքերնուն վրայ բարեւ բռնած, իբր յարգանքի նշան: Նորին Բարձրութիւնը զիջաւ նաեւ զաստիարակուհիին ներկայութեանը գովեստը ընելու անոր չնորհալի աշակերտուհիին:

Յետոյ, Համիտ Էֆէնտի խնդրեց Օրիորդ Տօն-

ժէէն, նստիլ դաշնակին առջեւ և իր ընտրանքին համաձայն՝ կտոր մը զարնել իրեն: Փափաքելով հաճոյք պատճառել իշխանին, Օրիորդ Տօնժէ արուեստագիտօրէն և մեծ ճաշակով նուագեց: Համիտ Էֆէնտի, որ կատարելապէս երաժշտութենէ կը հասկնար, ջերմագին ծափահարեց տաղանդը ճարտար երաժշտագիտուհիին:

Իր կարգին, Միւրդի Իռէմ ալ հրաւիրուեցաւ իշխանին կողմէ՝ բան մը նուագելու և երգելու: Փափկասուն Չէրքէզուհին, թէեւ նուազ հմուտ և նուազ վարժ իր ուսուցչուհիէն, գոհացուցիչ կերպով նուագեց և իր թաւ ու կուռ ձայնը հիացումով լեցուց վայրագ Էֆէնտին:

Նորին Բարձրութիւնը չկրցաւ զսպել իր խանդավառութիւնը: Իր գերուհին, իր ստացուածքը, իր առարկան եղող Միւրդի Իռէմի տաղանդը՝ քիչ մըն ալ իրն էր: Ղօնչէ Ֆէմ ատոր կը նայխանձէր: Օրիորդ Տօնժէ, ընդհակառակը, յափշտակուած էր իր աշակերտուհիին կողմէ՝ շահուած յաջողութենէն:

Համիտ Էֆէնտի իր հարձին վերջնականապէս տիրանայու փափաքէն կը մրկէր:

Չանաց, ո՛րչափ որ կրնար, հասկնալ այդ արտասովոր արարածը: Ի՞նչ տենչանքներ կրնար ունենալ Կովկասի այդ աղջիկը: Ինչո՞ւ չէր ընդուներ իր սէրը և կը խուսափէր իր զգուսնքներէն: Ատիկա առեղծուած մըն էր Անոր համար՝ որ օր մը «Երկու Յամաքներու Սուլթան» և «Երկու Ծովերու Վեհապետ» պիտի հռչակուէր:

Միւրդի Իոնէմ, ծանօթ իր քմահաճոյքներովը, յեղափոխականութեան մըն էր, խելագար մը, ինչպէս Քուրրէթ-իւլ-այն հոշակաւոր այն կիներ, որ ողջ-ողջ այրուած էր:

Համիտ էֆէնտի համակերպօրէն այս տեսութեան կը հակէր: Միւրդի Իոնէմ առանց զժուարութեան գուշակեց այդ բանը:

Նորին Բարձրութիւնը մեկնեցաւ և թողուց որ երկու կիները շարունակեն իրենց ասուլիսը:

Լայն շունչ մը առին անոնք: Համիտ էֆէնտին չէր սիրուեր ո՛չ մէկէն, ոչ խակ իր որդին՝ Սէլիմ էֆէնտինէն. վեց տարեկան տղայ մը:

— Ի՛նչպէս կը գտնէք իշխանը, ըսաւ Միւրդի Իոնէմ Օրիորդ Տօնժէի, ի՛նչ տեսակ էակ մըն է...

— Սոսկալի և այլանդակ, յայտարարեց Օրիորդը պարզօրէն, եթէ կրնամ դատել զինքը՝ հակառակ իր խոհեմ զգուշաւորութեանը:

Էնտէր աղա, իշխանին հրամանով, եկաւ ծանուցանել թէ՛ Օրիորդ Տօնժէի կառուպանը առարկելով որ օղը անձրեւի է, չի պիտի կրնար աւելի սպասել իրեն: Ստիպուեցան բաժնուել իրարմէ: Երկու բարեկամութիւնները հրաժեշտ տուին իրարու, յուզումով մը՝ զոր մեծ դժուարութիւնով կրցան ծածկել աչքերէն («հագնէտար»)ին, ներքինիին, տասնեակ մը ծառաներուն և Պալատէն ուրիշ անձերու, որոնք վրայ հասած՝ կասկածոտ կերպով իրենց զէմքը կը կարդային:

Օրիորդ Տօնժէ մեկնեցաւ և Միւրդի Իոնէմ հասկցաւ որ՝ ա՛լ զայն չպիտի տեսնէր:

Յաջորդ օրը, Նորին Բարձրութիւնը ուզեց փոխել Ձերքէզուհին սենեակը:

Առջի սենեակը մարգագետնին վրայ կը նայէր, և հոնկէ կարելի էր տեսնել «քէօչը» մտնող բոլոր կառքերը և եկող բոլոր անձերը: Ծիչդ այդ օրերը, երկրորդ գահաժառանգը բազմաթիւ բարձրաստիճան անձնաւորութիւններու կամ անոնց գործակատարներուն այցելութիւնը պիտի ընդունէր: Համիտ էֆէնտի ջանաց որ իր գերութիւն այդ տեսակցութիւններէն տեղեկութիւն չունենայ:

Միւթէրճիմ Ռիւշտի փաշաի, Միթհատ փաշաի, Հիւսէյին Ափի փաշաի մարդիկը, յաճախակի այցելութեան կու գային էֆէնտին:

Մարդ տեղեկութիւն չունէր թէ՛ անոնց հոն գալուն պատճառը ի՛նչ էր. բայց վստահաբար ընկելիք մը ունէին:

Համիտ էֆէնտի, բարենորոգչական շարժումի կեդրոնէն հեռու չլլալու համար, ստիպուած էր առժամապէս հաստատուել իր Պէշիք-ժաշի պալատին մէջ: Հոն, աւելի զիւրին և աւելի յաճախակի կրնար հազորակցել զաւարդութեան կազմակերպիչներուն, օրուան զիւրանագէտներուն և իր կուսակիցներուն և բարեկամներուն հետ:

«Քէօչը»ին աղջիկները կը կարծէին թէ՛ զեռքաւական ատեն Քէաթ-Հանէ պիտի մնային. ատոր համար իրենց զարմանքը շատ մեծ եղաւ, երբ տեղեկացան թէ՛ իշխանը յանկարծ որոշում տուած էր տեղափոխուելու:

Ե.

Կայսրութեան գործերը շատ զէջ կ'երթալին : Մահմուտ Նէտիմ փաշա, հակառակ իր յոռի համբաւին, հակառակ իր նախարարապետութեան օրով ունեցած անկարգութիւններուն, — պաշտօնապէս գող բռնուած էր, — նորէն Մեծ-Եպարքոսութեան աստիճանին բարձրացած էր :

Ասիկա, այդ վայրկեանէն, հաստատուին էր զօրավար Իկնաթիէֆի քաղաքականութեան, որ իր կառավարութեան կողմէ հրահանգ ունէր թուրքերը ոուս զիւանագիտութեան շահերուն կողմը դարձնել : Ասիկա պատճառ եղած էր որ Սուլթան Ապտիւլ-Ազիզ ժողովուրդին աչքէն իյնայ արդարապէս :

Սթամպուլի սրճարաններուն մէջ, ոսմիկ ժողովուրդին մէջ կը խօսուէր թէ՛ Վեհապետը իր երկիրը Ռուսերուն ծախած էր, թէ՛ Մեծ-Եպարքոսը իրմէ աւելի ազդեցիկ էր և զինքը վրդովող զիւանագէտները աքսորելու իրաւունքը ձեռք առած էր և կը փորձէր անմիջապէս դադրեցնել

Պետութեան սրարտաթուղթերուն տոկոսները : Կ'ամբաստանէին զինքը թէ՛ ոուս զեպանին խորհուրդին վրայ՝ հակայական փոխառութիւններ կնքած է և գաղտնարար իր տիրոջ մէկ միլիոն ոսկի տուած է : Հապա ինչ էին Հէրաէֆի, Ֆիլիպէի և Թրակիաի ապստամբութիւնները : Պուշրաւերը, կըստ ժողովուրդը, Բումեկիի մեջ կը պսակնեն մեր հայրերը, մեր եղբայրները, մեր ազգակիները . և Բարձրագոյն Դուռը չի՛ միջամտեր . . .

Իրաւցնէ՛, անիշխանութեան, ապստամբութեան, դաւադրութեան և պետական հարուածներու յաւիտենական քաղաքին՝ Պոլսի մէջ՝ յուզումը իր գազաթնադէտին հասած էր :

Աստուածարանութեան խեղճ ուսանողները, այդ ողորմուկ սօփրաները, Բումեկիցիներէն մեծ մասը, ամէն օր կը ընդվզէին կարդալով իրենց հայրենի օճախէն ստացած նամակները : Մէկուն կը գրէին թէ՛ իր հայրը ողջ-ողջ այրուած էր պուլկար Բէթքօին կողմէ . միւսին կը գրէին թէ՛ իր կինը բռնաբարուած և կախուած է թաթար-Բագարճըֆի մէջ՝ ամբարիշտ Տիմքօին կողմէ . և այս ղէպքերը ամէն օր կը շատնային և ամէն օր գայրոյթը լայն ծաւալ կը գտնէր :

Փաթիհի մեծ Մէտրէսէին (Աստուածարանութեան Համալսարան) մէջ, հազարէ աւելի «սօֆիա»-ներ հաւաքում մը ունեցան և Շէյխ-Իւլ-Իսլամ Հասան Էֆէնտիի ուղղուած պարսաւագիր մը քուէարկեցին :

Ինչպէս կ'ըլլայ որ, կը գոչէին բողոքարկու հայրենասէրները, Իսլամութեան մեծագոյն ներկայացուցիչը, ա՛ն՝ որ իր ետեւը երեք հարիւր միլիոն հաւատացեալներ ունի, ա՛ն՝ որ կրնայ Սուլթան մը գահէն վար առնել և անոր տեղ ուրիշ մը բազմեցնել, կրնայ համարձակիլ դեսպան Իկնաթիէֆէն կաշառք առնելու: Ասիկա աշխարհի վերջը եկած է ըսել է, այո՛, աշխարհի վերջը եկած է ըսել է: Եւ ըսել թէ՛ ո՛չ մէկը կը համարձակի մօտենայ Մեծ Տիրոջ, ըսելու համար ճշմարտութիւնը. այնչափ հպարտ ու մեծամիտ է ան: Ուրեմն ուրիշ միջոց չկայ. բայց եթէ քաջարար որոշում մը տալ զայն վար առնելու:

Ասոր վրայ, սօֆիստները հակայական միթիսիկ մը կազմակերպեցին, որ երկու թափօրներու պիտի բաժնուէր. մէկը պիտի երթար Մահմուտ Նէտիմ փաշաի, անկէ խստօրէն հաշիւ պահանջելու համար բոլոր անձուգարձերուն մասին. և միւսը պիտի երթար Շէյխ-իւլ-Իսլամին:

Բարձրագոյն Դրան մէջ, Նորին Բարձրութիւնը զբաղած էր պետութեան համար շատ զժուարաստար փոխառութեան պայմանագիր մը ստորագրելու:

Դրամատէրները խմբուած էին իր շուրջը և Մեծ-Նպարքօսը. կը ջանար իր $7\frac{1}{2}\frac{0}{10}$ սովորական միջնորդչէֆին վրայ՝ դեռ մէկ ութերորդի յաւելուած մըն ալ փրցնել: Երբ նշմարեց գոյնզգոյն փաթթոցներով և իրենց կանանց ու կարմիր գրօջակներով սօֆիստներու բազմութիւնը,

ինչպէս նաև անոնց ետեւէն եկող ժողովուրդը, որ կ'անարգէր, կը պօռար, կ'անիծէր, Մահմուտ Նէտիմ փաշա սեղանին վրայ թողուց թուղթերը. իր կիւքը, ծխամորճը և արագօրէն փախաւ Մեծ-Նպարքօսութեան ծածուկ մէկ զուռնէն: Վայրկեան մը իր ծառային հետ պզտիկ մզկիթին առջև կանգ առաւ և յետոյ կծիկը զրաւ՝ ահագին սարսափի մը մասնուած:

Յուցարարներուն գոհացում տալու համար, Սուլթանը պաշտօնանկ ըրաւ Մեծ-Նպարքօսը և Շէյխ-իւլ-Իսլամը:

Զօրավար Իկնաթիէֆ, խիստ ազնիւ և խիստ թանկագին Սէֆիր, այս արդիւնքին համար զայրացած, ամէն կողմ լուր տարածել կու տար թէ՛ Եւրոպացիներու կեանքը վտանգի տակ է, և Դեսպանատունը պաշտպանելու համար, բերել տուած էր նարիւր: Սովաթ և Գարատազցի գինուած պահպաններ: Լուր կը տարածէր նաև թէ՛ այնինչ օրը, այնինչ ժամուն, Իսլամները՝ այլաթաի, Բերաի, Մեծ-Շուկայի և Սթամպուլի մէջ, անխնայ պիտի ջարդեն բոլոր Գրիստոնեաները:

Գրիստոնեաները, ահաբեկած, կը փախչէին, խանութները կը գոցուէին, խեղճ կիները և տղաքը վախերնուն կու լային, առուտուրը կը զաղրէր:

Բայց, բարեբաղդաբար, քանի մը օրուն տալանապէ, յուզումէ և անտուգութենէ ետքը, շուտով հասկցուեցաւ թէ՛ բոլոր պատահածը արդիւնքն էր միայն Նորին Վսեմութիւն Դեսպանին զիւանագիտական մէկ դարձուածքին, պաշտպանելու համար իր կուսակիցը՝ Մահմուտ Նէտիմ փաշան:

Պոլիսի ամէն շրջանակներուն մէջ, բոլոր գրասենեակներուն, սրճարաններուն և մինչև անգամ մանրավաճառներու և բեռնակիրներու դասակարգերուն մէջ՝ Սուլթանին գահընկեցութեանը վրայ միայն կը խօսուէր:

«Ռուսերուն ծախուածք», ինչ որ ըլլար, պէտք էր գահընկեց ըլլալ, եթէ չէին ուզեր որ ան քաղաքին բանալիները յանձնէ Մոսկովիներու Թագաւորին:

Հիւսէյին Աֆնի փաշա, արժանաւոր մարաշխատը, ամէն ուրիշ աւելի կը պարտաւէր Սուլթանը: Ծանր հիւանդ էր ան և չէր կրնար տեղէն շարժիլ: Մահմուտ Նէտիմ փաշաի խորհուրդին վրայ՝ Ապտիւլ-Ազիզը զայն Պրուսա աքտորած էր: Այն դժուրակ կացութեան մէջ, ուր կը գտնուէր, խնդրած էր վեհապետէն՝ քանի մը որ այ չնորհել հանգիստի համար, որովհետեւ վտանգաւոր կերպով հիւանդ, անկողինի կը ծառայէր: Աֆնի փաշա կ'ապահովցնէր Սուլթանը թէ՛ ապաքինելուն՝ չպիտի թերանար հնազանդելու իր Տիրոջ հրամանին:

Բայց Մեծ-Եպարքոս Մահմուտ Նէտիմ փաշա ո՛րեք կարեւորութիւն չընծայելով նախկին Մեծ-Եպարքոսի մը, նախկին Սպարապետի մը այդ արդար խնդրանքին, բրտորէն զայն ձերբակալել և գիշերանց Պրուսա աքտորել տուած էր:

Մեծ-Եպարքոսը՝ Հիւսէյին Աֆնիի պատկերը փակցնել տուած էր ամէնէն անշնորհ տեղուանքը: Կատակերգուները ամէն գիշեր իրենց բեմերէն անոր վրայ ծագրածութիւններ կ'ընէին:

Հետեւաբար, մարաշխատին վշտակցութիւնը հիմնաւոր էր. ան կ'ատէր տէ՛րն ալ, ծառայն ալ:

Սուլթանը՝ սօֆիստներուն կէս-ապստամբութենէն ետքը, հարկադրուած կը զգար կազմելու աւելի աղէկ նախարարութիւն մը:

Այդ Դահլիճին մէջ, Թարգևսն յորջորջուող Ռիւշտի փաշա Մեծ-Եպարքոս էր: Վեց անգամ վարչապետ, եօթն անգամ Սպարապետ եղող այս նախարարը՝ փորձուած ուղղամտութեան տէր և արդարակորով մարդու մը համբաւը ունէր:

Այս Դահլիճին մէջ Հիւսէյին Աֆնի պիտի ստանձնէր պատերազմական նախարարի պաշտօնը, Միթհատ անպաշտօն նախարար պիտի ըլլար:

Այդ Դահլիճին կազմութենէն առաջ, Հիւսէյին Աֆնի ընտրած և կազմակերպած էր իր դաւադրակիցներուն խումբը: Մեծ ծովակալ Գայսէրլի Ամէտ փաշա և մարաշխատ Բէտիֆ փաշա՝ այս երկուքը դաւադրութեան ամէնէն եռանդուն գործիչներն էին: Ժամանակը պատեն էր, նախարարները համերաշխ ու գաղտնապահ էին, և զինուորները դատին համախոհ:

Հինգշաբթի օր մը, նուիրական օր, իշխան Մուրատը Սուլթան պիտի հռչակէին և Ապտիւլ-Ազիզը գահընկեց պիտի ընէին: Հին պալատին մէջ, նուիրագործուած սուլթութեան համաձայն, քաղաքացիները մեծ հանդիսաւորութիւնով երդում ըրին նոր վեհապետին անունով:

Շէյխ-իւլ-Իսլամ Հայրուլլահ էֆէնտի, Շէրի

անունով Ապտիւլ-Ազիզի գահընկէցութեանը համար փերիս մը խմբագրած էր :

Բայց, որոշուած թուականէն երկու օր առաջ, Սուլթանը կանչել տուաւ Սպարապետը, որ վարանեցաւ պատասխանելու այդ հրաւերին, վախնալով որ դաւադրութիւնը մերկացուած ըլլայ Տիրոջ :

Հետեւաբար, դաւադրութեան բոլոր կազմակերպիչները գիշերանց կանչել տուաւ Վոսփորի ափունքին վրայ հաստատուած իր ամառանոցը : Զօրքերը պատրաստ էին : Չորեքշաբթի, արշալոյսին, Հիւսէյին Ամլի փաշայի, Բէտիֆ փաշայի և Գայսէրի Ահմէտ փաշայի հրամանատարութեանը տակ՝ անոնք պաշարեցին Տօլմա-Պաղչէի պալատը :

Մեծ-Եպարքոսը և Միթհատ անոնց կը սպասէին Սպարապետութեան պալատին մէջ :

Ամենասիրուն Միւրդի Իռէմ, որ այդ միջոցին Տօլմա-Պաղչէի մօտ Համիտ Էֆէնտիի պալատին մէջ կը գտնուէր, սրտատրոփ թնդանօթի հարիւր մէկ թնդիւններ համրեց : Ան տեղեակ չէր իր տիրոջ գաղտնիքներուն, բայց արդէն կը գուշակէր իր նախկին ստացատիրոջ վերջնական անկումը :

Միւրդի Իռէմ կը ցաւէր անոր վրայ և կը տիրէր, որովհետեւ, թէեւ նախկին Սուլթանը շատ ամբարտաւան գտնէր, բայց անոր կենցաղագիտութիւնը զինքը համակրելի գարձուցած էր իր աչքին : Չէր քէզուհին, թնդանօթին որոտումը լսելով, փղձկեցաւ . յիշեց մեծութիւնը . փարթաժութիւնը անոր՝ զոր գահէն վար կ'առնէին :

Օհ, դեռատի Չէրքէզուհին գայն հազար անգամ նախընտրելի կը գտնէր անկէ՝ որ գահը պիտի ժառանգէր, այդ գահընկէցութեան հետեւանքով : Ազիզ, հակառակ իր քմահաճոյքներուն, իր շուայութիւններուն, իր թերութիւններուն, իրապէս թագաւորի մը նկարագիրը ունէր : Ան գահի համար ստեղծուած էր, մինչդեռ Համիտ, նոյն իսկ երեւոյթով, թագաւորութեան ո՛չ մեծավայելութիւնը ունէր, ո՛չ ալ պատկառելիութիւնը : Արգելափակ, վարնոց, շարունակ փցուն խնդրներով զբաղող, իր տէրը անխուսափելի կերպով երկիրը պիտի կործանէր :

Կայսրութիւն մը դաւադրութիւններով չի՛ կառավարուիր, խորհրդածեց Միւրդի Իռէմ, ո՛չ ալ մեքենայութիւններով :

Մուրատի թոյլ նկարագիրը ճանչնալով, Միւրդի Իռէմ նոր մեքենայութիւններու և դաւադրութիւններու շրջան մը կը նախատեսէր :

Նոր գահաժառանգին պալատին մէջ տպաւորութիւնը փայլուն չեղաւ : Համիտ Էֆէնտի մտածկոտ էր, տժգունած և զրկէ ամօթասարտ . ալ չէր համարձակեր խօսիլ և կը բաւականանար անապարանքով ջնջելով զանազան գայթակղառիթ պաշտօնաթուղթեր :

Իուրսը, մուսնետիկները ժողովուրդին կը ծանուցանէին գահակալութիւնը : Փողոցին մէջ մարդիկ իրար կը շնորհաւորէին և ամէնքը կը հրճուէին : Սպարապետութեան և Պալագիտի հրապարակները

բազմութիւնով լեցուն էին : Ամբոխին մէջ կային մարդիկ՝ որոնք կը հաստատէին թէ՛ Սուլթան Ազիզ բռնուած է ձիւղ այն միջոցին՝ երբ երկրին Մուկոֆներուն յանձնուածը կը ստորագրէր :

Բաղաքը կը դրօշազարդուէր : Օտար նաւերն ալ նոյնպէս կը դրօշազարդուէին, բացի անշուշտ ուուսական նաւերէն : Դեսպանատուններն ալ իբր ուրախութեան և շնորհաւորութեան նշան՝ լուսավառութիւններ կատարած էին : Երկու օր ետքն էր որ՝ Ռուսական Դեսպանատունը հետեւեցաւ միւսնե-րուն օրինակին : Ըսուեցաւ թէ՛ այս գահակալու-թեան լուրը լսելուն՝ Բեթերսպուրի մէջ Չարը նուազած է :

Դեսպանը իր նախարարէն հեռագիր մը ստացաւ, որուն մէջ Չարին կառավարութիւնը այդ գահակա-լութեան ղէպքը կը պարսաւէր և կ'ըսեր թէ՛ կա-րելի չէր հանդուրժել Սուլթանի մը գահընկեցու-թեանը՝ Սպարապետի մը կողմէ՛ որ կոնակը տուած էր գօրքերուն, զորս պառակտած էր :

Ժողովուրդը, քաղաքին մէկ ծայրէն միւսը կը գոչէր. — Մեշրուքիք :

Ամէն շրջանակներու մէջ, Սահմանադրութեան վրայ միայն կը խօսէին : Սուլթանին՝ սօֆիստներու աղերսազիրը ընդունիլ մերժելէն ետքն է մանաւանդ որ՝ Սահմանադրութեան գաղափարը ասպարէզ գտաւ :

Օր մը, Մայր-Սուլթանուհին, ներքինապետ ձէվէր ազան Միհթատ փաշաի դրկած էր, անկէ

ինդրելու համար դարման մը գտնել՝ այն պար-բերական չարիքին՝ որմէ կը տառապէր Պետու-թիւնը : Այն ատեն, Վէզիրը խմբագրեց կարեւոր տեղեկագիր մը, որուն մէջ, կարգերը վերահաստա-տելու և կայսրութիւնը ձակատագրական աղէտէ մը փրկելու համար՝ կ'առաջարկէր հրատարակումը ազդու օրէնքի մը՝ որ ապահովէր անհատական ազատութիւնը, ամէն մարդու հաւասարութիւնը օրէնքին առջև, նախարարներուն պատասխանա-տուութիւնը և իշխանութիւնը Այս ծրագիրը մեռած տառ մնացած էր և ուրիշ արդիւնք չէր ունեցած՝ բայց եթէ Սուլթանը գրգռել :

Պիարի օրէն, Սուլթան Մուրատ հիւանդութեան մտահոգիչ նշաններ ցուցուց :

Հեղ, բարի և փափուկ նկարագրի տէր՝ ինչպէս ազջկնակ մը, շատ քիչ յարաբերութիւն ունեցած ըլլալով մարդոց հետ, Մուրատ երբ, ջերմոցի ծա-ղիկի մը պէս, հանրային կեանքին չէր տոկար : Ապտ-իւլ-Ազիզի գահընկեցութենէն առաջ, կանխապէս որոշած էին որ՝ յաջորդին դահակալութիւնը տեղի ունենայ յաջորդ հինգչարթին : Իշխանը այս ղէպքը վրդովանքով լսած էր :

Կը վախնար որ՝ դաւաղութիւնը յաջողի և անոր հետեւանքները կը գուշակէր : Այն ատեն գայն կախազան պիտի հանէին :

Այն յուզումները՝ զորս անցուց այդ շրջանին, գէշ կերպով խանգարեցին իր առողջութիւնը :

Կը պատմուի թէ՛ անձկութիւնով սպասած էր

հինգչարթին. բայց երբ երև. քչարթի օրուընէ հրա-
ւերուեցաւ իշխանութիւնը ձեռք առնել, տեսաւ
որ վարանիլ չէր կարելի և կատարելապէս ինք-
զինքը կորսնցուց:

Վեհապետական պատիւներ կ'ընէին իրեն: Բայց
անոնցմէ ոչինչ կը հասկնար: Կը կարծէր որ՝ դա-
ւադրութիւնը վիժած է, և ամբոխը, փոխանակ
իրեն հպատակութիւն յայտնելու, զինքը կախա-
ղան պիտի հանէր հրապարակի մը վրայ, իբր դա-
ւադիրներուն մեղսակից: Կը դողգոյր, կը հեկե-
կար, և այն պալատական նաւակին մէջ՝ որ զինքը
էսկի-Սարայ կը տանէր, Պիարթի արարողութեան
համար, Հիւսէյին Ավնի փաշաի կ'ըսէր մեղծօրէն.

—Վսեմաշուք, պանծալի և ազնուասիրտ
Վէզիրս, զթա՛ վրաս, ինծի ի՛նչ որ կ'ուզէք ըրէք,
բայց մի՛ սպաննէք: Ձէ՛ որ ես անմեղ եմ:

Ատոր վրայ, Հիւսէյին Ավնի փաշա, իր հաւա-
տարմութեանը վրայ վստահութիւն ներշնչելու
համար, անոր յանձնեց իր երկու ատրճանակները.
զայն հանգստացուց և յայտարարեց թէ՛ ճշմար-
տապէս Սուլթան հոչակուած էր, թէ՛ վախճալու
բան մը չունէր և թէ՛ ժողովուրդը չափէ աւելի
գո՛հ էր:

Այդ գիշերը, նոր Սուլթանը սփոփելու համար,
Մեծ-Եպարքուր, Շէյխ-Իւլ-Իսլամը, Սպարապետը
և Միթհատ փաշա հարկադրուեցան պալատին մէջ
գիշերել: Բայց Միապետին վախը և վարանքը
ամէն վայրկեան կ'աւելնային: Անմիջապէս Մահ-

մուտ նէտիմ փաշան Իզմիրը մօտ՝ Չէչմէ աքսո-
րեցին: Նախկին Սուլթանը, խռովուած, վրդով-
ուած, հիւանդ, նոյն իսկ իր գահընկէցութենէն
ետքը, չէր կրնար հաւատալ իր անկումին:

—Պաւածաններ, դաւածաններ, կ'ըսէր, որ զիս
լքեցին և ա՛յսչափ վատարար վարուեցան հետս: Ե՛ս
էի որ զանոնք հասցուցի այն դիրքին՝ ուր կը
գտնուին. անոնք չարաչար կը գործածեն իրենց
ուժը, և ապերախտութիւնը և յանդգնութիւնը
կ'ունենան զիս գահէն վար առնելու:

Կը յիշէր իր անցեալ մեծութիւնը, փառքը, և
ինքզինքը կը կարծէր յաւիտեան անասան, դերը-
նական էակ մը, երկրագունդին վրայ թագաւո-
րելու աստուածութեան կողմէ տրուած պարտա-
կանութիւն ունեցող:

—Բայց ի՛նչպէս կրնան գահընկէց ընել Սուլ-
թան մը: Քահակալի մը պաշտօնանկութիւնը կրնա՞յ
հարաւոր ըլլալ, կրնա՞յ ըմբռնուիլ, երեւակայուիլ:
Եւ ի՛նչպէս կրնամ ես անտալ ատոր: Կեանքը և
Վեհապետութիւնը բաժանելի՞ բաներ են:

Փայլահաղայտ ղէմքով, Ապտիւլ-Ազիզ լուռ ու
մունջ կը պտղակէր Թօփ-Քարուի իր նոր բնակա-
վայրին մէջ: Իր այդ բնակավայրը շատ նեղ, շատ
անչէն կը գտնէր:

Այդ յարկաբաժինը ճիշդ ա՛ն էր՝ ուր սպաննած
էին տարաբաղը Սէլիմ Գօրը, երկրին առաջին
ազատական Վեհապետը: Ձէր կրնար հանդուրժել
այդ սենեակը տեսնել: Անիկա իրեն չարաշուք ու-

զժխեմ կ'երեւար: Իրեն անանկ կու գար որ՝ կենդանի թաղուած է: Միւս կողմէ, չէր ալ ուզեր Չրադանի պալատը, զոր ինք կառուցանել տուած էր: Այդ պալատը կանգնուած է գերեզմաննոցի մը վրայ, ուր տակաւին կը նշմարուին զանազան շիրիմներ, և օր մը, նախկին Վեհափառը սարսափահար ինկած էր մեռելակոթողի մը վրայ:

Քիչ ետքը հանդարտեցաւ. յետոյ սոսկալի հայհոյանքներ կ'արձակէր Հիւսէյին Ավնի փաշայի և անոր ամբողջ խմբակին ղէմ:

Քովէն հեռացուց իր կիները և գերուհիները և նստաւ թիկնօթեակի մը վրայ:

Խիդճի խայթեր ունեցաւ և սկսաւ խորհիլ անցեալին վրայ:

— Այո՛, այո՛, կ'ըսէր ինքնիրեն, ամբարտաւանօրէն, արդար պատիժ մըն է սա... ևս զժբաղը եմ և արժանի անոր:

«Ո՞վ էի ես. պարզ մահկանացու մը, որ իր նախահայրերէն գահ մը ժառանգած է: Չայն պահպանելու համար ի՞նչ ըրած եմ ես: Ոչի՞նչ: Ես այդ գեղեցիկ երկիրը մատնած եմ անիշխանութեան: Ինձմէ առաջ երկրին պարտքը աննշան էր. հիմա երկրին մեծ մասը գրաւի տակ է: Ինչ դաւաճան մըն է սա Մահմուտ Նէտիմը: Ամէնէն զարչկիլ արարածը. «Մուստերուս ժախուսճը»: Եւ ես որ ամենագոր էի, տկարութիւնը ունեցայ ոչխարի պէս հնազանդելու այդ սինլքորին, որ իմ առատաձեռնութիւններուս վարձքը կը հատուցանէր, մեր

ազգային պապենական ժառանգութիւնը ծախնելով: Վա՛տ, ամօթապա՛րտ, ի՞նչպէս իմ գործերուս հաշիւը պիտի տամ պատմութեան: Հաւատացեալ մը կ'ընդունի թէ՛ ապագայ կեանք կայ: Որչա՛փ աղէկ պիտի ըլլար որ՝ այդ կեանքը գոյութիւն չունենա՛ր...»

Տարարազը Սուլթանը գիտէր զոչալ. ի՞նչ որ ալ ըլլար, ան Օսմանի տունին մէկ զաւակն էր: Գրիչ-կաղամար ուզեց, հապշտապ նամակ մը մրտտեց և զայն զրկեց նոր Սուլթանին, որ եղբորորդին էր:

Այդ նամակին մէջ, զժբաղը թագաւորը կը յիշէր բանակին վարմունքը, կը մատնանչէր անոր ապերախտութիւնը և կը ճանչնար նոր Սուլթանին գահակալութիւնը: Անոր և Ապտիւլ-Մէճիտի շատուիղին կը թողուր իշխանութիւնը և Վեհապետութիւնը. զայն ետանդագին կը շնորհաւորէր և մաղթանքներ կ'ընէր՝ բարօրութեանը և բարգաւաճութեանը համար երկրին՝ որուն կը թագաւորէր:

Ապտիւլ-Աղիզ մը պէտք էր ըլլալ, տասնըվեց տարուան կամազօր ինքնակալ, գահակալած ո՛չ թէ վեհապետի մը, այլ քոսհաճ և ազդեցիկ ղեկղազօրի մը պէս, յետոյ գահընկէց եղած, արգելափակուած չարաչուք հին պալատին մէջ, զրելու համար ատանակ նամակ մը, կորսուած փառքի մը տխուր պատմութիւնը: Նախկին Սուլթանը կը խնդրէր Նորին Վեհափառութիւն իր եղբորորդիէն՝ արտօնութիւն տալ իրեն՝ հաստատուելու ուրիշ տեղ մը, որովհետեւ չէր կրնար հանդուրժել ա՛յնչպիսի

Թանճը պատերը, պղտիկ պատուհանները և չափազանց վաղնջական կերտուածքը նախնի Մուլթաններու այդ բնակավայրին, որ այսօր կայսերական պալատներու ներքիններուն և գերուհիներուն առանձնանոցը եղած էր :

Հետեւաբար, աճապարանքով կահաւորել տրուեցաւ Պէչիք-Թաչի մօտ գտնուող Ֆերիէ կոչուած «քէօչկ»ը : Ուրբաթ օր մը, նախկին Վեհապետը Ֆերիէ գնաց, իր մօրը, կիներուն, զաւակներուն, «հազնէտար»ներուն և իր քովը մնացած 300 է աւելի երկու սեռէ գերիներուն հետ : Քանի մը օր ետքը, ստիպուեցաւ զատուիլ իր մտերիմ սենեկապաններէն և իր շուրջը գտնուող պաշտօնական անձնաւորութիւններէն, որովհետեւ ալ Մուլթան չէր :

2.

Գիշերը խաւար էր : Ամէն բան տխուր ու լուռ էր : Ազատուեր հսկայ նոճիներու մէջ, ցանկորմի մը վրայ, Միւրդի Իռէմ կ'երագէր : Իր շուրջը, Սկիւտարի, Գարսնա-Անիէ գերեզմանոցին հասմենի արձանագրութիւններ կրող վաղեմի մեռելակոթոճոյները՝ զէպի գետին կը խոնարհէին թաղձազին կերպով :

Վայրը ամպի էր, և գեղանի գերուհին կրնար իր խոկումներուն մէջ առանձնանալ :

Աչքերը փորձեցին խաւարին մէջէն թափանցել հորիզոնը, բայց ան չէր յաջողեր ոչինչ նշմարել : Այն ատեն, արխաւիտ որոշումը տուաւ բաժնուելու ցանկորմէն՝ որուն վրայ նստած էր : Քիչ մը հեռուն, նշմարեց մարդիկ, որոնք աճապարանքով մեռել մը կը հանէին գերեզմանէն : Անոնք երեք հօգի էին : Անոնցմէ երկուքը, զէմքերնին տփզոյն և զոյններնին թուի, հազած էին երկար և տարօրինակ սեւ զգեստներ :

Երրորդը խափշիկ մըն էր : Կին մը, որ կախարգուհիի մը կը նմանէր, ուշազիր կը հսկէր գործո-

զուլթեան : Անոնք թշուառ նեպպաշներ էին : Իրակը զոր կը մերկացնէին , 16 էն 17 տարեկան գեռաափ աղջկան մը զիակն էր : Իր թափանցիկ պատանքին մէջէն՝ կը տեսնուէր որ այդ երիտասարդուէին երկար ատեն տառապած էր և կը նշմարուէր իր հրապուրիչ գեղեցկութիւնը : Դժբաղդ աղջիկը առատ մազեր և չողչողուն ձերմակութիւնով ակոսաներ ունէր : Ձահը զոր վառած էին նեպպաշները՝ իրենց գազիր արհեստը գործադրելու համար՝ կը լուսաւորէր արդէն մարմարագոյն գէմքը գժբաղդ արարածին , որ այդ օրը իսկ մեռած պէտք է ըլլար : Այդ չարաշուք անձերուն ձեռք անցընել ուզածն էր դազաղը և այն քանի մը կտոր լաթը՝ որուն պլլուած էր զիակը :

Սափչիկը առաւ տարաւ իրենց աշխատութեան պտուղը . միւսները զիակը երկնցուցին իր առջի տեղը և վրան քանի մը ափ հող նետեցին : Յետոյ , աւարտելով այդ մեռելական աշխատութիւնը , կրան գացին հպարտ և գոհունակ : Իրակին տեսքը , որ ծաղիկ հասակի մէջ մեռած աղջկան մըն էր , իրենց վրայ ո՛րեէ տպաւորութիւն չի գործեց :

Միւրդի Իռէմի անանկ կու գար որ՝ բոլոր գերեզմաններուն մէջ կեանք կար և մեռելները հողին տակէն կը լսէին իր քայլերուն աղմուկը : Այդ անհամար գերեզմաններուն մէջէն փախչելիք ճամբայ մը փնտոեց : Բայց ամէն կողմ գերեզմաններ , դամբարաններ , մեռելական քարեր միայն տեսաւ , և անկարելի էր շիրմաստանը անցնել՝ առանց ոտ-

քերը անոնց զարնելու : Անդադար կը զգար մռայլ գերեզմաննոցին խորհրդաւոր բնակիչներուն մըմնջելը : Սարային գեղանի բնակչուէին ինկաւ գերեզմանին վրայ աղջկան մը , որ մեռած էր իր նշանածին բազուկներուն մէջ , համաձայն այն արձանագրութեան՝ զոր յաջողեցաւ կարգալ ատեն-ատեն երկինքը լուսաւորող կրկնակի փայլակներուն հնորհիւ : Հետզհետէ զինքը համազբաւող թմրութիւնը երթալով կը շատնար : Յանկարծ , Միւրդի Իռէմ արտաստովոր կարողութիւն մը զգաց վրան . աչքերը կը թափանցէին արգելքը , և հրաշագործ կարողութիւնով մը կրնար տեսնել ինչ որ կ'անցնէր հողին տակ , մեռելներու աշխարհին մէջ : Չարհուրելի տեսքով կմախաձև , հիւանդագին , այլանդակ արարածներով լեցուած էր գերեզմաննոցը : Իր անձկութիւնը աննկարագրելի էր : Այդ աշխարհին ո՛չ գոյները , ո՛չ ձեւերը , ո՛չ մարդերը , ո՛չ իրերը , ո՛չ բարք ու վարքերը՝ չէին նմաներ կենդանի էակներու ունեցածներուն : Աչքերը վեր դարձնելով՝ նշմարեց գիշատիչ մագիլներով և վայրագ ու նենգաւոր կտուցներով հսկայ թռչուններ , որոնք կը լեցնէին արեւէ , լուսինէ , աստղերէ զուրկ երկինքը , այդ արտաստովոր աշխարհին խաւարած երկինքը : Ամօթահար և լուսկեաց անձեր՝ կը սպասէին իրենց պատիժի ժամը :

Հոն , կը լսուէր տարերքներու մոնչիւնը : Ատենատեն , խորհրդաւոր զգեսակներու զուռներէն և պատուհաններէն կապտագոյն բոցեր կ'իլլէին . .

Տեսակ-տեսակ ջրանուշներ՝ կը լողային փայլուն, կանանչ ու եռուն ջուրով մը լիցուած ձկնարանի մը մէջ: Անոնք իր ճանչցած կիներուն ձեւը չունէին ճշդիւ: Ատեն-ատեն, ան կը լսէր անտեսանելի, դժոխային, աղմկայոյզ և զարհուրելի երաժշտութիւն մը:

Միւրդի Իռէմ գարմանքով ճանչցաւ իրեն անհաճոյ էակներու գիմաստուերները, թէև այդ անձերը ուրիշ ձեւ մը առած ըլլային...

Յետոյ, Միւրդի Իռէմ արթնցաւ: Առաջին անգամն էր որ գահաժառանգին շքեղ անկողինին ընկեր էր եղած: Հակառակ ճոխութեան, սննհակին պերճութեան, հակառակ հազարաւոր նուէրներուն, տիրոջ հազարաւոր բարիքներուն, գեղանի Ձէրքէզունին զայն միշտ խորշելի և ժանտաղէմ կը գտնէր: Այն ատեն, ինքզինքը յաւիտեան կորսուած նկատեց: Իշխանը տակաւին կը քնանար, բայց գերուհին, վերջնականապէս հարձ գարձած, չէր համարձակեր իշխանական անկողինէն տռային փախուստ տուող մը ըլլալ. կը գիտէր անոր դաժան գիմագծութիւնը. այդ գլուխը և այդ նուազ տափակ դէմքը զիտկով, ան կրնար գուշակել թէ՛ այդ վայրկեանին ինչ կ'երագէր այդ մարդը:

Ուշադրաւ նմանութիւն մը կար այդ իշխանին և իր երազին մէջ տեսած անձերուն միջև:

Անձկայրեաց, վրդովուած, ջղախոսացած, այդ փռոտաչուք անկողինին մէջ, հարձը ինքզինքը ալ աւելի գերի կը զգար: Այդ մարմինը իր աչքին

կ'երեւար անդրժրճեղեղեան ժամանակներու նախապատմական թունաւոր զեռուն մը:

— Պահ, կ'ըսէր, ևս կը նմանիմ անձր՝ որ կարգալով անցած ժամանակներու վրայ ճառող երկ մը, խորհրդաւոր կամ ապագայ աշխարհի մը վրայ խոսող քմայք մը, կը կարծէ որ ինք կը գտնուի այդ անհետացած կամ երեւակայական աշխարհներուն մէջ:

«Ասկայն, լայն, բաց-օդեայ, ազատ կեանքը գոյութիւն ունի իրականապէս, և ևս գժրադրս՝ սահմանուած եմ յաւիտեանապէս գամուած մնալու այդ անկողինին, դատապարտուած ըլլալու ընկերը՝ մարդոց ամէնէն կոչտին և ամէնէն հակակրեկին...»

Համիտ Էֆէնտի, որ այդ գիշերը շատ յոգնած էր, վերջապէս արթնցաւ. ցորեկը արդէն շատ առաջացած էր:

Միւրդի Իռէմ հրահանգուած էր զգուշաւոր ևւ հաճոյակատար ըլլալ. որպէսզի չըլլայ թէ Էֆէնտիին մէջ կանխածներ արթնման և խիստ պատիժներու ենթարկուի ինք:

Գահաժառանգը՝ իր նոր կիներ նուրբ և զմայելի կը գտնէր. բայց նորէն, իրեն համար առեղծուած մը, խորհուրդ մը կը մնար ան...

Ինչ խորհուրդներ կը պահուրակէին անոր սաթի պէս փայլուն ազւոր ձակատին ետև: Գեղանի, հարուստ, իշխանուհի եղած, տակաւին ինչ կ'ուզէր ան: Հակառակ իր պաշտօնական տարփուհին եղած ըլլալուն, ինչո՞ւ այդ գերուհին կը թուէր

չսիրել Համիտ Էֆէնտին . իր ընկերուհին չէր ան :
Հակառակ իր սուր իմացականութեանը, Նորին Բարձ-
րութիւնը չէր կրնար լուծել այս հարցը :

— Ըսէ՛ տեսնեմ՝ իմ սիրելի և աղւոր Միւրդի
Իռէմս, կը սիրե՞ս զիս, ըսաւ Համիտ անոր :

— Օ՛, Նորին Բարձրութիւն, պատասխանեց ան,
պէտք կա՞յ ատիկա հարցնելու ինձի :

— Կը մաղթե՞ս ուրեմն զիս տեսնել մեծ և հզօր :

— Տարակոյս չի կայ, Նորին Բարձրութիւն :

— Կ'ուզե՞ս այդ զօրութիւնը մեծցնելու օգնել :

— Սիրելի Տէր, արդէն մեծ, խիստ մեծ չէ՞ք,
պատասխանեց մանկամարդ կինը : Նորին Վեհափա-
ռութեանէն ետքը, աշխարհիս վրայ կա՞յ մէկը՝ որ
ձեզմէ մեծ ըլլայ :

— Բայց չե՞ս փափաքիր զիս աւելի՛ մեծ, աւելի՛
հզօր տեսնել, ինչպէս կ'ըզձան իմ շատ մը բարե-
կամներս :

— Երբ ատենը գայ, Տէր, Աստուծոյ շնորհիւ
ա՛լ աւելի մեծ պիտի ըլլաք :

Այս տեսակցութեան հետեւանքով, Համիտ
Էֆէնտի սկսաւ կասկածիլ Միւրդի Իռէմի անձնուժի-
րութեանէն : Ան չարաշուք ծրագիրներ միտք բերաւ,
բայց իր նոր տարփուհին ա՛յնչափ գեղանի կը
գտնէր որ՝ ծածկեց իր հմայաթափութիւնը : Իշխանը
թէեւ ամբարտաւան, կ'ուզէր ամէն միջոցով յազ-
թահարել այս եղական կնոջ սիրտին : Սկսաւ զայն
զգուսել : Միւրդի Իռէմ անտարբեր կը մնար և
ատիկա լաւ նշան չէր, որովհետև առաջին

անգամն էր որ ինք կը փայփայուէր էրիկ-մարդու
մը կողմէ . . .

Համիտ Էֆէնտի իր բարձին տակ դրաւ, ինչպէս
միշտ կ'ընէր, ոսկեղրամներով, քառօրդ ոսկիներով
լեցուն կարմիր մետաքսէ քսակ մը : Իր հարձը
հրապուրելու համար, քսակին պարունակութիւնը
գետին թափեց : Միւրդի Իռէմ, մեծօգի, ազնուա-
կան և կուշտ-աչք նկարագիրի մը տէր, չզիջաւ
գորզին վրայ ինկած ոսկիները ժողվել : Չափազանց
պարտաւեց այդ բարբարոս և նուաստացեցողիչ
սովորութիւնը : Նորին Բարձրութիւնը նոյն դժբաղ-
դութիւնը ունեցաւ, իր տարփուհին նուիրելով իր
գոհարեղէններուն յաւուզոյն հաւաքածոն : Էֆէնտին
հասկցաւ որ՝ մանկամարդ կինը անզգայ պիտի մնար
այդ կարգի ամէն միջոցներու . ատանկով չէ՛ որ
պիտի յաղթէր անոր հպարտ սիրտին :

Այդ օրը, իշխանը պէտք տեսաւ գտգտնապէս
խուզարկել տալու իր հարձին մատենադարանը,
թուղթերը և գեղօրները :

Հետագօտութիւնը քննադատուելիք արդիւնք
մը չտուաւ : Միւրդի Իռէմ ա՛լ չէր գրեր և չէր
բռներ իր կեանքին օրագիրը :

Իր մատենադարանը կը կազմէին ամէն տեսակ
գիրքեր, գրական, կնոջական և աշխարհիկ հան-
դէսներու հաւաքածոներ :

Նորին Բարձրութիւնը որո՛ւ է որ պէտք է հրա-
ման ըրաւ՝ ալ չ'արածնել Օրիորդ Տօնժէի և իր
հարձին տեսակցութիւնները :

կայսերազուն իշխանին Միւրզի Իոէմի հանդէպ նոր վերարեբումին տեղեակ, պալատին լրտեսուհիները կրկնապատկեցին իրենց գործունէութիւնը. անոնք զայն հսկեցին ամէն ատենէ աւելի խստորէն:

Այդ անդադրում հսկողութիւնը՝ մանկամարդ գերուհին համար նեղացուցիչ, վիրաւորիչ, անհանգուրժելի կը դառնար:

Համիտ էֆէնտիի տարիուհին դարձած ըլլալով, իր կեանքը առջի կեանքէն հարիւր անգամ աւելի տաժանելի էր. ինքն իր մէջ ամփոփուեցաւ, և ամէն բանէ ձեռք քաշած ու մեկուսացած, իր խօսուհներուն հետ գլուխ-գլխի, ինքզինքին ստեղծեց զազափարալին կեանք մը, որ բոլորովին գերծ չէր փրկութեան և մխիթարութեան յոյսէ. բայց կամաց-կամաց, յուսահատեցաւ և ինքզինքը յաւիտեան կորսուած նկատեց, դատապարտուած այդ առանց ուրախութեան և սէրի արգելափակ կեանքին:

Այդ Չէրքէզուհին, որ իր ստացատիրոջ գահընկեցութենէն կտրը, եղած էր իշխանուհի և բանտարկեալ, թէեւ կայսերական իշխանուհի մը. որ մը, Վոսիորի վրայ նայող իր պատուհանին առջև, կ'երազէր: Յորեկէ-կտր մըն էր: Ղօնչէ Ֆէմ, սիրելի Հագնէտարը անոր՝ որ Սուլթանն պիտի ըլլար, Միւրզի Իոէմի քովը եկաւ, անոր ձեռքէն բռնեց և սկսաւ տաք արցունքներ թափել:

— Տեղեկութիւն չունիս լուրէն, Միւրզի Իոէմ: Ապտիւլ-Ազիզ անձնասպան եղած է... ան ո՛չ եւս է... մեռած է...

Չէրքէզուհին, չափազանց յուզուած, չկրցաւ զսպել իր արցունքները, և գոյնը նետած, ըսաւ իր նենգամիտ բարեկամուհիին.

— Բնականարար, Ղօնչէ Ֆէմ, Ապտիւլ-Ազիզի պէս վեհապանձ, հպարտ, հզօր Սուլթանն մը չէր կրնար հանդուրժել գահընկեցութեան, անկումին: Ան քաջարար նախընտրած է մահը՝ քան ամօթը: Ո՛վ իմ արժանաւոր և բարի նախկին տէրս... Եւ խեղճ Սուլթանն Մուրա՞տ ինչ ըրած է:

— Ան, սիրելիս, բանականութիւնը կորսնցուցած է, բոլորովին խենթեցած է ան: Ան լալով ըսեր է թէ՛ իր շուրջը գտնուողները կը ջանան ամբողջ ժողովուրդին հաւտայնել որ՝ ինք մարդասպան է: Արգահատելի է մեր Վեհապետը:

— Եւ մեր Տէ՛րը ինչ կ'ըսէ:

— Չհատկցուիր անոր միտքը. չհատկցուիր թէ՛ կ'ուրախանա՞յ պատահարին համար, թէ՛ կ'ողորայ:

— Եւ ի՞նչ կերպով, Ղօնչէ Ֆէմ, այդ զժբազղ Սուլթանը վերջ տուած է իր կեանքին:

— Էնտէր ազա ինձի ըսաւ թէ՛ Ֆէրիչէի մէջ, ցորեկ ատեն երակները կտրած է, իր ժօրը, կ'ինքուրէն և հետեւորդներուն ներկայութեանը...

Գահաժառանգ իշխանին պալատին մէջ, բուն յուզում կը տիրէր: Բոլոր պատաւ կիները Գուրանէն հատուած (sourate) ներ կը կարդային, նախկին Սուլթանին հոգեհանգիստի համար: Միւրզի Իոէմ, գոյնը նետած, նստած բազմոցի մը վրայ,

Վ'ոգեկոչէր վեհափառ Ապտիւլ-Ազիզը: Հանդուցեալը, շքեղութեան և փարթամութեան մէջ ուռած, անմատչելի էր իր հօթը գասըն ներուն(*), իր հօթը իզպարներուն(**) և բոլոր իր անթիւ կեօգսեգներուն(***) : Ան ունէր երեւոյթը յաղթական աշխարհակալի մը, ամենակատարեալ մեծ վեհապետի մը, բայց կասկածելի, ամբողջ աշխարհի վրայ թագաւորող. ձիննակիր մը :

Հսկայամարմին, բաճրահասակ, իր ճեղքերը կնոջ մը ձեռքերուն չափ նուրբ էին: Իր սպալատին մէջ, չրջապատուած էր շացուցիչ հանդիսաւորութիւնով մը և ճոխութիւնով մը: Սչքերուն հաւտալ չէր ուզեր: «Ո՞ւր են հիմա, կը հարցնէր ինքնիրեն Միւրդի Իռէմ, մեր սիրելի ընկերները, Արաբ և Թուրք երաժիշտներու ճոխ համազգեստներով այն խումբերը, այն առարկաները, այն երգչուհիները, այն թզուկները, այդ շատախօսները՝ որոնք կը զուարճացնէին մեր Հրաշապատները: Այս բոլորը անհետացած է քանի մը կարճ վայրկեաններու մէջ»: Եւ Միւրդի Իռէմ կը խորհէր այն անողոք ճակատագրականութեան վրայ, որ ամենահզօրներէն աւելի հզօր է:

Կ'ողբար այն խեղճ Մայր-Սուլթանուհիին վրայ: Օ՛հ, որչափ պէտք է զժբաղդ եղած ըլլար այդ ա՛յնչափ անուշ, ա՛յնչափ բարի, ա՛յնչափ գթասիրտ

(*) Առաջին աստիճանի կիներ:

(**) Երկրորդ աստիճանի կիներ:

(***) Ազատ տարփուհիներ:

կինը, որ կու լար, ամէն անգամ որ իր զժբաղդ պատմութիւնը պատմէր: Յետոյ, մտովի կը տեսնէր աղւոր ընտանի դէմքը գերագնիւ այն իշխանին, որ Եուսուֆ Իզգէատին կը կոչուէր, տասներկու տարու աղւոր տղայ մը, կայսերական անձնապահ գունդին մարաշխատի իր չողջողուն համազգեստին մէջ հպարտ... Ա՛ն ի՛նչ պիտի ըլլար:

Միւրդի Իռէմ անէացած, խռովուած, ա՛լ չուզեց երկար ատեն ա՛յդչափ տխուր խոկումներու անձնատուր ըլլալ: Իրեն հաճելի կու գար բոլոր անողոքարար իրական բաներուն գիտակցութիւնը կորսնցնել:

է.

Համիտ Էֆէնտի սուրբ էր, մանաւանդ Ապտիւլ-Ազիզի մահէն ի վեր, ընդունիլ այցելութիւնը կառավարական բոլոր բարձրաստիճան անձնաւորութիւններուն:

Նախարարապետը, Միթհատ փաշա, նկատողութեան առնելով այն կացութիւնը՝ որուն մէջ կը գտնուէր կայսրութիւնը, Հէրսէփի ապստամբութիւնները, Սերպիասի և Գարա-Տազի և Քլէք նաւահանգիստին գործերը, Բարձրագոյն Դրան մէջ ժողովի հրաւիրած էր բոլոր նախարարները, պետական բարձրաստիճան անձնաւորութիւնները և Խշիւնները: Այդ առիթէն օգտուելով, անոնց կարգաց Մահմանաղութեան ծրագիր մը, զոր պատրաստած էր: Շէյխ-իւլ-Իսլամութեան պաշտօնատունը գումարուած երկրորդ ժողովի մը մէջ, այդ ծրագիրը ընդունուեցաւ ձայներու մեծամասնութիւնով: Միթհատի նախագահութեանը տակ գտնուող յանձնաժողով մը՝ պիտի վերլուծէր այդ օրէնքին էական տրամադրութիւնը, և անոր վերաքննուելէն ու վերակազմուելէն ետքը, վերջնական ծրագիրը պիտի հաղորդուէր կայսերազուն իշխաններուն:

Համիտ Էֆէնտի, այդ ծրագիրին եռանդուն կուսակից, սակայն զանազան եսական առարկութիւններ կը յարուցանէր: Լուր կը զրկէր օրէնքին գլխաւոր խմբագրիչներուն, և մասնաւորաբար Միթհատ փաշայի թէ՛ Նորին Վեհափառութիւնը արգելափակ վիճակի մէջ գտնուելուն, շատ ցաւալի կը գտնէր որ այդ օրէնքը, օրէնքներուն ամենէն կարեւորը, չէր կրնար արժանաւորապէս վաւերացուիլ անոր կողմէ. Սուլթանի մը կողմէ յիմարութեան վիճակի մէջ արձակուած վճիռ մը իսկ՝ չէր կրնար գործադրելի ըլլալ:

Գահաժառանգ իշխանին կուսակիցները տենդոտ գործունէութիւնով մը կ'աշխատէին: Անոնք ապահոված էին պալատականներու անզաղտնապահութիւնը: Ատիէ զատ, Սուլթանը, հօրեղբորը մահէն ետքը, բոլորովին կորսնցուցած էր խելքը: Օր մը յանկարծ պալատին ձկնաւազանին մէջ նետեց ինքզինքը:

Համիտ Էֆէնտիի գործակալները գիշեր-ցորեկ կը հակէին Սուլթանը, աւելի քան իր մասնաւոր ծառաները և զրանիկները: Իշխանը մինչև անգամ յաջողած էր պալատին մէջ տեղաւորցնել իր մարդոցմէն իրր քարտուղար ծպտուած յիմարարուծ մը:

Հետեւաբար, Համիտի կուսակիցները կ'աշխատէին: Իր ոստիկաններէն ոմանք քաղաքին մէկ ծայրէն միւսը լուր կը տարածէին թէ՛ զժբաղղ Վեհապետին վիճակը օրէ-օր կը գէշնար, թէ՛ կայսրութեան գործերը Երեսի վրայ կը մնային, թէ՛ Սուլթանին հիւանդութիւնը Բուսէլիի մէջ պատա-

հած բոլոր գէպերուն համար պատրուակ մըն էր, և թէ Իսրայններու Հանրապետութիւնը չէր կրնար առանց Ինստի մը, առանց պետի մը մնալ: Կրօնական օրէնքին համաձայն, ինչպէս տղու մը, նոյնպէս խելագարի մը իրաւաւորութիւնը երբեք արժէք չունէր: Այս գրոյցները լայն ծաւայ կը գտնէին:

Նորին Բարձրութիւն կայսերագուն իշխանը իր պալատին մէջ դուր գաղար չունէր:

Միւրդի Իռէմ գաղարած էր իրեն համար կին մը, գրաւիչ հարձ մը ըլլալէ. կ'ուզէր որ ան իր մտերիմ խորհրդականը ըլլայ:

Ահ, եթէ երիտասարդունին ուզէր իր գիւանակիտութիւնովը և սուր իմացականութիւնովը օգնել իրեն, ինք մտած էր թէ կրնար հասնիլ նպատակին, որ էր Սուլթան Մուրատ եւր տապալել իշխանութենէ:

Իշխանը որ մը ներքինիի մը միջոցով Միւրդի Իռէմի գրկեց անդին մասնի մը և զայն հրաւիրեց գալ գիշերը իր քով անցընել:

Գեղանի Չէրքէզունին մտահոգուեցաւ այդ առատաձեռնութենէն. ինք շատ լաւ գիտէր թէ՛ Համիտ էֆէնտի ոչինչ տեղը բան չէր տար: Հետեւաբար, խիստ հաւանականօրէն, խնդիրը հնարամտօրէն կազմակերպուած դաւադրութեան մը շուրջը կը գտնար:

Ընթրիքէն ետքը, — իշխանին կողմէ գրկուած մեծածոխ ընթրիք մը, — Միւրդի Իռէմ պետք էր իր արդուզարդը ընել Ղօնչէ մէմի օգնութիւնով:

Իշխանը չէր կրնար ամէն օր գոհայնել իր

բոլոր կիները և բազմաթիւ հարձերը: Հետեւաբար, ան որ գիշեր մը իր կարգին իշխանին քով պառկելու կոչուած ըլլար, պէտք էր ճոխապէս պճնազարդուիլ: Ամիսը անգամ մը կարգ կու գար իւրաքանչիւր կնոջ՝ իշխանին քով պառկելու:

Էֆէնտին կնամեծարութիւնով և մեծ յարգանքներով ընդունեց վերջապէս իր նախընտրուած և կասկածելի հոմանունին: Համիտ անկէ խնդրեց ինստ քով դուռը դոցել. յետոյ քանի մը անուշ խօսքերէ ետքը, հարձին ձեռքերը իր ձեռքերուն մէջ առաւ և գողգալով, յուզուած ձայնով մը ըսաւ անոր.

— Իմ սիրելի՛ Միւրդի Իռէմս, գիտես որ երէկ գիշեր Դահլիճը խորհրդակցութիւն կատարած է Միթհատ Փաշաի տունը, խիստ կարեւոր գործերու վրայ խօսուած է հոն, նաեւ Կրէտէի խնդիրին: Հասան անուն Չէրքէզ հազարապետ մը, դռնապանին կը ներկայանայ և կ'ըսէ թէ՛ կ'ուզէ անմիջապէս տեսնել Սպարապետը, բացառիկ կարեւորութիւն ունեցող ստիպողական գործի մը համար:

«Ան կը խաբէ ծառաները և կը յաջողի մտնել նիստ գումարուած սրահը: Հոն երկու անգամ հրազէն կը պարպէ Հիւսէյին Ավնի փաշաի վրայ: Ներկաները, ո՛րեւէ գէնք չունենալով, կը ստիպուին փախչիլ: Միայն մեծ ծովակալ Գայսէրլին կը յաջողի բռնել մարդասպանը, բայց աւանդ, քանի մը վայրկեանի մարտնչումէ ետքը, զայն ձեռքէն կը փախցնէ, բազուկէն և ականջէն վիրաւորուելով: Միթհատ Փաշաի ծառաներէն մէկը, կը ջանայ

ձերբակալել մարդասպանը, որ զայն կը սպաննէ հրազէնի գնդակով մը: Բոլոր թիկնապահները, Բօնաքին բոլոր ծառաները, անցուղարձը լսելով, կը պաշարեն աւազակը, բայց ան, վրան հրազէնի հինգ փամփուշաներ ունենալով, սանդուղին գլուխը կը վերաւորէ քանի մը անմեղներ ալ: Իր ոճիրէն գոհ, մարդասպանը կ'երթայ այն սրահը, ուր թիկնաթիակի մը մէջ մարած երկնցած էր արտաքին գործերու նախարար Ռաչիս Փաշան:

«Անոր գլխուն ալ հրազէնի գնդակ մը կ'արձակէ, և զայն սպաննելէ ետքը, անոր վիցը կը կտրէ իր ետխաղանովը: Ատոր վրայ, կը ջանայ տունը կրակի տալ, նախ բռնկեցնելով վարագույրները: Բարեբաղ-գարար այն ատեն գորքերը կը հասնին՝ ոճրագործը ձերբակալելու: Խեղճ Վէզիրները, ամէնքն ալ գոյներնին նետած, պահուրտած կը մնային Հարէմի մէկ սենեակին մէջ և իրենց բոլոր ուժովը զուռը փակ կը պահէին... մինչդեռ ոճրագործ Հասան, միւս կողմէն, ահագին ազմուկ կը յարուցանէր և կը պահանջէր որ անոնք անձնատուր ըլլան: Երբ սանդուղին վարի գլուխը կը բռնեն Հասանը, ան իր մոյկին մէջէն կը հանէ ուրիշ ատրճանակ մը, վերջինը, և վայրկեանապէս կը սպաննէ Շիւքրի պէյ անունով թիկնապահ մը:

«Եթէ այդ վայրկեանին դէմը տղայ մը ելլէր, այդ վայրենին վատահարար զայն ալ պիտի սպաննէր, ա՛յնչափ մոլեգնած և կատգած էր»:

Մինչ տէրը իրեն այս եղենակն զէպքերը կը պատմէր, Միւրդի Իոէմ սոսկումէն զողողալով, չէր կրնար այդ պատմութեան հաւատք ընծայելու որոշում տալ:

— Չե՞ս կարծիք որ Արքան չափազանց յուզուած ըլլայ այս մարդասպանութենէն, ըստ Համիտ Էֆէնտի անոր:

— Չե՞մ կարծիք, պատասխանեց Միւրդի Իոէմ:

— Ինչո՞ւ համար, յարեց Էֆէնտին զարմացած:

— Որովհետեւ Նորին Վեհափառութիւնը ծանր հիւանդ է արդէն:

— Ուրեմն հիմա ա՛յ աւելի հիւանդացած պէտք է ըլլայ:

— Աստուած պահապան ըլլայ անոր...

— Միրելի Միւրդի Իոէմն, զիտն առդեօք որ բան մը չեմ հասկնար քու վարմունքէդ:

— Վեհափառ, իմ վարմունքս ձեզի հանդէպ պարկեշտ չէ՞ արդեօք: Ո՛րեւէ թերացում ունեցա՞մ եմ ձեզի հանդէպ:

Միւրդի Իոէմ հասկցաւ որ Նորին Բարձրութիւնը կ'ուզէր իր հարձը տեսնել իր կարծիքները գնահատող և բաժնող, և թէ ան կ'ըզձար որ իր կինը աշխատակից, ընկեր և մեղսակից ըլլայ իր ծրագիրներուն:

— Այսօր, կ'ըսէր իշխանը իր տարփուհիին, եթէ ուզէիր, կրնայիր ո՛չ թէ իշխանի մը հարձը, այլ Սուլթանի մը օրինաւոր կինը ըլլալ:

Միւրդի Իոէմ այն ատեն յղացաւ գաղափարը նուիրուելու այն գերին՝ զոր Համիտ կը սպասէր իրմէ: Պէտք էր բացարձակապէս գիտնալ թէ ի՞նչ կ'ընէր ան, ինչի՛ կը ձեռնարկէր: Արդէն Համիտ, իբր ճարտար զիւանազէտ, մուծին մէջ Սուլթան

Մուրատ Եսէի զէմ շարժում մը կը վարէր : Ան տարօրինապէս կ'օգտուէր նախարարներուն , մանաւանդ Միթնատի միտմտութենէն , թիւրահաւանութենէն և անսիրտութենէն :

— Ահ , եթէ զիս ճանչնային , կ'ըսէր ան . զիս մէկ-երկու անգամ միայն տեսած են , և կը կարծեն թէ՛ պէտք եղածին չափ կը ճանչնան զիս . ինչ մուրանք : Անգամ մը որ գահը ելլեմ , պաշտօնի վրայ պիտի ձգեմ արդեօք զանոնք՝ որ Սուլթաններուն ամէնէն խրոխտը գահընկէց ըրին և որոնք անոր յաջորդն ալ գահէն վար առնելու վրայ են :

Քիչ մը վարանումէ ետքը , Համիտ իր ծրագիրը մերկացուց իր սիրուհիին : Ան Միւրզի Իռէմին պաշտօն մը տուաւ Միթնատի հանդէպ , և հանդիսաւորապէս խոստացաւ օրինաւոր պատկով ամուսնանալ անոր հետ , եթէ յաջողէր :

Միւրզի Իռէմ մինչև այդ օրը ա՛յլչափ ճիշդ գաղափար մը չէր կազմած իր տիրոջ վայրագ նվարագիրին մասին : Այդ իշխանը կ'ապացուցանէր թէ՛ կարող էր ամէն հարստահարութեան , քմահաճոյքի մը համար ոճրագործութիւն ընելու , իրեն արգելք եղող բաները ջարդ ու փշուր ընելու :

Ո՛չ , ինք չէր կրնար Միթնատին երթալ և էֆէնտիին կողմէ իրեն թեկադրուած չարագործութիւններուն մղել զայն : Ստիչ գատ , Միթնատ չափազանց ուղղամիտ մարդու մը համբաւը ունէր :

Հետեւաբար , գաղափարը ունեցաւ ինդրելու տիրոջմէն՝ յետաձգել իր ծրագիրները , պալատէն

վերջին օրերը ստացուած լուրերը գոհացուցիչ չըլլալուն համար :

Շնորհիւ իր հաստատամտութեան , իր վարպետորդութեան , Միւրզի Իռէմ յաջողեցաւ իշխանին խօսք հասկնել :

— Տէ՛ր , կ'ըսէր անոր , եթէ Միթնատ և Քիւչտի գիտնան որ դուք գահին աչք տնկած էք , և եթէ գահը բարձրանայնիդ յապաղի , նախարարները պիտի նախընտրեն հրածարիլ իրենց նախկին գաղափարէն և պիտի հաստատեն ինստանպետութեան խորհուրդ մը , գործերու փութացումին համար :

Համիտ էֆէնտի ճիշդ և օրինաւոր կը գտնէր իր հոմանունիին խորհուրդները և չէր սեզեր զայն քովէն զատել :

— Բայց եթէ մենք Դեսպանատունին հետ աչխատինք , ես անոնց չողջողուն խոստումներ տուած եմ՝ ապագային համար :

Ինդճ Միւրզի Իռէմ չափազանց վրդովուած իր աչքին զէմը սարքուած դաւադրութիւններէն , վշտահարօրէն կը խորճէր իր մանկութեան խաղաղ օրերուն վրայ և կ'ողբար իր գեղեցիկ հայրենիքը :

Օրերը կը գառնային և Սուլթանին հիւանդութիւնը կը ծանրանար : Այլ չէր կրնար ընդունիլ Դեսպանները՝ որոնք պէտք էին պաշտօնառապէս իրեն յանձնել՝ իրենց պաշտօնատարութեան գիրերը :

Միւրզի Իռէմ իր տիրոջմէն օրուան մը արձակուրդ սեզեց , Քէաթ-Հանէի քէօչլիս երթալու համար : Պէտք ունէր հանգիստի :

Համիտ էֆէնտի հաւանեցաւ ուրբաթ օրուան մը համար :

Այդ արտօնութեան համար չափազանց ուրախ, կէս-Սուլթանուհին՝ Օրիորդ Տօնժէի զաղտուկ նաժակ մը զրկեց, որով կը խնդրէր անկէ գալ այդ օրը Քէաթ-Հանէ անցընել :

Որոշուած օրը, ուսուցչուհի և աշակերտուհի զիրար գտան Սաաս-Ապասի պուրակին մէջ՝ մարմանդի մը վրայ : Օրիորդ Տօնժէի քովը կար վայելչապէս հագուած խիստ համակրելի դէմքով բարձրաստիճան մանկամարդ կին մը :

Օրիորդ Տօնժէ խիստ կը շահագրգռուէր իր նախկին աշակերտուհիին վիճակովը, կը ցաւէր անոր վրայ, անոր վիշտերուն մեծ հոգ կ'ընէր և ատոր համար էր որ Քէաթ-Հանէի պուրակը թերած էր այդ Ամերիկուհին, որ մասնաւորապէս Պոլիս եկած էր ուսումնասիրելու թուրք կինը : Տիկին վէրնըր չափազանց ուրախ էր այդ յեզակարծ բաղդին համար : Պալատէն դուրս, հանդիպել թուրք իշխանուհիի մը, ժամերով խօսիլ անոր հետ անվերապահ կերպով և զերծ նուիրագործուած պայմանազրական սովորութիւններէ, ատիկա ճշմարտապէս սքանչելի բաղդ մըն էր մէկու մը համար՝ որ Ովկէանտըր անցած էր, գալ ուսումնասիրելու համար անյառի անուղղայ, անյառի տարամերժ և անյառի շահագրգռական երկիրի մը բարքերը :

Ամերիկուհին զարմանքով կ'ըսէր անոնց թէ՛ այս տարօրինակ երկիրը բոլորովին տարբեր կը

գտնէր անոր մասին իր լսածէն : Վիրժինիաի մէջ քարոզիչ մը իրեն ըսած էր թէ՛ թուրքերը իողապաշտներ են, և ատոր համար է որ թուրքը չէր կրնար ուսել «ժամպօն»ի շերտ մը, մինչդեռ հոս, խորունկ ուսումնասիրութիւններու հետեւանքով կը տեղեկանար թէ՛ խաւամութեան և քրիստոնէութեան միջև տարբերութիւնը իրապէս շատ աննշան էր :

Միտիօնար մը իրեն վստահեցուցած էր թէ՛ Պոլիսի փողոցներուն մէջ խաւամները և քրիստոնեաները իրար կը սպաննեն :

Ատոր համար, իր զարմացումը շատ մեծ եղած էր, Սլժամպուլի փողոցներէն մէկուն մէջ նշմարելով յոյն կամաւորներու հետեւակ ջոկատ մը, իրենց կարմիր զրօշակով, որ խաչ մը կը կրէր խաւամութիւնը խորհրդանշող մանկիկն քով :

Տիկին վէրնըր շատ շահագրգռական, շատ զարմանալի կը գտնէր պարող Տէրվիշները : Ան կը սիրէր անոնց միաթիքամուրութիւնը՝ որ զիրենք կ'ուխտագրաւէր Անհունըր երազելու :

Ուրբաթ օր մը, Աուլթանին հետեւորդներէն սպայ մը զինքը առաջնորդած էր այցելել Բերաի կեղրոնական թէքքէն :

Սովորական աղօթքներէն ետքը, երաժիշտ Տէրվիշ մը սկսած էր նիյ(*) նուագել :

Թէքքէին գմբէթին տակ բացարձակ լուութիւն

(*) Մէվլէվի Տէրվիշներուն յատուկ տեսակ մը սրնակ :

մը կը տիրէր: Այդ սրբազան երգին շնորհիւ, մարդ ինքզինքը կը կարծէր խորհրդաւոր տեղ մը փոխադրուած, ստորին և աղտոտ շահերու այս կեանքէն շատ հեռու: վերջապէս հեռո՛ւ այս աշխարհէն: Թէքքէին լուսեթիւնը որչա՛փ վսեմ էր... Տէրվիշները, իրենց պարզութեանը մէջ, յափշտակութիւնով կ'ունկնդրէին այդ նեյը: Կը խորհէին Անոր վրայ, միշտ Անոր, Հուին, Հուն(*) որ ամէն տեղ է, ամէն բան է:

Հուն տեսնելու համար՝ պէտք է երազել: Սիրտը հոգին, տիեզերքը, բնութիւնը, պատմութիւնը՝ Հուն է. անտնք Հուին ազատագրումը, մարմնացումն են: Եւ նեյը ուղղակի հոգիին կը խօսէր. պէտք չի կար գիտնալու մեզդեմի լեզուն, պարսկերէնը, տպաւորութիւն և սարսուռը համար այդ խորհուրդներուն հմայքէն: «Ես կ'ուզեմ սիրտ մը, կ'ըսէր նեյը, սիրտ մը՝ զոր անջատումները, հայրենարազձուլութիւնները բզբտած են, պատառ-պատառ ըրած են, որպէսզի կարենամ անոր բացատրել զիս կրծող ցաւը, այն ցաւը զոր զգացած եմ՝ իմ մարմնիս և հոգիիս... բաժնուած ատներ»:

Ներկաներուն մէջ կային հարիւրհազարներով մարդիկ և կիներ: Հոն կը նշմարուէին շնորհալի արդու-զարգերով անցորդ գրաւիչ Եւրոպացուհիներ և Թէքքէին օթեակներուն մէջ բազմած քողածածկուած թուրք կիներ, ծերունիներ, ճերմակ և կա-

նանչ փաթթոցներով հօժաներ. երկար մոխրագոյն արիֆիներով Տէրվիշներ, Ծեր-Թուրքեր, երիտասարդ-Թուրքեր, Յոյներ, Հայեր: Սեւ աչքերով կին մը՝ կը թուէր խորին ուշադրութիւն մը ընծայել նեյի երաժշտութեան: Ո՛վ է այդ կինը, կը հարցնէր ինքնիրեն Ամերիկուհին:

Ամէն պարագայի մէջ, ա՛ն ալ այս Տէրվիշներուն պէս խորհրդապաշտ մըն է. այնչափ նեյը զինքը կը հմայէ: Ան աչքերը յառած կը մնայ նեյ նուազողին վրայ. ագնիւ Տէրվիշ մը, գեղաղէմ մարդ մը՝ ճշմարիտ աշակերտ մը Մէլլանաի, որ անտան հիմնադիրն է այդ աղանդին:

Յետոյ նեյին անուշ ձայնը կը թուէր երգել սո՛ւպէս.

— Ո՛վ անդրովիէանոսի աղջիկ: Արթնայի՛ր: Մտի՛ր չրջանակին մէջ այն երազներուն՝ որոնք սիրելի են մեզ: Վայրկեան մը բաղդատէ՛ այս քաղաքին շքեղութիւնը, իր պալատներուն պերճութիւնը, այդ խաժամութիւն աղմուկները, սա ետուզեալ, սա յուզումը, զարերէ խկեր լքուած մէվլէվի Շէյխին զամբարանի վիճակին հետ: Այդ Շէյխն ալ կորովի և հզօր էր, ականաւոր և խմստուն. ա՛ն ալ իր դերը խաղացած էր այս՝ աշխարհին վրայ: Ան մեծութիւններուն գագաթնակէտը հասած էր. Եւ ի՛նչ կը մնայ այդ կեանքէն, այդ մեծութենէն, և այնչա՛փ աշխարհակալներու և այնչա՛փ մեծ բանաստեղծներու կեանքէն: Հարիւր տարիէ աւելի առաջ մեռնող այդ Շէյխին կեանքը

(*) Կը նշանակէ Ան, սյսինքն Մեծ Ամէն:

բազմաթիւ կեանքին հետ այսօրուան այն մեծերուն, որոնք այնչափ խլացուցիչ ազմուկ մը կը յարուցանեն հոյն բաներու համար . . .

«Ո՛վ օտար երկրի աղջիկ, աղէ՛կ գիտցեր որ՝ մինչև իր ճակատագրական վախճանին օրը՝ այս աշխարհը չսխալ տեսնայ այն հանճարը՝ որ այս խորհուրդները մերկացնէ, բովանդակ մարդկութեան բարիքին համար» :

Ունկնդրելով նեղին, արցունք մը՝ կարծես ազամանդի կտոր մը ըլլար՝ ինկաւ գեղանի կնոջ աչքերէն : Նեյ նուագօցը գիտցաւ արդեօք թէ՛ գէթ մէկ սիրտ մը հասկցած էր իր խորհրդապաշտ հիւանդութեան լեզուն :

Ան դադրեցօց նուագը, և Տէրվիչները վերսկսան իրենց պարը :

Իր պատմութիւնը աւարտելով, Տիկին Վէրնըրը զիտեց չորհալի Սուլթանուհին : Անիկա իր աչքին երեւցաւ բացառիկ էակ մը, ջերմանոցի ծաղիկի նման էակ մը, գեղանի, բայց ճակատագրականապէս անձանօթ :

Եւ կարեկցութեան միացած հիացումի զգացումով մըն է որ Տիկին Վէրնըր ցաւով բամուռեցաւ Միւրդի Իոէմէն :

Ը.

Փոխնիվոս իմաստուն և բխամիտ, յանդուգն և երկչոտ, մարդավայել և վայրենի, կուռասէր և խաղաղասիրտ, ազահ և առատածուծ, Ապտիւլ-Համիտ օրէ-օր աւելի՛ անհասկնալի կը դառնար, նոյն իսկ Միւրդի Իոէմի : Ատենով, այդ իշխանը աւելի՛ մատչելի, աւելի՛ սապնջական էր : Հիմա, հօրեզօրը գահընկեցութեան հետեւանքով, գահաժառանգի աստիճանին բարձրացած ըլլալով, աւելի՛ մեծամիտ, աւելի՛ ամբարտաւան կը դառնար :

Արդէն նկարագրի այդ յեղեղուկութիւնը իր գերլատանին մէջ սովորական բան մըն էր : Մեր մարաջախտ մը, Մուրատ Ե՞րի գահակալութեան օրը. չէ՛ր ըսեր. «Բոլոր Սուլթանները, իրենց թագադրութեան օրը դառնուկներ են, բայց ետքէն գազաններ կը դառնան» :

Միւրդի Իոէմ վարժուած էր Ապտիւլ-Համիտի քմահաճոյքներուն : Իրեն համար, իշխանը միանգամայն բարեկամ մը և թշնամի մը, ամուսին մը և տարփածու մըն էր. և, երկու պարագային ալ. ուսումնասիրութեան հետաքրքրական և հազուա-

գիւտ առարկայ մը : ճշմարտապէս չահեկան էր հետեւիլ Նորին Բարձրութեան ունեցած գլխաւոր մենամոլութեան յեղաշրջութեանը , հալածուելու մենամոլութիւնը : Յանկարծ , գիշերանց , Համիտ Էֆէնտի անկողինէն կ'ելլէր , ահարեկած . ննջասնեակը կը փոխէր և կը տեղաւորուէր աթոռի մը վրայ . զողողալով կը թղթատէր արկածախնդրական , ոճրագործական վէպեր . անոնց մէջ իր կացութեան նմանութիւն մը գտնելու համար : Բոլոր ոճրագործները , ամէնէն հոչակաւոր աւագակները , ամէն ժամանակներու և ամէն երկիրներու համբաւաւոր ստիկանները՝ իրենց անուշտովը և գործքերովը ծանօթ էին իրեն : Կր կասկածէր անոնցմէ՝ որոնք օժանդակած էին իր հօրեղբորը գահընկեցութեան : Անոնց պէտք ունէր նոր գաւազրութեան մը համար . բայց , անգամ մը գահ բարձրանալէ ետքը , անխնայ և կազմակերպուած հալածանքի մը պիտի ենթարկէր գանոնք : Պէտք էր որ բնաջինջ ընէր այդ անձերը՝ որոնք վարժուած էին Սուլթաններ գահընկեց ընելու :

Միւրդի Իռէմի համար Նորին Բարձրութիւնը խաղալիք մը կը դառնար : Այն օրէն իվեր որ՝ Սուլթանին վիճակէն օգտուելով , իշխանը կը կրկնապատկէր իր գործունէութիւնը , Չէրքէզուէին չէր համարձակեր պալատէն դուրս ելլել : Սակայն , նախապէս իր տիրոջը հազարաւոր կեղծ գզուանքներ չապլկելէ ետքը , գործադրութեան զբաւ օրուան մը արձակուրդ առնելու նպատակով կազմած ծրա-

գիրը , երթալու համար Ապտուլ-Մէճիտի արձակած կիներէն Տիլչիքեարի քով , ուր պիտի հանգչէր և ազնուապետականօրէն , պիտի ճաչէր . յետոյ պիտի այցելէր Այա-Սօֆիան և սրբազան մատուէնքները :

Միւրդի Իռէմ չժողաւ լուր տալ Օրիորդ Տօնժէի և Տիկին Վէրնըրի :

Տիլչիքեար , բնականէն բարի կին մը , արդէն չա՛տ հաւատացեալ , չա՛տ միամիտ «հաճի» մըն էր : Էրկին էր եհնեա Էֆէնտի անուն մէկը , արժանաւոր «իւլլէմ» մը , Մարգարէին սերունդէն և կանանց փաթթոցաւոր : Ան Գալաթի «Գատը»ն էր :

Տիլչիքեար մեծ պատրաստութիւններ տեսած էր , որովհետեւ զիտէր թէ երկու եւրոպացուհիներ պիտի ընկերանային կէս-Սուլթանուհիին :

Առտուն կանուխ , Միւրդի Իռէմ պալատէն ելաւ և գնաց Տիլչիքեարին : Օրիորդ Տօնժէ և Տիկին Վէրնըր , երկուքն ալ թուրք կիներու տաւրազով ծպտուած և փողփողուն «եաչմաք»ներով , իրեն կը սպասէին Տիլչիքեարի տունը , Սուլթան Ահմէտ թաղին մէջ փայտաչէն աններկ ու հին մոխրագոյն մեծ տուն մը , որ «տիքլիկ-թաչ»ին զէմը՝ Չիարձակարանի հրապարակին վրայ կը նայէր :

Միւրդի Իռէմ , այդ օրը չափազանց ուրախ , շարունակ կը խօսէր Տիկին Վէրնըրի հետ : Ամերկուհիին ծանօթ էր արդէն քաղաքը : Իր չրձակաջողով :

Իրենց ճաչը հրամցուեցաւ այն սենեակին մէջ՝ ուր երեք բարեկամուհիները ընդունուած էին :

Տիշի քեար, խիստ յարգալից, Սուլթաններու ասան նախկին ընակչունի իր տարագով, աչքերուն ակնոց զբած, յարգանքի համար, չէր ձօտնար իշխանուհին և անոր ընկերուհիներուն :

Սենեակէն խոճանոց կերթեակէր, յաւազոյն կերպով սպասարկելու համար իր տիրոջ Սուլթան Մէճիտի կէս-հարսին :

Երկու զեռատի գերուհիներ. Տիշի քեարի հետ գորգին վրայ զետեղեցին աթոռակ մը, որուն վրայ զրին արծաթէ բանուած ափսէ մը, որ իրենց տիրուհիին ընծայ տրուած էր՝ իր ամուսնութեան օրը՝ Սուլթանուհի մը կողմէ :

Երեք բարեկամուհիները մինակնին սեղան պիտի նստէին :

Գատրին կինը, հակառակ Միւրդի Իռէմի չափազանց յարգամեծարութիւններուն և «Ֆրէնկ» կիններուն պնդումներուն, չհաւանեցաւ իրենց ճաշին ընկերանայ : Անիկա, իր սովորութեանը համաձայն, նախընտրեց անձնապէս սպասարկել Համիտ Էֆէնտիի հարձին և անոր ազնիւ «նխապիտ»ներուն : Երկու սպասուհիները ոտքի կը կենային, հրամայելով կրայելուած պղինձէ սաներու մէջ պատրաստուած համադամները . առանց պատառաքաղի՝ ձեռքով նին կ'օտէին արեւելեան հին սովորութեան համաձայն :

Ճաշացանկը . խիստ խնամքով պատրաստուած, կը բազմանար հետեւեալներէն .

Ականջի տպուր (*).

Հարանիքի տպուր.

Մածուով գառնուկի խորոպած.

Չէթով պատինջան, նուազած իմաթի ճաշակով պատրաստուած.

Կիւփէճի թիւրիւ (բանջարեղէնի մոկեդոնիկ).

Կաթնապուր.

Սորսի պէօրէկ (պանիրով և ծեծուած միսով խմորեղէն).

«Սիկարէթ»ի խմորեղէն.

Միսով յունական եղջիւրապուր.

Գքուսի խճողակ.

Ալպանայան փազլավա (տեսակ մը հազարտերեւուկ).

Լեցուած հեքիասաւ.

Բակըլով, սլուով և կարմիր լուբիայով փիլաւ.

Պտուղներ :

Գերուհիներուն կողմէ մատուցուած և երկու մասէ կազմուած ջրամանի մը՝ «լէհն-ըպըր»ի մը մէջ ձեռքերնին լուայէ ետքը, երեք բարեկամուհիները սկսան խօսակցել, նստած «մինտեր»ի մը վրայ, տեսակ մը ցած նստարան : Միտ գէր, չափազանց տգեղ, պճտուն աչքերով, ծայրայեղօրէն ձեկնակ ակումներով սեւամորթ գերուհի մը՝ Չիււպիւլ, անոնց սուրճ հրամցուց . հիւրերը զբօսցնելու

(*) Հեղինակը, թերեւս սիրուն զուարճաբանութեան մը համար, արեւելեան համադամներու թուրքերէն անունները կատակերգական ֆրանսարանութեան մը վերածած է հոս : Մենք ալ նոյնութիւնով հայերէնի կը թարգմանենք :

համար՝ Զիւմպիւլ անհատնում միոսարանու-
թիւններ ճրճրաց :

Ճաչէն ետքը, Այա-Սօֆիա պիտի այցելէին
ծպտուած : Միւրդի Իոէմ չարածճիարար «Ֆրէնկ»
կիներուն հայթայթեց սաթէ երկայն համրիչներ և
անոնց ըստ թէ՛ մզկիթին մէջ ինք ինչ որ ընէր՝
իրենք ալ ա՛ն պիտի ընէին : Որովհետեւ, եթէ
հօճաները ամենապզտիկ կասկած մը ունենային
թուրք կիտը պէս ծպտուած այդ ֆրէնկներուն մա-
սին, անոնք անմիջապէս կը քարկոծուէին . . .

Օրիորդ Տօնիէ սկիպօրէն կը ծիծաղէր : Օղը
աղւոր էր : Յորեկէ-ետքը յարմար տեսան՝ հին
մզկիթը այցելելու համար. այդ ժամուն, մեծ
հաւանականութիւնով, ո՛չ մէկը պիտի գտնուէր
հին Մայր-Եկեղեցիին մէջ : Արագօրէն անցան երկու
հրապարակներէն, քովերնին ունենալով սեւամորթ
ներքինի մը :

Որչա՛փ վեհաշուք և գեղեցիկ էր Այա-Սօֆիան :
Միւրդի Իոէմ և Տիկին Վէրնըր, լուռ ու մունջ,
կը սքանչանային այդ բազմադարեան գմբէթին .
Տասերեք տարու հաւքը մը, ճերմակ փաթթոցով
ազնիւ ու աղւոր մանչ մը, մզկիթին ճիշդ մուտ-
քին վրայ գտնուող մարմարեայ աղբիւրին քով,
բարձրաձայն կ'արտասանէր Գուրանէն զանազան
հատուածներ :

Իր ձայնը թրթռուն և ներդաշնակ էր. ծնուն-
դէն կոյր էր ան : Այցելուները ատկէ շատ յուզուե-
ցան : Անշուշտ երեքն ալ բան մը չէին հասկնար

Գուրանի գրուածքներէն. բայց տղուն ձայնը որ-
չա՛փ անուշ ու խոցոտող էր . և որչա՛փ պերճախօս
էր շքեղ չէնքին լուսթիւնը : Կարծես այդ երեք
հոգիները, առանց արարերէն գիտնալու, կը հաս-
կնային ինչ որ հաւքը ինքզինքին համար կ'երգէր :

Կոյր բայց նորէն բզէզ, հաւքը Գուրանը բա-
ռացի՛ կերպով գոց գիտէր, թէ՛ն առանց հասկնա-
լու : Տիկին Վէրնըր չէր կրնար ըմբռնել այս բանը .
Աստուածարանութեան համետ ուսանողներ, գոր-
գին վրայ նստած, իրենց դասը կը սորվէին . անոնք
չէին կարգար, այլ կ'երգէին :

Ամերիկուէին կը սքանչանար հին տաճարին
սիւներուն, այն ամենի գմբէթին, այն վաղնջական
վանդակորմներուն, այն կանանչ յախճապակեղէն-
ներուն, այն պատմական դարիրներուն : Սուլթանին
օթեակը, ջահերը, խորանը, «հաւաւախոխ» կաթու-
ղիկէին ամպիտոնը՝ այն առարկաներն էին որոնք
մասնաւորաբար կը գրաւէին ուղեւորուէին
ուշադրութիւնը :

Ընդարձակ մզկիթին մէջ երկու-երեք շրջանէ
ետքը, կիները ուղեցին հագգչիլ : Միւրդի Իոէմ
խանդավառուած, իր բոլորովին նոր օպաւորու-
թիւնները երկու ընկերուէիներուն հաղորդելու և
իր վերացումին զանոնք ալ մասնակից ընելու փա-
փաքէն կը մրկէր : Իր անյնչափ երկար օրերուն մէջ,
մոռալ պալատի մը մէջ խափանուած, Համիտ
էֆէնտիի չնորձալի հարձը որ՞ուն պիտի խոստովա-
նէր իր խոկումներուն գաղտնիքը :

Գորգին վրայի նկունքերին ետևը, տարաբաղդ դեռափի հափըզին պէս անհոգ և թրքական ձեւով նստան:

— Միրելի՛ բարեկամուհիներս, ըսաւ անոնց Միւրզի Իռէմ քնքշօրէն, սա մեր քովը գտնուող պզտիկ դուռը իզըրին դուռն է: Իզըր մեռած չէ. տասնեակ դարերէ իվեր, ան կ'ապրի և կը տիրէ մեր ճակատագիրներուն վրայ:

«Ան չի պահուըտիր, բայց պէտք է սուրբ մարդ մը, գերբնական գործերու տեղեակ ըլլալ, զայն տեսնելու և ըմբռնելու համար: Քառասուն օր իրարու վրայ պէտք է առտուն կանուխ հոս գալ և անընդհատ աղօթել, քառասունըմէկերորդ օրը զայն տեսնելու համար»:

Միջավայրը ա՛յնչափ յարմար և չէնքը ա՛յնչափ արտասովոր էր որ՝ Տիկին Վէրնըր անմիջապէս կ'երեւակայէր թէ՛ այդ հրաշապատում անձը պիտի ելլէր պզտիկ դուռնէն և իրենց քովը պիտի գար:

— Ասիկա մեր է՛ն մեծ մզկիթն է, շարունակեց Չէրքէզուհին, բիւզանդական համբաւաւոր կաթուղիկէն, կոստանդինի յաւերժայիչատակ տաճարը:

«Օրթօթօքաներ և Իսլամներ, մօտաւորապէս երկու հազար տարիէ իվեր, կ'աղօթեն, կը պաղատին, կ'աղերսեն Աստուծոյ, այս գմբէթին տակ: Ահ, Գատըրի գիշերն է որ պէտք է այցելել Այս-Սօֆիան: Ի՛նչ խուռն բազմութիւն: Այդ գիշերը, հազարաւոր անձեր, մարդիկ, կիներ կու գան աղօթել մինչեւ արշալոյս: Այս տաճարին իւրաքանչիւր

անկիւնը, անթիւ քարոզիչներ, անուշ ձայնով հափըզներ, բարի և գիտուն հօճաներ, կը քարոզեն, կ'երգեն. կը գոռան մինչեւ արեւին ելքը: Այդ գիշերը, անկարելի է կէս ժամուան մէջ մզկիթին մէկ ծայրէն միւսը երթալ: Այդ սուրբ ժամերուն միջոցին, երկինքը կը բացուի, բոլոր մեղքերը կը ներուեն, Աստուած թողութիւն կը չնորհէ ամէն անոնց՝ որոնք կը զղջան. խորհրդատեսները, հաւատացեալները, աչքովէին կը տեսնեն կիտարաց երկինքը, իր չքեղութիւններուն և լուսափաղփութիւններուն մէջ. բայց ի՛նչ կ'ուզեն այդ մարդիկը և այդ կիները: Հարուստներ և աղքատներ, մեծեր և պզտիկներ, տէրեր և ծառաներ, ամէնքը հաւասար կ'ըլլան, եղբայր կ'ըլլան: Ի՛նչ կը հայցեն անոնք այդ հրաշագան գիշերուան մէջ: Այդ մարդիկը, դարերով աղօթած են և դեռ պիտի աղօթեն: Ըլլա՛յ Իպիտի առջև, այդ նուիրական ոչինչ կենդանիին, ըլլա՛յ Սօլօչ հսկայ հրէչին առջև. կամ Սաքիա-Մուենի կիսանդրիին, կամ, Հոմի մէջ՝ անհամար չրթունքներէ կրծուած մատներով Ս. Պետրոսի սեւ արձանին, կամ, հոս իսկ, ժամանակակից Հոմի մէջ, Այս-Սօֆիաի վեհաշուք Միհրապին առջև, մարդիկ պիտի աղօթեն: Այդ գերագոյն անըմբռնելութիւնը, այդ յաւիտեան անթափանցելի խորհուրդը, այդ անբացատրելի սկիզբներուն սկիզբն է որ՝ մարդիկը կը մղէ երկրպագելու ալդ անծանօթին կամ անոր մէկ մարմնացումին առջև: Ահ, կ'իթէ այս տաճարը հողի ուննապը,

կթէ իղզրը, որ դարերէ իվեր հոս աղօթել կելող բոլոր մարդոց անցնիլ երթալը տեսած է. մեզի նկարագրէր իր զիտած անմոռանալի և տարօրինակ տեսարանները, ինչ գրաւիչ և անձկալի պատմութիւն մը չպիտի ընէր :

«Ճոխ և գոյնզգոյն զգեստներով մեծ կրօնաւորներ, մեծ հանդիսաւորութիւնով հաւաքուած են հոս, բարձրաձայն աղօթելով Աստուծոյ որ՝ Արեւելքի Կեսարին յաւերժական քաղաքը չի յանձնէ թուրքերուն : Կարծես զեռ կը լսուին ջերմեռանդաբար կրկնուած աղաղակները . Բիրիէ էլէյսօն, Բիրիէ էլէյսօն :

«Ինչ յուսահատութիւն, ինչ աննկարագրելի անձկութիւն : Յետոյ, յանկարծ, անաւասիկ Փաթիհ Մէհմէտ Բօքը, որ մէկ հարուածով կը տապալէ այլասերած և պառակտուած Հռովմայեցիներու այդ Կայսրութիւնը, հրաշակերտ մը ելող այն հոյաչէն Կաթուղիկէն վերածելով մզկիթի, այն միջոցին՝ երբ Միջին-Դարը կը խաւարէր : Մէհմէտ փառք կու տայ Աստուծոյ, Իր անուէին և Իր փառքին համար՝ թող տարուն իրեն տիրանալու այդ հոչակաւոր քաղաքին, համաձայն Մարգարէին յաճախակի կրկնած կամքին : Այդ օրը՝ քաղաքը ինչ հետաքրքրական տեսարան մը պարզած ըլլալու է : Ինք որ յաղթական մըն էր, փոխանակ Բրիտոններէն ջարդելու, ինչ որ ժամանակին սովորութիւնն էր, կը հաստատէր անոնց առանձնաչնորհումները, պահելով անոնց Պատրիարքին իշխանութիւնը : Ինչ ազնիւ շարժում» :

Աղօթքի ժամը հասած էր : Կամայ-կամայ բարեպաշտները իրենց տեղերը կը գրաւէին : Տիկին Վէրնըր խնդրեց Միւրդի Իռէմէն որ իր մանրագին նկարագրութիւնը շարունակէ Տիլչիքեարի տունը : Որով, մզկիթէն ելան և ուղղուեցան դէպի Տիլչիքեարի տունը, հետերնին ունենալով աւանդական ներքինին :

Միւէզցիները, Այա-Սօֆիաի չորս մինարէներուն և Սուլթան Սնմէտի մզկիթին ուրիշ վեց մինարէներուն գագաթէն՝ աղօթքի կը հրաւիրէին բարեպաշտները, որոնք, ձեռքերնին համրիչներով, ծանրաչուք ու խաղաղ, վայրկեան մը մոռնալով գործերը, առուտուրը և գործառնութիւնները, գրասենեակները և թղթածրարները, վէճերը և ծրագիրները, վերջապէս մոռնալով դրամը և հաճոյքները, կը վազէին դէպի մզկիթ : Հօն, ձեռքերնին ձեռքերնուն վրայ, փոխնիփոխ ոտքի վրայ և ճնրսղրած, դէմ զիմաց կը գտնուէին Անտր՝ որ ամէն բան է, ամէն տեղ է : Եթէ ուսմիլը, հակառակ իր ջանքին, չի կրնար Անոր հաճոյանալ, պատճառը ա՛ն է որ՝ ամէն բանէ առաջ աշխարհային գործերը թօթափած հոգի մը պէտք է . ամէն մարդ իրաւունք ունի Անոր սիրտը շահելու, ամէն մարդ կրնայ Անոր սիրտը շահիլ . և ո՛չ մէկ պաշտօնեայ, ո՛չ մէկ միջնորդ, ո՛չ մէկ քահանայ կայ Անոր և մահկանացուներուն միջեւ : Հօճանները և իւրիւսները՝ իր ծառաները, իր զաւակներն են միայն, ինչպէս բոլոր ուրիշները :

Բարին Տիլչիքեար, Միւրղի Իոէմի և անոր բարեկամուհիներուն դարձին, անոնց ընծաներ տուաւ. Չինաստանէն եկած անօթ մը, չղարչի պէս նուրը, ինչպէս կը բացատրէր ինք, ձարոնէն եկած անպատմիկ կանանչ գոյնով պնակներ և շիշեր, զորս իր ամուսինը՝ Գատը Էֆէնտին գնած էր, Ատէնէն անցած միջոցին, եմէնի սուրճի պզտիկ զեկոյիջներ, Մէքքէի արմաւի տուփեր, Գամա-կոսի մաշրան մը, կիներու յատուկ՝ ոսկիով ու արծաթով բանուած տեսակ մը սրուհուզ, Երու-սաղէմի սատափով գեղօրներ:

Փափկանկատ «սարայլը»ն՝ Տիկին Վէրնըրին նուիրեց Չինաստանի կերպաս մը և օրիորդ Տօմէի խաւաքարտակերտ սքանչելանկար թանաքաման մը, ճշմարտապէս ինքնատիպ առարկայ մը:

Կէս-Սուլթանուհին ալ, չափազանց առատա-ձեռն և ազնուակիան, իր կողմէ կեսրայրին-գերուհիին նուիրեց հարիւր ոսկինոց քսակ մը, խնդրելով որ այդ գումարով իր ամուսինին՝ Էֆէնտին գնէ իւլէմաի լաւագոյն զգեստ մը. նուիրեց նաև զմրուխտէ մասնի մը:

Միւրղի Իոէմ պարտք դրաւ նաև անոր վրայ, իր կողմէ իր յարգանքները մատուցանել Կալաթաի յարգելի Գատրին:

Մեկնումի ժամը հասաւ: Հմայուած այս այցելութենէն, Տիլչիքեար լացաւ այն պահուն՝ երբ կը համբուրէր Միւրղի Իոէմի քղանցքը: Միւրղի Իոէմ խնդրեց անկէ այցելութեան զալ իրեն՝ զահաժա-ռանգին պալատը:

Նորին Բարձրութեան հարձը, այս անգամ Տիլչիքեարի տունէն ելաւ ո՛չ թէ ծպտած. այլ իբր կէս-Սուլթանուհի: Իր մեկնումէն քանի մը վայր-կեան ետքն ալ, հեռացան «Փրէնկ» կիները. շատ գէշ աչքով պիտի դիտուէր, եթէ երկու օտարուհի-ներ հետեւէին իսլամի մը կնոջ: Որով, Տիլչիքեարէն հրաժեշտ առին և մեկնեցան:

Տիլչիքեար Ֆրանսերէն բառ մը իսկ չէր գիտեր: Օրիորդ Տօմէ ալ, հակառակ քսանըհինգ տարիէ լվեր Թուրքիա գտնուելուն՝ թուրքերէն չէր գիտեր: Որով, Օրիորդ Տօմէ զաւելչակա-նօրէն կրնեց Տիլչիքեարի ըսածները, ահագին խնդուք պատճառելով:

Սաստուլլան պէյ, Մուրատ Եւէի առաջին քարտուղարը, չափազանց մտահոգ, Տօբմա-Պաղչէի իր սրահին մէջ, կը խորհէր իր տիրոջ վիճակին վրայ:

Սուլթանին գահընկէցութիւնը ստույգ էր. անոր վիճակը կը գէշնար օրէ-օր: Իր գահակալութեան ատեն, պալատը կատարեալ ուրախութեան մէջ էր: Ամբողջ աշխարհ կը խուժէր Պէշիք-Թաշ, չնորհաւորելու նոր թագաւորը. և իւրաքանչիւր այցելուի կ'ընծայուէին, ոսկիէ և արծաթէ փախէներ, որոնք կը պարունակէին թանկագին նուէրներ, ոսկեգօծ ժամացոյցներ, մասնիներ, գեղօրներ, և ինչ ամէն մարդ իրաւունք ունէր անոնցմէ հատ մը առնելու. իբր յիշատակ: Հարէմն ալ ուրախ էր. Մայր-Սուլթանուէին չափազանց երջանիկ էր. դուրսը, ամբօխը, առտուընէ մինչև իրիկուն, ուրախութեան ցոյցեր կ'ընէր: Քանի մը օր ետքը, այդ ուրախութենէն, համակրութեան այդ ցոյցերէն բան մը չէր մնար: Պալատը լուռ ու թաղծալի դարձած էր. պալատականները տխուր և մեկամաղձօտ էին:

Փողոցներուն և ամէն չրջանակներու մէջ՝ թագաւորի վերահաս փոփոխութեան մը վրայ միայն

կը խօսուէր. երկրին գործերը երեսի վրայ չեն կրնար ձգուիլ, կ'ըսէին:

Իշխան Համիտ Էֆէնտի կը հմայէր բոլոր Վէզիրները: Սահմանադրական օրէնքներու խմբագրիչներէն աւելի սահմանադրական կը ձեւանար ան: Գիտէր ամենամեծ փտտահութիւն ներշնչել: Սահմանադրութեան մասին իր տեսութիւնները հիմնուած էին պայծառ, որոշ և ազատական գաղափարներու վրայ:

Միթհատի աչքին՝ Համիտ կուռք մըն էր. բայց պետական վարիչները շատ կը վախնային Եւրոպայի գաղափարէն. Եւրոպայի մէջ աղէկ աչքով չափով զիտուէր երեք ամսուան մէջ երկու Սուլթանի փոփոխումը:

Ասկէ դատ, Պոլիսի մէջ, քանի մը շահագէտ յետաջրջականներ, զանազան պալատականներ և պզտիկ թիւ մը հօճաներու, կազմած էին գաղտնի ընկերութիւն մը: Դժբաղդարար քանի մը իշխաններ ալ գաղափարակից էին այդ յետաջրջականներուն: Անոնք լուր կը տարածէին թէ՛ Սահմանադրութիւնով՝ վեհապետին առանձնաշնորհումները պիտի ոչնչանային՝ և թէ՛ Սահմանադրութիւնը իրականութեան մէջ ուրիշ բան չէր. բայց եթէ ծպտուած հանրապետութիւն մը:

Սակայն նախարարները չէին վարաներ երբեք. իրենց որոշումը հաստատ և անդատնալի էր:

Իր անստուգութեանը մէջ, Սաստուլլան պէյ նամակ մը ստացաւ. Մեծ-Եպարքոսը կը խնդրէր իրմէ՝

առանց ժամանակ կորսնցնելու իր քովը գալ : Նամակին մէջ Ռիւչտի փաշա իրեն կը տեղեկացնէր շարժումին պարագլուխներուն որոշումը, խնդրելով որ կայսերական պալատ երթայ և հնարաւոր ամէն նախագրուշութիւններով՝ եղածը իմաց տայ Մուրատ ԵրԷի Սուլթանուհի մօր, անկէ խնդրելով կարելի եղածին չափ փութով անհրաժեշտ պատրաստութիւնները տեսնել՝ Սուլթանին փոխադրութեանը համար այն «քէօչկ»ը՝ որ պիտի ցուցուէր : Սաատուլլահ պէյ հնազանդեցաւ նախարարապետին հրամանին և գնաց տեղեկացնել Մայր-Սուլթանուհիին : Բարձր իմացականութեան տէր այս կինը, առն-առն թանկագին խորհուրդներ կու տար պետական մարդոց : Անուշ և քաղցրաբարոյ բնաւորութիւն մը ունէր : Սկսաւ լալ և ազօթել Աստուծոյ՝ իր զաւակին փութով ապաքինումին համար : Բայց հասկցաւ թէ՛ երկար ողբալ ապարդիւն էր, որովհետեւ նոր Սուլթանին իշխանութեան գլուխ անցնելը որոշուած էր : Աչքերը սրբեց և Հարէմը գնաց, հրամայելու համար որ՝ անմիջապէս պարպեն պալատը :

Ժամ մը ետքը, տարարազը վեհապետը, հիւանդ և զգայագիրկ, կը փոխադրէին Ջրաղանի պալատը :

Սաատուլլահ պէյ Սպարապետութեան կը ծանուցանէր պալատին պարպուելը և Մուրատ ԵրԷի փոխադրուելը :

Մեկամաղձոտ և երազուն, առաջին քարտու-

ղարը սիկառը կը ծխէր՝ Տօլմա-Պաղչէի քարափին վրայ :

Աւանդական հարիւր մէկ թնդանօթները արդէն արձակուած էին :

Յանկարձ հանդիսական նաւակները երեւցան : Համիտ էֆէնտի, Ն. Կ. Վ. Ապտիւլ-Համիտ Սան Բ., Մեծ Թուրք և Հաւատացեալներու Առաջնորդ զարձած, մեծ հանդիսաւորութիւնով կու գար տիրանալու Սէլիմներու և Սիւլէյմաններու գահին, Կայսերական Պալատին մէջ : Բիւչտի փաշա և Սայիտ փաշա կ'ընկերանային Սուլթանին : Դէպի իր նոր բնակավայրը ուղեւորութեանը միջոցին, Ապտիւլ-Համիտ ուրիշ բանի վրայ չէր խորհեր, բայց եթէ իր մեծ ծրագիրներուն, իր տալիք լաւագոյն ուղղութեանը՝ թէ՛ ներքին և թէ՛ արտաքին քաղաքականութեան, Սահմանադրութեան, հանրային կրթութեան, երկրագործութեան, ճարտարարուեստին և հազարաւոր ուրիշ բաներու :

Կը յիշէր Եւրոպայի գլխաւոր մայրաքաղաքները ըրած իր ճամբորդութիւնը, Արիւմուտքի քաղաքակրթութիւնը և բարգաւաճումը : Սաիտ փաշա, պալատին առաջին քարտուղար դեռ նոր անուանուած, լուռ կը մնար և չէր համարձակեր խօսիլ :

— Բարտուղա՛ր, ըսաւ Սուլթանը անոր ինչո՞ւ չես խօսիր :

Թրքական կենցաղագիտութեան օրէնքներուն համաձայն՝ Մեծ-Եպարքոս Բիւչտի փաշան է որ պէտք էր պատասխանել :

— Տէր, ըսաւ ան, Ձեր Մեծութիւնը, Ձեր Վեհափառութիւնը չեն թոյլատրեր ձեր խոնարհ քարտուղարին խօսք մը արտասանել :

Երբ Սուլթանը Տօլմա-Պաղչէ հասաւ, խեղճ Սաատուլլան պէյ բոլորովին այլապէս էր: Բռնեց Սալիտ փաշայի ձեռքէն, որ իր անձնական բարեկամն էր, — որովհետեւ հայրերնին արդէն բարեկամներ էին, — և ըսաւ անոր:

— Սիրելի՛ս Սաիտ փաշա, երբէ՛ն իվեր է որ կը ձանչնաք Նորին Բարձրութիւն Էֆէնտին:

— Ո՛ր էֆէնտին, հարցուց Սաիտ փաշա:

Հակառակ թնդանօթի հարուածներուն, իր միջոցովը պալատին պարպուելուն և նախկին Վեհապետին փոխադրուելուն, խեղճ Սաատուլլան պէյ մոռցած էր նոր Սուլթանին անուանումը, ա՛յնչպիսի ընկճուած էր:

Այդ օրէն իսկ, Ապտիւլ-Համիտ սկսաւ արտառոց հրամաններ տալ:

Պարզ գահաժառանգ մը եղած ատենէն աւելի՛ խորխոր, Ն. Վ. Ապտիւլ-Համիտ հիմա ուրիշ մտասեւեռումներ ունէր: Ի՞նչպէս պիտի կրնար հանգուրժել ներկայութիւնը Բիչտի փաշայի մը, Միթհատ փաշայի մը, որոնք փորձագէտներ էին Սուլթաններ գահընկեց ընելու արուեստին մէջ: Համիտ ընականէն հեղինակաւոր էր. կը ձեւացնէր մէկու մը խորհուրդը ատեն, բայց ատիկա միջոց մըն էր միայն՝ ուրիշին գաղափարը հասկնալու և ո՛չ թէ տրուած խորհուրդին համաձայն գործելու:

Իր թշնամիներուն միայն երես կու տար: Երբ ուզէր մարդ մը ոչնչացնել, նախապէս բարիքներու մէջ կը խեղդէր զայն: Վստահարար կը փափաքէր

Միջին-Դարու կամ Հոսմէական անկումի չըջանի միապետ մը ըլլալ՝ կամ դեռ ո՛րեւէ վայրենի երկրի բարբարոս և ինքնակոտ միապետ մը: Անգիտակցօրէն, կը նախանձէր Ներոնի մը, Իպրահիմի մը, կամ ձինկիզի մը վիճակին: Միջալայրը և ժամանակը յարմար չէին, հետեւարար, իր մտադրութիւններուն հասնելու համար՝ պէտք էր նուիրուիլ դաւադրութիւններու քաղաքականութեան մը:

Բէչիտ փաշա և Միթհատ փաշա իր մղձաւանջները եղած էին:

Պետութեան բարօրութենէ՛ն աւելի, իր ապագայէ՛ն աւելի, այդ երկու արարածներուն պաշտօնանկութիւնն էր որ կը զբաղեցնէր իր միտքը:

Բէչիտ փաշան շա՛տ խելացի և շա՛տ քաջամուտ կը գտնէր. բայց բարեբաղդութիւն մը կը նկատէր որ՝ ան ծեր էր և չէր կրնար հաւատալ որ ան ուժը կամ կամքը ունենար շարունակելու գահընկեցութիւններու իր շարքը:

Միթհատ, կանոնապաշտ, վեհանձն, անկեղծ մարդ, իր ընկերակիցին չափ կորովամիտ և ուշիմ չէր: Հետեւարար, Վեհապետը կը խորհէր օգտուիլ առաջինին տարիքէն և երկրորդին միամտութենէն՝ ազատելու համար երկուքի՛ն ալ երեսէն: Իր Իրատէները Սաիտ փաշայի տուն տուած ատեն, քնացած, կերած, խմած և կանանոցին մէջ զուարճացած ատեն՝ ատոր վրա՛յ միայն կը խորհէր:

Բիւշտի և Միթհատ՝ Ապտիւլ-Համիտի Վէզիրները: Նոր Սուլթանը կատարելապէս անփոստ

կը գտնէր ասիկա : Կը կասկածէր որ, օր մը չէ օր մը, այդ երկու վարչագէտները իրեն դէմ գաղտնի դաւադրութիւն մը կը կազմակերպեն, իրեն պէս մութին մէջէն և ծրագիրներ կը յօրինէր, զանոնք պաշտօնանկ ընելու և ոչնչացնելու համար :

Իր գահակալութեան առաջին օրերուն մէջ, Սուլթան Ապտիւլ-Համիտ գրեթէ խորհրդական չունէր, չունէր անձնուէր և անկեղծ խորհրդակից մը : Բայց, զիւրութիւնով կրնար խորհրդակիցներ և գործակալներ գտնել պալատին ստորագաս մարդոցմէն . իրեն համար ամէն բան կարելի էր :

Իր գահը յարձրանալու օրը իսկ, Նորին Վեհափառութեան Հարէմը փոխադրուած էր կայսերական բնակավայրը : Կիները, իրենց տիրոջ ներկայանալէ առաջ, իրարու մէջ կը բաժնէին Տօլմա-Պաղչէի յարկարածիները և սենեակները :

Շնորհալին Միւրդի Իռէմ, իր հին պալատը վերադարձեր էր, այս անգամ ո՛չ թէ իր պարզ գերուհի, այլ իր Նորին Վեհափառութեան հարձը, հոմանուհին : Սակայն, երբ պալատին առջեւ հասաւ, տիրութենէ ընկճուած զգաց ինքզինքը :

Կը յիշէր Ապտիւլ-Ազիզի ժամանակները, իր 3,500 ընկերուհիները, նուագածուհիներու խումբը, Մայր-Սուլթանուհին, Հիմա, հակառակ պալատին վերաբնակչաւորուելուն, Տօլմա-Պաղչէն տխուր ու դժնետեսիլ էր : Կարասիներ, պայուսակներ, հոս հոն ցանցնուած բեռնածրարներ, գործաւորներ,

մտնող կլող նկարիչներ, Տօլմա-Պաղչէն առաջուանէն նուազ հմայիչ, նուազ տպաւորիչ կը դարձնէին :

Սուլթանը, չափազանց զբաղած, չափազանց յոգնած, ուզելով ծածկել ուրախութիւնը, կը ջանար վստահութիւն ներշնչող հեղադէմ երեւոյթ մը առնել. տակաւին Հարէմին շնորհաւորութիւնները չէր ընդունած :

Պիաթի արարողութիւնները աւարտելէ և ամէնէն ստիպողական գործերը փութացուելէ ետքը, Ապտիւլ-Համիտ ներքինիներուն հասկցուց թէ՛ կրնար ընդունիլ իր կիները, իր հարձերը, իր պատուակալ տիկիները, ինչպէս նաեւ պալատին բոլոր աղջիկները :

Մտոնք ամէնքն ալ ճոխապէս հագուած, գոհարեղէններնին զրած, ներկ քսուած, ոտքերնին թեթեւ հողաթափներ հագած, թագաւորին Հարէմ մտնելուն կը սպասէին անհամբեր :

Նորին Վեհափառութիւնը Կայսերական Բանակին Մարաջախտի իր շողջողուն համազգեստը հագած և կախած Օսմանիէ և Մէճիտիէ աստիճանի երկու աղամանդազարդ պատուանշաններ, որոնք աստնով իրեն նուիրուած էին իր հանգուցեալ հօրը կողմէն, Մապիյիւնի մեծ դուռին առջեւ երեւցաւ :

Իր երեւոյթը հիմա աւելի՛ վեհաշուք, աւելի՛ մեծափառ և աւելի՛ խրոխտ էր : Քանի մը վայրկեանի մէջ իրապէս փոխած էր իր նկարագիրը : Իբ

չարժումները, իր բարեւանները, իր խօսքերը, մինչև խակ իր քալուածքը, ա՛լ գահածառանգ Համախ էֆէնտիինը չէին: Ուրախ՝ բայց իր ուրախութիւնը ծածկել ջանացող, Վեհապետի իր դերը կատարելու վարժ պատկառազրու վաղեմի միապետի մը երեւոյթը կ'առնէր: Քիչ կը խօսէր, բայց իր ձայնը ուժեղ և չոր էր: Մարդո՛ւ կարեւորութիւն չի տուող հոյիւր առած էր, թագաւորութեան արուեստը վայելցնելու համար:

Պալատին աղջիկները կը զողողային Վեհապետին ներկայութեանը, որ մէկ ձեռքովը բռնած էր խոշոր թուղթ մը և միւսովը իր սուրը: Նախ իր եօթը գասընները, ետքէն իր իգարայները, ետքէն իր հոմանունիները և սիրունիները, և էն ետքը պալատին բոլոր մեծ ու պզտիկ «հաղնէտար»ները, բոլոր պատասպարեալները մէկիկ-մէկիկ կը մատչէին Նորին Վեհափառութեան, համբուրելու համար անոր համազգեստին քղանցքը: Սուլթանը, պատկառազրու և խրոխտ, ետ կը քաշուէր, ամէն անգամ որ կին մը չափազանց կը նկրտէր համբուրել իր պատմունձանին եզերքը կամ իր ոտքերը, և իր գոհունակութիւնը կը յայտնէր գլխովը՝ զայն բարեւելով կամ անոր կարճ սեղան մը տալով: Իրենց մէջ, կիները կը խօսէին թէ՛ ան հիմա ա՛լ իրենց ձանցած էֆէնտիին չէր, այլ «Բարձրեալին Շուքը, Մարգարէին Փոխանորդը, բոլոր հաւատացեալներուն Առաջնորդը, Վեհապետը այն բոլոր երկիրներուն՝ որոնք կը տարածուին Արևելին ծագած

տեղէն մինչև մարը մտած տեղը, Վեհապետը ձերմակ ծովին (Միջերկրական) և Սև ծովին»:

Երբ Միւրդի Իռէմ համարձակ քալուածքով մը մօտեցաւ Սուլթանին, իր ընկերունիներուն ըրածին պէս իր կարգին համբուրելու համար զգեստին ծայրը Արքային, ան, հակառակ իր ծայրայեղ դաժանութեանը, ժպտեցաւ և Միւրդի Իռէմի մազերը չոյց քիչ մը: Միւրդի Իռէմի ընկերունիները նախանձեցան ատոր, մինչդեռ ինք ընդհակառակը, այդ մեծ չնորհի արտայայտութեան բացարձակապէս անտարբեր և անզգայ կը մնար:

Մանաւանդ ամէնէն աւելի կատգած էր Դօնչէ Յէմ: Նորին Վեհափառութեան կանանոցին մէջ չի կային ուրիշ կիներ, ուրիշ հարձեր, որոնք արժանի ըլլային Արքային համակրութեանը: Ինչո՞ւ Միւրդի Իռէմ, այդ ամբարշտունին, կայսերական չնորհներու մենաչնորհը ունէր:

Վեհապետին օրինաւոր կիները, ինչպէս նաև հարձերը, Դօնչէ Յէմի նախագահութեան տակ գումարուեցան, զիրքերնին ամբայցնելու համար հաւանական հարքներուն ղէմ Միւրդի Իռէմի, այդ քմահաճ, ջղային և գրեթէ Վեալուր գերունիին, որ ղէզերով գլուքեր և գրուածքներ ունէր, որոնք չնս գիտեր թէ ինչի՛ վրայ կը խօսէին:

Նորին Վեհափառութիւնը, հինգ ժամուան միջոցին երեք անգամ իր ներկայութեանը ընդունած էր իր սիրական հարձը: Իւրաքանչիւր տեսակցութիւն ժամէն աւելի տեւած էր: Այդ խելացի

Չէր քէզուէին ինչ կրնար ընել թագաւորին հետ
 Հարէմի կիները, կրքոտած, չէին կրնար գուշակել
 այդ գաղտնիքը: Սուլթանը օրինաւոր պսակով
 պիտի ամուսնանար Միւրզի Իոէմի հետ: Անկա-
 րելի էր աղ: Ապտիւլ-Համիտ կրօնական օրէնքին
 սահմանած էն մեծ չափը ինչ որ էր, ա՛ղչափ
 կիներու հետ ամուսնացած էր արդէն: Այդ օրի-
 նաւոր չորս կիներէն մէկը պիտի արձակէ՛ր արդ-
 եօք, ամուսնանալու համար գեղամի Չէրքէզուէիին
 հետ: Դօնչէ Ֆէմ այս գաղափարին կը հակէր, և
 Սուլթանին օրինաւոր կիները շատ մտահոգ էին.
 իրենց վիշտը չափ չունէր: Բայց Սուլթանը իր
 հոմանուէին սիրելուն չափ ալ կը վախճար անիչ:

Միշտ անտարրեր Սուլթանին գգուանքներուն
 և շնորհներուն, ան չէր զաղբեր գայն ատելէ և
 արհամարհելէ...

Լրտեսուէիները—պալատին բոլոր կիները—
 Միւրզի Իոէմի ամէնէն աննչան գործերուն կը
 հսկէին և հազար միջոցներով կը փութային անոնց
 վրայ Նորին Վեհափառութեան լուր տալ: Ապտիւլ-
 Համիտ իր հարձին մասին ամէն օր յիտունի չափ
 գրաւոր տեղեկագիրներ կը ստանար: Միշտ շնոր-
 հակալութիւն կը յայտնէր այդ լրտեսութիւններու
 հեղինակներուն:

Իր հոմանուէիին հաճոյք պատճառելու համար՝
 կասկածոտ Վեհապետը երբեմն անոր կը ցուցնէր
 այն ճորտները՝ զորս մատնուէիները կը յերիւ-
 րէին իր մասին: Նախ Միւրզի Իոէմ գայրացաւ

այդ մատնչական նիշերուն համար, և պահանջեց
 որ պատժուին անոնց հեղինակները: յետոյ, վար-
 ժուեցաւ անոնց: Նոյն իսկ իր յարարներութիւն-
 ները չխղեց լրտեսուէիներուն հետ: Պալատին մէջ
 ամէն ոք իրաւունք ունէր տեղեկատուութիւններ
 ուղղելու Նորին Վեհափառութեան:

Դօնչէ Ֆէմ, չափազանց նենգամիտ, Տօրմա-
 Պաղչէի լաւագոյն «ճուրնալճի»ն կը նկատուէր:

Պալատին խեղճ անմեղ աղջիկները կը ջանային
 մաքուր գիր գրել: Սուլթանը կը սիրէր ընթեռնել
 գրուածքները, խոչոր գիրերը, որոչ չափով թուղ-
 թերը և կարճ նախադասութիւնները: Չէր ախոր-
 ժեր բարձր գրականութենէն. մնաց որ, մեծ բան
 չէր հասկնար ոճէն: Ատոր համար, ճորտնալի հեղի-
 նակներուն և հեղինակուէիներուն կը յանձնարարէր
 կարելի եղածին չափ յստակ գրել: Ամէն ճուրնալ
 պէտք էր կնքուած պահարանի մէջ ըլլալ, և պա-
 հարանին գլուխը կրել ստորագրողին անունը և
 հանգամանքը: Այդ նամակածրարը Նորին Վեհա-
 փառութեան յանձնուելէ առաջ՝ հականերիչ գոր-
 ծիքէ կ'անցնէր, ա՛յնչափ Ապտիւլ-Համիտ կը վախ-
 նար փոխանցիկ հիւանդութիւններէ:

ժ.

Ռամազանի ծոմի ամիսն էր : Պալատը ուրիշ տեսարան մը կ'առնէր : Մինչև գիշեր կը քնանային և թնդանօթի հարուածներուն հետ կ'արթննային , կամ ճաչէն կէս ժամ առաջ : Յորեկը գիշերուան և գիշերը ցորեկուան փոխուած էր :

Պայատին մէջ ամէն մարդ ծոմ կը պահէր և գաղտնապէս այդ կանոնէն շեղիլ ուզողները շատ հազուագիւտ էին :

Լուսնային ամիսին տասերեքերորդ օրն էր :

Սուլթանը , չափազանց մտահոգ ու կասկածներով պաշարուած էր , որովհետև երկու օր ետքը , իբր Սուրբ Նշխարներու պահապան , — հանգամանք մը կամ պաշտօն մը՝ որ ա՛յնչափ կարեւոր էր , որչափ իր Սուլթանի և Սպախիֆաի հանգանքը . — մեծ հանդիսաւորութիւնով պիտի երթար Թօփ-Պափու-Սարայի , Մարգարէին վերարկուն համբուրելու :

Այս առիթով լրտեսները և լրտեսուհիները իրենց գործունէութիւն կը կրկնապատկէին : Նորին Վեհափառութիւնը անվերջ խորհուրդ կը հարցնէր Շէյխերուն , Տէրվիչներուն , աստղարաշխներուն և մոզերուն :

Սպտիւլ-Համիտ , յայտնապէս զափազանց մտա-

հոգ , ձեռքը համրիչ մը , կը ծխէր և իր սիրական Շէյխին հետ կը խօսակցէր :

— Ահ , երանի թէ Ովկէանոսին կոհակներուն մէջտեղը , կողեակի մը վրայ , անմատչելի աշտարակի մը կամ փարօսի մը մէջ փակուած ըլլայի : Ես չեմ հանդուրժեր այս ցուցադրուելու կեանքին :

« Աչքի առջև բերէք : Վաղուան համար ինը զանազան դաւադրութիւններ սարքուած են : Հիւսէյին Էֆէնտի աստղա նայեցաւ և ալէկ չգտաւ : Կոնոսը իր տեղը չէ : Մուրատ Եօթի մեղրամոմէ արձանը տակաւին չէ հալած : Վերջապէս , արեււային ամիսին ցուցուցածին նայելով՝ վաղը վերջին չորեքշաբթիս է : Եւ սակայն , պալատէն դուրս չելլել ծանրակշիւ , վտանգաւոր խնդիր է : Բէշատ Էֆէնտիի կուսակիցները և համախոհները անոր զահակալութեանը պիտի աշխատին և թերեւս ալ զայն թագաւոր հռչակեն » :

Յանկարծ , ձերունի Շէյխը ոտքի ցատկեց : Ահոցը քիթին վրայ , ձեռքերը վեր բարձրացուց , աչքերը գոցեց և քանի մը վայրկեան վերացումի մէջ մնաց :

Ան չէր խօսեր , չէր շարժեր . արձանացած կը թուէր ան , անզգայ , բայց ոտքի վրայ կը մնար :

Սուլթանը վայրկեան մը քար կտրեցաւ :

Յանկարծ , Շէյխը շարժեցաւ , մօտեցաւ Սուլթանին , չրթունքներուն վրայ անուշ ժպիտով մը համբուրեց թագաւորին ձեռքի համրիչը և խայտանքով ըսաւ անոր .

— Արքայ, այն սենեակին մէջ ուր կը գտնուինք, Սուրբ Մուհիէտօին-ի-արապին է որ իջաւ իմ վերացումիս պահուն: Իր ամէնէն սուրբ ողջոյնները կը մատուցանէ ան Ձեր վսեմութեան: Անոր մարմինը հողիին հետ չէր և ատոր համար է որ Ձեզի տեսանելի չեղաւ: Շնորհիւ մեր մտերմութեան, ապագային մէջ պտոյտ մը կատարել տուի անոր: Շատ հեռուն գնաց ան, ասկէ 75 տարի ետքը. ան տեսաւ որ Ձեր վեհափառութիւնը կը գահակալէ տակաւին, զուարթ և ողջ-առողջ, իր հաւատարիմ ծառաներէն չըջապատուած. հետեւարար, վազուան համար պատրաստուող զաւազրութիւնները ո՛չ մէկ կարեւորութիւն ունին: Ձեր Անճառելի Մեծութիւնը կրնայ հանգիստ ըլլալ, բան մը չի պիտի ըլլայ:

Սուլթանը, կատարելապէս ուրախ այս մարգարէութիւնը լսելէն, սենեկապետ մը կանչել տուաւ:

— Սենեկապետ, ըսաւ անոր, Շէյխ Էֆէնտին Բուռնիյի ֆագապիտի աստիճանին բարձրացած է. իր ամասկան թուշակը ասկէ ետքը պիտի ըլլայ հագար ոսկի, իր ուտեստեղէնի ոտճիկը իմ անձնական գանձէս պիտի արուի, և այսօր իրեն յանձնել պիտի տաք 3000 ոսկի պարգև:

Շէյխ Էֆէնտին, չփոթած, նետուեցաւ Նորին վեհափառութեան ոտքերուն, զորս արցունքներով թրջեց՝ իբր շնորհակալութեան նշան: Նորին վեհափառութիւնը ետ քաշուեցաւ և սուրբ անձնաւո-

րութեան դիտել տուաւ թէ՛ Մուհիէտօին-ի-արապիի բարեկամ եղողի մը չէր վաչկեր իրեն նման պարզ մեղաբարձի մը ոտքը իյնալ:

— Օ՛հ, ո՛չ, պատասխանեց Շէյխը, Ձեզի նման Խալիֆա մը անշուշտ եօթը սուրբերու զօրութիւնը ունի:

Սենեկապետը յարգամեծօր կերպով մեկնեցաւ, երթալ կալսերական զիւանին ծանուցանելու համար հրահանգը:

Այս դէպքերուն վրայ, Իսմայիլ փաշա, Սուլթանին սիրականը և թերևս եղբայրը, մօտեցաւ թագաւորին և անոր յանձնեց ստուարածաւալ տեղեկագիրներ: Անմիջապէս յանձնաժողով մը կազմուեցաւ, բաղկացած նոյնինքն Սուլթանէն, Չէրքէզ Մէհմէտէն, Իսմայիլէն, Բաղըպէն, խափչիկ Գարանֆիլ աղայէն, Ռամազանի Նօին առիթով սարքուած զաւազրութիւններուն վրայ գրուած ճուռնալներուն սուրհանգակը քօղամերկելու համար: Անոնց մէջ կային տեղական ճուռնալներ, գրուած նախարարներու, պաշտօնականներու, պալատականներու, պարզ հպատակներու կողմէ. կային նաև եւրոպայէն եկած ճուռնալներ. նոյն իսկ անոնցմէ մէկը Ուրուկուաի մայրաքաղաքէն՝ Մօնթէվիտօէն գրուած էր!

Բաղրայ պէյ ճուռնալները կը դասակարգէր: Անոնց մէջ ցնորարանութեան տեսակէտէն շատ հետաքրքրաշարժներ կային, որոնք կրնային պատիւ բերել Քասալիէ տը Մօնթէվիէնի պէս բեղուն վիպագիրի մը:

Նորին Վեհափառութիւնը երբեմն կը վարանէր անոնց հաւատք ընծայել :

Լրտես մը Սուլթանին կ'ըսէր թէ՛ Լօյտ Օթրի-շին ընկերութեան Տաւաի շոգենաւը ընդծովայ ախաններ զրած էր ամբողջ երկայնքին այն ճամբուն՝ ուրիշ կայսերական նաւը պիտի անցնէր արարողութեան միջոցին :

Երկրորդ մը կը հաւտացնէր թէ՛ խիստ ճարտար գերմանացի քիմիագէտ մը, Հիւլիօ Լինտէնպէրկ, հնարած էր վտանգաւոր փոշի մը, և առանց արժանի ըլլալու Պալաի աստիճան ունեցող Բարձրագոյն Դրան բարձրատիճան պաշտօնեայ մը՝ այդ զփոխալին նիւթը պիտի բռնկցնէր և Նորին Վեհափառութիւնը շնչահեղձ պիտի ըլլար :

Ուրիշ ճուռնայ մը կ'ըսէր թէ՛ կայսերական պալատէն Սուլթանին մեկնելու պահուն իսկ, օդապարիկ մը պիտի բարձրանար, և ճամբան, Սուլթանին վրայ պիտի արձակէր հազարաւոր պայթուցիկ գունդեր :

Ուրիշի մը ըսածին նայելով, Բօփ-Պաբուի Սարային վաղեմի պատասպարհախներէն ոմանք, իրենց տիրոջ Սուլթան Մուրատ երբի գահընկեցութեան վրէժը լուծել ուզելով, գետնուղի մը փորած էին, և այն միջոցին երբ Նորին Վեհափառութիւնը Սուրբ Նշխարհները պիտի ցուցադրէր, ծակ մը պիտի բացուէր և այլն . . .

Յետոյ չորրորդ մը կը տեղեկագրէր թէ՛ բարձրաստիճան անձնաւորութիւն մը, արարողութեան

պահուն իսկ, պիտի խօսէր յանպատրաստից ճառ մը՝ որով ունկնդիրները պիտի հրաւիրէր Սուլթանը գահընկեց ընել. յետոյ Շէյխ-Իւլ-Իսլամը գահազրկութեան ֆէրման պիտի կարգար :

Նոյն հաւաքածոյէն . . .

Պալատին նախկին բնակչուհիներէն Տիկին . . . , արարողութեան պահուն իսկ՝ սուրբ գիրքէն քանի մը հատուած պիտի կարգայ և շէնքը պիտի տապալի :

Ապտիւլ-Համիտ այս բոլորին կը հաւտար :

Յետոյ կու գար երազներ պարունակող ճուռնայներուն չարքը : Մարգարէ մը իր ողջոյնները կը զրկէր Նորին Վեհափառութեան :

Գարրիէլ մարգարէն կը պատմէր տեսակցութիւն մը X . . . ին հետ, Փատիշահին ընթացքին մասին, և այլն, և այլն, և այլն . . .

Ի՞նչ ընթացք ձեռք առաւ անպատասխանատու մենագարը :

Յաջորդ օրը, որոշուած ժամուն, սրտատրոփ զգեստաւորուեցաւ և ճամբայ ելաւ, ուղեկից ունենալով 300 թիկնապահներ, մտերիմ սպաներ, հաւատարիմ ծառաներ և ուրիշներ, հաստատապէս համոզուած թէ՛ ուսմը մը պիտի պայթէր անվրէպ, թէ գետինը պիտի բացուէր թէ օդապարիկը հրանիւթեր պիտի արձակէր, թէ չարագործ մը զինքը կը նետապնդէր : Իր համազգեստը անխոցելի էր. բաճկոնը զրահէ ներքնախաւ մը ունէր. մէկէ աւելի ատրճանակներ կը կրէր վրան. կառքը զրահապատ էր : Ետքէն, կամաղ-կամայ, սիրտը հանգստացաւ :

X . . . Մահմետականներու մէջ կը նշանակէ Գարրիէլ հրեշտակագետ :

«Արտակարգ նշանառու մըն եմ ես, կ'ըսէր ինքնիրեն. ես չէի որ քանի մը մէթր հեռուն գետեղուած տախտակի մը վրայ անունս գրեցի ատրճանակիս գնդակներովը, Երլտըզի պարտէզին մէջ: Ես 100ին 99 կրնամ սպաննել անիշխանական մը՝ զիս զարնելէն առաջ»:

Կառքին մէջ ձիւղ իր դէմը նստած էր Մարաջախտ Ղազի Օսման փաշան: Նորին Վեհափառութիւնը ժամանակ չունէր խօսելու մարաջախտին հետ. ան գերազրգուած և մաղձոտած էր. և երբ երբնին Ղազի Օսման կը համարձակէր անոր խօսք մը ուղղել, Վեհափառը չէր կրնար հանդուրժել և զայն կը յանդիմանէր. կ'ուզէր աչքերովը հսկել ամէն բանի: Աղմուկ մը իրեն կը յիշեցնէր մայթին փլուզումը և պատահուկը, իր լրտեսներուն կողմէ նախատեսուած համբաւաւոր գետնուղին:

Այդ օրը, ոստիկանութեան լրտեսները մեծ գործունէութեան մէջ էին: Միւս կողմէ, Վեհափառին ստացած ճուռնայինըը հազորդուած էին անոնց. և այդ ճուռնայինըէն իւրաքանչիւրին վրայ՝ անոնք բացած էին խիստ մանրազնին և խիստ հնարամիտ քննութիւններ:

Վերջապէս, ճամբորդութիւնը տեղի ունեցաւ առանց ո՛րեւէ միջադէպի. բայց Սուլթանին սիրտը տակաւին հանդատացած չէր. զարձէն կը վախնար: Սրարողութիւնը սկսած էր:

Կանանոցին բոլոր կիները (խտէալ գեղեցկութիւններու զմայլելի հաւաքածոյ մը) Մարգարէին վերաբերուին ծայրը համբուրել կ'երթային:

Միւրդի Իռէմ հանդիսական կառքերէն հինգերորդին մէջն էր. Ղոնչէ Ֆէմին, Ռէզինին և ուրիշ գերուհիի մը հետ:

Կայսերական հարձը՝ Սուլթանուհի մօր չափ կառքին ետեւը, նշմարեց սպայ մը, սքանչելի ձիաւոր մը, որ այդ արուեստին մէջ բոլոր միւսները կը գերազանցէր: Անոր դէմքը չէր տեսնուիր իր ստ վայելչածեւ, պատուանշաններով զարդարուած, գեղեցիկ ձիու մը վրայ, ո՞վ էր այդ նրբամարմին երիտասարդ սպան:

Միւրդի Իռէմ կ'ուզէր ճանչնալ զայն, ինչ որ ալ ըլլար:

Չսպելով կուրծքին բարախուժը, Միւրդի Իռէմ խնդրեց իր ընկերուհիէն՝ ըսել իրեն թէ ո՞վ էր այդ ա՛յնչափ չնորհալի ձիաւորը, որուն դէմքը չէր կրնար տեսնել:

—Ա՛հ, ըսաւ Ղոնչէ Ֆէմ, ան Չէրքէզ մըն է, գնդապետ-թիկնապահ գերագնիւ Սթէշ Ալին:

Միւրդի Իռէմ սարսուսաց, լսելով իր նշանածին անունը. աչքերը արցունքով լեցուեցան: Կ'ուզէր անոր վրայ նետուիլ, բայց պէտք էր ինքզինքը զսպել, որովհետեւ յիշեց որ իր քովը կը գտնուէր՝ տխրահամբաւ, կեղծաւոր, նենգամիտ, չար և մատնիչ ընկերուհի մը: Լուռութիւն պահեց, երազանքներու մէջ ընկղմելով:

Կը խորհէր իր անցեալ կեանքին վրայ. մէկիկ-մէկիկ կը տեսնէր Կովկասի մէջ անցուցած իր մանկութեան կեանքի տեսարանները: Իր աչքերուն առջեւ կը

ցցուէր չնորհալի զէմքը այդ էմիր Աթէշին, արժա-
նաւոր Չէրքէզ յաջորդը իր Շամիլ հօր, հալած-
ուած Ռուսերէն և այսօր Ապտիւլ-Համիտի թիկնա-
պահ-գնդապետ Աթէշ Ալի պէյ եղած: Իր ընկերու-
հիներէն ամէնէն աւելի կարող էր գնահատել ձիաւոր
մը: Եւ իրապէս, Աթէշ Ալի պէյ սքանչելի ձիաւոր
մըն էր, բոլոր սպանները կը գերազանցէր ան:

Հասան Թօփ-Գարու-Սարայ: Վաղեմի սովորու-
թեան մը համաձայն, այդ հնադարեան պալատին մէջ
կառքերուն ձիերը կը քակէին: Այդ միջոցին, կայ-
սերական Հարէմին կիները արարողութեան վերջա-
նալուն կը սպասէին:

Աթէշ Ալի պէյ իր ձին յանձնեց զինուորի մը.
յետոյ անխուժօրէն՝ բայց ո՛չ առանց հետաքրք-
րութեան՝ շրջագայեցաւ ամէն տեսակէ անխիւ-
վիքթօրիաներուն, շննօններուն և կառքերուն մէջ,
որոնք հոգ հաւաքուած էին:

Գոց կառքի մը թերատուերին մէջ Աթէշ Ալի
նշմարեց՝ իր երիտասարդական գեղեցկութեանը
մէջ գեղեցկադէմ ու նուրբ արարած մը. պահ մը
կարծեց զայն ճանչնալ, բայց գլուխը թօթուեց՝
խաբուած ըլլալ կարծելով. յետոյ, յանկարծ, իր
յիշատակները ձշղուեցան: Այո՛, ա՛ն էր, իր պաշ-
տած Չէհրան, որ իր նշանա՛ծն էր:

Գնդապետը չկրցաւ զսպիւ արցունքները: Միւրդի
Իռէմէն աւելի երջանիկ էր, որովհետեւ իր յուսա-
հատութիւնը պարտկելու պէտք չունէր: Կը յիշէր իր
երկրին ձիւնապատ լեռները, իր հայրը, իր քաջա-

գործութիւնները, Ռուսերը. իր հօրեղբայր Պէհա-
տիր պէյը և այդ գեղանի կինը՝ որ այն ատեն զեռ
տղայ էր...

Աթէշ Ալի մօտեցաւ ներքինի Տիլավէրին և
հարցուց թէ՛ ո՞վ էր հագնէտարի մը քովը գտնուող
այդ մելամաղձոտ և գեղանի կինը: Տիլավէր աղա
նախ վարանեցաւ, յետոյ միտքը փոխելով և
խօսելիք մարդ գտնելուն համար ուրախ՝ ըսաւ թէ
այդ կինը Միւրդի Իռէմ կը կոչուէր: Չէրքէզուհի
մը, Թազաւորին անուանի սիրուհին:

— Աւա՛ղ, բացազանչեց Շամիլին որդին,
աւա՛ղ, ուրեմն ինձի համար յաւիտեան կորսուած
է: Եւ ես զայն անխոնջ փնտռեցի ամէ՛ն տեղ,
առա՛նց օր մը կրկին գտնելու յոյսս կորսնցնելու:

Գնդապետը խորապէս յուզուած էր: Նէր կրնար
հեռանալու որչու՛մ տալ. անդիմադրելի կերպով
գտնուած այն հրեշտակին քով, զոր կ'ողբար:
Գալով Միւրդի Իռէմի, այն յուզումը՝ որ զինքը կը
խեղդէր և ձեռքերը կը զողղացնէր՝ անշարժա-
ցուցած էր զինքը, ջլատելով իր կամքը և ուժը:
Անձկայրեաց կերպով կը գիտէր իր նշանածին
համակրելի ու գեղեցիկ զէմքը. արժանաւոր թիկ-
նապահին արտայայտիչ զիմագծութիւնը Միւրդի
Իռէմի միտքին մէջ կ'արթնցնէր հազարաւոր յիշա-
տակներ, հազարաւոր զգայութիւններ, որոնք իր
վրդովուած խեղճ սիրտը կը բզքտէին

— Ի՛նչ ունիք. Միւրդի Իռէմ, հարցուց անոր
զեռատի Ռէզին, ինձի անանկ կ'երեւայ որ անհան-
գիստ էք. հիւսնո՞ղ էք արդեօք:

—Օ՛հ, այո՛, հազիւ կրցաւ ըսել Ձերքէզուհին : Ռէզին հասկցաւ որ իր անուշիկ ընկերուհիին անհանգստութիւնը ֆիզիքական բան մը չէր երբեք : Վստահարար կայսերական հարսին ա՛յնչպի վրդովուած հոգիին մէջ փոթորիկներ կային . և Ռէզին չհամարձակեցաւ միջամտել ատոնց : Այդ խնդիրները կը գուշակուին, չն՛ն հարցուիր . . .

Այս միջոցին, գնդապետին և Ձերքէզուհիին աչքերը իրարու հանդիպեցան :

— Ձէնրա՛ն էք դուք . իմ Ձէնրա՛ս, կ'ըսէին գնդապետին աչքերը, իմս չէ՛ք դուք . եթէ այսօր իմս չէք, չէ՛ որ գէթ ձեր սիրտը ի՛մս է :

— Այո՛, կը պատասխանէին Միւրզի Իռէմի տխուր աղւոր աչքերը, ձե՛րն եմ, ձե՛րը, ո՛վ իմ սիրելի Աթէշ Ալիս, իմ սիրտս միայն ձեզի կրնայ պատկանիլ, իմ սիրտիս Սուլթանի՛ն, Շամիլի զաւկի՛ն միայն . . .

Ինչպէս կը գուշակուի, օրուան մնացած մասը ո՛րեւէ կարեւորութիւն չունեցաւ Միւրզի Իռէմի համար :

Առանց միջադէպի գործը գլուխ հանած, դարձին, Սուլթանը չափազանց ուրախ, նոյն իսկ գուարթ էր : Կը ծաղրէր այն խաբերանները . կը հայդէր լրտեսներու և խառնակիչներու այն բազմութեան . . .

Ձեր գաղտնի գովաբանելէ յարգելի Շէյխը, պանծացնելէ սրբութիւնը Մուհիթտին-ի-արապիի, որ հաճած էր մինչեւ իր պալատը գալ :

Սուլթանը Շէյխ Էֆէնտիին պատուանշան մը շնորհեց, անոր Հարէմին համար զանազան ընծաներ տուաւ . ի՛ր ձեռքերովը բրցուած պտուղներ զոկեց անոր . . . — Ինչ որ մեծ պատիւ մըն էր — և պատուանշան մը տուաւ օրօրօցի մէջ գտնուող անոր տղուն : Այդ տղան անդամ կարգեց անուղակի տուրքերու Խորհուրդին, ամսական 7,500 դահեկան թոշակով :

Այդ գիշերը, Նորին Վեհափառութեան Թատրոնին մէջ մեծ ներկայացում մը արուեցաւ :

Ճիհանկիրի իր տունը դառնալով, Աթէշ Ալի պէյ, օրուան յուզումներէն յոգնած, անկողին մտաւ . միտքը կը տանջուէր . չկրնալով քճանալ, կարդաց ու կրկին կարդաց թերթերը, շատ մը սիկառէթներ ծխեց, քանի՛ մը անգամներ ելլելով և պտկելով :

Դուռը զարնուեցաւ : Թաղիքէ գլխարկով եւ յանձնակատարի ձեւով մարդ մըն էր : Պէյը կը հարցնէր : Օրիորդ Տօնօէին ծառան էր ան : Ան գնդապետին յանձնեց կնքուած նամակ մը եւ ստացադիր մը ուզեց : Աթէշ Ալի պէյ վայրկենապէս իր այցաքարդին վրայ քանի մը բառ խազխզեց : Նամակը ո՛չ ստորագրութիւն կը կրէր, ո՛չ հասցէ, ո՛չ ալ թուական . սա՛ խօսքերը կը պարունակէր ան . —

«Միւրզի Իռէմ, Ապիւլ-Համիսի կիկը, ձեր ազակաւիկն՝ Պեհասըր պեյի որդեգրուիկն, ձեր գերիկ է : Արարածներուն անկեկն դժբաղդն է ան : Անկխիսու՛ր,

ՄՂԱՍԱՆՔ ?

կորսուած է ան... Թեև Եորիև Վեհափառութեան կիկը, բայց իր սիրք կոյս է: Ձեր խնդն Ձեհերան որ- ջնի ստապած է՝ գերուհիներու գնորդի մը՝ մարդոց անեհեհե կարշելիին՝ Ապսիւղ-Համիսի ձեռքի եւ իր նեկզանիս ընկերուհիներուն մեջ: Օ՛հ, այդ փա- փուկ եւ դիւրագգայ կիկը ինչպէս կրցած է ա՛յնչափ ստապիլ... Ո՛վ Կովկասի Սուրբանիկ, Հաւասաց- տակերու ազնուական Իշխանիկ ազնուական զաւա- կը, եթէ ընկերու այդ աղջիկը՝ որ իրաւունքով ֆեզի կը պատկանի, չկարենայ իրականացնել իր երազները եւ ֆու փախափներդ, եթէ ճակատագիրը ա՛յնչափ հա- կառակորդ է անոր եւ երջանկութիւնը անհասցելի, խոնարհաբար կ'ըսէ ֆեզի թե՛ կը նախընտրէ կեանքի զարուհիկ մեջ մեռնիլ, դեռ չհասկցած թե՛ կեանքը կրնայ ա՛յնչափ անգութ ըլլալ. (գիտ անբարիչս պիտի կոչեն, եթէ հաւնարձակիտ այսպէս շարունակել): Ո՛վ անխիտաբար իշխան, ո՛վ դժբաղդ Սուրբան, կ'աղաչե՛ն, ըսե՛ք ինձի թե՛ արդեօք անիծուած արարած մըն եւ: Սյո՛, ես կ'ուզեի խեղագարիլ եւ չգգայ դժբաղդութիւնս:

«Եթէ ես անիծուած մըն եմ, կը կրովեմ ուրեան երկիկը եւ ես դրախտ չե՛մ ուզեր, միևնջեւ անզան եթէ ան մեր խշխեսներուն մեզի նկարագրածեհ անեղի հեմայիչ ըլլայ: Ձեզի հանդեպ ունեցած սերխս անուկով չե՛մ ուզեր, ա՛յ չե՛մ ուզեր պատկանիլ Ապսիւղ-Համի- սիկ, չե՛մ ուզեր շուրջս գնուողները, այս մարդկու- քիւնը, ճայս երկիրը, այս արեւը, վերջապէս ո՛չ ալ առանց Ձեզի այս աշխարհը, Օ՛հ, հազար անզան ո՛չ, չե՛մ ուզեր, երբե՛ք...»:

Վ.Ս.

Ապաիւղ-Համիտ, անհա հերը եւ մառնոգ, Միւր- դի Իոէմին կը սպասէր իր սենեակին մէջ, Կ'ու- զէր զբօսնուլ, բայց չէր կրնար: Կը ջանար կարողալ, բայց չէր կրնար: Ծխատուփը կը պար- սուէր: Թագաւորը տխուր էր: Սահմանադրու- թիւն հոչակուած ըլլալով, պէտք չէ՞ր որ հան- գիստ ըլլար, մանաւանդ Միթհատ փաշաի պէս մեծապէս վտանայի նախարարի մը օրով:

Բայց, իր միտքը զբաղեցնող խնդիրները՝ Պետութեան գործերը, ներքին խռովու- թիւնները, արտաքին գծուարութիւնները, տնտեսական տեւական տագնապը չէին: Ատոնք ա՛յնչափ կարեւորութիւն ունեցող խնդիրներ չէին:

Մենութիւնը զինքը չէր ձանձրացներ. բայց կ'ուզէր տեսակցիլ իր սիրական հարձին հետ:

Մեծ Թուրքը, Միւրդի Իոէմին սպասելու մի- ջոցին, հանուեցաւ, հագաւ իր գիշերազգեստը և մուշտակը, գդակը գլուխը դրաւ, համրիչը ձեռք առաւ, Բասնիթի անթիւ աղւոր սիկառէթներէն հատ մը վառեց:

Էնկիւրբիւր երկայն մագերով խոչոր կատուի մը հետ կը խաղար: Սյո կենդանին իր կենսագ- րութիւնը ունէր: Էնկիւրբիւրի Հաճի Պայրամ-ի-

վէլիի յաջորդ եւ նշխարներու պահապանին մէկ նուէրն էր ան: Անիկա այդ կենդանին յրկած էր «Նորին Բարձրութեան գերազնիւ ներքինապետին»: Իր կարգին, Նորին Բարձրութիւնն ալ «ներքինացնել տուած» էր կատուն, որպէսզի ան զերծ ըլլայ ամէն հոգէ եւ մեծնայ: Որով, կատուն սոսկայի կերպով խոշորցած էր: Երէի մը, պատիկ վագրի մը կը նմանէր ան: Հանս Քաուֆման անուշով մէկը, որ պարտին անաւնարութն էր, կանոնաւորապէս կը խնամէր կենդանին. անոր կինը, Սօֆի Քաուֆման ալ պարտականութիւն ունէր խնամք տանելու Զնճապի յարդարանքին:

Միւրդի Իռէմ, իր գեղեցկութեանը եւ նորքարդուգարդին մէջ բոլորովին փողփողուն, ե, ե, ցաւ:

Իր թրակապութենէն իվեր, Օսմանի տան սովորութեանը համաձայն, Ապտիւլ-Համիտ մօրուք թողած էր, բիրտ ու սեւ մօրուք մը, ինչպէս կեղտացի ասողաբաշխներունը: Միւրդի Իռէմ, թաղաւորը իր այդ մօրուքովը սեւի խորչելի կը գտնէր: Նոյն իսկ անոր վրայ Գաւա-կիօզին հետ մեծ նմանութիւն մը կը գտնէր:

— Ի՞նչ վիշտ ունիք, սիրելի՛ Վեհափառս, հարցուց Միւրդի Իռէմ: Արաաքին վատ՞նք մը կայ. Սահմանագրութիւնը լաւ ապաւորութիւն չէ՞ ըրած ձեր հպատակներուն, Եւրոպայի կամ Իսլամ աշխարհին վրայ:

— Մէկ կո՛ղմ ձգէ այդ բոլորը, իմ վիշտերս շատ աւելի մեծ բաներ են:

— Արդեօք Ձեր Վեհափառութիւնը անհանգի՞ստ է:

— Այո՛ եւ ո՛չ:

— Այսի՞նքն:

— Այո՛ եւ ո՛չ չըսի՞: Հանրային գործերը աղէկ երթա՛ն կամ ո՛չ, ատիկա մեծ կարեւորութիւն մը չունի ինձի համար: Իմ հակառակորդներս են որ զիս կը կատղեցնեն, այո՛, ես չե՛մ կրնար հանդուրժել զանոնք:

— Բայց, Վեհափա՛ռ, ո՞վ են Ձեր հակառակորդները:

— Պատի՛կ կեղծաւոր:

— Կը բողոքե՛մ, Վեհափա՛ռ, իմ մասիս Ձեր բոլոր քսածներուն դէմ:

— Անանկ կը ձեւացնես որ՝ չես ձանձնար հակառակորդներս:

— Կ'երդնում պատիւիս վրայ, Վեհափառ, որ չեմ ձանձնար Ձեր հակառակորդները: Աշխարհ Ձեզ կը յարգէ եւ իրաւունքով կը սքանչանայ Ձեր վրայ:

— Միւրդի Իռէմ, անո՛նք որ ստրված են Սուլթաններ գահընկէց ընելու, իմ թշնամիներս միայն կրնան ըլլալ: Անոնք՝ ե՛ն եւ պէտք է ըլլան մեծամիտ, ամբարտաւան, քմահաճ եւ խարդախ. անոնք զիս խնամապետութեան ենթարկել պիտի ուզեն: Ի՞նչ ըսել է սա Սահմանագրութիւնը:

—Բայց Ձեր Վեհափառութիւնը եռանդուն կուսակից մը չէ՞ր կառավարութեան այդ ձեւին :

—Կը գլխամ վրադ . եթէ դուն երկինսութիւն չես ըներ , ուրեմն դուն առանց գիտնալու խենթ ես , սիրելի՛ս :

—Ես ինչ ըրած եմ ձեզի , Վեհափա՛ռ : Արդեօք պալատին լրտեսները այս օրերս շա՛տ գործ տեսած են ձեր խոնարհ գերուհիին դէմ :

—Ա՛հ , ա՛հ , դուն կը հաւատաս որ ես միա՛մտի մը պէս մեծ կարեւորութիւն կու տամ այդ բոլոր ձուռնալներուն :

—Ես ինչ գիտնամ , Վեհափա՛ռ :

—Դուն շատ միամիտ ես և պէտք է գիտնաս թէ՛ ամէն բանէ առաջ կին մըն ես . . . կին մը . . .

—Շա՛տ աղէկ գիտեմ ատիկա , Վեհափա՛ռ :

Միւրդի Իոէմ , կաս-կարմիր կտրած , ա՛յնչափ գեղեցկացած էր , ա՛յնչափ հմայիչ դարձած որ՝ Սուլթանը , հակառակ իր վայրագութեանը , իր խենթ նկարագիրին , ա՛լ չյանդիմանեց զայն , և հրաւիրեց գալ իր քովը միւստիս վրայ նստիլ :

Միւրդի Իոէմ , թագաւորին քովը նստած , ձեռքը վերցուց և մէջքէն դաշոյն մը քաշելով , ուղեց Սպտիւլ-Համիտի ձերմակ գզակին վրայէն թել մը կտրել : Համիտ սարսափած , վեր ցատկեց և մոլեգնօրէն ետ մղեց կինը , ա՛յնչափ բուռն կերպով որ՝ գետին տապալեց զայն :

Յետոյ , հասնալով որ Միւրդի Իոէմ պարզա-

պէս ուզած էր իր գզակին վրայ ցցուող թել մը կտրել և թէ՛ զինքը դաշունահարելու ո՛րեւէ դիտաւորութիւն չունէր , հանդարտեցաւ և անոր նուիրեց առարկայ մը՝ իբր նուէր և իբր վարձատրութիւն :

Սուլթանը , ջղայնացած , քանի մը վայրկեան յուզումով պտրտելէ ետքը , սկսաւ պօսպոսլ : Միթհատի և անոր խմբակին դէմ իր ատելութիւնը կը պոթկար : Կատաղութենէն կը փրփրէր և սարսափելի կերպով կը հայնոյէր :

Միւրդի Իոէմ լուռ կը մնար :

—Գիտե՛ս որ , կը գոչէր բուռն կերպով , ես զօրաւոր եմ , ես ամէն բան գիտե՛մ :

Եւ խօսքը իր հոմանուհիին ուղղելով .

—Ես ամէ՛ն բանի կարող եմ . և Մեծ-Եպարքոսը , հակառակ իր փորձառութեանը և ձիւքերուն , ինձի չափ խորամանկ չէ՛ :

—Այո՛ , Վեհափառ , պատասխանեց երիտասարդուհին , գողգղալով :

—Գիտե՛ս որ ես կրնամ ոճրագործ ըլլալ :

Սարսափած , Միւրդի Իոէմ կը զիտէր Սուլթանը , առանց պատասխանելու :

—Ահա՛ , տե՛ս , ըսաւ . և կատաղութեան նուպայով մը՝ Սուլթանը խից Զնճապ կատուն և մէկ շարժումով բանալով կենդանիին բերանը , երկու մասները անոր մէջը խօթեց ու աչքերը վայրագութենէն հրացայտ , պատուեց կենդանիին բերանը , անոր ձիւքերուն և ջղաձգական գալարումներուն մէջ :

Սահմուկած, Միւրդի Իռէմ կը դողդար, չհամարձակելով փախչիլ: Կը խեղդուէր և չէր համարձակեր ազատօրէն լալ:

Քիչ ևտքը, Ապտիւլ-Համիտ հանդարտեցաւ: Գրկից Միւրդի Իռէմը և անոնք նստան անկողինին վրայ: Համիտ կը գգուէր խեղճ գերուհին: Աղջիկը ածգունած և այլայլած, ինքզինքը զոհ մը կը գգար ձեռքերուն մէջ վազրի մը, որ զինքը փաթտելէ առաջ կը գգուէր:

—Ո՛վ իմ Վեհափառ Տէրս, ըսաւ Ձէրքէզուհին, ինքզինքնիդ շատ կը յոգնեցնէք...

—Ես ինքզինքս չեմ յոգնեցներ երբևք: Պիտի տեսնես թէ ի՞նչպէս պիտի աշխատիմ՝ ոջնչայնելու համար Միթհատը:

—Վեհափառ, Մեծ-Եպարքոսը արժանի է այդ ճակատագիրին:

—Արժանի ըլլա՛յ կամ ո՛չ, ատիկա կարևորութիւն չունի ինձի համար. ես ալ չե՛մ կրնար զինքը հանդուրժել: Ես Միթհատը Մեծ-Եպարքոս պահեմ, կարելի չէ ազ: Եթէ ելլէ Հանրապետութիւն հռչակէ և ինք դիքդադո՛ր ըլլայ Ինչե՛ր չպիտի հնարէ այդ հրէջը՝ զիս չարչարելու համար: Հետևաբար, պէտք է նախազգուշութիւններ ձեռք ստանամ. . . Ձիս սպաննելէ առաջ, ե՛ս պէտք է զինքը սպաննեմ. զիս աքսորելէ առաջ, ե՛ս պէտք է զինքը աքսորեմ:

Այն ժամանակ՝ երբ զեռ իշխան էր, Համիտ

ո՛չ այնչափ ամբարտաւան էր, ոչ ալ այնչափ վայրագ: Ճիշդ է որ չափազանց կասկածոտ և խիստ ասիրախոտ էր. բայց իր վայրագութիւնը և անգթութիւնը չէին յայտնուած դեռ. ան իր կիրքերը կը ծածկէր:

Հակառակ իր բոլոր անուշ լեզուանիութեանը, Միւրդի Իռէմ չյաջողեցաւ հանդարտեցնել զայրոյթը Սուլթանին, որ յանկարծ որոշում տալով, բարձրաստիճան թիկնապահ մը զրկեց Մեծ-Եպարքոսին՝ անկէ խնդրելու որպէսզի գայ Սուլթանին հետ տեսնուի:

Միւրդի Իռէմ զգաց որ՝ զժբազդ նախարարին ճակատագիրը որոշող վճռական վայրկեանը մօտ էր:

—Եթէ կ'ուզես գիտնալ թէ ո՛վ եմ ես, կ'ըսէր Վեհապետը իր հարձին, պահուըտէ՛ սա վարագոյրին ետեւը:

Միւրդի Իռէմ կը փափաքէր և միանգամայն կը վախնար ներկայ ըլլալու երկու մարդոց տեսակցութեանը:

Իսլամական կանոններուն ենթակայ, երբեք Միթհատ փաշաի երեսը տեսած չէր: Չայն տեսնելու փափաքէն կը մրկէր: Ապտիւլ-Համիտ իր ատելութեանը և զայրոյթին մէջ ի՞նչպէս պիտի սպաննէր իր նախարարապետը և ան ի՞նչ կերպով ինքզինքը պիտի պաշտպանէր: Յետոյ, երբ լուրը պալատին մէջ խնայուէր, ի՞նչ պիտի ըլլար իր զիրքը Սուլթանի մը առջեւ՝ որ իր Մեծ-Եպարքոսը կը սպաննէ:

Թէեւ տկար և վախկոտ, չկրցաւ դիմադրել ականատես ըլլալու փափաքին՝ ողբերգութեան մը որ տեղի պիտի ունենար իրեն ա՛յնչափ մօտ. և ո՞վ գիտէ. ոճրագործ վեհապետ մը անմիջապէս գահէն վար չի՞ պիտի առնուէր, և ինք իր տիրոջ գահընկեցութենէն ետքը, ազատ չի՞ պիտի ըլլար: Ի՛նչ վրիժառութիւն, կ'ըսէր ինքնիրեն, իրեն, կ'նո՛ջ մը, իբր վկայ ներկայանալ Բարձրագոյն Ատեանի մը և պատմել ամբողջ եղելութիւնը, և վա՛ր առնել դիմակը զգուելի մարդաստանին:

Այս միջոցին, ներքինի մը ներս մտաւ և թագաւորին ծանուց նորին Բարձրութեան Մեծ-Եպարքոսին գալուստը:

—Շո՛ւտ, պահուըտէ այս վարագոյրին ետեւ, ըսաւ Սուլթանը իր հոմանունիին:

Եւ ներքինիին հրամայեց Միթհատ փաշան առաջնորդել Հարէմ, այն սենեակը՝ ուր ինք կը գտնուէր:

Քանի մը վայրկեան ետքը Փաշան ներս հրամացուեցաւ:

—Քէօբրիւլիւէն ետքը, բովանդակ Կայսրութեան նախարարներուն մէջ ամէնէն մեծն էք դուք, Փաշա՛, ըսաւ Սուլթանը Միթհատին: Ձերինին նման անզուգական միտք մը, Երկրին գործերուն, անոր պահանջներուն և աշխարհային քաղաքականութեանը, ժողովուրդներու յեղաշրջութեանը տեղեակ ձեզի նման քաջահմուտ հայրենասէր մը պէտք էր:

յղանալու համար Սահմանադրութեան այս մեծ գաղափարը:

Մեծ-Եպարքոսը հպարտ՝ թագաւորին սրանկողնին (*) եզերքը և անոր ոտքը համբուրեց: Թագաւորը ետ քաշուեցաւ. լրջօրէն յանդիմանելով Միթհատ փաշան, ա՛յնչափ խոնարհամտութեանը համար, և շարունակեց.

—Ձեզի անհունապէս շնորհապարտ եմ՝ իմ գահակալութեանս սկզբնաւորութիւնը փառաւորած ըլլալուդ համար՝ այս վարչութիւնը հռչակելով: Միշտ ասոր վրայ կը խորհիմ և անհունապէս գոհ եմ: Կը յուսամ որ՝ ձեր եպարքոսութեան օրով, երկիրը պիտի վերածաղկի: Թերեւս Օսմանլըներուն Կայսրութիւնը նորէն պիտի գրաւէ իր հին դիրքը՝ եւրոպական Պետութիւններու շարքին մէջ:

Յետոյ, ձեռքին մօտ գտնուող թղթածրար մը վերցնելով և կիսափակ թարթիչներուն բացուածքէն դիտելով ա՛յնչափ ներքողէ շփոթած իր նախարարը, ըսաւ.

—Այս թղթածրարը ձեզի պիտի յանձնեմ: Հա՛ճեցէք զայն քննել այն լայնամտութիւնով՝ որ ձեր յատկանիչն է: Մանրազնին կերպով ուսումնասիրեցէ՛ք զայն: Դիւանագիտական ընդարձակ ծրագիր մըն է ան՝ զոր ատենով խմբագրած եմ Լիխան եղած ատենս:

Յետոյ գլուխը խոնարհեց, նախարարապետին

(*) Թըքական ուրսէցիօք:

հասկցնելով թէ՛ ունկնդրութիւնը վերջացած էր : Հմայուած , յափշտակուած , մեծաշուք Վէզիրը մեկնեցաւ : Սուլթանին անձին մէջ գտած ըլլալ կը կարծէր այն մարդը՝ որուն պէտք ունէր , գործադրելու համար իր ծրագիրը :

Միւրդի Իռէմ , իր նախատեսութիւններուն մէջ հմայախաբ եղած և զարմացած տեսակցութեան սրտակից հանգամանքէն , Սուլթանին քովէն հեռացաւ խտկուն և անձկութիւնով ինքնիրեն հարցնելով թէ՛ ի՞նչ թախարհ լարուած էր կայսերական այդ սրտակցութեան տակ և թէ ի՞նչ պիտի պատահէր զժրադը նախարարին :

Յաջորդ օրը , երկուշաբթի , առտուն շատ կանուխ , նոյն թիկնապահը Նորին Վեհափառութիւն Սուլթանին հրամանով Մեծ-Եպարքոսը պալատ կը հրաւիրէր : Փաշան ներկայացաւ Նորին Վեհափառութեան :

Հօն , ամենազօր Սուլթանը՝ Միթհատ փաշայէն առաւ Պետութեան կնիքը , և 1138^ր Յօդուածին տրամադրութեանը համաձայն Սահմանադրութեան՝ զօր Միթհատ ի՞նչն իսկ խմբագրած էր , կարգաց Միթհատի Օսմանեան հողէն արտաքսումին հրամանագիրը :

Միթհատ հասկցա՛ւ այդ վայրկեանին թէ՛ ինչո՛ւ համար Ապտիւլ-Համիտ ա՛յնչափ պնդած էր 1138^ր Յօդուածին Սահմանադրական Օրէնքին մէջ մտցուելուն :

Առա՛նց ընտանիքը կարենալ տեսնելու , առա՛նճ

պատրաստութեան , առա՛նց պիտոյքի , պաշտօնի գլուխ գտնուող Մեծ-Եպարքոսը ամիջապէս զրուեցաւ Իզզէսիկ զբօսանաւը , որ զինքը Պրինսիզի պիտի տանէր : Այն միջոցին , երբ զբօսանաւը կը հեռանար , նաւահանգիստին վրայ նայող Տօլմա-Պաղչէի մէկ պատուհանէն Միթհատ տեսաւ ձերմակ զէմք մը , որուն աչքերը կը հետեւէին Իզզէսիկին , որ Պալատին անկիւնը կը դառնար : Միւրդի Իռէմն էր ադ , որ կը խորհէր նախորդ օրը ա՛յնչափ սուկումով իր լսածին վրայ ,—երբ Դօնչէ Յէմ ներս մտաւ և հաղորդեց իրեն թէ՛ այդ հեռացող նաւը կը տանէր արտաքսուած դաւաճան Մեծ-Եպարքոսը , Միթհատ փաշան , որ բռնուած էր ճի՛շդ այն պահուն , երբ Հանրապետութիւն կը հռչակէր և ինքզինքն ալ դիքդալօր :

ժ.Բ.

Եմէնի զինուորական բժիշկ հանգուցեալ Րիֆաթ պէյի այրին՝ ձէմիլէ հանրմ, տասը օրէ իվեր զուր կը փնտոէր իր ձէմիլ զաւակը, ուսանող զինուորական բժշկական վարժարանի: Այդ հաստատութեան պետերը բացարձակ լուծիւն մը կը պահէին անոր անհետացումին մասին: Կինը ինքզինքէն ելած էր: Բոլոր պահականոցները, բոլոր բանտերը պտրտած էր. ձէմիլ չէր գտնուեր. ան մէջտեղը չի կա՛ր:

Օրերը իրարու կը յաջորդէին: Ձէմիլ կեանքի ո՛րևէ նշան ցոյց չէր տար, և իր մայրը, զարհուրելի անստուգութեան մը մէջ, զինքը կը փնտոէր անմխիթար: Վերջին անգամ ըլլալով, գնաց Պէշիք-Թաչի միջին պահականոցը: Բաղխեցաւ նո՛յն մերժումին, նո՛յն լուծեան, նո՛յն տեղեկութիւններու չգոյութեան:

Ձէմիլէ հանրմ դեռ նոր տուն դարձած էր: Օղը ճնշիչ ու տխուր էր: Խեղճ կինը Գուրան մը առած՝ անկէ հատուածներ կը կարդար, իբր հոգեհանգիստ իր զաւկին, որ կորսուած էր, թերեւս մեռած: Օրերէ իվեր զայն փնտոած էր արչալոյսէն մինչեւ մայրամուտ: Յանկարծ լուր բերին իրեն թէ՛ ոստի-

կանական վերատեսուչը պաշտօնագիր մը զրկած էր: Սրտատրոփ տեղեկացաւ որ՝ կայսերական հրամանով ա՛լ իրեն արգիլուած էր արտասանել իր զաւկին անունը, որովհետեւ ան Հայրենիքի դաւաճան մըն էր:

Ուրեմն քաղաքական խնդիր մը կար, թերեւս դաւադրութիւն մը, գաղտնի ընկերութիւն մը: Բայց ի՞նչ ըրած էին տղան: Դատապարտա՞ծ էին, աքսորա՞ծ, կախա՞ծ:

Բայց եթէ ատանկ ըլլար, հանրութեան ծանօթ պիտի ըլլար: Չէ՞ որ ամէնէն սոսկալի աւազակները իսկ, ինչպէս Չէրքէզ Հասանը, հրապարակով կը կախէին...

Խեղճ մայրը, յուսահատ, ձեռքերը գլխուն զարկաւ:

Իր զաւակը կ'ապրէ՞ր թէ ո՛չ: Այդ դժնդակ խնդիրին վրայ խորհիլ կը բաւէր՝ ոճիր մը գործելու համար: Օրերը անցան, խեղճ կնոջ համար ճգնաժամի՛ օրեր, առա՛նց լուր մը բերելու:

Առտու մըն ալ, Պէշիք-Թաչի ոստիկանութեան պաշտօնին մէջ գտնուող ազնիւ ենթասպայ մը, Շիւքրի չալուչ, Ագ-Սարայի մէջ գնաց գտաւ Րիֆաթ պէյի այրիին խոհարարուհին, բարեբարոյ խափչիլուհի մը, որ տիրոջը տունը մեծցած էր:

Ազնիւ զինուորականը, որ բժիշկին վաղեմի ծանօթ մըն էր, արտասուելից աչքերով խափչիլուհիին պատմեց խեղճ ձէմիլ պէյի ողիսականը:

— Հինգշաբթի օր մըն էր, ըսաւ ան, զիչերանց

զինուորական հսկողութեան տակ պահականոց բերին տասներեք հոգի, ուսանողներ, գրագիրներ, քանի մը սօֆիստներ և սպաններ: Կ'ըսէին թէ՛ այդ երիտասարդները մտերիմ յարաբերութեան մէջ էին պաշտօնանկ Մեծ-Եպարքոսին՝ Միթհատ փաշային հետ, թէ անոնք գաղտնի ընկերութիւններ կազմած էին, թէ զանազան օտար գործակալութիւններէ կարեւոր նպաստներ կը ստանային: Բոլորն ալ հարցաքննուեցան. անոնք որ պատասխան չէ տուին, նախ ենթարկուեցան չարչարանքներու, յետոյ զրկուեցան Թաշ-Դըչլի զօրանոցը, չլիացուիր թէ ինչո՛ւ համար:

«Այդ բանտարկեալները պահուեցան չէնքին գետնայարկը, պատուհան չունեցող չափազանց խոնաւ բանտի մը մէջ: Անոնց տրուեցաւ զինուորի քառորդական հաց և երկու թակոյկ ջուր բոլորին համար: Երեք շաբաթ ետքը, անոնցմէ երեքը մեռան: Անոնց զիակները տասը օրէ աւելի իրենց ընկերներուն քովը մնացին, որովհետեւ թաղումի իրատէն ելած չէր:

«Ճէմիլ պէյ այդ բանտարկեալներուն մէջ կը գտնուէր: Յանցաւորները պատժելու պաշտօն ունեցող Հասան՝ քմահաճոյքը ունեցաւ ձէմիլը աքսորի գատապարտելու: Ան պիտի աքսորուէր Սահարաի անապատը՝ Յիզան, որ Թարապուլուսէն 50 օրուան ճամբայ հեռու է: Իր մեկնումէն առաջ, վերջին հարցաքննութեան մըն ալ ենթարկուեցաւ: Պահականոց բերուած ատեն աղւոր տղայ մըն էր,

իր ուսանողի համազգեստին մէջ վայելչաձեւ, քաջակազմ և առողջ:

«Երբ զինքը Հասանի մասնասենեակը մտցուցին, հոն կը գտնուէի:

«Ի՜նչ տեսնեմ: Մահամերձ մը, նիհարցած, երկնցած սեւ մօրուքով. և մեծ դժուարութիւնով կը քայլէր ու շարունակ կը հազար:

«Հասան՝ Թամէրլանի տեղեկալի մը ձեւերը ունեցող անձ մըն էր, ստորնաքարչ կերպով կեղծաւոր և անգութ նկարագրի տէր: Հասան՝ հարցուց երիտասարդին.

«—Ըսէ՛ նայիմ, քեզի՛ ոճրագործ, Միթհատ ի՜նչպէս գահընկեց պիտի ընէր Նորին Վեհափառութիւնը, ձեր խմբակի՜ն միջոցով:

«—Վսեմաչո՛ւք, Միթհատ այդ տեսակ մտադրութիւններ չունէր երբեք, և ո՛չ ալ մենք խմբակ ունինք, պատասխանեց ձէմիլ անվախօրէն:

«Բանտարկեալին արհամարհական դիրքէն զայրացած, Հասան տեղէն ցատկեց և սոսկալի կիցի հարուած մը տուաւ ձէմիլին, գոչելով. — Հօ՛շի, ֆօրքիֆ:

«Երիտասարդը մարեցաւ ինկաւ: Զայն սենեակ մը փոխադրեցին և հոն երեսի վրայ ձգեցին: Ժամ մը ետքը, զիպուածով այդ սենեակը մտնող ճառայ մը կը տեսնէ որ երիտասարդը մեռած է»:

Շիւքրի չավուչ խափշիկուհիին այս պատմութիւնը ըրաւ:

—Այո՛, սիրելի գալֆաս, կը կրկնէր ան, Տօք-

թօռ Ռիֆաթ պէյի որդին ձէմիլ պէյ նահատակուեցաւ : Աստուած լուսաւորէ անոր և ա՛յնչտօվ ուրիշ մարտիրոսներու հոգին :

Սահմուկած , սոսկումէն արձանացած , խեղճ խափշիկունէին կը հեծկտար Շիւքրի չափուչի հետ և չէր գիտեր թէ՛ ի՛նչ կերպով հաղորդէ այդ տխուր լուրը իր տիրուհիին : Յետոյ , անհուն նախագգուչութիւններով՝ տարաբաղդ ժօր պատահած դժբաղդութիւնը իմացուց , և այս երկու յուսահատները Շիւքրի չափուչէն տեղեկացան տակաւին չա՛տ մը վայրագութիւններ : Շիւքրի անոնց պատմեց թէ՛ քանի մը օր առաջ կառավարական շոգեմակոյի մը գիշերանց ճամբայ կ'ելլէր : Անոր մեջ կային տասնըհինգի չափ երիտասարդներ , հսկողութեանը տակ իրր սպայ ծպտուած քանի մը ոստիկաններու , որոնք առջեւին մասթիքայի շիշեր առած՝ կը կոնսէին և կ'երգէին : Գիշերը տխուր էր և անձրև կու գար : Երկու ժամ երթալէ ետքը , շոգենաւը կանգ առաւ : Ճամբորդները զարմացան : Շոգենաւով ի՛նչպէս աքսոր պիտի երթային : «Շատ շատ , մեզի Արշիպեղազօսի կղզիները պիտի աքսորեն , կ'ըսէին անոնք ինքնիրեննին , և Պոլիսի ամէնէն մօտ կղզին երեք-չորս օրուան հեռաւորութիւն ունի» :

Շոգենաւը երկու մասերու բաժնուած էր՝ վրանով մը : Կարծեցեալ սպայ մը՝ կանչեց զժրագղներէն մէկը : Ոստիկաններուն զանուած տեղը մտածին պէս , անոնք բռնեցին զինքը ամբապէս :

Անոնցմէ մէկը՝ իր բերնին մէջ թխմեց թաց քուրջի կտորներ , որպէսզի չկարենայ պօռալ : Հեռուն , կը տեսնէր մեծ շոգենաւի մը բոցանշոյլ մուխը : Անոր ոտքերուն կապեցին հանքածուխի խոշոր կտոր մը և Մարմարաի ծովը նետեցին , իրր թէ աղտեղութիւնով լեցուած պարկ մը եղած ըլլար : Շոգենաւը ճամբայ կաւ և քառորդ ժամ ետքը կանգ առաւ : Կարգը երկրորդ զժրագղի մը եկած էր : Այսպէս , չարաչուք նաւը մինչև առտու Մարմարաի մէջ իր եղերական չրջագայութիւնը կատարեց և արչալոյսին նաւահանգիստ դարձաւ :

Հասանի գործակատարները պահականոց գացին և Նորին Վսեմութեան ներկայացուցին իրենց ստորագրած կնքափակ տեղեկագիրը :

Այդ անձերը պատուասիրութիւններու արժանալով , Հասանի կողմէ նախաճաշի վար դրուեցան : Ճաշէն ետքը , Հասան խնդրեց անոնցմէ՛ իր գաղտնի սենեակին մէջ սպասել իրեն :

Գարձին , Նորին Վսեմութիւնը անոնց հաղորդեց Նորին Վահափառութեան մեծարանքները և իրր վարձատրութիւն՝ հազար ոսկի նուիրեց , բոլորն ալ պատուանշաններ ստացան և աստիճանի բարձրացում ունեցան :

Իր ընկերներուն կողմէ , անոնցմէ մէկը չնորհակալութիւն յայտնեց Հասանի և խնդրեց անկէ՛ իրենց երախտագիտական զգացումները հաղորդել «յոտս Գահոյից» : Աստիճանի համաձայն , հոն իրենց մէջ բաժնեցին 1000 ոսկին : Գիշերը ուշ ատեն , այս

գաղտնագործները հաւաքուեցան Քաթէրին անուն կնկան մը Ղալաթիաի Պաղօզը, ուր ճաշեցին և մինչև առտու գուարճացան Լեհաստանէն նոր եկած քանի մը Հրէուհիներու հետ» :

Ահա թէ ի՞նչ պատմեց ազնիւ չափուչը, որուն զեղնագոյն դէմքը բոլորովին այլայլած էր, պատմած ատեն :

Բայց, օրինակը տրուած ըլլալով, զանազան պաշտօնեաներ տենդոտ գործունէութիւնով մը սկսան երեւակայական դաւաղրութիւններ գտնել : Միթհատ ամէնուն բերանն էր : Ան էր որ, 75 տարիէ աւելի առաջ, Սէլիմ Գեռը սպաննած էր. նոյնպէս ան էր պարագլուխը Մուսթաֆա Գեռի գահընկէցութեան և խեղզամահութեան, և այլն : Այս բոլոր առասպելները, այս բոլոր գոեհիկ ստութիւնները Նորին Վեհափառութեան հաւանութեանը կ'արժանանային :

Ապտիւլ-Համիտ կը կարգար. կ'ուսումնասիրէր կամ իր խորհրդապահ հարձերուն—բայց երբեք Միւրդի Իռէմին—կարդացնելով մտիկ կ'ընէր իր գործակալներուն տեղեկագիրները. զանոնք կը հաւաքէր և կը դասաւորէր մասնաւոր գզրոցներու մէջ :

Գաւառները, ամէն կողմ, նախկին Սատրապամին դաւաղրութիւնները կը գտնէին :

Երբեմն, այդ ցնորական տեղեկագիրները կարդալով, Վեհապետը չէր կրնար խնդուքը զսպել : Բայց, այս լրտեսական գրականութիւնը մեծ հաճոյք

կը պատճառէր իրեն : Ո՞վ գիտէ թէ, կ'ըսէր ինքնիրեն, այսօրուան այս ստախօսները, վաղը իրական դաւաղրութիւն մը չի պիտի տեղեկագրեն ինծի :

Պարոն պատուակալ և կամաւոր լրտեսները՝ ինքզինքնուն պարտականութիւն ըրած էին գիշերցորեկ հսկողութիւն կատարել Միթհատ փաշաի ազգականներուն, բարեկամներուն, ծանօթներուն և ատոնց ծառաներուն ու ազգականներուն վրայ : Ամէն օր, Միթհատի նոր ազգականներ, նոր ծանօթներ կը գտնէին : Սուլթանը օր մը իր խորհրդապահ գերուհիներէն մէկուն հրամայած ըլլալով պաշտօնանկ նախարարին մասին իրեն ուղղուած տեղեկագիրներէն քաղելով անոր ազգականներուն և բարեկամներուն մէկ ցանկը պատրաստել, տեսնուեցաւ որ՝ ան 1500 ազգական և 15.000 է աւելի բարեկամ ունեցած կ'ըլլար, և իր կուսակիցներուն թիւը կայսրութեան ամբողջ բնակչութեան գումարը քիչ մըն ալ կ'անցնէր :

Եւրոպայի մէջ, ղեսպանատուններու և օսմ. գաղութներու հետ կապ ունեցող մասնաւոր գործակալներ՝ Միթհատի վրայ հսկողութիւն կը կատարէին :

Ռուսճուքի և Պաղտատի մէջ՝ տղայութեանը ատեն Միթհատ փաշաի քով մեծցած Ահմէտ Միթհատ Էֆէնտի անուն անուանի լրագրողի մը՝ Վեհապետին կողմէ պաշտօն տրուած էր՝ ամէն օր Միթհատ փաշաի դէմ յօդուածներ հրատարակել,

զայն ամբողջ ժողովուրդին աչքին վարկաբեկելու համար :

Այս խիստ տաղանդաւոր հրապարակագիրը , որ բեղուն վիպասան մըն էր , իր թերթին մէջ Նախարարապետին մասին տեսակ-տեսակ քրոնիկներ կը հրատարակէր :

Սուլթանը , Ահմէտ Միթհատ Էֆէնտիի պաշտօն տուած էր նաև՝ երկու հատորով պատմութիւն մը գրել՝ Ապտիւլ-Ազիզի , Մուրատ եւրի թագաւորութեան և Ապտիւլ-Համիտի գահակալութեան վերջին ղէպքերուն վրայ : Ապսպրանքի և չափ ու ձեւի համաձայն գրուած այս պատմութիւնը , որ Իււսի Ինգրայ վերնագիրը կը կրէր , երեւան կը հանէր բոնապետին ամէնէն աւելի հաճոյ եղած ժամանակաշրջանը , Ազիզի գահակալութեան 22 տարիները :

Ճշվտէթ Էֆէնտի , Սուրուրի Էֆէնտի և ուրիշ հազարաւոր Էֆէնտիներ և Պէյեր՝ կը գերագանցէին ճառագայտը և նոր արուեստին մէջ : Երիտասարդներ կային , որոնք այդ ասպարէզին կը նուիրուէին , ինչպէս կը նուիրուէին ազատական արուեստի մը :

Գրականութիւնը կը փոխուէր : Շարունակ նոր ոճեր կը հնարէին , չորմելու համար Նորին վեհափառութիւնը : Հին ածականները ա՛լ բանի չէին ծառայեր : Թուրք բառգիրքն ալ վիրահատական խիստ արմատական գործողութեան մը կ'ենթարկուէր : Այն չափազանց ազատական բառերը՝ որոնք

Ապտիւլ-Համիտի հաճոյ չէին , բառարանէն ջնջուելու կը դատապարտուէին :

Ամբոխը մեծ անտարբերութեան մէջ էր : Գաւառներու մէջ , բացի լրտեսներէն , մարդ չէր գիտեր թէ՛ ի՛նչ կ'անցնի Սթանպօլի մէջ :

Միայն , ծերունիներէն , սպաներէն և մանաւանդ մտաւորական երիտասարդներէն ոմանք՝ շատ չարագուշակ կը գտնէին այս բոլորը :

Պալատին մէջ , որչափ կ'ին նոյնչափ այր բնակչութիւնը չափազանց ուրախ էր , հակառակ Ապտիւլ-Համիտի խիստ նկարագիրին : Պառաւ հազնէտարները և սուլթանուէրներէն ոմանք կ'ըսէին թէ՛ Սուլթանը բոլոր զփուարութիւններուն յաղթած էր : Գաւառները չափիկ փոխելու պէս Սուլթաններ փոխելով , կ'ուզէին ջնջել գահին առանձնաշնորհումները , նաեւ այնքան իրաւիֆաին սրբութիւնը : Օսմանլիներու ամենահզօր Փատիշահը , հաւատացեալներու առաջնորդը , Մէքքէ և Մէտինէ երկու քաղաքներուն ծառան , երկու ցամաքներու և երկու ծովերու Սուլթանը՝ որուն առջև եօթը քաղաքները կը դողային , Բարձրեալին չուքը , այս գերընտիր անձնաւորութիւնը , այդ գաւառներուն գլուխը ջախջախած էր : Չէ՞ որ արդէն իր ծագումով իսկ անընդունակ էր ան՝ ամենաչնչին ոճի մը գործելու : Յաճախակի անսխալ էր ան և միշտ Աստուծոյ ներշնչեալը :

Ամէն գասակարգէ չէլիսեր , կախարդներ , առաքեալներ , եւրոպացիներ , իրաւ ըրար պը գտնէին :

Խիստ բարեպաշտ Սուլթանը՝ զանոնք կը յարգէր, կը մեծարէր և բարեքնեցող կը խեղդէր: Բոլորովին նոր տեսակ գրականութիւն մըն էր որ այդ սուրբ անձնաւորութիւնները կը ձօնէին «յոտս գահոյից»: Երազի մեկնիչներ շատ կը գնահատուէին: Անոնք ամէն ուրիշ աւելի գործունէութեան մէջ էին: Ապտիւլ-Համիտ չափազանց կը սոսկար անկէ՝ որ երազ հնարելու արուեստին մէջ կը գերագանցէր:

Ամէն առտու, անուանի Շէյխերէն մէկուն զուռին առջեւ, կը հաւաքուէին պառաւ կիներ, խեղճ տէրվիչներ, անձանօթ ճամբորդներ, նոյն իսկ դատարկաչրջիկներ, քանի մը փարա ողորմութեան փոխարէն պատմելու համար իրենց տեղած երազները, որոնց մէջ Սուլթանը միշտ Մարգարէին գոհունակութեանը առարկայ եղող զեր մը կ'ունենար: Անոնք չէին մոռնար նաև Շէյխին հազորդելու՝ այդ երազներուն մէջ սուրբերու, մարգարէներու, Գարբիէլ հրեշտակապետին և խորհրդաւոր անձերու կողմէ իրենց ստացած պատգամները:

Այսպէս, հանրային խնդիրներու մասին կատարեալ անտարբերութեան, ոստիկանական տեղեկագիրներու ձուլարանի, Շէյխերու և առաքեալներու պօռոտախօսութեան չըջանալի մը մէջ է որ հնազարեան Բիւզանդիոնը կը հոլովէր իր ամօթի, անողորմութեան և այլասերումի կեանքը:

Յ.Պ.

Նորին Վեհափառութիւնը մեծ փարում մը կը ցուցնէր Միւրդի Իռէմին, հակառակ անոր որ իր հարձին մասին միշտ տեղեկատուութիւններ կը ստանար: Ապտիւլ-Համիտ չէր դադրեր կըքոտ կերպով անձկալէ Միւրդի Իռէմին և չափազանց կը զմայլէր անոր վրայ, բայց իր կիրքը վախով պղտորուած էր և թունաւորուած կասկածով: Երբ երիտասարդ աղջիկը երազուն ու մեկամաղձոտ վիճակ մը տանէր, Սուլթանը կը վախնար որ անոր քնքուշ գլխուն մէջէն չարաչուք ծրագիրներ կ'անցնէին:

Կը բաղձար որ Միւրդի Իռէմ իր բովանդակ գեղեցկութեանը, շտրհալիութեանը և գրաւիչ ձեւերուն հետ, ըլլա՛ր նաև անուս և դատարկամիտ: Արդէն կանանոցին մէջ, Ապտիւլ-Համիտ կը սիրէր անոնք՝ որոնք բոլորովին անուս էին: Բայց անոնք հրապոյրի կողմէ չէին կրնար մը իլ ազնուատոհմ չէրփէզ Պէհատըր պէյի որդեգրուէին հետ:

Միւրդի Իռէմ պայատին մէջ բարեկամուէի չունէր: Ոմանք իրեն հակառակորդներ էին, և հեռեւաբար, Հարէմի սովորութեան համաձայն, թշնամիներ: Ուրիշներ, ա՛յնչափ տխմար և ա՛յնչափ ողորկի էին որ չէր կրնար մտերմանալ անոնց հետ:

Որով, Միւրդի Իռէմ իր ժամանակը կ'անցընէր կա՛մ իր գիրքերը կարդալով և կրկին կարդալով, կա՛մ կրածչտական եղանակներ յօրինելով:

Ինքնակալին անագին պալատին մէջ՝ միայն տասներինգ տարու թուիս. նրբամարմին, սիրուն և ուշիմ Վրացուհի մըն էր որ կը համակրէր: Ռէզինն էր ան: Հեռաւոր նահանգի մը նախկին կառավարիչ Փաշա մըն էր որ զայն նուէր ըրած էր Նորին Վեհափառութեան, անոր գահակալութեանը ատեն:

Վեհապետը, ամէն ուշիմ արարածի մօտաւորութենէն խրոչող իր սկզբունքին համաձայն, զայն շատ լուսամիտ գտնելով, իր մտերմութեան շրջանակէն զուրս ձգած էր, հակառակ անոր գեղեցկութեանը: Մէկ կամ երկու անգամ, փորձութիւնը ունեցաւ անոր հետ գիշեր մը անցընելու, բայց խորհեցաւ որ աւելորդ և նոյն իսկ վտանգաւոր էր երկրորդ Միւրդի Իռէմի մը հետ կապուիլ: Անշուշտ իր բարբարոս բնաւորութիւնը շատ գժուարութիւն կը կրէր հպատակելու այն հազար և մէկ ջանքերուն՝ որոնց անգիտակցօրէն կ'ենթարկուէր, իր անասնական բնազդները զսպելու համար Ռէզինի ներկալայութեանը:

Ռէզին, Միւրդի Իռէմի անձին նուիրուած, եղաւ անոր միակ խորհրդապահ ընկերը, անոր անտրոյիջը (այն անկեղծ բարեկամութիւն՝ որ միւս աշխարհին մէջ ալ բարեկամ կը մնայ) և ո՛չ թէ անոր գերութիւն կամ սպասուէին: Այս աղջիկը շատ խելացի էր-

բնական, պատրաստարան, եռանդուն ու գրաւիչ խօսակցութիւն մը ունէր. ասոկէ զատ, սիրտի տէր ալ էր. և այն բարեկամութիւնը, որ զինքը ամիջապէս Ձէրքէզուհիին կոպեց. անոր փորձութեան օրերուն մէջ եղաւ անուշ մխիթարութեան աղբիւր մը:

Կիրակի օր մըն էր: Միւրդի Իռէմի հրաման տրուեցաւ իր արդուզարդը յարգարել, ավրօջը զրկած նոր մատնին դնել և անմիջապէս կայսերական յարկարածինը երթալ:

Ձէրքէզուհին աճապարեց արագօրէն գործադրել ստացած հրահանգը: Այն հայեկին առջեւ, ուր Միւրդի Իռէմ Ռէզինին յարգարել կու տար իր երկար փափուկ ու վէտվտուն մազերը, անտնք ճշմարտապէս կը ներկայացնէին երկու տիպարներ. մէկը կատարեալ թուիս գեղեցկութիւն և միւսը խարտեաչ գեղեցկութիւն: Ձէրքէզուհիին գեղեցկութիւնը եզականօրէն կը ճառագայթէր, և Ռէզին զարնուեցաւ անոր:

— Իրա՛ւ որ, իմ ճանչցած աղջիկներուս ամէնէ՛ն ազւորն էք դուք. ըսաւ Ռէզին յափշտակուած, այս պալատին, բոյո՛ր պալատներուն ամէնէ՛ն անուշիկ, ամէնէ՛ն սիրուն արարածը: Եւ թագաւորը այս վերջին ատեններս երեք շարաթէ աւելի ինքզինքը ձեր հմայքներէն զրկելովը՝ կը ցուցնէ թէ՛ բացարձակապէս ճաշակ չունի: Միս, երանի թէ ես մանչ ըլլայի և դուք իմ սիրուհիս ըլլայիք

Խանդավառուած, թուիս գերութիւն Միւրդի-

Իռէմի հանդէպ բարեկամութենէն, գուրգուրանքէն, համակրութենէն տարբեր բան մը կը զգար իր մէջ: Ռէզին Սուլթանին հարձին վիզը նետուեցաւ, սրտագեղ գրկեց զայն և գոչեց.

— Մխ, երանի՛ թէ ևս Ապտիւլ-Համիտ ըլլայի: Ռէզինի դէմքը կաս-կարմիր կտրած էր. ամօթահար ու զոյ՛ կրած՝ կը շարունակէր կոճիկ Չէրքէզուհին զգեստը:

Մնասունի դէմքով ներքինի մը — անբան մը — եկաւ ըսել Միւրդի Իռէմի թէ՛ Սուլթանը ա՛լ չէր կրնար սպասել:

Քանի մը վայրկեան կտքը, Ապտիւլ-Համիտ իր տարփուհին հետ կը զուարճանար ա՛յնպէս՝ ինչպէս պուպրիկի մը: Ներքնապէս երիտասարդուհին կը զգար որ՝ իր անձնասիրութիւնը կը ծառանար և իր դերը սովորականէն աւելի կը ճնշէր զինքը: Մեծ ճիգով կը զսպէր իր մէջ ուռող ըմբոստութիւնը, մանաւանդ քանի՛ Ապտիւլ-Համիտ աւելի՛ գուրգուրալի և հոճոյակատար կը ձեւանար, աչքերը արցունքով լեցուած, հակառակ սովորութեանը:

Սուլթանը Չէրքէզուհին ոտքերը համբուրեց. փառք տուաւ երկինքին՝ Միւրդի Իռէմի չափ գեղեցիկ, խելացի, նուրբ և զգլխիչ տարփուհի մը պարգեւած ըլլալուն համար իրեն: Սուլթանը իր բազուկներուն մէջ առնելով Միւրդի Իռէմը, իր կիրքը ցուցնող շատ մը խելայեղութիւններ ունեցաւ:

— Միւրդի Իռէմի գգուանքներուն քով՝ Պետու-

թեան գործերը ո՛չ մէկ կարեւորութիւն կրնան ունենայ, կը սնդէր: Աշխարհի վրայ քու ժպիտդ տեսնելէ աւելի՛ անուշ, աւելի՛ հեշտալի զգայութիւն մը կա՛յ: Եթէ ինձի առաջարկէին ընտրել կա՛մ ձիով յաղթական մուտք մը Մօսքուաի մէջ, կա՛մ վայրկեան մը քու գգուանքներովդ յափրանալ, էրիկ-մարդու պատիւիս վրայ կ'երդնում որ՝ այս վերջին յաջողութիւնը պիտի նախընտրէի:

Համիտի սէրը վայրկեանէ-վայրկեան աւելի՛ բուռն կը դառնար: Միւրդի Իռէմ հանուեցաւ և չղարչէ գիչերազգեստ մը առաւ վրան. Համիտ ատանկ կը սիրէր: Սուլթանը՝ չափազանց զուարթ՝ կը շարունակէր.

— Քու աղւորութիւններդ՝ այս աշխարհի և երկինքի՛ այ թագաւորութենէն կը նախընտրեմ: Ո՛ր չափ ողորմելի են բոլոր երկիրներու բանաստեղծները: Չե՛ն իսկ կրցած երեւակայիլ չրթունքներուդ հրապոյրը և ակոսաներուդ շողջողուն ձերմակութիւնը:

Ապտիւլ-Համիտ ա՛լ չէր գիտեր թէ ի՛նչ կ'ըսէր: Միւրդի Իռէմը կը բաղդատէր սուրբերուն. Կոյս Մարիամին, կտակարանի կիներուն, Զիւլէյխաին, Նիլոփէին, նոյն ինքն Եւաին, վերջապէս զանազան զիցուհիներու և ըղձանուշներու հետ, և զայն ամէնէ՛ն գերելիք կը գտնէր...

Այդ բոլոր բաղդատութիւններուն մէջ, Միւրդի Իռէմ անվիճելի կերպով կը մնար կուռք մը, անցեալին, ներկային և ապագային ամէնէ՛ն գեղանի

կինը : Աստուած , կ'ըսէր Սուլթանը , անկարող է ստեղծելու ո՛չ թէ անկէ գեղեցիկ կին մը . այլ անոր հաւասարը . . . Սուլթանը ինքզինքը երջանիկ և հազա՛ր անգամ աւելի երջանիկ կը նկատէր՝ բոլո՛ր մարդոցմէն , բոլո՛ր նշանածներէն բոլո՛ր սիրահարներէն . . .

Միւրդի Իռէմ մեծ դժուարութիւնով կը զսպէր խնդարու բուռն փափաք մը : Չափազանց վրդովուած էր . այդ տեսակ անզուսպ և կեղծաւոր սէրէն ոչինչ կը հասկնար : Իր կիրքը գոհացնելու համար , կ'ըսէր ինքնիրեն , թագաւորը պէտք չունի ինձի ա՛յդչափ արտառոց կնամեմարութիւններ չռայելու : Ես լաւ գիտեմ թէ՛ ի՛նչ ըսել է ասպետական սէրը , բռռին ճշմարտապէս սիրասարփ առումով սէրը : Ատիկա գիտնալու անկարող է ան , որի բնաւորութեան իսկ հետեւանքով :

Չափազանց յոգնած , Սուլթանը փրաւ թիկնոթեակին վրայ : Բունը տարաւ :

Միւրդի Իռէմ շատ ուրախ էր իր ստոկումին առարկան քնացուցած ըլլալով՝ քանի մը վայրկեան հանգչիլ կարենալուն համար :

Սեղանի մը վրայ , Միւրդի Իռէմ գտաւ ստուարածաւալ ճուռնալ մը , որ կայսերական վատահոլութեան արժանացած հոչակաւոր մարդուն՝ Հասանի կնիքը կը կրէր : Այդ ճուռնալին բովանդակութիւնը սա՛ էր . —

«Թո՛ղ Բարձրեալը այս աշխարհի մեջ Օսմանլիներուն փառապսևծ գահին փրայ սևաաւան պահէ իր Մարգարէին փոխսևնորը , ա՛յնչափ ժանտանակ որ աշխարհը գոյութիւն ունենայ . եւ քո՛ղ զայն բարիքներով , փառքով ու ստողութիւնով ողորդէ . Ասկև :

«Ձեր Վեհափառութեան առջի օր Մարքա-Քոշկիին մեջ քերսևնացի տուած հրատևսիկ հատևաճայև , Ձեր Վեհափառութեան դասիկ սևճևտեհ ու փսսսևեդի 50 գործակալներու պաշտև մը կազմակերպուեցաւ , հսկողութիւն կսսսերեյու հատևար ուքը կսսսսևեդի սկսսևսևնր սևճևսևնրութիւններու փայ :

«Ներկայ գրութեանս կցուած , Ձեր սսրուկը «յոսս Գսսևոյից» կը սևսսուցսևնևկ սևնր գործակալներուև երեք կսսրեևնր եւ շսսևսգրգուսկսև սեղեկսսսիները , որևկ շսս քսև կը խոսիկ : Եսսուած պսևսսսևկ Ձեր սևեճաշոբ Վեհափառութիւնը : Ձեր Վեհափառութիւնը քո՛ղ մեզ որք չճգէ : Այս շսսքու Պսսսսսսի սկիթիկ մեջ Ձեր սևթրսկսև սոթթը կսսսսերը , — Ձեր Վեհափառութիւնը քող հսսճի քոյը սաղ իևծի շսեյու , — սևքսսսսրեդի սևխոհեևնրութեան սևրսբ մը պիսի շքսս : Այս սկիթիկ Պոյիս գսևնուոյ սևնիշսսևսկսևնևներուև քիւը 5000ի կը հսսևկի . սևնևկ քոյորը սկեյիկ դեպտերու կազմակերպիչներուև քսրեկսևները եւ գործակիցներև եև , եւ սևնևկ հևս սեւսկսև յսրսքտերութեան մեջ կը գսևնուիկ : Ձեր հրատևսիկ փրայ , Տեր , Կսրքսս-Մսրայի Լիսևիկ եօքը ուսսևնողները , որևկ Պ*** փսշսիկ հևս յսրսքտերութիւն ունևիկ , սևնիջսսսկսս Թսիթ սսսուրուեցսև : Աևնևկսև

մեկը, Սերեկս, շատ գերագրգռուած, Չեր Վեհափառութեան Սուրբ եւ Օգոստափառ ակունքը հանարձակեցաւ արտասուելէ՝ առանց տոյրտալիս փառաւորիչ ածականները աւելցնելու. եւ ակունք փորին կից մը իջեցուցի, որուն վրայ հիշանդացաւ եւ ճիշդ այս պահուն, գիշերանց ծածկապէս փոխադրուեցաւ տաղաւարը այն զինուորական հիշանդանոցին, զոր Չեր Վեհափառութիւնն ըստ գիտէ:

«Այս ատոյն Եփեսոսներուն Խորհուրդին քարտուղարին այցելութիւնը ընդունեցի: Բարձրագոյն Դրան մեզ շահեկան բան մը չի կայ: Միայն համեայնի Շինութիւններու նախարարը Չեր Բարձր Անձնաւորութիւնը չի մը հեզմէ կը բռնի:

«Ապարդիւն կերպով հետապնդել կու սաւ Բ*** Շեյխը:

«Անբարիչ Միթիասին ծառային՝ Արիփ աղային ծանօթները կաւ հոսանումիները եղող երկու կիները Հիւսնի-Մանուար բշուած են...»

Միւրդի Իռէմ ա՛լ չէր կրնար շարունակել ընթերցումը այս սոսկալի և անհեթեթ տեղեկագիրին: Ապտիւլ-Համիտ կը քնանար: Անոր բարձին տակ Չէրքէզուհին գտաւ խիստ գեղեցիկ և խոշոր գիրերով գեղազրուած ուրիշ ձուռնաչ մը, որ Բողոք ստորագրութիւնը կը կրէր:

Սովորական բանաձևներէն ետքը, ձուռնաչը կ'ըսէր.—

«Ինչպէս Չեր Վեհափառութիւնը պիտի չի յիշէ, Շերիփ Իսրիւ-եղ-Ուֆեսալի, երեկ, ուշ ատեն, պարտադրեալ եր տեղեկագիր մը, որուն մեզ մեզի կը ծանուցանէր թէ՛ իր եղբայրը Շերիփ Մուհամեդս Վալիս՝ Նոթիկէմ բեռնաբարձ շոգենաւով պիտի փոխալի Լուսն, ուրիշ պիտի անցնի Մեքէ, հոն ուրիշ Շերիփներու եւ հինգի պարտաւորներու եւայլն հետ խոսքովի սերտակերպ հ. սնար: Չեր Վեհափառութեան հրահանքին համաձայն, այս ատոյն քրիստոս ժամը 2-ին, Չուհալ շոգենակոյղը ինչպէս եւ յայտնեցաւ շոգենաւ մեկնելէ առաջ, առանց դիտարութեան ձեռքալալը Մուհամեդս Վալիս համբաւաւոր Շերիփը: Հուլիս պիտի. Վաւրճ եփեկի, ձեռնալ պիտի, Խրիսթոֆորիսկու եփեկի հետ զայն հինգ ժամ հարգաւնեցի: Առաջ Խալիփաի ծրագիրին մասին բան մը չի խոստովանեցաւ ակ. այդ մասին բացարձակապէս բան մը չգիտէր եւ բացարձակ շուքիւն կը պահէր:

«Անոր քանի մը խարազանի հարուածներ իջեցնելէ եւ քեռերուն սակ սակ հաւկիթ դնելէ ետք, կոշիկին մեկնել հանել, բռնաբար կտր մը, որ կը պարտաւակեր հարագուս օրինակը այն տեղեկագիրին՝ զոր իր եղբայրը Շերիփ Իսրիւ-եղ-Ուֆեսալի հանարձակեալ եր Չեր Վեհափառութեան ուղղել: Խնդիրը շանքած մըն եր միայն, զոր երկու եղբայրները կազմակերպած էին: Ատով, ակունք կը յուսային որ՝ Չեր Վեհափառութիւնը զիրենց շոգենաւէն հանել պիտի տայ եւ ձեռնաբոյսակ մը պիտի կապէ, եւայլն»:

Ապօրուշ-Համիտ արթնցաւ: Իր կարգին Միւրդի Իռէմ փափաք կը զգար քանի մը ժամ հանգչելու իր սենեակին մէջ: Սուլթանը զայն շատ յոգնեցուցած էր: Բայց Միւրդի Իռէմ զուր տեղը այդ արտօնութիւնը աղերսեց: Իրեն հրամայուեցաւ որ՝ մինչև արշալոյս կայսերական անկողինին ընկեր ըլլայ:

Սաստիլապէս տաքցած սենեակին մէջ, Միւրդի Իռէմ քնացաւ առանց ծածկոյթի: Ինչչափ աղւոր կ'երևար ան՝ իր բոլորովին մերկ վիճակին մէջ: Իր կողերը գոցած, իր վարդագոյն չրթունքները կիսաբաց, իր մանտրտիկ ձերմակ ոտքերը մերկ, իր մազերը խառնիխուռն, մատին վրայ աղամանդազարդ միակ պարզ մատնի մը դրած, Միւրդի Իռէմ իր քունին մէջ անուշ երազ մը կը տեսնէր:

Կովկաս կը գտնուէր, իրեններուն քով: Գիշեր էր, ձմեռ գիշեր մը: Էմիր Աթէշ, Շամիլի որդին, ազգային մեծ հերոսը, կովկասեան Ընկերակցութեան հայրենասիրական ջանքերուն չնորհիւ, Մուկոֆները Տօնի միւս ափը քցած էր: Նոյնպէս, Նըրիմի Սաներուն շառաւիղներէն Տէմիրպաշ Կիրաի նոյնինքն Աէվասթափօլի մէջ, յաւերժայիշատակ ամբողջներուն վրայ, թերակզգիին Իշխան-Վեհապետ կը հռչակէր ինքզինքը: Հարաւային և Հիւսիսային Ռուսերու բնավայրերը՝ Բօլօնիա, Լիթուանիա, Ֆինլանտա, կ'ապստամբէին: Ռուսիան բաժան-բաժան կ'ընէին, ինչպէս ատենով բոլոնիական Արքայական Հանրապետութիւնը... Էմիր Աթէշ, Շամիլի այս ազնուատոնմ որդին, հիմա միա-

հեծան և ամենագոր տէրը Կովկասի, Չէրքէզներու Վրացիներու, Ապազաներու, Ափղազներու, Կափարտացիներու, Նողայներու, Հայերու, Թաթարներու Վեհապետը, յաջորդ շարթուն պիտի թագապսակուէր Թիֆլիզի մեծ մզկիթին մէջ, և Պէհատըր պէյի որդեգրուէին՝ Չէհրաի ձեռքը կը խնդրէր...

Չէհրա արդէն տեսած էր Էմիր Աթէշի անցքը իր բնավայրին մէջ, ազնուացեղ ձիու մը վրայ՝ իր զօրքերուն գլուխը անցած, ամբոխին մոլեգին ծափահարութիւններուն մէջ:

Մեծապանծ, գեղանի, խելացի, Շամիլի յաջորդը, թագաւորի՝ ճշմարիտ տիպար մըն էր, վազեմի այն փառաւոր, ասպետական, վեհաշուք թագաւորներէն...

Իր կարգին, Սուլթանը, գորգին վրայ արեւելեան ձևով նստած, ձեռքը ոսկիէ պղտիկ կապարգրիչ մը կը կարդար, կրկին կը կարդար ձուռնալները և ուշադիր ու մանրազնին նօթագրութիւններ կ'ընէր: Այդ օրը, ձուռնալներու բազմաթիւ թղթածրարներ կային: Ուզեց իր հրամանները գրաւոր տալ, բայց, շատ մը փորձերէ և խորհրդածութիւններէ ետքը, ետ կեցաւ այդ գազափարէն, որովհետեւ իր գերը գէշ էր և ուղղագրութիւնը չափազանց պակասաւոր:

Ստեն-ատեն, զանկութիւնը կ'ունենար երթալ անկողինին վրայ զիտելու իր քնացող հեշտազրգիտ հարձը, բայց չէր կրնար.— ձուռնալները աւելի չահեկան էին!

Անընդհատ երկու ժամէ աւելի անթիւ ճուռ-
նախնորը հետազօտելու աշխատելէ հտքը, Սուլ-
թանը արթնցուց Միւրդի Իոէմը: Միւրդի Իոէմ՝
ճիշդ այդ պահուն խօսակցութեան մէջ էր Կովկաս
գտնուող իր ընտանիքի անդամներուն հետ: Ի՞նչ
դժբաղդութիւն, խորհեցաւ ան: Սակայն, ուզելով
չուզելով, հնազանդեցաւ տիրոջը:

Արքունիքի անուշալաճառներուն՝ Հաճի Պէ-
քիրի և Լըպօսի կողմէ պատրաստուած խտրելէն-
ներ և քաղցրաւնիներ կերան և Հնդկաստանի
հեշտահամ արտադրութիւնը կող Տեախիսիսի
գաւաթ մը օշարակով ծարաւնին մարեցին:

Տակաւին պէտք էր ամբողջ երկու ժամ գրօս-
ցնել զարհուրելի միտպետը:

Վերջապէս, այս կարգի շարունական ժամանց-
ներէ հտքը, Նորին Վեհափառութիւնը արտօնեց
իր տարփուհին՝ երթալ իր սենեակը հանգչել:

Ձէքքէզուհին, Թարչին անուն խափշկուհին
սպասարկութիւնովը բաղնիք մտնելէ հտքը, ան-
կողին նետուեցաւ, յոգնած ու անհանգիստ:

Ի՞նչ չարչարանք կնոջ մը համար՝ ամբողջ ժա-
մերով անկողինին ընկերը ըլլալ Նորին Կայսերական
Վեհափառութիւն Սուլթան Ապտիւլ-Համիտ Խան
Բեքի:

Երբ Ռէզին իր բարեկամուհին հնջասնեակը
մտաւ, ապշած մնաց, Միւրդի Իոէմի մարմինին
չատ մը մասերուն վրայ տեսնելով սեւ նշաններ:
Ատոնք կայսերական ակումներու նշաններն էին:

Մեղքնայով զայն, չուզեց արթնցնել:

Կայսերական Իզդէսսին գրօսանաւը, Պրինսիպիէ
գարձին, ուր Միթհաա փաշան տարած էր, եկած
կեցած էր ճիշդ Տօլմա-Պաղչէի քարափին գէմ:
Ծիւնելոյզները թանձր մուխ մը կը ժայթքէին: Օդը
մրրկոտ էր և երկինքը մթազնամ:

Ղօնչէ Ֆէմ, մտաշփոթ բայց դո՛ւ, եկաւ աճա-
պարանքով արթնցուց Միւրդի Իոէմը և ըսաւ
անոր թէ՛ անմիջապէս պէտք է կայսերական գրօ-
սանաւը նստէր: Արդէն առջի օրուրնէ չոգենաւը
իր պատրաստութիւնները տեսած էր: Վայրկեան
մը իսկ վարանելու ատեն չի կար: Միւրդի Իոէմ
ժամանակ չունեցաւ իր ընկերուհիներուն «մնաք
բարով» ըսելու, ո՛չ ալ հետը ո՛րեւէ բան առնելու:

Պալատին նաւամատուցը նաւակը իրեն կը
սպասէր:

Գրեթէ բունի տեղէն հանեցին յոգնած և ընկ-
ճուած խարտեաչ գերուհին: Միայն իր սիրելի և
անմեղ Ռէզինին հետ գրկախառնուեցաւ. յետոյ
ծուեցաւ և անոր ականջն իւրար ըսաւ կամացուկ.

—Սիրելի՛ պզտիկս, հոգը մի՛ ընեք, մի՛ տխրիր,
իմ թափառաչքիկ կեանքիս մէջ առաջին անգամը
չէ՛ որ ասանկ փորձութիւններէ կ'անցնիմ. կը
յիշեմ Կովկասի մէջ իմ բաժանումս հայրագիրքս՝
Պէհաուրը պէչէն: Հիմա ես ամէն ուրիշէ աւելի
աղէկ գիտեմ թէ՛ ի՞նչ տեսակ մէկն է Ապտիւլ-
Համիտ: Եթէ գիտ չխեղդեն և եթէ յաջողիս աքսո-
ւրավայրս գտնել, կրցածիդ չափ յաճախակի գրէ՛

ինձի, սիրելի՛ Ռէզինա: Բարեւներս Օրիորդ
Տօնժէին:

Տեսակցութիւնը չէր կրնար աւելի երկար
տեւել: Ներքինները, թիկնապահները, արքունի
քարտուղարները, սենեկապետները, որոնք մեծ
թիւ մը կը կազմէին, հսկեցին Միւրզի Իռէմի նա-
ւակ նստելուն:

Չորս զոյգ թիւաւորներ՝ վեց վայրկեանի մէջ
երեսասարդունէին զրօսանաւը փոխազրեցին:
Իզգէսին անմիջապէս խարխախը վերցուց և ճամ-
բայ ելաւ:

Պարտին պատուհանէն՝ մէկը իր թաշկինակը
կ'երերցնէր: Ո՞վ էր արդեօք ան և որո՞ւն կ'ուզէր
այդ բարեւը: Ապտիւլ-Համիտն էր ան, որ կը
խնդար խեղճ ու անզօր Միւրզի Իռէմին վրայ:

Վ. Բ.

Փոթորիկի գիշերէ մը ետքը, իր մասնատն-
եակին մէջ արգելափակուած, Սուլթանին հարձը
արթնցաւ, բոլորովին ընկճուած վերջին յուզում-
ներէն:

Միտիլի կղզին երա քաղաքը կը գտնուէին.
Յուր և ածուխ առնելու համար հապշտապ
կերպով:

Ջրօսանաւին նաւապետը հրաման ստացած էր
երբեք չկենալ Միտիլի, փողովուրդին հետաքրքրու-
թիւնը և ուշադրութիւնը չարթնցնելու համար:

Երա պղտիկ ծոց մըն է, աւելի ծովախորշ մը,
կղզին ետեր, չրջապատուած բաւական բարձր լեռ-
ներէ, որոնք բոլորն ալ ամառ-ձմեռ ծածկուած են
կանաչադեղ ձիթենիներով: Երան լիճի մը կը նմանի,
— զայն ծովին հետ հազորդակցութեան վնոզ
անցքը ա՛յնչափ նեղ է: Հոն բացարձակ ամալու-
թիւն կը տիրէ: Բանի մը բնիկներ ածուխ կը
կրէին չողենաւ: Երբ չողենաւը երա հասաւ,
խղճացին Միւրզի Իռէմին և թոյլատրեցին անոր՝
օդ առնել և կամրջակին վրայ ելլել: Երկու պահա-
պաններ կը հսկէին զայն: Արեւը մարը կը մտնէր.
հսկայ թռչուններ օդին մէջ կը ճախրէին. ծոցին

կապույտ ջուրերուն մէջ կը թաւայէին զլիկներ. և լեռներուն վրայ, ձիթենիներու անտառներուն մէջ տեղաւորուանքը, հոս-հոն կը նշմարուէին ձևի-ձերմակ սիրուն տուններ, ցանկապատնէշուած ճամբաներ:

Վաղնջական անուշ խորհուրդներու և Սափօի յաւիտենական երկիրը՝ այս տեսարանը կը պարզէր:

Երագանքի մէջ խորատուգուած դժբաղդ գերուհին, վերացումի վայրկեանի մը մէջ, այդ սքանչելի լեռներէն մէկուն կատարին վրայ՝ զուր տեղը փորձեց գտնել իրենց նոր աղանդովը յափշտակուած և զայն երգող Ստիօի և անոր ընկերներուն տեսիլքը:

Բայց Լեզպօսի կանաչագեղ բնութիւնն հմայքը՝ կը ժրջէր հմայքին հետ վաղեմի այն հոչակաւոր յոյն բանաստեղծին, անմահ բանաստեղծին, որ ա՛յնչափ գրաւիչ դէմք մըն էր:

Սափօ իրաւունք ունէր երգելու այդ մոգիչ և մեծավայելուչ բնութիւնը: Ո՛վ բանաստեղծի հոգի մը չի պիտի զգար իր մէջը հոն: Երբ Բազըն կամ կէօթէ ծնած ըլլային այդ կղզիին մէջ, անոնք այդ հրաշալի տեսարանին առջեւ, վստահարար աւելի մեծ բանաստեղծներ պիտի ըլլային: Մնաց որ, Արշիպեղատոսի կղզիներուն մէջ՝ գեղջուկները անգամ ոտանաւոր կը գրեն. կը պատմուի թէ՛ Նաքսոսի բնիկներէն ստնտու մը՝ Իզմիրէն ոտանաւոր նամակներ կը գրէր իր ամուսինին...

Հոգ, ամէն մարդ կ'երգէ, ձիթենիներու խիտ անտառներուն մէջ:

Կէս-գիշերուան ժամ, համատարած անդորու-թեան և անէութեան մէջ, չոզենաւը զանդաղորէն խարխալը վերցուց: Չէր գիտցուեր թէ ո՛ւր կ'երթար ան: Միւրդի Իռէմի հետ ո՛չ մէկը կը խօսէր: Ճոխ կեանքի մը վարժուած այս փափկատուն գերուհին, անվեղ գիշերներ պիտի անցընէր իր տխուր մասնաստեղծակին մէջ, խորհելով իր տիրոջը վրայ և ատելով զայն: Ի՛նչ անհասկնալի բնաւորութիւն: Իր մոլեգին գգուանքներէն, իր ա՛յնչափ աղւոր խոստումներէն, իր այն անզուսպ սիրոււրտուքներէն ետքը, Ապտիւլ-Համիտ ինչո՞ւ առա՛նց որևէ պատճառի կ'արձակէր իր սիրական կինը: Ինչո՞ւ և ո՛ւր կ'աքսորէր զայն՝ ա՛յնչափ յեղակարծօրէն: Խորհուրդ:

Միւրդի Իռէմ կարծես ա՛լ խորհելու կարողութիւն չունէր. ա՛լ չէր լար: Մինչև անգամ չէր ուզեր գիտնալ թէ՛ ո՛ւր կը տանէին զինքը, ա՛յնչափ գիտակցութիւնը կորսնցուցած էր:

Մենդհատ երևք գիշեր և երևք ցորեկուան գնացքէ ետքը, կայսերական գրօսանաւը կանգ առաւ՝ Հսկաներու, Ասպետներու և Ծովաճէններու քաղաքին՝ Հոռոզի գրեհէին առջեւ:

Իզզհէսին Հոռոզէն պիտի դառնար Միւրդի Իռէմ Մուրատ Բէխի թէքքէն տարուած, կը սպասէր ուրիշ չոզենուի մը հասնելուն, որ զինքը պիտի տանէր: Բայց ո՛ւր... ո՛չ մէկը գիտէր:

Կառավարիչին մէկ հեռագիրը կը հրամայէր նահանգին սնտուկէն 100 ոսկիի գումար մը յանձնել Սուլթանին նախկին հարձին :

Գերուհին կրնար պտըտիլ քաղաքին մէջ, պայմանով որ՝ երկու ոստիկաններ ընկերանային իրեն : Հռոդոսի մէջ կը գտնուէր նաև Ապտուլ-Մէճիտի ժամանակէն գերուհի մը, Շէմսա, լքուած և թշուառ : Շէմսա անմիջապէս եկաւ գտաւ Միւրդի Իռէմը : Անոնք զիրար չէին ճանչնար : Մէկտեղ այցելեցին այդ մեկամաղձոտ քաղաքին շահագրգռական մէկ մասը, աւերակ մը, վաղնջական բայց իր մենութեանը մէջ ինքնատիպ քաղաք մը :

Քաղաքին ծայրը գտնուող Սիւր Սեֆա բլուրը՝ որ երկու ծովերու՝ Միջերկրականին և Եգէականին վրայ կը նայէր, Միւրդի Իռէմի կը թուէր աշխարհի ամէնէն հրաշալի դիրքը ունեցող վայրը :

Խնկաւէտ բոյսերով, պզտիկ ծառերով և զանազան աւերակներով ծածկուած լեռ մըն էր ան ուր Հռոդոսիները սովորաբար շատ քիչ կը յաճախէին : Հռոդոսի Ասպետներուն շիրմաստանը հող կը գտնուէր : Հողկէ՛՛ երկու ծովերը կը նշմարուէին սիրուն շրջանակի մը մէջ. մէկ կողմէն՝ Եգէական ծովին կոհակները կու գային կը փշուէին ծովափին խարակներուն վրայ, միւս կողմէն կը տեսնուէր Միջերկրականը, լայնածաւալ ու կապոյտ, իր պայծառ հորիզոնով, յետոյ ակնարկը դարձնելով՝ կղզիին վրայ կը նշմարուէին կիրի գոյնով ձերմկած հողմազացիներ և Հռոդոսի հսկայա-

կան և վահապանձ զգեսակը, որ սոսկում կ'ազգէր Միջին-Դարուն մէջ. վերջապէս ծովուն մէջտեղը կառուցուած գագաթը փարփոսով ամրոց մը Հոն ամէն բան կար. մէկ բան միայն կը պակսէր. «Հսկար»ն, հուլթեան եօթը հրաշալիքներէն մէկը : Միւրդի Իռէմ իր երեւակայութեանը մէջ զայն կը վերաշինէր. Յանկարծ, չոգենաւ մը, նոր տեսակ հսկայ չոգենաւ մը անցաւ կղզիին առջեւէն և պտորեց իր մտանկալը, իր յիշողութիւնովը վերակերտած հին աշխարհին ամրոցը տեսիլքը :

Բլուրին վրայ նստած, Միւրդի Իռէմ ինքզինքը երջանիկ կը զգար, անճատուած ամէն բանէ և մոռնալով կեղծ ու պժգալի գգուանքները Հրեշին :

Այդ հրաշալի բնութեան մէջ մխրճուած իրեն կը թուէր թէ աշխարհի թագուհին է : Սակայն երկինքը կը մթագնէր : Միւրդի Իռէմ կը տեսնէր որ՝ ամպերը կը սեւնային, ծովը կը փոթորկուէր և կոհակները ծովափունքներուն վրայ կը գոռային : Այդ փոթորկավար, մեծավայելուչ ու անաւոր բնութեան դէմ՝ Միւրդի Իռէմ ինքզինքը վերացած կը զգար, տարօրինապէս երջանիկ, իբր թէ ա՛լ ինք երկիրին չի պատկանէր :

Միւրդի Իռէմ և Շէմսա կամաց-կամաց բլուրէն իջան ատենը ուշ էր. Հեռուն կը նշմարուէին արաբական ճաշակով տուներու զարաստափով տանիքները, բազմաթիւ պարտէզներ, հոս-հոն ցանցառ արմաւենիներու ուրուազիծեր, վերջապէս ծովափը . . .

երկու ոստիկանները միշտ կը հետեւէին սարայլըներուն: Սթանպուլի պարիսպներէն դուրս, այդ պահապանները աւելի՛ մարդավարի, աւելի՛ մատչելի էին: Անոնք Միւրդի Իռէմը ճշմարիտ զոհ մը, դժբաղդ մը կը նկատէին. մինչդեռ չոգենաւին մէջ Չէրքէզուէին լսած էր անոնց փոխանակած ստ' խօսակցութիւնը. «Այս դաւաճանը ան է՝ որ Միթհատ փաշայի թելադրութեան վրայ՝ կ'ուզէր Սուլթանը սպաննել: Նախկին Մեծ-Եղարքօսը ա՛յնչափ ազդեցիկ էր որ՝ ամէն կողմ կուսակիցներ ունէր, մինչև անգամ կայսերական անկողինին մէջ»: Այս խօսքերը լսելով, Միւրդի Իռէմ՝ զայրացած, ինքնիրմէն ելած էր: Աքսորուել՝ շորհազո՛ւրկ ըլլալ. կորուստի՛ մասնուել. հող չէր, բայց ամբողջ աշխարհքի աչքին առջեւ վարկաբեկուել, ո՛չ: Ատիկա չափազանց էր: Դէպի կղզին իր ճամբորդութիւնը քիչ մը ափփած էր Միւրդի Իռէմը: Հոգիով-մարմինով կազդուրուած կը զգար ինքզինքը: Շէմսաի անձին մէջ Միւրդի Իռէմ՝ գտած էր անուշ և դժբաղդ հողի մը: Բայց, աւանդ, երկար չպիտի մնար կղզիին մէջ: Տասը օր կտքը, հին չոգենաւ մը, գրեթէ փոտած փոխադրանաւ մը, նաւահանգիստ հասաւ, Միւրդի Իռէմը ձիտտէ փոխադրելու համար. հոնկէ պիտի տարուէր կամ Մէքքէ, կամ Թաիֆ, չգիտցուիր թէ ի՞նչ բանի համար դատապարտուած մշտնջենական աքսորի:

Ոճապարանքով նամակ մը գրեց Ռէզլինին, խիստ երկար նամակ մը, զայն յանձնեց Շէմսաին,

քանի մը գիրքեր գնեց և հնուկ կմախք-նաւը մտաւ. մինչև Բօս-Սաիա գերուէին չպիտի խցարգելուէր: Ան կրնար ուզած տեղը պտուտիլ, կամըջակին վրայ կամ ծածքին, կրնար ուզած սենեակը ընտրել, ուզած ժամանակ պտուտիլ, ելլալ: Միայն վայրագ զէմքով երկու ոստիկաններ շարունակ պարտաւոր էին հսկել զայն:

Նաւատիններէն զատ՝ մա՛րդ չէր ուզեր այդ նաւով ճամբորդել. որովհետեւ չափազանց հին էր ան և կեանքը անոր մէջ վտանգի ենթակայ: Ատեն ատեն, ծովին ճիշդ մէջտեղը պէտք էր կանգ առնել, կաթսաները նորոգելու համար: Այս նպատակին յատկացուած՝ քանի մը պարկ սխնակ կար: Եւ եթէ փոթորիկ մը պայթէր, մեքենան ճակատագրուած էր կենալու... և նաւազները դատապարտուած էին կորսուելու, ինչպէս Չէրքէզուէին:

Բարեբաղդաբար ո՛րեւէ արկած չպատահեցաւ: Ընթացողութիւնը կատարուեցաւ առանց դժպտահուութեան: Քանի՛ Ափրիկեան ցամաքին կը մօտենային, կը զգային որ՝ փուռի մը մէջ կըմտնէին, — ա՛յնչափ ջերմութիւնը կը սաստկանար:

Միւրդի Իռէմի շատ ծանր եկաւ այս ճամբորդութիւնը: Հոողոսէն անդին, հիւրնդցած, ընկճուած, ջրատուած, անկողին ինկաւ. երբեմն կը քնանար, երբեմն կը կարգար այն քանի մը գիրքերը, զորս Շէմսաի միջոցով Հոողոսի մէջ կրցած էր հայթայթել:

Բօս-Սաիտի և Սուէզի մէջ, մինչև ձիտտէ, գրեթէ ոչինչ տեսաւ:

Աճապարանքով, այս վերջին նաւահանգիստին մէջ առանց չողենաւը կեցնելու, զայն ցամաք հանեցին. խիստ հսկողութեան տակ զայն Սուրբ Քաղաքը առաջնորդեցին: Հո՛ւն, Ապտ-էլ-Մութ-թալիպ վայրագ ու անգութ էմիրին Սոնախին մէջ սենեակ մը արգելափակուած, խեղճ կինը իշխանին տան բնակիչներէն բոլորին հետ յարարեութենէ խզուեցաւ:

Կանոնաւորապէս օրը երկու անգամ սեւամօրթ գերուհի մը իր ուտեստը կը բերէր և զուրս կ'ելէր, առանց բառ մը արտասանելու և առա՛նց մոռնալու սենեակին զուրս խնամքով գոցել:

Գուռին առջեւ, զիշեր-ցորեկ պահապան մը կը սպասէր:

Միւրդի || Իոէմ՝ մօտաւորապէս երկու ամիս այս կիանքը քաշքշեց. փակուած իր խուցին մէջ:

Օր մը, էմիրին բազմաթիւ կիները խնդազին եկան գտան Չէրքէզուհին: Անոնք Միւրդի Իոէմի հազար մեծարանքներ կը շոյլէին, զինքը ճաշի կը հրաւիրէին, իրենց հետ երգելու, քիչ մը նուազ զարնելու հրաւէր կ'ընէին: Միւրդի Իոէմ այդ բոլորին ալ հաւանեցաւ, առանց բան մը հասկնալու: Մինչև այն ատեն զանոնք չէր ճանչնար: Կոչունքը փառաւոր եղաւ և արարական սպասարկութիւնը զրաւիչ. քսանըչորս խափշիւուհիներ է որ կը սպասարկէին:

Ապտ-էլ-Մութ-թալիպի կիներէն իւրաքանչիւրը կաշսերական նախկին հարճին մէկ-մէկ նուէր տուաւ:

Փառաւոր ճաշը ըմնալուն, Մէքքէի Շէրիֆ և Իշխան՝ Ապտ-էլ-Մութ-թալիպ էֆէնտի յանկարծ սրահ մտաւ: Երկու ամիս ետքը բարի գայուստ մաղթելովը թէեւ ուշացած, բայց ան Միւրդի Իոէմը մեծարեց Սուլթանին անունով, տեղեկացուց անոր թէ՛ Վեհապետը իր վիճակովը շատ կը շահագրգռուէր և իրեն հրամայած էր՝ Թաիֆի մէջ Միւրդի Իոէմի համար տասր սենեակով, սպասէզով և գաւիթով տուն մը գնել, ամսական 5000 դանեկանի թոշակ մը տալ, իրեն արժանի ամուսին մը գտնել, որ ընտիր զինուորական մը ըլլար: Ապշած, Միւրդի Իոէմ չէր գիտեր թէ՛ ի՞նչ պատասխանէր Նորին Բարձրութեան: Այս հրամանները Չէրքէզուհին հաղորդելու համար, էմիրը իր համազգեստը հագած, սուրը և բոլոր պատուանշանները կախած էր. ան չափազանց հպարտ, խիստ, լըջազէմ, բայց խիստ յարգամեծար ու փաղաքչիչ էր գերուհիին հանդէպ: Էմիրը Միւրդի Իոէմին ընծայեց թանկագին նուէրներ, խորհելով որ ան օր մը նորէն կրնար Սուլթանին չտորհին արժանանալ և իր ազդեցութիւնը կրկին ձեռք բերել:

Միւրդի Իոէմ, չփոթանար ու սիրտը վախի մէջ, յաջորդ օրը արշալոյսին Թաիֆ մեկնեցաւ, միշտ խիստ հսկողութեան տակ: Հոն հասնելուն, էմիրին ներկայացուցիչը Միւրդի Իոէմի յանձնեց կալուածագիրները անոր տունին, որ ամբողջովին կահաւորուած էր: Միւրդի Իոէմ անոր մէջ գտաւ

ամէն բան, խոնարար մը, ծառաներ, մինչև անգամ ամուսին մը և... սանտու մը: Նախ շատ նեղուեցաւ այս վերջին երկուքէն և շարաթ մը հանդէսեցաւ:

Ամէն օր, Նորին Բարձրութիւնն Ապո-էլ-Մութ-թալիսլ Էմիրը նախկին հարձին մասին լուր կ'առնէր և անոր կը գրկէր նուէրներ, գատնուէրներ, բանջարեղէններ, պտուղներ և պահածոյ ուտեստներ, և այլն:

Օր մը, Էմիրը Միւրզի Իռէմի վրայ գրկեց խիստ սատանայ և հնարամիտ վաթսուէնոց կին մը:

Էմիրը խոնարհաբար Միւրզի Իռէմի ձեռքը կը խնդրէր...

— Հեռացէ՛ք հոսկէ, Տիկին, կը խնդրեմ, ըսաւ անոր Միւրզի Իռէմ՝ բարկացած ու խստօրէն:

— Բայց ինչո՞ւ, Տիկին, քանի որ չուզեցիք ամուսնանալ այն Պարոնին հետ՝ զոր Շէրիֆը ձեզի գտած էր, ինչո՞ւ կը մերժէք իմ տէրս:

— Ես ջղային եմ, Տիկին, և Աստուծոյ սիրուն կը խնդրեմ որ՝ երթաք ձեզ գրկողին ըսէք՝ զիս ձգէ հանգիստ ապրելու:

— Էմիրին չէ՞ք հաւնիր արդեօք:

— Իբր Էմիր՝ այո՛, բայց իբր ամուսնական թեկնածու՝ ո՛չ:

— Հապա եթէ Իշխանին այս պատասխանը տանելու գիտ կախէ...

— Սարապիւլի բան կ'ըլլայ ադ:

— Գիթացէ՛ք ինձի, Սուլթանուէի՛ս:

— Գիթալու եմ նաեւ իմ վրաս, երթաք բարո՛վ, Տիկին, գացէ՛ք այս բոլորը ըսէ՛ք Նորին Բարձրութեան Տիկին ամուսնանալուն:

Միւրզի Իռէմ՝ դուրս ելաւ և դուռը խստօրէն գոցեց. քաշուեցաւ իր պզտիկ սենեակը և սկսաւ իր շնորհազրկութեանը և մենութեանը մէջ թերեւս հինգերորդ անգամը ըլլալով՝ կարգալ իր ձիւզուլին(*):

(*) Նէֆիի հետ՝ թուրք դասական մեծագոյն բանաստեղծը:

Վ.Ն.

Միթ՛հատ փաշա, մտահոգ և հիւանդագին, ուզեց օգտուել այն առիթէն՝ զոր կ'ընծայէր բացառապէս գեղեցիկ օդը. ձեռքը իր հայրենիքէն եկած թերթ մը մինակը, մտաւ Հայտ-Փառք:

Քանի մը վայրկեան շքեղ մարմանդներուն վրայ չըջագայելէ ետքը, յանկարծ հետուէն կարմիր ֆէսով մարդու մը ուրուագիծը նշմարեց. Դէպի այդ անձանօթը առաջացաւ և քիչ մը վարանումէ ետքը, ճանչցաւ որ ան իր վաղեմի բարեկամը և աշխատակիցը Շէֆիզ պէյն էր. Մեծ-Եպարքոսութեան նախկին ղիւանապետը: Հանդիպումը սրտառուչ եղաւ:

—Օ՛հ, իմ բարերար, ըսաւ Շէֆիզ պէյ, Նորին Բարձրութեան ուղտնիկօրին ծայրը համբուրելով, աճա՛հ ես Լոնտոնի մէջ:

—Ո՛ր հովը ձեզ հոս բերաւ, սիրելի՛ բարեկամս, արդեօք ղրիդուած մը, քաղաքական խնդիր մը, թէ առողջական պատճառ մը:

—Ճի՛շդ այդ վերջին պարագան. Նորին Բարձրութիւն: Բարիք կը գտնուէի, ուր գործողութիւն մը կատարել տուի:

— Բայց ի՞նչ ունէիք

—Ուս մը... այո՛, սիրելի փաշաս, գէշ ուս մը ունէի:

—Բարեբաղդարար կը տեսնեմ որ աղէկ էք

—Երկու ամիս տառապելէ ետքը:

—Ուրեմն Անգլիա պտըտելու համար չէք եկած միայն:

—Ո՛չ, Նորին Բարձրութիւն:

Երկու բարեկամները, գո՛հ և զուարթ, սքանչելի պարտէզին բոլորովին առանձին մէկ անկիւնը նստարանի մը վրայ նստան, խօսեցան, երկա՛ր խօսեցան տարաբաղդ հայրենիքին, Սուլթանին նկարագիրին, չարաղէպ պատերազմին և իրենց ընտանիքներուն վրայ:

—Սձէն բան կարգի դնելու վրայ էի, կ'ըսէր Միթ՛հատ փաշա. քիչ մը զոհողութեան փոխարէն Ռուսիա ձեռք կը քաշէր մեր գործերէն և հնորհիւ տտոր և ազատական վարչութեան զոր կը հռչակէինք, երթալով պիտի կրկնապատկէինք մեր գործունէութիւնը, պիտի աւելցնէինք մեր ուժը: Բայց, յա՛նկարծ զիս աքսորել, հիւանդի մը խիստ մեծ քանակութիւնով թողն տալ կը նշանակէր: Եւ ըսել թէ՛ Սուլթանը Իզզէսին զրօսանաւը զրկեց իր պատգամատար զօրավարը՝ իր կայսերական բարեւները մատուցանելու համար ինձի... Ի՛նչ տարօրինակ խննթ: Ապաիւլ-Համիտ ինձի կը խոստանար անմիջական կերպով կրկին պաշտօնի կոչել: Այդ զօրավարին միջոցով Սուլթանին հետեւեալ պատասխանը տուի:

«Շնորհակալ եմ Նորին Վեհափառութեան՝ իր մեծ բարեացակամութեան համար, բայց, Պոլիս դարձիս, կը վախնամ որ ա՛լ իր պալատին մէջ չգտնուի և Պետութիւնն ալ իր տեղը չմնայ...»

— Պոլիսի մէջ տագնապը աննկարագրելի էր ձեր մեկնումէն ետքը, շարունակեց Շէֆիւզ պէյ, փողովուրդը բան մը չէր հասկնար եղածէն: Կը խօսուէր թէ՛ դեփղադոր ըլլալ կ'ուզէիք: Բայց ո՛չ մէկը հաւատք կ'ընծայէր լրտեսներու այն տեղեկագիրներուն, որոնց համաձայն իբր թէ ուզած ըլլաք հաստատուած կարգերը յեղաշրջել: Ատոր համար, ուրի՛շ սուտերու, ուրի՛շ հնարամտութիւններու գիժում ըրին: Չկարգացի՛ք թերթերուն մէջ այն պաշտօնական զեկոյցները, որոնց համաձայն իբր թէ ձեր քովէն գտած ըլլային ձեր դաւաձանութիւնը որոշապէս հաստատող վաւերաթուղթեր: Հասարակութիւնը տակաւին վարժուած չէր պաշտօնական սուտին: Մեծ եղաւ իր յուսախարութիւնը, երբ տեղեկացաւ թէ՛ նոյն իսկ Պետութիւնը կրնար ստել: Ինչէր չէր գրեր ձեզի դէմ՝ ձեր պաշտպանեալը և անուանակիցը՝ Միթհատ էֆէնտին: Ան և բանաստեղծ Քեազիմ փաշան, իրա՛ւ որ ասպերախտներուն, վատթարներուն և վատերուն երկու ամէնէն կատարեալ տիպարներն են... Եւ ըսել թէ՛ փոխարէն բան մըն ալ ստացած չեն: Իր պարկեշտութիւնը ոչինչի փոխարէն ծախել կը նշանակէ ալ:

Միթհատ փաշա հռոպչից և ըսաւ. «Այդ Միթ-

հատ էֆէնտին պղտիկ տարիքէն իմ քովս կը գտնուէր: Անոր կարգաւ-գրել սորվեցուցի: Դանուրի և Պաղտատի մէջ իմ քովս կը ծառայէր...»

— Ձեր Բարձրութիւնը ապաքինած է իր տկարութենէն, տակաւին յոգնութիւն կը զգայ արդեօք:

— Յոգնութիւն ալ կայ յոգնութիւն ալ, պատասխանեց Միթհատ փաշա: Բարոյական տեսակետով, բոլորովին վրդովուած եմ. ա՛լ շատ քիչ յոյսս մնացած է: Այն վիճակը որուն հասցուցին մեր սիրելի հայրենիքը՝ զիս խորապէս կը վշտահարէ: Ֆիզիքական տեսակէտով, փա՛ռք Աստուծոյ, առողջութիւնս գտած եմ ճամբորդութիւններուս շնորհիւ: Այցելեցի Նափոլի, Անտալուզիա, Բարիզ, Գերմանիա, Աւստրիա, գրեթէ ամէն կողմ: Աքսորանքի կեանքս սակայն զիս չէր արգիլեր կրկին և անդադար աշխատելէ երկրիս համար: Գիտէ՞ք որ, իմ աքսորուելէս առիթ քաղելով, Չարը մասնաւոր պաշտօնով Իկնաթիէֆը Լոնտոն գրկեց: Ան կը կրկնէր իր desiderataները: Իմ բացակայութիւնս մեծ քաջալերութիւն կու տար Ռուսերուն: Ապսիւլ-Համիտ զիս աքսորելէն լաւագոյն ծառայութիւն մը չէր կրնար կատարել անոնց: Ա՛հ, եթէ խօսքս մտիկ ըրած ըլլային՝ Պղտիկ ձիգով մը՝ մենք պիտի ազատէինք այս զժբարզ պատերազմէն, այս քայքայումէն:

«Պոլիս ամէն պայման մերժեցին», աղէտ մըն էր ալ: Թշուառականը մա՛րդ չէր մնացած աքսորած էր. նաեւ բոլոր արժանաւոր զօրավարները:

Երանի թէ միայն Հիւսէին Ամբի փաշան զեռ ողջ ըլլար : Թօթըպէնի և Կուռքօի բանակները պիտի յաղթուէին : Ի՜նչ կ'ուզէք որ ըլլար : Սուլթանը ինք էր որ իր պալատէն , աւելի ձիչղը իր փողոսկրէ աշտարակէն՝ կը վարէր պատերազմը , առանց զինուոր կամ նոյն իսկ հաւասարալիւ միտքի տէր մարդ մը ըլլալու : Որչա՛փ դառն է , որչա՛փ տխրեցուցիչ է մեզի՝ տեսնել Ռուսերու կողմէ պաշարուելը և յետոյ յաղթուելը աշխարհի լաւագոյն զինուորին . որ քաջածանօթ և համբաւաւոր է իր առածի կարգ անցած արիւթթիւնով և անձնուրացութիւնով : Ես չեմ ուզեր կրկնել այս տխուր պատմութիւնը . սիրտ բզքտո՛ղ և կսկծեցուցիչ է ան . . . Եւրոպայի մէջ ամէն կողմ յարգանքի և մեծարանքի արժանացայ . հակառակ ամէն բանի՝ մեր յաջողութեանը համար աշխատեցայ : Չեռք ձեռքի տուի . մեր աւանդական բարեկամները եղող Մաճարներուն , Բոլոնիացիներուն հետ , հակալիչուելու համար Ռուսերը : Բայց շատ ուշ էր և ես պաշտօնական զիրք չունէի : Ատիէ զատ , ես աքսորուած , վտարուած էի , և արտասահմանի մէջ ո՞վ պիտի հաւտար իմ անմեղութեանս : Երբ Վիէնա հասայ , աղերս մը ուղղեցի Սուլթանին , խնդրելով որ ժամանակաւոր չնոր՝ մը ընէ , որպէսզի Պոլիս երթալով իմ տեսութիւններս պարզեմ իրեն : Իր առաջին քարտուղարէն պատասխան մը ստացայ Աւստրիայի արտաքին գործերու նախարարին հետ տեսակցութիւններէս ետքը , մեր զեռպանատունին

հեռագրաթելովը պատասխանեցի Սուլթանին : Արդիւնք . — Քսան օրուան սպասում և յուսախարութիւն : Սուլթանը աս որչա՛փ խենթ է , սիրելի բարեկամս :

— Եւ վտանգաւոր խենթ : Փոխանակ անվնաս խենթ մը գահէն վար առնելու , աւելի աղէկ ըրած պիտի ըլլայիք , սիրելի Նորին Բարձրութիւն , գահէն հեռացնելով այս մենագարը : Պոլիս գտնուող մեր բարեկամները ինծի կը գրեն թէ՛ ձեր զլխաւոր սխալը եղած է՝ այդ արարածէն խարուելնիդ և զժբազդ Մուրատ եւրը գահէն վար առնելնիդ : Ո՛րչափ աղէկ եղած պիտի ըլլար այն ատեն հաստատել Խնամապետութեան Խորհուրդ մը :

Երկու բարեկամները , նստարանին վրայ նստած , այսպէ՛ս կը խօսէին : Այդ գիշեր Շէֆիզ պէյ Միխիհատ փաշայի հիւրն էր Լոնտոնի անշուք մէկ պանդոկին մէջ : Մասնատեսեակի մը մէջ երկու հայրենակիցները անվերջ կը շատախօսէին և չէին կրնար յագենալ այդ տեսակցութենէն :

— Ճամբան հանդիպեցայ խեղճ Սաատուլլահ պէյին , կըսէր Շէֆիզ պէյ : Ո՛րչափ տխուր և անմխիթար է ան : Ասիէ ետքը տխրութիւնը իր գոյութեան հիմն է : Աչքերը արցունքով լեցուած՝ ինծի պատմեց այն առաջին պարահանդէսը՝ զոր գերման արքունիքը կու տար Պերլինի զիւանագիտական մարմինին : Պատերազմ հռչակուելէն ետքն էր : Երեկոյթին մէջ մարդ չէր մտենար Թուրքիայի Դեսպանին : Կարծես թէ ան փոխանցիկ հիւանդու-

Թիւն ունեցող մէկն էր, աւելի ճիշդը բորոտ մը: Ամէնքը Ռուսիայի Դեպարտմենտին շուրջը կը բոլորուէին և կը փաղաքէին զայն: Խեղճ Սաատուլլան պէջին լալը կու գար և կ'ուզէր մեկնիլ պարահանդէսէն, բայց տեսնելով որ կայսրուհին Դեպարտմենտին հետ կը պարէր և մտածելով որ թերեւս Նորին Վեհափառութիւն Կայսրուհին վալս մը դառնալու իր հրաւերը ընդունէր, առնել քարկու գաղափարէն հրաժարեցաւ: Բայց եթէ Բարձրագոյն Դրան ներկայացուցիչին բացատարէտ երես դարձուէր: Անորոյ, կասկածոտ զիրքի մը մէջ կը գտնուէր: Այս պարահանդէսը իրեն համար գեանադամբանի մէջ խնջոյք մըն էր: Հիւրամեծար մը Կայսրուհին ներկայութեանը կանչեց զիւանագիտական մարմինին երէց անդամը: որպէսզի ան Վեհափառութիւն պարի հրաւիրէ: Միւս Դեպարտմենտին անոր կը հետեւէին: Սաատուլլան անոնց մէջ ամէնէն նոր զէմքն էր: Վերջապէս արարողապետը կանչեց նաև Մեծ Թուրքին ներկայացուցիչը: Երեւակայեցէ՛ք այն վիճակը՝ որուն մէջ կը գտնուէր մեր դեպանը, երեւակայեցէ՛ք իր շփոթութիւնը, իր ջղաշին տագնապները, իր վշտակրութիւնը և էն հոքը իր ուրախութիւնը... Ան վերջին պարողը եղաւ Վիլհելմ Ա. ի ամուսինին հետ: Հակառակ ասոր, տրտում էր ան, մարդ՛ւ և հետ խօսելու չէր համարձակեր և մինչև անգամ քարած ատեն վարանք մը կար իր վրայ:

Յանկարծ, ճոխապէս զարդարուած սրահին

մէջտեղը, Յրէտէրիք իշխանուհին, Անգլիայի դասաժառանգուհին և Վիքթորիա թագուհին աղջիկը, Սաատուլլան պէջի նշան ըրաւ իրեն մօտենալու: Դեպանը, ուրախութենէն խելայեղ, սրտատրոփ և մտացնոր՝ առաջացաւ զէպի նորին ճնորճալի Բարձրութիւնը: Կէս ժամ խօսակցեցան անոնք. շատ մը մեծարանքներէ, շատ մը մխիթարիչ խօսքերէ հոքը, անգլիացի ճնորճալի իշխանուհին անուշ և քնքուշ ձայնով մը ըսաւ Դեպանին.

— Միրելի՛ Վեհափառք, գիտե՛մ թէ ի՛նչ զժուար կացութեան մէջ կը գտնուիք: Օ՛հ, շատ լաւ կը հասկնամ և կը զգամ զայն: Կը գրաւ ձեր փրայ, բայց կը խնդրեմ, վստահ եղէք որ մայրս ձեզի համար պիտի աշխատի:

Սաատուլլան պէջ կ'ուզէր ճնորճալի և ազնուասիրտ իշխանուհին ոտքերը նետուիլ: Դեպանը ճնորճակալ եղաւ իշխանուհին և իր երախտագիտական խօսքերը խիստ սրտառուշ էին:

Մարդկային բնութիւնը որչա՛փ տարօրինակ բան մըն է և մարդիկ որչա՛փ կեղծաւոր և նենգամիտ են: Ամէնքը մեր Դեպանին ձեռքը սեղմեցին. բոլոր զիւանագէտները, իշխանները, պալատականները անոր քովը եկան...

Մտախոճ, Միթհատ փաշա իր միտքին մէջ կը պատկերացնէր երեկոյթը և ինքզինքը Սաատուլլան պէջին տեղ կը դնէր:

— Խելագար և մարդասպան Սուլթանին խեղճ Դեպանը, յարեց ան, խեղճ Սաատուլլան պէջ:

ևս իրմէ Սան-Սթէֆանօէն նամակ մը ստացած ևս, շարունակեց պաշտօնանկ նախարարապետը:

Ու գրպանէն հանեց Սան-Սթէֆանօի պատմական դարձած նամակադրոշմով նամակի պահարան մը և բարձր ձայնով կարգաց մէջի սա մասը. —

«Սիրելի՛ փաշա, քանի մը օրէ իմեր մեր երկուքիս քարեկալ Սալփէթ փաշաի հետ հոս կը գտնուիմ: Նիֆոյա Մեծ Դուքսին տունին եւ վեւածուղիլիս նիստ գումարած տեղին մօտ գտնուող տունի մը մեջ կը բնակիմ: Երբեմն անկէ օր նիստ կ'ունենանք, երբեմն երկու երեք օրը անգամ մը կը գումարուիմք: Մայրախորտիս հետ ուղղակի հարաբերութեան մեջ եմք: Սա քանի մը օրուան մեջ, դաշնագիրին շատ փոքր յորատմանուն վրայ միայն կրցակի վիճաբանութիւն կ'ստանայ: Մեր ետանդը մարեցաւ, երբ անհեղին հակա յորատմանուն հասանք: Միևեւ անգամ խզուալի վտանգ մը անգուցիմք: Սալփէթ փաշա եւ ես պահանջեցիմք ներկայութիւնը Մեծ-Եպարֆոս Աննէս Վեֆիֆ փաշաի, որ անմիջապէս հասաւ: Զայրոյթով եւ սպառնալք տեսնելով որ՝ մեր թշնամիներուն կողմը կը բռնէր ան: Մեկ խօսքով, նկատար անկէ սիրաշահութիւններով զայն ետ դրկեցիմք աւ նիստ գիտելիք թէ ի՛նչպէս պիտի վարուիմք ժողովակիւններուն հետ:

«Այսպէսով, գրկուեցանք ինչ իսկ բարոյական ունեւ օժանդակութեան. Պոլիսէն ոչ մեկ օգնութիւն եկաւ մեզի. ուրիշ բան չեիմք կրնար ընել, բայց երբ հնարաւոր եղած չափով նուազեցնել թշնամիին պահանջ-

ները: Ուզեցիմք փոքր մը ժամանակ շահիլ, Սուրբանիս կողմէ Ան-Բէթերապուրի արհուլիքը դրկել փորձելով արտատրո Դեպան մը: Մեր յուսախաբութիւնը մեծ եղաւ, երբ Բիւսպիեֆ վճռաբան ձայնով մը աստօրեկ ըսաւ միգի.

«—Երբեք: Ա՛յ փախաք չունիմք երկրորդ անգամ մըն ալ խաղի գալու, ո՛չ երբեք:

«Այս յուսախաբութիւններէն ետքը, Մաքրի-Բեռը պաշտպանող գործարարին շուր դրկեցիմք՝ խնդրելով որ վերջին անգամ մըն ալ ջանայ բարոյը փորձել, դիտարկել յարձակում գործելով այդ անկողան. կամակոր եւ խստապահանջ թշնամիին վրայ, որովհետեւ ռուս պատգամաւորները անհնարաբար կը դաշնային եւ իրենց անբարտաւանութիւնը օր-օր կ'աւելնար:

«Գիշեր մը, Մեծ Դուքսը մեր վրայ դրկեց իր թիկնապահներէն մեկը: Այդ խիստ ուսումնասիր սպան, մեզի գիտնորաբան բարեւ մը տալէ ետքը, չոր կերպով ըսաւ.

«—Բանակին Ընդհանուր հրահանգար Նորին Կայսերական Բարձրութիւն Նիֆոյա Մեծ Դուքսը կը տեղեկացնէ ձեզ թէ՛ դուք, օստանեան շիպորները, հակառակ մեր բարոյ գիտններուն, կը յապաղեցնէք հաշտութեան կեցումը, եւ երբ, 24 ժամուան մեջ չդրկիք մեզի ձեր վերջնազոյն պատասխանը, ա՛յ չպիտի կրնայ ետ կենայ գործերը փաշտեցիմք «Զարեմ փաշա-իմ» (*) վրայ, որուն զօրեքները եւ միւսները

(*) Առաւելեւ լեզուով՝ Զարեկոստ, Գալուս:

հոսկի կը տեսնուին... Հետեւաբար Նորին Բարձրաբիւնը այդ կացութենէն ծագելիք բոլոր ծանր հետեւակներուն պատասխանատուութենէն զերծ կը մնայ:

«Ճիշդ է որ սահմանագրութիւն վրայ 5000 զօր մտնելով, բայց սնունդ իմ զտնուած փանկոռչները իրենց հրացաններուն փանկոռչները չէին:

«Ես եւ Սալփէք փաշան կ'անկծեիմք մեր զօրերը այդ վիճակին մասնողները: Մեծ Դուքսին սպանուիմքները հետզհետեւ աւելի սխալողական դառնալով, ըզրով եւ սիրտերնիս դառնութեանը ղեցուած, վերջապէս ստորագրեցիմք դաշնագիրը:

«Միայն ձեզի նման հայրենասէր մը, Նորին Բարձրաբիւն, կրնայ ձիշոյ գաղափար կազմել մեր կացութեան ժամին: Նոյն իսկ բարոյական անկէն զգացումէ զորիկ եսկ մը՝ ստուպակն պիտի զգար մասներուն մեջ ստնեղով գրիչը... իր ստորագրութիւնը դնելու համար մահաշուք բռնողին վրայ...

«Սան-Սթեֆանօի դաշնագիրին ստորագրուելէն ետքը, մոսկով զօրախուռներուն մեջ զնծուքիւնը մեծ էր. եւ ձախտագիրի ինչ հեղձութիւն. այդ յորդազեղ ուրախութեան եւ մոյզգին ցոյցերուն մեջ, Մեծ Դուքսը Սալփէք փաշան եւ զիս հացկերոյցի կը հրաւիրէր: Դասապարտուած էիմք մասնակցելու սննդ:

«Նորին Բարձրութեան այ կողմը կը զտնուէր Սալփէք փաշան եւ ձախ կողմը ծառանկոյ: Սպասարիւրքիւնը անբողոքովին պիտի սպաններով կասարուեցաւ: Ծաշին ետքը, ձայն մը ըսելի, զոր քերտ-

նօրի հարուածի մը նմանցուցի. Մեծ Դուքսը ստով կ'արտօնէր իր շուրջը զտնուողներուն ծիւղ. իր ստիւրութիւնը ստակ էր: Մեր տունը վերադառնալով, փութացիմք այս բոլորը հարորդել Պոլիս: Ասոր վրայ, Վենսպետէն հրահան ստաշակն, մեկն ալ մեր քչնակի բանակին ընդհանուր հրահանատարը հացկերոյցի հրաւիրել: Նոյն ստիւնակողով ստաշակն հարիւրաւոր կապոյցներ, որոնք կը պարունակէին շատ մը սնօքներ, աղւոր ձաշ մը տարու համար Նորին Բարձրութեան. նստելու դրութեամբ էին սպասաւորներ եւ սնօքի խոհարարներ:

«Բոլոր սպանները արանակըստարդ էին. պատասխանողները, ստները՝ ծանր, զարդակներ եւ գոհարեղեններով զարդարուած էին: Սալփէք փաշան ըսի. «Երեկ տեսնեմք Յաղթականին սպանները. իսկ ստնեմք Յաղթողին սպաններն են: Երբ վճռապէս Մեծ Դուքսին հակակերոյց տրուի, ես կանխապէս կը հրաժարիմ սեղանին մասնակցելէ. դուք ալ ինչ որ կ'ուզեմք ան ըրեմք»: Սալփէք փաշա գաղափարակից էր ինծի: Յայտնող օրը սպասաւորները պատասխանողները այդ բոլորը Պոլիս փոխադրել. եւ հացկերոյցը տեղի չունեցաւ...»

Իրիկուն կ'ըլլար: Միթէ՞ստ փաշա եւ Շէֆիզ պէյ, երկուքն ալ սրտնեղած եւ խռովուած, պանդուկէն մեկնեցան եւ զատուեցան:

Երկու բարեկամները Ուէսթմինսթրի պալատին ամէն կողմը պտըտեցան : Ներկայ եղած էին գաղթային խնդիրի մը մասին լուրջ վիճարանութեան մը . ազատականները և պահպանողականները կը վիճէին : Նիստը չորս ժամէն աւելի տեւած էր : Ան բուռն . հրատապ և փոթորկալի եղած էր : Իր օթեակին մէջ , Միթհատ փաշա անասճման շահագրգռութիւնով կ'ունկնդրէր ականաւոր ատենախօսներու ձառերը . ընդգիծալի կողմին պատասխանները և կ'ուսուճնասիրէր ունկնդիրներուն և նոյն իսկ հիւրերուն հոգեկան վիճակը : Բոլոր դատափետումներուն , ինչպէս նաև մոլեգին ծափահարութիւններուն հանդէպ անաչալ նախարարներուն լուրջ զէմքը զինքը կը սքանչացնէր : Անոնք համատուժեան կամ տարհաւանութեան ո՛րեէ նշան չէին ցուցներ . միայն ատեն-ատեն նոթեր կ'առնէին և իրարու մէջ կարճ խօսքեր կը փոխանակէին :

Միթհատ հառաչեց : Շէֆիզ պէյ հասկցաւ որ թուրք վարչագէտը իր երկրին համար նոյն հաստատութիւնը կը մաղթէր , նոյն կարողութիւնը , նոյն փորձառութիւնը ունեցող անդամներով : Սթանպուլի մզկիթներուն անմիւլ գմբէթներուն մէջտեղը կ'երա-

զէր տեսնել կանգնուիլը ուրիշ շէնքի մը , որ պալատեակէր ո՛չ թէ յանպատրաստից ճարուած երեսփոխաններ , որոնք այսօր ձերբակալուած և աքսորուած էին , այլ անգլիական Երեսփոխանական ժողովին պատկառելի անդամներուն պէս գործող և տրամաբանող ներկայացուցիչներ :

— Շատ կանուխ է զեռ , կը շնչէր անոր ականջին Շէֆիզ պէյ :

Անոնք Խորհրդարանի Պալատէն դուրս ելան և մտան շքեղ դրօսարան մը , տեղական ըմպելիներ ճաշակելու համար : Խօսակցելու համար հանգստաւէտ տեղ մըն էր ան : Հոն գտնուող ճամբորդները կը խօսէին իրենց երկրին , կայսերական գաղթակղութիւններու , լրտեսներու գրաքննութեան ամբոխին անբարոյացումին , պալատականներուն վատութեան , և այլնի վրայ : Միթհատ փաշա շահագրգռութեամբ կ'ունկնդրէր Շէֆիզ պէյին . ան չէր կրնար զսպել իր դառնութիւնը :

Շէֆիզ պէյ , Բարձրագոյն Գրան վաղեմի վաստակաւորներէն մէկը , խելացի և զիտող մարդ , Միթհատ փաշաէն աւելի՛ ազէկ ուսուճնասիրած էր Գահին վրայ գտնուող հարստահարիչը : Անհատնում՝ միջադէպեր կը պատմէր ան այդ թագապսակ մենագործն վրայ , որ ինքզինքէն կը վախճար , որ կրնար ամբողջ ժողովորդը հարձանքի ենթարկել և իր քմահաճոյք իր կայսրութիւնը կրակի տալ . անպատասխանատու էր ան . պատասխանատուն ժողովուրդն էր՝ որ գոյն կը հանդուրժէր , որ անոր

առջև գլուխը կը ձռէր, որ այդ անհաւասարա-
կշիւ թագաւորէն ո՛չ իր արարքներուն հաշիւը կը
պահանջէր, ո՛չ ալ ամէնէն անցիզիւ և ամէնէն
ընտան օրէնքներուն յարգանքը:

Ան կորհրդարան կը բանար, յետոյ առանց
ո՛րեւէ չարժաօրթի յաւերժապէս կը գոցէր զայն: Մա՛րդ չէր համարձակեր անոր հարցնել. «Ինչո՞ւ»:
Հին նախարարները մեռած էին. Բէշիտ փաշա,
Սատի փաշա, Միթհատ փաշա՝ն ա՛յնչափ ուրիշներ
աքսորուած էին. սպարապետ Հիւսէին Ալիի փաշա
վատարար սպաննուած էր: Ապտիւլ-Համիտի
արարքները ազգային ո՛րեւէ հսկողութեան չէին
ենթարկուեր: Ծիշդ է որ, Ապտիւլ-Ազիզ ինք ալ
կատարեալ Սուլթան մը չէր: Ան ալ հօրեղբորը
տղուն չափ խենթ էր, բայց երկու հաւատարիմ և
անձնուէր նախարարներ ունէր, Ալի և Յուստ,
որոնք կառավարութեան ղէկը իրենց ձեռքը առած
էին: Ազիզ, պալատին մէջ, իր հտպիաններուն ներ-
կայացումներուն մէջ, այդ երկու նախարարներուն
նմանութիւնը ընել կու տար... Բայց անոնցմէ կը
վախնա՛ր ալ: Անոնց անհետանալէն ետքը, Ման-
մուտ Նէտիմ չիրցաւ գլուխ ելլել Ապտիւլ-Ազիզի
հետ. ընդհակառակը, կը քաջալերէր անոր քմա-
հաճոյքները. ատոր համար է որ ստիպուեցան
զանէն վար առնել այդ զժրաղջ Սուլթանը:

Կը պատմուի հետեւեալ զէպքը:

Շիրվանի Բիւշտի փաշա Անձնական Գանձին
նախարար էր: Կայսերական մատանի պաշտօնա-

ները գլուխ վերցուցած էին: Սուլթանին պատու-
հանին տակ, իր խոհարարները, «այվազ»ները
և այլն, կ'ազաղակէին թէ՛ տասնոց չունէին բաղնիք
երթալու համար, և թէ՛, հետեւաբար, Նորին Վե-
հափառութեան համազամները օրէնքի տեսակէտով
անմաքուր վիճակի մէջ կը պատրաստէին: Եւ
նախարարին անմիջական պաշտօնանկութիւնը և
աքսորուելը կը պահանջէին:

Ապտիւլ-Ազիզ, չափազանց գերագրգռուած,
անմիջապէս իր թիկնապահ Նամըզ Փաշա Զատէ
Ճէմիլ փաշան՝ այն ատենի Մեծ-Եպարքոս Ալի
փաշային զրկեց, անոր հազորդելու համար այն
իրատէն, որուն համաձայն Բիւշտի փաշան անմի-
ջական կերպով պէտք էր պաշտօնանկ ըլլալ և
աքսոր զրկուիլ:

Սատրազամը չի հնազանդեցաւ կայսերական
իրատէին և թիկնապահը ետ զրկեց:

Վեհապետը, սանդուղին գլուխը, անհամբեր-
րէն Մեծ-Եպարքոսին պատասխանին կը սպա-
սէր: Երբ Զօրավարը դարձաւ՝ Սուլթանը ապշած
մնաց: Նորէն պաշտօն տուաւ անոր՝ երթալ Ալի
փաշային ըսել որ՝ կէտը-կէտին և առանց յապա-
ղումի գործադրէ կայսերական հրովարտակը:

Վարչագէտին կողմէ նոյն պատասխանը, Այն
ատեն, Ճէմիլ փաշա անձնապէս խնդրեց Նորին
Բարձրութենէն՝ քիչ մը աւելի համակերպող ըլլալ
Նորին Վեհափառութեան:

—Ո՛չ, պատասխանեց պզտիկ մեծ վարչագէտը

(անոր հասակը կարճ էր) : Սոհարարներու պահանջումով նախարար մը պաշտօնանկ չեն ընել և չեն աքսորել : Եթէ այսօր գործադրենք այդ հրովարտակը, վաղը թերեւս պալատին ձիազանները ձեր աքսորումը պիտի պահանջեն, և մեծ հաւանականութիւնով, միւս օր ալ, Էարձրագոյն Գրան դռնապանները պիտի պահանջեն իմ կախուղիս : Ո՛չ, Պետութիւնը չի կրնար կառավարուիլ խոհարարներու քմահաճոյքին համաձայն և անվերջ իրենց խաղալիքը չէ : Գաղէք ըսէ՛ք Վեհապետին որ՝ եթէ պէտք կայ Ռիւշտի փաշան փոխելու, գալն Բարենպատակ Հաստատութիւններու՝ նախարար ընենք :

Այսպէստ՛ով է որ վերջ գտաւ միջադէպը :

Շէֆիզ պէյի քով մեծ պաշար կար սրամիտ պատմութիւններու, որոնցմով ջերմապէս կը շահագրգռուէր իր մեծամտէն և հոյակապ բարեկամը :

— Տեսէ՛ք, կ'ըսէր ան, Ապտիւլ-Համիտ զրկուած ըլլալով մեր մեծ վարչագէտներէն, ի՛նք կը ստեղծէ մեծ մարդիկ : Լիւններէն և ուրիշ վարժարաններէն կարգերու մէջ բոլոր առաջին ելլողները՝ իր պալատականները, սենեկապետները, քարտուղարները կը դառնան : Ի՛նք անձնապէս՝ իր ուզած կերպով կը վարէ իր նորընձաններուն դաստիարակութիւնը : Օրինակի համար սա Բաղդալը, որ նէկրօրօնդ կղզեցի բաղդալնդիր ստանակ մըն է, պալատին մէջ կարեւոր դիրք մը ձեռք բերած է : Սն կը հարստանայ :

— Եւ ի՛նչ կերպով :

— Սուլթանին մօտ ան հազար միջոցներ ունի հարստութիւն չինելու :

— Ի՛նչպէս, օրինակի համար :

— Հրապարակացին ամուրդներու մէջ՝ անոր հետ գլուխ չելլուիր : Եթէ ներկայ ըլլայ, ո՛չ մէկը կրնայ փարա մը յաւելում առաջարկել Բոլոր մրցակիցները կը փախցնէ :

— Եւ եթէ մէկը գին աւելցնէ :

— Պէտք եղածը կ'ընէ՝ մէջտեղէն վերցնելու համար այդ գին աւելցնողը :

— Ի՛նչ կ'ըսէք :

— Այո՛, չե՛մ չափազանցեր : Այդ կերպով, ձեռք անցընելով Պետական Գանձը, Արեւելքի երկիրներուն մէջ նմանը չտեսնուած հարստութիւն մը չինած է : Երիտազի բարեկամներէս մէկը, Մուհամէտ պէյ Ճաթի, որ տղան էր . . .

— Օ՛, շատ լաւ կը ճանչնամ գալն, սա միլիօններ ունեցող հարուստը . . .

— Այո՛, ճիշդ ան. այդ դրամատէրը, ուզեց Պոլիս հաստատուիլ : Գահիրէի, Ալեքսանդրիաի, Թանիթաի, Տամէնհուրի մէջ իր ունեցած գրեթէ բոլոր ստացուածքները ծախած էր, Պոլիսի և Անատոլուի մէջ ուրիշներ գնելու համար. ան հաւատք ունէր որ՝ մայր-հայրենիքին ապագան շատ փայլուն պիտի ըլլար : Բերաի մէջ, սեփականատէր չունեցող մեծ կալուած մը ամուրդի հանուած էր : Նուազագոյն գին 75,000 օսմ. ոսկի կը պահանջուէր անոր : Բաղդալ 4,000 կու տար : Եգիպտացին

72,000: Ատոր վրայ՝ մեծանուն սենեկապետը անոր մարդ զրկեց որ՝ իրեն աղէկ չպիտի ըլլար այդ աճուղիին մէջ իր հետը մրցումի ելլել: Փաթհի չկրցաւ հանդուրժել պալատականին յանդգնութեանը: Աւելի առաջ գնաց և 5,000 ոսկի ալ աւելցուց զինը: Զայն ձեռք բերելուն գոհ՝ տուն գնաց և սեղան նստաւ ընտանիքին հետ: Յանկարծ, բազմաթիւ ոստիկաններ և հետեւակ զօրքնու ջոկատ մը՝ տունը պաշարեցին: Երեւակայական դաւադրութեան մը իբր գործակից ամբաստանուած էր: Գրաւեցին իր թուղթերը, բանալ տուին իր բոլոր գրոցները, անոնց մէջ գտնուած բոլոր վաւերաթուղթերը, փոխանակագիրները, բաժնեթուղթերը, չէքերը, արժէթուղթերը, հնչուն զրամները, գոհարեղէնները, հնութիւնները, և այլն, տալրակներու մէջ լեցուցին և պալատ զրկեցին: Բազմալինք միս-մինակը պիտի քննէր զանոնք:

Փաթհի պէյ, Պալատին մէկ նկուղին մէջ բանտարկուեցաւ և 40 օր ետքն է որ արձակուեցաւ: Ան պահանջեց իր թուղթերը և զրամները: Միայն առաջինները վերադարձուցին իրեն. վերջինները սենեկապետին չարձատրութիւնն էին: Խեղճ եգիպտացին հիմա թշուառ վիճակի մը մասնուած է:

Մեր այսօրուան սենեկապետները ասանկով է որ հարստութիւն կը գեղեն: Հնարամիտ, ուշիմ մէկն է աղ Բաղդադ. վեց ամիսը անգամ մը հարստութիւնը կը կրկնապատկէ: Եթէ ան ապրի և այս խեղկատակութիւնը շարունակուի, չգիտցուի

թէ՛ ասիէ քանի մը տարի ետքը իր հարստութիւնը սրչափի պիտի հասնի...

—Շարունակեցէ՛ք, ազնիւ բարեկամս, յարեց փաշան:

—Մանրադէպեր պատմեմ. սրչափ որ կ'ուզէք: Ահա՛ խրատ հետաքրքրական հատ մըն ալ:

Անգլիական Տարիկնկորն շոգենաւը՝ իր ճօխ մթերքովը խրած էր Մարմարա ծովին մէջ: Ուզեցին փրկել նաւին պարունակած արժէքաւոր իրերուն մէկ մասը: Խիստ ճարտար սուզակ մը, նաւաճիգով մը և մասնաւոր մահունայով մը, արկածին վայրը հասաւ: Սուզումի փորձ մը կատարեց. քանի մը ժամ տեւեց շոգենաւին ղիրքը և հոսանքները ուսումնասիրելը: Մէկ մըն ալ, նաւին ելքաբարական զանգակը նաւապետին ազդարարեց կարելի եղածին չափ շուտով վեր քաշել սուզակը: Նաւաստիները կարծեցին որ ծովային հրէջ մը զայն կը փարատէր: Աճապարանքով ջուրէն դուրս քաշեցին մարդը: Տժգունած, դող ելած, լեզուն դուրս ինկած, չէր կրնար խօսիլ. դողդաղով, ինկաւ անկողինի մը վրայ:

Ի՞նչ տեսած էր: Գաղտնիք:

—Արդեօք հրէջ մը տեսաք, հարցուցին անոր:

—Ո՛չ, ո՛չ:

—Անհանգիստ կը զգաք ինքզինքնիդ:

—Ո՛չ, երբե՛ք:

—Ուրեմն արկած մը կայ:

—Ո՛չ, ո՛չ:

— Հապա ի՞նչ կայ:

Խեղճ մարդը չէր կրնար խօսել: Վախցած էր: Կը դողդղար:

Գաւաթ մը տաք գինի և պղտիկ գաւաթ մը ոտն կուլ տալէ ետքը, ուժը վրան եկաւ և պատմեց.

— Սուգեցայ Տարիկկողրնի մօտը: Ի՞նչ տեսնեմ: Ծովին տակ անհամար դիակներու կատարեալ քաղաք մը, երկու հարիւր, երեք հարիւր, չորս հարիւր, թերեւս ասիէ աւելի դիակներ: Սպաներ, պարզ զինուորներ, քաղաքացիներ, իւլլէմաներ, ամէնքն ալ ոտքի վրայ, մարմիննին քիչ մը երկնցած. անոնց իւրաքանչիւրին ոտքին հանքածուխի խոշոր կտոր մը կապուած էր: Ես անոնց մէջ կը գտնուէի. քալելու համար այդ մարդոցմէն մէկ քանիին կը զարնուէի անպատճառ: Հոսանքը անդադար ուրիշներ կը բերէր իմ կողմս: Վի՛հ մըն էր ան:

Ներկաները փուշ-փուշ եղան:

Սուգակը շարունակեց.

— Ինչպէս ո՞րեւէ մարդու պիտի պատահէր, այդ տեսարանին առջեւ, ե՛ս ալ, մտացնորքներ և բանդագուշանքներ ունեցայ: Բան մը չէի հասկնար տեսածէս: Սաղա՛նը երեւցաւ աչքիս, ջրակայ Սաղան մը, որ այդ դժբաղդներուն վրայ կը լողար. վերջապէս... ես Բաւարա՛նը տեսայ. մնացածը մի՛ հարցնէք:

Հետեւարար, նաւաձիգը չի կրցաւ շարունա-

կել իր գործը: Տարիկկողրն երեսի վրայ մնաց: Լուրը տարածուեցաւ Տարտանէլի մէջ, Կ'ուզէին այդ անդիի աշխարհք զրկուած դժբաղդներուն անունները գիտնալ: Գաղտնիք. Ա՛ն որ գիտէր այդ անունները, չէր կրնար ըսել, վախնալով որ ի՛նք ալ կը զրկուի այդ ընդծովեայ դժոխքը:

Մեծ հաւանականութիւնով, անոնց մէջ կային զինուորական վարժարանի աշակերտներ, աստուածարանական կաճառի ուսանողներ, որոնք, կը յիշէք այնպէս չէ՞, Ապտիւ Ազիզի օրով, հսկայ ժողով մը գումարած էին, վերջապէս թերեւս դաւաղիրներու բարեկամներէն ոտանք, կամ անոնց բարեկամներուն բարեկամները...

Միթճատ փաշա տակն ու վրայ եղած, ջլատուած էր: Երկինքին անէծքը մաղթեց ան՝ այն բռնապետին, որ ժի՞ւտ դարուն մէջ՝ Ներոնները, Կալիգուլաները, Փիլիպպիոնները կը գերազանցէր:

Եւ ուրախ զգաց ինքզինքը՝ աքսորուած ըլլալուն համար, այդ խայտատկութիւններէն հեռու տառապելուն, և Լոնտոնի մէկ սրճարանին մէջ՝ իր հին բարեկամին հետ տեսուելուն, հետո՛ւ. չա՛տ հեռու այն երկիրէն, որ աւա՛ղ, բորենիներուն ձեռքը մնացած էր...

Տխուր ու ընկճուած, Միթճատ զատուեցաւ Շէֆիզ պէյէն, ուչ առնէ:

ժ-Է.

Ծագած հրդեհը երկտրզի Հարէմին իսկ մէջ էր : Անմիջապէս լուր տրուեցաւ Նորին Վեհափառութեան : Դէպքը իր կարեւորութիւնը ունէր և անոր հետեւանքները ծանր էին : Բողերը կը տարածուէին Սուլթանին յարկարածինին մէկ մասին մէջ : Գիշեր էր : Մենեկապետները , քարտուղարները , թիկնապահները՝ պալատին հրչէջներուն կ'օգնէին :

Ապտիւլ-Համիտ , անկարեկի՛ց՝ հանդէպ իր ծառաներուն , բայց ներքնապէս շա՛տ վրդովուած , գործողութիւններուն անձնապէս ի՛նք կը հսկէր , հրամաններ կու տար , հրչէջները կը քաջալերէր և անոնց ամէնէն ետանդոտներուն պատուանշաններ կը խոտտանար : Հակառակ բնակարանը հրդեհուած ըլլալուն , կայսերական հրամանին համաձայն՝ կիները պարտաւոր էին հանդարտ ու լուռ մնալ :

Դեռ հրդեհը չի մարած , այդ իրարանցուծին և խռոտակութեան մէջ , Սուլթանը հրամայեց որ քննութիւն մը կատարուի : Յանձնաժողովին պիտի նախագահէր Մսղըպ : Մէկ կողմէ , կը ջանային հրդեհը մարել . միւս կողմէ , մէկիկ-մէկիկ կը հարցաքննէին պալատին կիները : Այդ բոլոր թուր ու խարտեաչ գեղո՛հները , այդ տարփուհները ,

այդ գերուհիները , այդ սպասարկուհիները , յանձնաժողովին անդամներուն առջեւէն կ'անցնէին : Այդ պարզ մահկանացուներուն համար , սքանչելի բազը մըն էր տեսնել այդ տեսակ հաւաքածոյ մը՝ զոր այս աշխարհի վրայ Ապտիւլ-Համիտէն զատ ո՛չ մէկ մարդ կրնար դիտել :

Իր հալածուելու մենամոլութիւնով՝ Սուլթանը կը կարծէր որ՝ Հարէմին մէջ կի՛ն մը կրակ ձգած էր նպատակաւոր կերպով , կարելի եղածին չափ ամբոխը խոնկու և անոնց մէջ գտնուող անիշխանականներուն միջոցով զինքը սպաննելու համար :

Սուլթանը խենթ կտրած էր : Ան Աէվրի երկու սքանչելի ծագկանութներ և սրատունանին ապակիները խորտակեց . յետոյ կոտրեց ի՛նչ որ կը գտնուէր սեղանին վրայ : Ամէն վայրկեան իրեն լուր կը զրկէին՝ քննիչ յանձնաժողովին արդիւնքներուն մասին :

— Պէտք է որ ժողովուրդը բա՛նի մը չտեղեկանայ , կը գոչէր ան . պէ՛տք է որ մուսնետիկները չի պօսան թէ երկտրզի մէջ հրդեհ կայ . . .

Իողզոջուն , խիստ յուզուած , Վեհապետը կը պօսպարար , կ'անարգէր , կը հայնոյէր , կը պատժէր , կը պատուազարդէր , կը շնորհարարչխէր , վարձատրութիւն ու պարգև կը բաշխէր :

Վերջապէս , արշալոյսին , հրդեհը վերջ գտաւ : Բայց յանձնաժողովը կը շարունակէր միշտ իր քննութիւնը :

Զէրաֆէթ անուն խեղճ աղջիկ մը , ստորին

դասակարգէ սպասուհի մը . քարիւղի լամբարը ձեռքէն ձգած էր . ա՛յդ էր աղէտին պատճառը :

Այդ աղջիկը անձնական սպասուհին էր Նորին Վեհափառութեան կիներէն մէկուն . որ այդ օրը իսկ թիկնապահէ մը նամակ մը ստացած էր :

Քննութեան արդիւնքը ա՛ս էր : Հետեւաբար , կայսերական պալատներու տրամարանութեան համաձայն , այդ թիկնապահը հրահանգ տուած էր Սուլթանին կնոջ՝ պալատին մէջ կրակ ձգել . այդ սպան ժէօն-Թիւրք պէտք է եղած ըլլար . և կայսեր կինն ալ՝ իր Ձէրաֆէթ սպասուհիին ձգած ըլլալու էր՝ պէտք եղածը կատարել :

Ձէրքէզ Մէհմէտ փաշա՝ աղջիկը հսկողութեան տակ Չապուր-Քէօչլի փոխադրեց . զայն նկուղի մը մէջ բանտարկեց և սկսաւ հարցաքննել : Խեղճ անմեղ աղջիկը՝ դ՛հիմին ներկայութեանը ելլելուն պէս՝ նուազեցաւ . չէր կրնար պատասխանել անոր հարցումներուն :

Ձէրքէզ Մէհմէտ այն ատեն գաղափարը ունեցաւ անօխպէս բռնարարելու այդ դեռատի աղջիկը և ետքէն զայն դաշունահարելու , գոհացում պատճառելու համար Նորին Վեհափառութեան : Ձէրքէզը գործադրեց այդ չարաշուք ծրագիրը : Ձէրաֆէթ մեռաւ անասունին ոտքերուն տակ . իր արիւնը տարածուեցաւ տախտակամածին վրայ և վայրկեան մը ետքը գուրս հոսեցաւ :

Ուրախ , կիրքը առած , գոհ , Զօրափարը Թաղաւորին տեղեկացուց պզտիկ զաւաճանուհիին

սպանուածը և Նորին Բարձրութենէն խնդրեց՝ նման բարձր ծառայութիւններ յանձնել իրեն :

Կայսեր կինը պալատէն պիտի արտաքուէր անօխպէս : Անոր մեղսակից զաւաղրութեան կազմակերպիչ սպան ալ՝ պիտի բանտարկուէր Ձիթ-Քէօչլին մէջ :

Ձէրքէզ Մէհմէտ փաշա , որուն պաշտօն յանձնուած էր կարճ միջոցի մէջ այս կարգադրութիւնը յաջողապէս գլուխ հանելու , շարունակ կ'աշխատէր : Կանխիկ կերպով , իբր վարձատրութիւն , աստիճանի բարձրացում ունեցած էր :

Գաղափարը ունեցաւ հարցաքննելէ տուած չարաշարանքի ենթարկելու խեղճ ամբաստանեալները . հակառակ ատոր՝ յաջողութիւն մը չունեցաւ : Յիսունըութը ամբաստանեալներէն տասնըչորսը կը յայտարարէին թէ ոչինչ գիտեն . միւսները պարզապէս չնորձ կը խնդրէին :

Ամէն գիշեր , գոց կառքեր բանտարկայիները կը փոխադրէին Թաշ-Գըչլաէն ելլալու և ելլալուէն Թաշ-Գըչլա : Ձէրքէզ Մէհմէտ փաշայի հետեւորդները կը կազմէին 50-ի չափ բանբեր սպաներ , քարտուղարներ , ոստիկաններ , լրտեսներ , սուրհանդակներ և այլն . . . Սառնք բոլորը կը զբաղէին հարկերին համբաւաւոր գործով :

Այդ օրը , Սուլթանը շատ գերագրգռուած էր . չէր քնանար երբեք . իր մենաստղութիւնը կը չեւտուէր . իր վիշտերը աւելի բուռն էին : Կ'որոտահ գոչեր , կը չախէր , կը պատժէր չուրջիները : Խիստ

զգուշաւորութիւնով կը մօտենային իր քով քարտուղարները Տժգունած, յոգնած, պարտասած, դաժան լուծիւն մը կը պահէր. կ'ուզէր երկտղի պատերուն վրայ անցընել գիշերը, չի լրտեսուելու և վտանգի մը չենթարկուելու համար: Չափազանց վերապահ, նոյն իսկ խօսիլը մոռցած էր: Սուլթանին ներկայութեանը, պարտականները նոյն իսկ չէին համարձակեր անոր երեսը նայիլ: Սմէն գիշեր, Ապտիւլ-Համիտի ուբուականը զերենք կը տանջէր, կը լլկէր, կը վրդովէր:

Սուլթանը, ամէն օր, կը զուարճանար 5-6 տարեկան աղջնակի մը հետ: Ան իր քենին էր, խիստ սիրական, յարգելի իզպալի մը քոյրը: Այդ անառակորդիին անուներ էլ մաս էր. չափազանց չարածճի, լեզուանի, ան Սուլթանը կը զուարթացնէր անոր հեշտութեան ժամերուն մէջ: Օր մը, այդ աղջնակը կը խաղար թագաւորին սնարին քով: Եայտերական անկողինին բարձին քով ատրճանակ մը տեսաւ: Սուլթանը դուրս ելած էր ապահար առնելու: Աղջնակը կը խաղար այդ գէնքին հետ. զայն ձեռքը բռնած՝ կրակի կը ձեւացնէր՝ երբ Ապտիւլ-Համիտ սենեակ մտաւ: Սոսկումնահար, նորին վեհափառութիւնը կատաղօրէն աղջկան ձեռքէն ստաւ ատրճանակը և վայրագօրէն պարպեց տղիկին վրայ և վայրկենարար սպաննեց զայն:

Չէրքէզ Մէհմէտ փաշա, սենեկապետ Բազըպ պէյի հետ գործակցարար, պիտի քննէր նաև այդ

խնդիրը: Իզպալը ամիջապէս Չատըր-Բէօշկ տարուեցաւ:

Հոն, մէկէ աւելի ատեաններ կային և այդ չարաշուք անձերուն, հարցաքննիչներուն ժողովը՝ իր գիւններով, իր տոմարներով և իր մեծ ու պզտիկ պաշտօնեաներով՝ ճշմարիտ նենգաշահութեան նախարարութիւն մըն էր:

Խիստ երկար հարցաքննութիւններէ, չարչարանքներէ, սպառնալիքներէ, խոստումներէ ետքը, հինգ զժբաղդներ մահուան պատիժի դատապարտուեցան, և համբաւաւոր Չէրքէզը արձնապէս անմիջական կերպով գործադրեց անոնց պատիժը, Թաշ-Գըչախ խորհրդաւոր վերնասենեակներուն մէջ: Թագաւորին երկու կիները աքսորուեցան՝ մէկը Մէտինէ, միւսը Սանաս: Միւս ամբաստանաւորները առժամապէս կը մնային Սկիւտարի Սէլիսիէ զօրանոցը:

Գալով թիկնապահին, ան Աթէշ Ալի պէյն էր, Իզպալին հեռաւոր ազգականը, որ Սուլթանին կնոջ ուղղած իր նամակով դրամ միայն կ'ուզէր, որովհետեւ նեղութեան մէջ կը գտնուէր:

Իր հարցաքննութիւնը վեց ամիս տեւած էր: Ան արձակուեցաւ սակայն, պայմանով որ անմիջապէս Թաիֆ երթար բնակէր: Աթէշ իր գնդապետի թոշակը չէր կորսնցներ, և թերևս, Սուլթանը, քանի մը տարիէն, զթալով այդ տեսակ ազնուական իշխանի մը, զայն փոխադրէր ուրիշ տեղ: Իր արձակուելէն ետքը, գնդապետը պարտաւորուեցաւ

չորս ամիս Չատրը-Քէօշի բնակիչ, որովհետև կարմիր Ծով մեկնող օսմանեան դրօշ կրող նաև չի կար: Սուլթանը ատեն-ատեն անոր նուէրներ կը գրկէր. ուտեստեղէններ, քաղցր-սենիններ, դրամ, որոնք իր բարձր գոհունակութեան ապացոյցներն էին, թէեւ միշտ արգելափակուած պահէր գնդապետը:

Վերջապէս, եմէնի մէջ խռովութիւններ պայթած ըլլալով, հինուէի կէս-կմախք շոգենաւ մը, կազմաւորուեցաւ եմէն գօրք փոխադրելու: Կէս գիշերանց, «բանտէ արձակուած»ը գոց կառքի մը մէջ գրուելով, խիստ հակողութեան տակ Թօփհանէի քարափը տարուեցաւ: Այն պահուն երբ գնդապետը կը մտնէր այն թեթեւաչարժ նաւակը՝ որ զինքը շոգենաւ պիտի փոխադրէր, Նորին Վեհափառութեան բանակին պատկանող զօրավար մը մօտեցաւ գնդապետին, կամաց մը անոր յանձնեց Վեհապետին կողմէ գրկուած 500 ոսկի պարունակող կարմիր մետաքսէ քսակ մը և Սուլթանին անունով բարի ճամբորդութիւն մաղթեց անոր. ատկէ զատ, միշտ Ապտիւլ-Համիտի անունով՝ գնդապետին խոստացաւ հեծելազօրքի հրամանատարի աստիճանին բարձրացնել իր Թաիֆ հասնելէն անմիջապէս ետքը: Խեղճ գնդապետը բան մը չէր հասկնար եղածներէն:

Տասը ամիսէ աւելի բանտարկուելէ ետքը արձակուել, յետոյ գոց կառքով շոգենաւ մը փոխադրուել, յետոյ... յետոյ... Սուլթանին բարիքներովը և շարժներովը ողորուել: Այս բոլորը անմեկնելի, անըմբռնելի, անփոստ էր:

«Մեր Վեհապետը աս սրչափ մենագար, խենթ, անհաւասարաշիտ է», կը խորհէր:

Աթէշ Ալին արգելափակեցին մութ, 'նեղ, աղտոտ խուցի մը մէջ, ուր ո՛չ անկողին կար, ո՛չ լուսադարան: Անոր պղտաթիկ պատուհանն ալ գոցուած էր: Երկու զինուորներ գիշեր-ցօրեկ կը հակէին գայն: Առանց գիրքի, առանց թերթի, առանց նոյն փոկ սիկատէթ մը կարենալ ծխելու, չէրքէզ ագնուատում՝ իշխանը իր անքունութեան գիշերները, իր օրերը պիտի անցընէր այդ խեղճուկ խուցին մէջ, որ ծակուչիկի մը կը նմանէր:

Չէր գիտեր թէ ո՛ւր կը գտնուէր և չափազանց կը տառապէր իր ծփուն բանտին մէջ՝ փոթորիկ եղած ատեն:

Աթէշ մինակ էր, առանց բարեկամի, առանց ծառայի: Ամէն առտու, տեսակ մը արհամարհանքով անոր կ'երկարէին քանի մը պաքսիմաղ և կուժ մը ջուր. ա՛յդչափ:

Նաւին մէջ գտնուող անձերը իրեն հետ չէին խօսեր. զինքը ժանտախտաւորի մը, բորոտի մը, դեւի մը տեղ կը դնէին. իրմէ հեռու-հեռու կը փախչէին: Երբ նաւը Սուէզ հասաւ, հրաման ստացաւ ձիտոէ չլինալ, այլ շիտակ Հօտէյտա երթալ յետոյ, զարձին է որ, ձիտոէի նաւահանուկիստը ցամաք պիտի հանէին Ալի պէյը:

Այս բոլորին մասին բան մը չըսին նախկին գնդապետին: Քսաներկու օրուան ճամբորդութենէ ետքը, նաւը վերջապէս եմէնի նաւահանուկիստը հասաւ:

Այն պահուն՝ երբ նաւը ցամաք պիտի հանէր զինուորները, լուր առնուեցաւ թէ՛ թաազի էօթ զօրաբանակէն երեք զօրախումբեր ապստամբած էին և միացած Եմէնի ապստամբներուն: Հետեւաբար, նաւը իր մէջ ունեցած զօրքերէն մէկ մասը Պանրա պիտի փոխադրէր, անցնելով Պապ-էլ-Մանտէպէն, Օման ծովէն, Ատէնի բոլոր ծովափներէն, Հատրօմունդէն, Օմանէն, Մասքաթէն, Հիւրմիւզէն, Պարսկական Մոցէն.— Բառասուն օրուան ճամբորդութիւն մը:

Նաւապետը, հակառակ իր կամքին, ստիպուած էր հեզարար հնազանդիկ ծովային նախարարութեանէն ստացած հրամանին:

Գնդապետ Աթէշ Ալի պէյ այս ճամբորդութիւնն ալ կատարեց. առանց բան մը գիտնալու, ապշած, ջլատուած, հիւրնդցած, իր խուցին մէջ: Նաւը Բուրիան Մուրիանի դէմը խրեցաւ. ասիկա եօթը օրուան ակամայ դադար մըն էր. վերջապէս, անհամար յոգնութիւններէ և եօթանասունընը օրուան ծովային ճամբորդութենէ ետքը՝ հասան Պասրա:

Պասրաի մէջ, հակառակ հասարակածային տաքին, հակառակ տենդին, խեղճ չէրքէզ պետը իր խուցին մէջ արգելափակուած մնաց: Սաստկապէս ջլատուած վիճակի մը մատնուած էր: Պասրաի մէջ, շոգենաւը դարձին համար ածուխ չկրցաւ գտնել: Հոն երկու շաբաթ սպասել հարկադրուեցան: Մովային նախարարը նաւապետին պահանջուներուն

ականջ չէր կախեր: Նաւապետը հեռագիր կը տեղացնէր պալատ, Բարձրագոյն Դուռ, Նախարարութիւններուն, բայց պատասխան չէր ստանար: Ենթադրեց որ՝ ալ նաւին երեսը չպիտի նայէին: Նաւաստիները կ'ըմբոստանային և իրենց ամսականները և յետեւալ թոշակները կը պահանջէին: Այդ ըմբոստները ծախեցին զամազան իրեր, ինչպէս երկրորդ կողմնացոյցը, զանազան պահեստի առարկաներ, չուաններ, և այլն: Սր մը նաւապետը սքանչելի գաղտփար մը ուրցաւ: Ու զղակի Սուլթանին հետեւեալ հեռագիրը ուղղեց.—

«Դրկեցիք ամիջապէս 500 ոսկիւնց հետադրակս չիք, ածուխ զնեղու հասար. հուասիկերուն բոշակը վճարեցիք. այս թէ ոչ՝ զնդապէս Աթէշ Ալիէն արձակեցիք եւ Կայսրութեան հողիկ հետանալիք».

Նուապէս՝ ԷՅՈՒՊ ՍԱԿՐԻ

Նաւապետը անմիջապէս ստացաւ հետեւեալ պատասխանը.—

«Յարգելի նաւապետ շոգենաւ Պարպարոս Պասրա

«Կայսերական բարեւներ: Ասիհնսի բարձրացում. շնորհաւորութիւններ: Կառավարիչիկ հրահանգ տրուած է ձեզ վճարել 500 ոսկի: Չարձակեք զնդապէսը»:

ԱԼԻ ՅՈՒՍԵ

Յաջորդ օրը իսկ, շոգենաւը սկսած էր ամուխ ատնել: Վերջապէս, Պասրափ հրախանձ ու ժանրային նաւահանգիստէն մեկնեցան և քառասունըհինգ օրուան մէջ հասան ձիտտէ, հոն ցամաք հանելու համար գնդապետը:

Խնդճ Աթէշ Ալի պէյ գրեթէ մեռել դարձած էր. կզակին վրայ մէկ մէթր մօրուք մը, զգեստները բզբտուած, շողենաւին սուրճին թիկնաթոռին վրայ փլչեցաւ. իր խուցէն ելած ատեն չէր կրնար քալել: Ձիտտէի մէջ, զայն ազատ ձգեցին: Բժիշկ մը քիչ մը խնամեց զինքը: Այդ նաւահանգիստին ընդհանուր կառավարիչին փոխանորդը՝ մեծ պատիւններով ընդունեց զինքը՝ նաւամագոյցին վրայ: Գիշերը անցուց Պէնարէսցի հարուստ վաճառականի մը՝ Քուլ Ալի Սահպաի տունը:

Յաջորդ օրը, քիչ մը աղէկցած էր. ամէլցած էր իր երկայն մօրուքը և պաշտօնեայէ մը քաղաքային զգեստ մը հայթայթած էր: Յետոյ ճամբայ հանուած էր զէպի Մէքքէ և Թաիֆ, միշտ զինուորական հսկողութեան տակ:

Սուլթանը, ամէն ատեն, իր մասին լուր կը ստանար և հեռագիրով իր բարձր բարեւները կը զրկէր, ինչպէս սովոր էր:

Մէքքէի մէջ, ընդհանուր կառավարիչը, էմիրը, զօրարանակին մարաջախտը՝ իրեն կը սպասէին: Անոնք ալ մեծ յարգանքով և պատիւներով ընդունեցին զինքը: Յաջորդ օրը իսկ, արշալոյսին, պիտի զրկուէր Թաիֆ, Մէքքէի մէկ գիւղը, որ

քաղաքական յանցաւորներու աքսորավայրն էր: Կառավարիչը, Թաիֆում կահաւորել տուած էր երկու սենեակ, շատ խեղճուկ տունի մը մէջ, ուր կը բնակէին պաշտօնազուրկ զօրավար մը և աքսորական իւլէմա մը:

Թաիֆի կլիման զգալապէս աւելի մեղմ էր սուրբ քաղաքին կլիմայէն. բայց այդ գիւղը աւելի՛ ախուր, աւելի՛ ամայի էր, քան Մէքքէն:

Իբր ընկեր, հոն կային միայն դատապարտեալներ, որոնց 10-էն Զը անտեղ, անվասա մարդիկ էին:

Թաիֆի մէջ է որ, Կովկասցի իշխանը տեղեկացաւ՝ որ Միւրդի Իռէմ, իր նշանածը, իր պաշտելին, այդ զժբաղղ ու խեղճ արարածն ալ աքսորուած էր: Կը կարծէր որ ան, միշտ Պոլիս կը գտնուի, եւլլազի մէկ յարկին մէջ, դատապարտուած անշտրէք Վեհապետին յիմար սէրը գոհացնելու:

Բարեբաղդութիւն մըն էր որ՝ Միւրդի Իռէմ ազատած էր: Աւելի նախընտրելի էր Թաիֆի ամէնէն կոշտ մէկ տնակին բացարձակ մենութեանը մէջ ապրիլ, քան ոճրագործ Սուլթանի մը կիսը կամ հարճը ըլլալ և եւլլազի պէս զղեակի մը մէջ բնակիլ:

Գնդապետը Միւրդի Իռէմը տեսնելու փափաքէն կը սրկէր. կ'անձկար անոր, կը պաշտէր զայն: Թաիֆի մէջ, ինքզինքը Կովկաս՝ իրեններուն գողը ըլլալ կը կարծէր: Աթէշ Ալի անապարանքով հետեւ-

եալ տօմսը գրեց և զայն ստիպողաբար Միւրզի Իռէմին գրկեց. —

«Միւրզի Զեհրաս. քեզի պէս դասապարտուած, անմեղ Էմիր Աթեշ Իպն Շաւիղը, այս միջոցին Թափփ կը զտնուի: Ուրեմն մեր ճակատագիրը յայդքս է Շեհիս պէյի դաւերուն, Ռուսերու բռնութիւններուն, բանստերուն, զնսաններուն, Կարմիր Սուրբախին չարչարակներուն, փոքարիկներուն, անօրութեան, հիւանդութեան, եւ անսմ մեկի անկէն աստիկ անտէրի ազգս եւ հօր եւի, այս սուրբ փայտիկն մեջ: Բու տրանդորութեանդ տակ եւ: Բու հայրենակիցդ եւ, բու ազգականդ, բու եղբայրդ, եւ եթէ հաճոյքով եւ հպարտութիւնով կ'ընդունիս՝ եւս բու այն նշանածդ եւ՝ զոր ողբասցեալ հօրեղբայրս եւս բու հայրագիրդ Պեհասըր պէյ ընծայած եր քեզ. անկէն պարագայի մեջ, բու անձնուերդ եւս յարիստան հաւասարիս ծառայ Աղի»:

Վ.Գ.

Երբաւրդի մէկ խորհրդաւոր քօշկին մէջ, կէսգիշերուան ժամ, սեղանի մը շուրջը բոլորուած, Ապտիւլ-Համիտ, իր մէկ ըրտուղարը և ներքինի մը, արտուած-տխուր, կամաց ձայնով, կը խորհրդակցէին Միւրզի Իռէմի՝ Էմիր Աթէշի հետ ամուսնութեանը մասին:

Թափփի Գատրին՝ իր ստիպողական հեռագիրներովը՝ հրահանգ կը խնդրէր:

Սուլթանը կը ցաւատանջուէր:

— Ինչո՞ւ զուրկ եմ ես այդ կնոջմէն, կ'ըսէր. այդ անզուգական ազւորին հրապոյրներէն, Միւրզի Իռէմէն, որ կ'ինչուր իմ հաւաքածոյիս մարգարիան է, իմ բոլոր կ'ինչուր ամէնէն խելացին, ամէնէն խտայը, ամէնէն զարգացածը... Ս.յդ ազջիկը ինչ ըրած էր ինձի: Ճիշդ է որ, ներքնապէս ան չէր համակրեր ինձի. բայց որչա՞փ վարպետ էր իր զգացումները ծածկելու և անկեղծ երեւնալու: Անզուգական էակ մըն էր ան, արարածներուն ամէնէն փափկասունը:

Սուլթանը կը յիշէր Միւրզի Իռէմը, անոր գրաւիչ դէմքը, նուրբ մարմինը, անուշ ձայնը, քնքուշ ձեւերը, անոր գեղանի դէմքին բոլոր սեփեփ:

—Ահ, ինչ մեծ կորուստ ինձի, կ'ըսէր Միապետը ինքնիրեն:

Իր մարտկենիէ թիկնաթողին մէջ նստած, սիւնառէթը չրթունքներուն, Ապտիւլ-Համիտ չէր կրնար ինքզինքը զայել:

Պայատակսնները որոշապէս կը ըմբարէին անոր զէմքին կրած փոփոխութիւնները: Սուլթանը առաջին քարտուղարին միջոցով ետ դրկեց շատ խիստ բառերով բանաձեւուած ծանուցագիր մը՝ զոր Պայատ ուղղած էր Իտալիաի Դեսպանը: Այդ օրը, Սուլթանը նոյն իսկ չէր կարդացած լրտեսներուն ձուռնայները. ազօթք ընելու ալ թերացած էր և մերժած էր ներքինապետին կողմէ խնդրուած ունկնդրութիւն մը:

Կայսեր չուրջը գտնուողները չէին կրնար վեհապետին ներքին մտածումը գուշակել, և հետեւարար, Միւրդի Իռէմի՝ Աթէշ Ալիի հետ ամուսնութեան մասին ս'ընէ կարծիք յայտնելէ կը զգուշանային:

Գատրն՝ երկրորդ, յետոյ երրորդ հեռագիր մը դրկեց: Սուլթանը վայրկեանէ-վայրկեան աւելի՛ կատաղի, աւելի՛ վայրագ կը դառնար. կը հրամայէր որ այդ սիրակցորդները պատժուին, կախուին... Յետոյ կը հանդարտէր, իր պաղարիւնը կը գտնէր: Ինչո՞ւ այդ երկու աքսորականները կ'ամուսնային: Սրդեօք գէշ նպատակով մը. արդեօք զաւարդութիւն մը սարքելու, իրեն զէմ լաւագոյն կերպով գործելու, մէկտեղ փախչելո՞ւ

համար: Սուլթանը գնդապետ Աթէշ Ալի պէլը Մուսուլի (Միջագետք) զօրաբանակին զօրաւարհրամանատար կ'անուանէր: Ատոր վրայ, անմիջապէս հեռագիր մը կը ստանար, որուն համաձայն, գնդապետը չէր ընդուներ այդ չնորհը:

Գրգուսած, մոլեգնած, վրէժինդիր, այդ պարագան պատերազմական նախարարին և Շէյխ-իւլ-Իսլամին նկատուութեանը յանձնեց:

Այս երկու պաշտօնատարները՝ բանտարկութիւնը պահանջեցին գնդապետին, որ չէր հնազանդեր իրենց Օգոստափառ վեհապետին հրամաններուն: Վեհապետը շատ կը տատամսէր այդ պատիժը գործադրելու: Հապա եթէ Սթէշ Ալի և Միւրդի Իռէմ յաջողէին գաղտնապէս փախչիլ:

Ինչ պիտի ըսէր մահմետական սլխարը:

Յոգնած ու հիւանդ, անկողին մտաւ Սուլթանը. նոյն իսկ չուզեց գրօնուլ տասերեք տարեկան Բէշ-Բէշան անուն մանրիկ Ձէրքէզուէի մը հետ, որ իր անկողինին մէկ անկիւնը կը գտնուէր: Այս աղջիկին ալ, իր կարգին, չէր կրնար հասնիալ Թագաւորին վիշտը և չէր համարձակեր զայն անհանգիստ ընել:

Համիտ վայրկեան մը զիտեց գեղանի հարձը. զայն ճշմարտապէս չնորհալի և նուրբ գտաւ. բայց Միւրդի Իռէմի և անոր միջև տարբերութիւն կար:

Միւրդի Իռէմ, Շամիլի որդիին թագուկներուն մէջ, անոր կը պատմէր Սուլթանի կին եղած ժամանակի իր կեանքը, այդ Թագաւորին գաղտնիքները, քմահաճոյքները, աշտատոցութիւնները. անհեթե

թուփիւնները : Ա՛յ, Սուլթանը, որ միշտ իր կիները իր սիրականներուն, իր նախարարներուն կնուծեան կու տար, ըլլա՛յ գանձնք լրտեսելու, ըլլա՛յ գոհացնելու համար, չէ՛ր կրնար հանդուրժել այս երկու սիրողներուն միութեանը Հակառակ իր կամքին, հակառակ իր սովորութիւններուն, զափազանց նախանձ կը զգար :

Այս պարագային, ի՛նչ պիտի ընէին երկու սիրակցորդները : Ընչ այս խնդիրն էր որ Ապտուլ-Համիտ չէր կրնար լուծել ո՛չ ալ ատոր վրայ կրնար խորհիլ : Այս խնդիրին պատճառով, չարափ մը քունը կորնայուց : Երկու նշանածներուն ուրուականները զինքը կը հալածէին, զինքը շարունակ կը սարսափեցնէին Նորին Վեհափառութեան մտերիմ Շէյխը, աստղարաչիքը, արքունիքին մողերը և կախարդները, չէին յաջողեր, հեռուանց, հոգեխօսակրան և հրաշագործ միջոցներով, մահացնել երկու էակները, որոնք Թագաւորը անհանգիստ կ'ընէին :

Պետութեան գործերը երեսի վրայ կը մնային : Իտալիաի դեսպանը, արաաքին գործերու նախարարէն և պալատին քարտուղարէն 24 ժամուան մէջ վերջնական և որոշ պատասխան մը կ'ուզէր՝ իր մեկ ըերանայի ծանուցագիրին :

Վերջապէս, ուրբաթ օր, արեւծագի դէմ, Նորին Վեհափառութիւնը կանչեց իր երկրորդ քարտուղարը, և իր անկողնին մ'ջէն, անոր տուն տուաւ սա հեռագիրը, ծածկագիր զարնուելու համար. —

Հիճագի Ընդհանուր Կառավարչին.

Նորին Վեհափառութիւնը ընդունած է Միւրդի Իռեմի եւ Գնդապէս Աքեշ Այի պէյի անուսնութեան մասին Թաիֆի Գասըիւ երկրորդ հետազոյրը : Նորին Վեհափառութիւնը կը հաւանի այդ անուսնութեան եւ հարսփեսային կը դրկէ իր կայսերական բարեակերը, ինչպէս նաեւ իր բարձր հասնանքիւնը : Մակայն, Միւրդի Իռեմ պէսֆ է հրաժարի իր անունէն եւ Չեհրու կոչուի : Արարողութիւնը պէսֆ է կասարուի խիստ մեծիմ շրջանակի մը մեջ, Իմալի մը եւ սովորական ջուրս վիսկերու ներկայութեանը : Չեւ Վսեւնութեան կը խնդրուի՝ մօտէն հսկել այդ արարողութեան եւ զայն անկեղծապէս տեղեկագրել արհմեխի : Այս առիթով, մեւ Օգոստիստ Թագաւորը Գնդապէս Աքեշ Այի պէյը կ'անուանէ հեծերագործի զօրախառ եւ անդամ երջջը զսնուող զինուորական վերասեպտութեան բարձր շահնաժողովին, այն խիստ պայտսնով որ՝ ան Թաիֆէն չհեռանայ եւ ինքն ալ հրաժարի էմիր Այի Իպի Եւալի անունէն : Ասկէ ետքը, ան պարգապէս պիտի կոչուի Տաղիսքսնցի Այի փուշա : Կայսերական հրահանով Չեհրու հանրակի պէսֆ է շահնեխ 5 0 0 ուկի :

Կայսերական Գիււանի Աւաջին Քարտուղաւը

Ձ

— Բարի լո՛յս, Ձէհրա հանրմ, ըսաւ Ալի փաշա, երբ արթնցաւ :

Միւրդի Իռէմ Ալի փաշաի ըսածը չէր հասկնար :

— Սիրելի՛ Միւրդի Իռէմս, չէ՞ որ կայսերական հրամանով երէկուրնէ խվեր հին Ձէհրան ես դուն, հօրեղբօրս՝ Պէհատըր սէլի ալջիկը :

— Օ՛հ, այո՛, պատասխանեց սիրուն ու երջանկացած Ձէրքէզուհին, ամուսինին վրայ հակած, մագերը խառնիխուռն, այո՛, սիրելի՛ Ալի փաշա, ճիշդ է որ ես այն խեղճ ու տկար Ձէհրան եմ. իմ նկարագիրս փոխուած չէ. հակառակ կամքիս՝ Ապտիւլ-Համիտի կինը, բայց ես պահած եմ սիրտիս կուտութիւնը. այդ սիրտը չէ՛ խորտակուած. թող որ չէ՛ր ալ կրնար խորտակուիլ Հակառակ իմ ունեցած փորձութիւններուս, ի՛նչ որ ալ ըլլայ, ես ե՛մ և կը մնա՛մ այն անգոր Ձէհրան, այն Ձէրքէզուհին, որ քեզ կը սիրէր, որ քեզ կը պաշտէր. երբ քեզ իր պատուհանէն կը տեսնէր գեյլեցիկ ձիուզ վրայ, քու գաղափարիդ նուիրուած հեծ. եայներու շքեղ խոււրիզ հետ, մեր հարստահարիչներուն աննուած թշնամին եղող Կովկասի Սուլթանին գաւիլի քու աղւոր զգեստովդ : Հակառակ իմ տառապանքներուս, ո՛վ մեր մեծապանծ էմիրին որդին, ես միշտ երջանիկ էի : Ես խտէալ երկինքի մը մէջ կը թևածէի, իմ հոգիիս ներքնաշխարհին մէջ : Դուն երէկուրնէ խվեր չէ՛ որ իմ բարեկամս, իմ ամուսինս ես. օ՛հ, ո՛չ : Դուն շարունակ իմ սիրտիս մէջն էիր, իմ հոգիիս մէջ. դուն միշտ քու տեղդ ունէիր այն

հրաշագան զգեստներում՝ զորս ես կը կերտէի իմ երազներուս մէջ : Կովկաս, փախուստէդ ետքը, դուն միշտ իմ միտքիս մէջն էիր. դուն մեծցար, առանց որ ես քեզ կարենամ տեսնել, առանց որ ես կարենամ հետեւիլ քու քայլերուդ : Երբ ես Սթանպուլի մէջ առաջին անգամ քեզ տեսայ, իմ երազած էմիր Աթէշս կը գտնէի. քու անձիդ մէջ : Ես վստահ էի որ՝ որ մը պիտի տեսնամ քեզի, հակառակ որ կայսերական կին ըլլայի, հակառակ իմ վարած դժբաղդ և գերի կեանքիս : Ես կը սպասէի այդ երջանիկ օրուան, ինչպէս հաւատացեալ մը կը սպասէ ապագայ կեանքին, ինչպէս սուրբ մը երանութեան. և ես իրաւո՛ւնք ունէի :

«Օ՛հ, նախազգացումը ո՛րչափ հրաշալի բան է :

«Կ'երեւայ թէ սերտ կապակցութիւն մը կայ ներկային և ապագային միջեւ :

«Այո՛, ես կատարեալապէս վստահ էի որ մը քեզի տիրանայուս, նոյն իսկ Ապտիւլ-Համիտի ծունկերուն վրայ եղած ստենս. նոյն իսկ մտայլ խուցին մէջ կայսերական Իզզէսթին գրօսանաւին, որով զիս կ'աքտրէին, ես երբեք մինակ չէի. իմ թափառական և արկածայի կեանքիս ամբողջ ընթացքին, ես շարունակ կը տեսակցէի քեզի հետ. իմ անքուն գիշերներուս մէջ, իմ բանտիս մէջ, Մէքքէի էմիրին տունին մէջ, ես կը խօսակցէի քեզի հետ : Իմ հոգիիս գործադրած ձգողութիւնը չէ՛ որ քու Թաիֆ գալուդ պատճառ եղաւ» :
Լուռ, ուրախ, Ալի փաշա իր կնոջ ձեռքերը

իրեններուն մէջ կ'առնէր, անուշ համրոյր մը կը զրոշմէր անոր չրթունքներուն վրայ, ա'յնչափ սիրուն ու նրբահրաշօրէն շտորակերտուած չրթունքներուն, որոնցմէ ազւորը Փիզիասս իր բոլոր արուեստովը, յասնուովը և երեւակայութիւնովը չսխտի կրնար երազակերտել: Չէր գիտեր թէ, իր անվերջ արկածներէն և այս մոլորակին վրայ ունեցած կեանքի իրադարձութիւններէն հտքը, կ'ապրէ՞ր, թէ խորհրդաւոր ձեռքով մը փոխադրուած էր այլուր, բոլորովին ուրիշ աշխարհ մը, իստէայ աշխարհ մը, անհունութեան մէկ անծանօթ բնագաւառը:

Այո՛, սիրելի Միւրդի Իռէմս, էրիկ-մարզու պատիւիս վրայ կ'երգնում որ՝ Եովկասէն փախած ատենս՝ քեզ հետս տարած էի: Իմ մշտնջենական մտազբաւուճներուս, երազներուս և խոյուններուս առարկան էիր դուն: Կարելի՞ էր որ, ա'յնչափ զգայուն, ա'յնչափ փափուկ երկու հոգիներ, հակառակ խոչընդոտներուն նիւթին, ուժին, միջոցին, հեռաւորութեան, ժամանակին, չկարենային իրարու միանայ: Ինչպէս որ կը տեսնես, այսօր որ մենք յաւիտեան միացած ենք, կրնանք խօսակցել, գլուխ-գլուխի տալ, զազափարներ փոխանակել, խօսիլ ապագայի մեր այն երազներուն վրայ, որոնք երկուքնուս ալ սիրելի են և որոնք իրարու նմանն են:

Այս խօսքերը կը փոխանակէին երկու ամուսիններու և չէին յագեցնար այս անուշ մտերմու-

թենէն: Երկուքն ալ իրենց երազին, իրենց մշտնջենական գաղափարականին առարկան գտած էին և իրենց զերազոյն մխիթարութիւնը կը վայելէին իրենց սիրային գինովութեանը մէջ:

Թափփի տխուր չըջակայքը, այդ լերկ լեռները, այդ կոշտ տունները՝ հիմա բոլորովին տարբեր կ'երեւային իրենց: Այլ հիմա չէին ուզեր այն ապականած Սթանպուլը, Բիւզանդիոնի ժառանգը, լրտեսութեան, նենգութիւններու, դաւադրութիւններու, անատակութիւններու, զժբաղղութիւններու այդ քաղաքը: Անոնք նոյն իսկ կ'ատէին անոր դիւթիչ տեսարանը, ծովերը, գեղջկական տեսարանները, որովհետեւ այդ քաղաքը, աւա՛ղ, կը քնանայ անպատուութեան մոռյլ ամպի մը տակ, և չգիտեր իր վրայ դարերէ իվեր իշխող կեղեքիչներուն լուծը թօթափել:

Անոնք կը սիրէին Թափփը, անպտոր քաղաք մը, հակառակ իր մենութեանը, հակառակ իր կլիմային խստութեանը, բնութեան խոպանութեանը: Անոնք կ'ուզէին հոն ապրիլ յաւիտեան, հեռու ոճրագործ Սուլթանէն, իր լրտեսներէն, իր պալատականներէն, զաժան Միսպետի մը հյու ստրուկներէն: Անոնք ո'չ կ'անձկային արքունիքին չքեղութեանը, ո'չ անոր հարստութիւններուն և ո'չ ալ պերճանքին: Անոնք կը բաղձային որ մոռցուին իրենք, գերկ գերկի մէջ: Կեանքը իրենց ծանօթ էր արդէն: Հարստութիւն: Ատոր չէին անձկար: Միւրդի Իռէմ, Ապտիւլ-Համիտի գանձերուն մէջ իսկ, երջանիկ

չէր : Փառք : Ամենազօր ինքնալի մը կինը , Միւրզի Իոէմ մշտնջենապէս Երթողի իր ընկերուհիներուն դաւադրութիւններուն զոհն էր եղած , և էն ևտքը , առանց որեէ պատճառի , նաւ մը դրուած և Թաիֆ տարուած էր : Ինչ որ կ'ըզձար , խէշալ հեշտութիւնն էր , խաղաղութիւնը , ինքնամոռացումը , ինքնալքումը : Ապտիւլ-Համիտէն շատ կը վախնային : Եթէ խելջին փչէր , Կարմիր Սուլթանը կրնար զիրենք բաժնել , աքսորել ո՛ւր որ ուզէր : Իրենց անուշ խօսակցութիւններուն միջոցին , կամ , գիշերը , քնացած առննին , վայրագ ու վրէժխնդիր Ապտիւլ-Համիտի մղձաւանջը զիրենք կը հարածէր , կը վրդովէր իրենց խաղաղութիւնը , հանգիստը և երանութիւնը : Առանց այլ վախին՝ իրենց երջանկութիւնը կատարեալ եղած պիտի ըլլար : Տկար , անօդնական , աննեցուէ , Միւրզի Իոէմ և էմիր Սթէշ երբեմն կը սարսուռային , երբ կը խորհէին այն վայրագութիւններուն և հարածանքներուն վրայ՝ որոնց կրնային տակաւին ենթարկուիլ :

— Ամէնէն գէշ բանը , կ'ըսէր ինքնիրեն Միւրզի Իոէմ , մեծագոյն բարբարոսութիւնը . Սուլթանին ամէնէն վայրագ արարքը պիտի ըլլար՝ մեզի հիմա բաժնել : Ահ , ալ անկէ ևտքը չե՛մ կրնար ապրիլ : Զիս էմիրէն բաժնել , առիկա մարմինը հողիէն բաժնել պիտի ըլլայ : Ինձի համար չի կայ գաղափար մը , զգացում մը , որ էմիրինն ալ չըլլայ : Ան Ապտիւլ-Համիտի կատարեալ հակադարձն է : Հա-

միտ ո՛չ Սուլթանի մը ազնուութիւնը ունի , ո՛չ իշխանի մը վեհափառութիւնը , ո՛չ ալ Սամանի տան շառաւիղի մը արժանաւորութիւնը : Ընդհակառակը , իմ էմիրս , առանց անոր աստիճանները և տնտղոսները ունենալու , թագաւորի մը բոլոր յատկութիւնները ունի . որչա՛փ վեհաշուք է ան իր ձիուն վրայ . ան որչա՛փ կը մարմնացնէ իր վրայ՝ իր անմահ հօրը հողին : Եթէ ան չիշխէ Կովկասի լեռներուն վրայ , եթէ Թուսներուն ճնշումը թող չի տայ իրեն գահ բարձրանալ , ան դա՛րձեալ կ'իշխէ իր բոլոր հայրենակիցներուն սիրտին վրայ , և մէնէն առաջ ի՛մ սիրտիս , իր խոճարճ բայց հաւատարիմ հպատակին սիրտին վրայ :

Վ.ԵԹ.

ՌԷԶԻՆԻ ՆԱՄԱԿԸ ՄԻԻՐՂԻ ԻՌԷՄԻՆ

Սիրեցի Միւրդի Իռեան.

Ամենաբունն ուրախութիւնով եւ անկեանեծ գոհունակութիւնով սուսաց ձեր վերջին նամակը: Չեզի պատասխանելու յայտնելուս պատճառը ա՛ն է որ՝ մեծ դժուարութիւններու յարկեղ պատճառորուեցայ՝ այս նամակը ձեզի դրկելու համար. եւ չեմ ալ գիտեր թե՛ ան պիտի հասնի՞ ձեզի:

Հնայում եմ շտեղով որ՝ վերջապէս երջանիկ եմ եւ ձեր փորձութիւններուն փայտանիկն հասած, Էմիր Արեշի հետ, ձեր խոկուններուն եւ երագներուն միակ առարկան: Ո՛վ իմ գեղանի սիրունիկս, դուք շա՛ս սուսպեցաք. ձեր կեանքը դառնութիւններով եւ արկածներով շեղուն կեանք մը եղաւ. ձեզ հարածեցին, խոշտանգեցին, բայց դուք երիտասարդ եմ, չափազանց երիտասարդ, եւ ձեր առջեւը ունիք երկար կեանք մը, շուսգոյն ապագայ մը: Գարով ինծի, ես շա՛ս իտուր եմ, շա՛ս սուսպահեծ, այն անրոցին մեջ՝ որ Երջըզ կը կոչուի: Դուք չիք ճանցնար այս խորհրդաւոր դրեակը, այս սարսափելի եւ մահաշոք շարիւղիկը:

Անոր մեջ բնակողները իսկ չեն ճանցնար զայն: Պժգալի Սուրբանը զայն հազի՛ւ թէ կը ճանցնայ: Այս պայտար ալ չէ Մաննուս Բոբի շինած սիրունի ֆոշիլը, ուր իր որդիին Ապտալ-Մեհիս կը գրովնուր իր համբաւաւոր Երջըզիկն (Ասոյ), իր հոջակաւոր սիրունիկին հետ: Ան հիսնա անբացուած դիրքով ռազմական մըն է. անբողջ փողով մըն է ան, իր շեկերով. բայց ի՛նչ մանուածապատութիւններ, ի՛նչ սուկունակի յորինուածք, Թագաւորիկն բնաւորութեանը ճիշդ նմանը: Անոր ճակատները, բաները, գաղտնի անկիւնները՝ ուր պահապաններէն զոս ո՛չ մէկ մահկանացու սակաւին կրցած է բախանցել, անոր անրոցները, գորանցները, բերանօրները, վերջապէս գաղտնի դասարանները, եւ զանաւորանները... Անկարելի է այս պայտարին պատերէն դուրս ելլել. անկե կողմ պահականցներ կան, անկե կողմ պահակներ, զինուորներ կան այդ պատերուն սակ, երկարք կրկնակ եւ եռակի դռներուն առջեւ: Չե՛մ գիտեր թէ ո՛ւր կը բնակի Եորիկն Վեհափառութիւնը, անկե ժամ ապաւելով իր պայտարին օդը ելլելը: Այսօր իր մեկ կնոջ կը ծանուցանեն թե՛ Թագաւորը իրեն կը ապաւե ապիկնց կամ այլիկնց ֆոշիկն մեջ: Սուրբանը զայն կ'ընդունի բողբոջիկն ուրիշ սարաւարի մը մեջ: Երիկն Էսա, Սուրբանիկն անոր եւ գեղանի մեկ սարիւղիկն, անցած օր ինծի

կ'ըսեր թե՛ քան անգամե աւելի պատկած էր Ապսխա-
 Հաւիսի հետ, միշտ սարքեր ֆոշկերու մեջ: Գեւեթի
 սակ, քազաւորը ունի նկողներ, բնակախայրեր, գե-
 նուղիներ, գորս միայն ի՛նքն զիսկ: Կան լիճեր, ջրվեժ-
 ներ, նոյն իսկ աշխատանոցներ՝ ուր քազաւորը եփե-
 նագործի մը պէս կ'աշխատի, յախճապակիի գործա-
 րան մը, անձաշակ մուսուկներ, դիսարան մը, ո՛չ թէ
 երկիկը ուսումնասիրելու համար, այլ կրակածելիները
 հսկելու, բազմաթիւ բաղնիքներ, անհամար ախոռներ,
 գառագեղներ, դաբիրներ՝ ուր խեղճ «Ժ-հոն-Թ'խոբ»երը
 կը նահասակուիին:

Մեր Գերաշուքը, առեւն քանի կը վախնայ. կը
 վախնայ անբողջ աշխարհէն, կը վախնայ օսար տերու-
 քիւններէն, մեծ պաշտօնատերէն, իր արքունիքէն,
 իր պահապաններէն, նոյն իսկ իր մեծիմ պահա-
 պանէն՝ Հասանէն, իր պաշտէն, իր ծառերէն, իր
 կենդանիներէն, երկիկէն, մթնոլորտէն, գիշերէն եւ
 իր շուքէն: Պէտքս ասեմ, առեւն փայրկեան կը կաս-
 կածի որ զինքը պիտի սպաննեն, թէ իր պարտեղին
 ծառերը անխիստանկաններու պիտի փոխակերպուին
 եւ զինքը պիտի մեղցնեն: - Հոս եղած ասեմնիդ, Սուլ-
 քանին մեծանորութիւնը ա՛յնչափ առաջացած չէր.
 հիմա. երբեք չի հեռանար իր քազսոցին, որ օր-օր
 աւելի գաղտնածածուկ կը դառնայ:

Ի՛նչ թշուառ, ի՛նչ ստապակի կեանք մըն է
 Ապսխա-Հաւիսի ֆաշխած կեանքը: Ինչո՞ւ կ'ապրի ան.
 Ան կը վախնայ եղեքրականութեան, հեռագիրէն,
 հեռաձայնէն, օդապարիկէն. բոլոր ասոնց մեջ զինքը
 մեղցնելու, իր պաշտը օղբ համելու միջոցներ կը
 տեսնէ: Այսպէս, սիրելի Մխարի Իռեւս, այն պաշտը
 (կամ բանը) ուր մեզ քանսարկած են, օր-օր հեփ-
 ետքներու պաշտներուն, դիցաբանական խորհրդաւոր
 բնակախայրերուն երեւոյթը կ'առնէ: Առջի օր, խիստ
 անմեղ անգաղտնապահութիւն մը գործեցի. զիս Չրա-
 դանի կողմը գնունող պարտեղին մեկ անմասնօր
 սաղա-
 շարին մեջ քանսարկեցին: Երկու օրուան մեջ
 սասն անգամ հարցախնդրեան եկարկուեցայ: Երբոր
 օրը, հասկցան որ յանգամ մը չունենի. բաւականացան
 ինձի խորագրի սաղբ հարուածներ միայն սաղոմ-
 ա՛յչչափ: Հոն, դիպումով հանդիպեցայ սարօթնակ
 բայց խիստ համակրելի, իր սարօթնակութեանը
 մեջ խիստ ազնիւ կնոջ մը: Սուլքան Մուրաթի մեկ
 գերու-
 նին էր ան, սարիներէ իջեր անոր հետ Չրադանի
 մեջ քանսարկում: Երբ ան ինձի պատեց, սիրելի
 բարե-
 կամուհիս, իր բոլոր արկածները, դժբաղդ Սուլքանին
 բոլոր ստապակիները, ծ'հ, ստապակի: Ապսխա-Հա-
 վիս ասկէ ետքը իմ աչքիս դարձած է արարածներուն
 առեւնէն անշնորհքը, քազաւորներուն առեւնէն
 առեւ-

նարբուն, մարդ մը՝ որ անպատշաճիւն մըն է ո՛չ միայն Թորթերուն, այլ անբո՛ղջ մարդկութեան:

Ի՛նչ աստապակեցներ չէ քաշեր նախկին Սուրբանը: Այդ բարի կնոջ անունն է Եւփ-Եփնայ. նախկին Վեհախառնին զաւկին՝ Սեղանիսին Էփեհիսի դասխարակունիին է ան:

Այդ դժբաղդ կնոջ պատճառիւն նայելով, խեղճ Մուրս Երէ, որ գանձն վար ստեղծած ասեմ խեղճեցած էր, իր բանաստեղծութեան շորորոյ օրը բռնած է արդէն: Փափուկ ու նուրբ բնատրուքեան սեր այդ վեհոգի մարդուն՝ շատ ծանր կու գայ այդ կեանքը, հետո՛ւ աշխարհէն, հետո՛ւ իր բարեկամներէն ու ծառաներէն. ո՛չ մէկ մարդու երես կրնայ տեսնել ան. եւ արտաքին աշխարհի հետ անկէ յարստերուքէն խզուած է: Սենեակ մը եւ սրան մը ունի. անկը անյոյճափ: Թող չեն սար իրեն երբեք որ՝ պարտգին մեջ պսրսի: Իրեն արգիզուած է՝ Վասիորի վրայ հաստատուած այդ հրաշագեղ պարսին մէկ պատուհանէն երկիւնքը եւ ծովը դիտել: Ծովին եզերքը սխալ չեղի չկնի մը մեջ բնակիլ եւ գրկուած ըլլալ Վասիորը, Մարմարան եւ մշտակապոյտ երկիւնքը տեսնելէն: Եւփ-Եփնայ կը պատճառէ օր մը իր սերը հիւանդ ըլլալով, ստանոփսի անհանգստութիւն ունենալով, պիտի ունէր շիջ մը կազաւոր հանկայիլի ջուրի: Պիտի

տեսնուեցաւ Սուրբանէն հրահան ստեղծու: Տասը օր տեւեց անոր հրահան սաղ որ՝ իր մեծ եղբայրը այդ ջուրը գործածէ: Բայց, աւա՛ղ, Երջրդի մեջ բացած էին շիջը, հասկնալու հասար քէ իրա՛ւ ջուր կը պարտնակեր ան, յետոյ զայն ք. պ. գ. դրկած էին եւ կազը շոգիանալով, ջուրը իր բոլոր յատկութիւնը կորսնցուցած էր:

Ի՛ր սենեակին մեջ միս-միսակ, արտաքին աշխարհին հետ հարողակցութեան խզուած, Մուրս չէր կրնար նոյն խակ ո՛րեւէ քերթ, ո՛րեւէ հանդիս կարդայ: Ո՛րչափ ուրախ եղած էր այն գիշերը՝ երբ կրցած էր քանի մը տղ կարդայ բուրդի կտորի մը վրայ, որ Չրադակի պատերէն ներս քայտնուցած էր. պակիտի տուրի մը մեջ:

Սեղանիսին կեփեհիսի զաւակները այդ նոյն բանի մեջ ծնած մեծցած են: Անոնք ոտերկիւն դուրս դրած չեն. անոնք չեն գիտեր քէ ի՛նչ է կեանքիսին, կառքը, շոգեմալը. անոնք ծովին երեսը տեսած չեն:

Դժբաղդ Սուրբանը ինք անձնապէս դասխարակած է իր զաւակները: Բարեբաղդաբար այդ պարսին մեջ երաժշտագիտ գերունի մը մնացած է: Օրինակի հասար, անոնք մեծ դժուարութիւնով ձեռք կը բերեն մասիս մը, բուրդի կտոր մը: Մուրս Երէ իր կօրերը երկար ասեմ գրած է անագի կտորով մը՝ գործ բրցուցած է շիջի մը քերտէն:

Բարեբաղդարար, անցած սարի, գնեռեցաւ Սասնի Չափուշ անունն ազնիւ անձ մը, որ իրեկց մասիսներ եւ սուս բուշք բերաւ, եւ միևջեւ անգաւ, երբեմն Թանի եւ Տեպաի քիւեր:

Չրադանի պարսիկն մեջ, Ապսիւշ-Համիս գեեեդած է 300 զինուոր, 50 սպայ եւ ոսիկսններ, զանրեկեց Վեհապետին վրայ հսկեղա հասար:

Այդ բոլոր պահապանները անշնորհիներ եւ դարձաններ եւ: Օր մը, սարաբաղդ միապետը, ներանցքե մը անցնիլ կ'ուզէր: Յանկարծ, պահապ մը կը ձայնէ. «Եսամֆ». եւ դուրը անոր երեսին կը գոցէ: Ուրիշ օր մը, Մուրուս Եբէի կիներեկն մեկը կը մեռնի: Ապսիւշ-Համիս չի հասար ասոր: Կնոջ դիմիլը կը նեխէր եւ զայն չէի նուզէր բաղէր: Գուր-սիկն նես հստորակցեղա միջոց չի կար: Հոնը գար-չեղի կը դառնար. նայն իսկ պահապանները չէի ներևար տկար անոր. այն ասե՛ն միայն Ապսիւշ-Համիս կը գրայ անոնց եւ հրաման կ'ընէ որ կիւ-գիշերուն զաղսնապիս կիսարուի բաղուէր... կոյւ-րունիի մը:

Ծաղկախոյ կը ձարսիկը Չրադանի պարսիկն մեջ: Մաներ կը պատմէիս հոն: Մուրուս Եբէ, իր սողիկը, իր սրան, իր կիկը, իր գերունիները սաղ-նապի մեջ էիս: Ո՛չ բժիշկ կար, ո՛չ դեղ, ո՛չ ալ

զանոնք կ'արտոնէիս այդ վարսիւրած յնարանէն դուրս ելլելու: Տագնապանեմ, չէիս գիտէր թէ ի՛նչ ընէն: Խեղձ կիկերը կը ձջէիս. ո՛չ մեկը կը ընէր իրեկց ձայնը: Երբ կը փորձէիս դուռները կոտրէ, պահապանները զանոնք մասնախոռոց մը կը քիտիս: Մեկ բառով, դժոխք մը դարձած էր հոն: Եւ դուրսը ո՛չ մեկը կրնար գտնաբեր մը կազմել իր-կան Սուրբանիկն ստուպակներուն վրայ: Օհ, ի՛նչ սարսափելի բան, ի՛նչ վայրագութիւն, ի՛նչ խայ-ստակութիւն... Մարդ մը ապսնէ՛ր, բան մը չէ ադ-բայց այսպիս արքնոջ սարիներ բոնասանցի, զար-ջարե՛ր, հարածե՛ր անմեղ Սուրբան մը, Խալիֆա մը, իր արքունիքիս եւ ընտանիքիս հետ, վայրագութեան ընձանն է ադ: Միևջեւ անգաւ Ներուն ա՛յնչպիս չէր երկարէր այն զարջարակները, որոնց կ'ենթարկիր սուսիկն ֆրիսոնեաները: Ներուն զանոնք շնոգայ-չերուն սոցեղը կը նեխէր եւ ա՛յնչպի. միևջեւ Հա-միս, իր սեղար եւ անորակի վայրագութիւնովը, կը գերազանցէ Ներունները, Փիկնայիները, Կալիֆու-զաները, Իփսնները եւ ստոնց նեխները:

Օր մը, իր անկողինիս վրայ նստած, Մուրուս գրուիլը ձեռքերուն մեջ առած էր եւ մեռնաբար իր անձնուէր գերունիս՝ Նեղ-Նիկայի կ'ընէր.

—Ո՛վ սիրելիս Նեղ-Նիկայ: Ես, թերեւս, արժանի

եւ ձակասագիրիս: Բայց ես կը խղճամ շուրջս զսնունդ
 ականդ եւ անվնաս մարդոց վրայ, որով միայն իմ
 երեսու եւ ինծի հասար կը ստուային: Որչա՛նի դժ-
 բաղդ էք դո՛ս: Իմ քազաւորութեան օրով բան մը
 չկայեղեցիք: Ես հիշանդ էի եւ չկրցայ ձեզի բան մը
 ընել: Հիմա կարող չեմ ձեզի փարս՝ մը իսկ սարս,
 չնչին նուէր մը ընծայելու. եւ ըսել թե՛ ես Սուրբան
 մըն եմ, Օսմանի ընտանիքին շտապիղներէն Սուրբան
 ներս գաւակը, բոռը, բոռներուն բոռը:

Դժբաղդ գերի Վեհապետը չկրցաւ զայն արցունք-
 ները: Եկի՛-Ելի՛նայ ականո՛ս քեր ինկաւ հեծկցարով:
 Սեպտեմբերին եփեկսի փազն ականց իմ: Անոնց միշտ
 մեծ էր: Երբին Վեհապետութեան անկողինը խեղճ ու
 կրակ բան մըն էր. ոտնամանները ծակծկած էին եւ իր
 բնակած սենեակը կը հոսէր: Խոնքո՞ւ ջուր չուէր: Սուր-
 բանունիներէն մեկը, Մուրս ԵրԴի աղբիկը, ջրակարե
 մը փաշտած ջուրը հին դուռները եւ պատնիսները
 փակելով կ'առայէր եւ խնդրու ջուր կը հայքայքէր
 հօրը: Տա՛նապիս՝ ո՛րեւէ դրամ չուէր իր տրամադ-
 րութեանը սակ: Իր գաւակներէն մեկուն ծնունդին
 ասէն, պիտի ունեցած էին դայեակ մը կանչելու. բայց
 ինչպիսի վճարեղ ական: Դժբաղդ Սուրբանը, աչերը ար-
 ցունքով լեցունած, դայեակին խնդրած էր ընդունիլ էր

իմ մնացած ցիսի մը եւ ական ըսած էր. «Անտրո՛ւլ
 եմ, բայց փարս մը իսկ չուէր»...

Մուրս կը յիշէր իր անցեալ կեանքը, իր պեր-
 ճանքը, իր Եւրոպա ճակատորոյթները, իր պերճաւոր
 արկածները, իր բարեկամները եւ բարեկամունիները,
 իր ներքին կեանքը, եւ կու ըսէր: Իր ժամանակը կ'ան-
 ցընէր գաւակներուն դաս սարով:

—Դո՛ս իմ երեսու է որ դժբաղդ էք, կ'ըսէր
 ականց:—Ու Մուրսի գաւակները իր վիզը կը նե-
 ուէին, գորովագին կը գգուէին զինքը, չնչեղ ու՛
 չէին ուզէր իրեն բաժնուիլ:

—Ես ի՛նչ էի ըսած իմ եղբորս՝ Ապիսիւ-Հաւիսին,
 կ'ըսէր ինքնիրեն Մուրս ԵրԴ: Անտանայցիսի չարիք
 մը հասցունցած եմ ես իրեն: Երբ մեկն դեռ իշխան
 էիք, ական վրայ կը խնդային, զայն իմանա՛ն, ազան
 եւ ծածկալիս կը զսնեին... Միայն է՛ս վեհանձն էի
 իրեն հանդիպ: Միայն է՛ս էի որ եղբոր տղ կը դնէի
 զինքը: Եւ ան՝ զիս կը բանտարկէ այս աշխարհի
 հետո՞ւ առանձնանցիկ մեք, թշուառ, բարեկամ
 գուրի, սպրեղու միջոցներէ գուրի: Օ՛հ, ես այս դա-
 րուն անտէնէն դժբաղդ էակն եմ, իմ արփայացելիս
 անտէնէն տարբաղդ Սուրբանը: Երբ եղբայրս ի՛նչ մը
 մարդափարի ըլլար, պիտի էր զիս կախել սալ հրա-
 պարակի մը վրայ, եւ երբ ես տեսնէի կախաղանը՝

պիտի պօռայի թե՛ եղբայրս գրասիրտ է: Այս չար-
չարանքը իմ ուժերես վե՛ր է: Հաւաստեցնուժեան
ամենեւնի գեռ ժամանակներուն մեզ իսկ՝ մարդիկը
ա՛յսչափ չէին չարչարէր: Երջանի՛կ են մահուան դա-
սապարտուածները. երջանի՛կ են անոնք՝ որոնք թուա-
ռութենէ կամ արկածէ կը մեռնին. երջանկութի՛ւն
է նոյն ինքն մահը:

Իմ կեանքս ո՛րչափ երկար է եւ կեանքի՛ն երկա-
րութիւնը ի՛նչ անսանելի բան է...

Կը յիշեմ Թիւլեյրիի պալատին մեզ երեկոյց
մը, Նափօլէօն Գեշը իր շէնդութեան մեզ եւ Ֆրան-
սացիներուն Էօթենի Կայսրուհին, խոռվիչ աչե-
րով այդ հմայիչ Սպանուհին, կը յիշեմ այն պե-
նանքը, այն ընկերութիւնը, Բարիզի շողոզուն
Յուցահանդէսը՝ ուր բոլոր Վեհապետները մեկ-եղ
եկած էին, Եւրոպայի քաղաքներէն, իր ազատ
կեանքը. եւ այս բոլորը կը բաղդատեմ իմ այսօ-
րուան թուառ կեանքիս հետ, ամեն բան ցնորք է,
եւս՛գ է. այդ բոլորը գոյութիւն չունի: Թշուառու-
թիւն, բանտարկութիւն, դժբաղդութիւն, բնա-
ջնջո՛ւմ, ուրացո՛ւմ, անա՛ իրականութիւնը, նեմարիտ
իրականութիւնը: Իրականութի՛ւն: Ի՛նչ արհամար-
հելի՛ բան: Ես կ'ատե՛մ, կ'անիծե՛մ զայն:

Այս բաները խորհելով, Մուրատ Եշ կը կորսնց-

նէր իր միտքի պայծառութիւնը: Եւ իր հօրեղբօր՝
Ապսիւ-Ազիզի ուրուականը կը վրդովէր զինքը:
Երբ կը խորհէր անոր անձնասպանութեանը եւ
եղեքական վախճանին վրայ, նորէ՛ն խելքը զլուխէն
կ'տրբար: Ինքզինքը դաւաղիրներուն մեղսակիցը կը
նկատէր եւ կը գոչէր.

—Այո՛, այո՛, ես արժանի՛ եմ այս հակասա-
գիրին: Ինչո՞ւ ես օժանդակեցի Միւքերնիմներուն,
Մոքիասներուն, Հիւսէին Ավնիներուն, այդ ոմրա-
գործներուն ծրագիրին: Ինչո՞ւ ես ըմբոսացայ իմ
Վեհապետիս իշխանութեանը դէմ:

Վեջապէս, Միւրդի Իռեմ, Մուրատ Եշի ար-
հուհիին այդ գերուհին, ինծի տեղեկացուց. ես
հիմա գիտեմ թե՛ ո՛վ է գահակալողը Օսմանլիներու
Կայսրութեան. ես կ'ատե՛մ զայն, այդ ոմրագործը,
այդ եղբայրասպանը, այդ անշնորհ անձը, իմ սու-
կումիս առարկան:

Ահա՛ ինչ որ պատմեց ինծի Նեվ-Նիհալ. ես հո-
գեհանջութենէս կու լայի, այս պատմութիւնը լսած
ատեն:

Գեռ լուր մը. Օրիորդ Տօմէ անցած օր մեռաւ
Բերա՝ Ֆրանսական հիւանդանոցին մեջ: Օրիորդ
Տօմէն մեզ ամենուս հանդէպ որչափ բարի էր:
Դուք մի՛նակնիդ չե՛ որ պիտի ողբաք անոր վրայ:

Նոյն հիւանդանոցին գրութեան փոքրեան մեկը ինձի դրկած եր ձեր հանչցած դերձակուհին՝ Տիկին Յակոբեանը, հաղորդելու համար թե՛ մեր սիրելի ուսուցչուհիին վերջին խօսքը եղած եր.— Միւրդի Իռեմ:

Ձեզի տեղեկացնելիք ուրիշ լուրեր չունիմ, սիրելի բարեկամուհիս: Հիմա ձեզի յանախակի նամակներ դրկելու միջոցը գտած եմ: Կ'աղաչեմ, փոյս, հեշտա՛կա, զիս մի՛ մոռնաք: Ես դժբաղդ աղջիկ մըն եմ՝ որ մխիթարութեան շատ պէտք ունի: Ո՛րչափ գոն պիտի ըլլայի, եթէ Թաիֆ աստուհի: Ինչ համարձակեալ եղանակի եմ, եղանակ՝ բառին բովանդակ առումով: Այս նամակը ձեզի բերողին հետ՝ ձեզի կը դրկեմ պարզ յիշատակ մը.— մասնի մը:

Ինձի նամակներ դրկեցեք, խիտ երկար նամակներ, հարիւրաւոր եջեր, գիրքերու չափ ստուար նամակներ, պատմեցե՛ք ձեր կեանքը, խօսեցե՛ք ինձի Հիմազի մասին: Այեկ կ'ընե՛ք եթէ ձեր կեանքին գաղտնի օրագիրը բռնե՛ք եւ զայն հաղորդե՛ք ինձի, ինձի՛, գրուելէ ա՛նմիջապէս ետքը: Ա՛յ օրագիրը ինձի համար ո՛րչափ հանելի, ո՛րչափ հիանալի պիտի ըլլայ:

Անկեղծօրէն եւ բոլոր սիրով ձեր բարեկամուհին, ձեր փոքր, ձեր գերին.

ՌԷԶԻՆ

Ի.

ՈՒՐԻՇ ՆԱՄԱԿ ՌԷԶԻՆԵՆ՝ ՄԻՒՐԴԻ ԻՐԷՄԻՆ

Սիրելի Միւրդի Իռեմս.

Ո՛րչափ պէտք է երջանիկ եղած ըլլաք Թաիֆի ձեր տունին մէջ, ձեր ամուսինին քով, ազատ եւ անկախ, հետո՛ւ լրտեսներէն, հետո՛ւ վարդապետապաններէն: Եւ ես ո՛րչափ դժբաղդ եմ այս վեհապանձ պալատին ա՛յնչափ պերճանքներուն եւ ա՛յնչափ ճոխութիւններուն մէջ: Ինձի՛ անհանգուրժելի կու գայ այս անկերջ բանտարկութիւնը: Մինչեւ անգամ դատապարտեալները յոյս մը ունին. անոնք օր մը պիտի ազատ արձակուին, մինչդեռ ե՛ս՝ երբե՛ք: Այս շարժում մեր վեհապետը նոր տխրոս մըն ալ չահեցաւ, Միթնատ փաշաի սպաննիչի տխրոսը: Մեր վեհապետը ա՛լ այդ մարդուն գոյութիւնը բացարձակապէս չէր ուզեր. ո՛չ ալ կ'ուզէր Միթէրճիմ. Բիւշտի փաշան եւ միւս բարեկարգիչները: Սուլթանը զստոնք կը վնտոնէ, կը գտնէ, անխնայ կը մահացնէ զանոնք, հուրի եւ սուրի միջոցով կամ իր մեքենայութիւններով:

Այդ վարչապետը, իր երկրորդ եպարքոսութեան ատեն աքսորուած, ատանց դրամի, ատանց եկամտաւոր ամբողջ եւրոպան պտղտելէ հաքը, ուր

ասկայն միշտ լաւ ընդունելութիւն գտած էր Արեւմուտքի թագաւորներուն և օրուան մեծ մարդոց կողմէ, Ապտիւլ-Համիտի կողմէ ներուժի արժանացած էր: Իր ընտանիքին հետ խաղաղօրէն Հանիա կը բնակէր: Հակառակ իր խելացիութեանը՝ այս կէտին մէջ սխալեցաւ: Թուրքիա դարձած ատեն, պէտք էր Սուլթանին պաշտօնական և ստոյգ երաշխաւորութիւնները ապահոված ըլլալ: Ձինքը Սուրիաի կառավարիչ անուանեցին, բայց հոն, Դամասկոսի մէջ, անվերջ հայածեցին: Անոր կեանքը անտանելի դարձուցին: Հրաժարեցաւ իր պաշտօնէն, բայց Սուլթանը ականջ չի կախեց: դատապարտուած էր թագաւորին կամքին անսալու:

Կառավարիչութիւն թէ տանջանք: Օ՛հ, աւելի տանջանք՝ քան կառավարիչութիւն: Միթ՛հատը փոխադրեցին Իզմիր: Հո՛ն ալ, հանգիստ չձգեցին զինքը. կը հալածուէր լրտեսներու ամբողջ գումարտակներու կողմէ:

Սիրելի բարեկամուհիս, Ապտիւլ-Համիտ, չա՛րունակ իր հալածուելու մենամուկութեան տիրապետութեանը ենթակայ, չէր դադրեր զառանցել թէ՛ Միթ՛հատ և Բիւչտի դաւադրութիւն մը կը սարքէին իրեն զէմ: «Այս մարդիկը, որոնք սորված են Թագաւորներ գահընկէց ընել, կ'ըսէր ինքնիրեն. կ'ընայ ըլլալ երբեք որ զիս զիրքիս վրայ ձգեն. կ'ընան հանդուրժել ինքնակամ և քմահաճ Սուլթան մը, ա՛յնչափ ետական միապետ մը»: Միթ՛հատ, Իզմիրի մէջ՝ ուր կառավարիչ էր, կէս-

գիշերուն, քնացած ատեն, իրեններուն քովէն ձերբակալուած է: Ամօթ մեր ազգին, մեր կառավարութեան, ամօթ անո՛ր՝ զոր իբր մեր վեհապետը կը յարգենք: Հոչակաւոր ձէվտէթ փաշաի պէս բարձրաստիճան պաշտօնատարներ, Սուրուրի էֆէնտին և այլն, դաւեցին մեր Սահմանադրութեան հայրերը եղող ամէնէ՛ն մեծ անձնաւորութիւններուն զէմ: Արդէ՛ն կատարեալ ոճրագործ Սուլթանը քաջալերեցին և դիւրացուցին անոր գործը: Չերբակալուելով և Չատըր-Քէօչկը տարուելով, այս նախարարը գթալի վիճակի մը մատնուեցաւ: Ապտիւլ-Համիտ ուզեց դատապարտել Միթ՛հատը, իր հարազատ փեսան՝ Մահմուտ փաշան և ընկերները. և այդ բանը ուզեց ընել օրէնքով: Օրէնքները որչա՛փ տկար են բռնակալի մը զէմ: Ահաւասի՛կ թէ ի՛նչ խելքեր մտածեցին անոնք, սիրելի Միւրդի Իռէմս, քու տարաբաղդ տիրոջդ՝ Ապտիւլ-Ազիզի անձնասպանութենէն հինգ տարի ետքը:

Այնպէս ձեւացուցին թէ՛ Ապտիւլ-Ազիզ անձնասպան չէ եղած, այլ զայն սպաննա՛ծ են, իր շուրջը գտնուողներուն՝ իր կիներուն, իր գերուհիներուն աչքին զէմը: Բայց ի՛նչպէս ընէին որ յաջողէին հրապարակել այս դաժանօրէն եղերական կատակերգութիւնը, այդ թշուառները մահացնելու համար: Ապտիւլ-Համիտ ինքն իր գլխուն, իր գաղափարին համաձայն, կազմակերպեց եղեռնը: Ոճրագործները ընտրուած էին. Միթ՛հատ և Միւ-

Թէրճիմ ալ մեղսակիցներ էին, վիաներ, ականատեաներ, և այլն, Ամէն բան պատրաստուած էր, տեսարանը սարքուած. նոր թատրոն մը, ո՛չ, սխալ ըսի, հրապարակային նոր ատեան մը կազմուեցաւ Մայթա-Քէօչկի մէջ, ուր պիտի խաղացուէր այդ եղերերգութիւնը, ներդուժի՛ւն, ուր տեղի պիտի ունենար գատավարութիւնը: Արգարութիւն, օրինապաշտութիւն, օրէնք, արգարադատութիւն, այս բոլորը վտարուած էին այդ ատեանէն. նորին Վեհափառութեան գլխաւոր գաւազակիցները, իր մտերիմ լրտեսները, իր քարտուղարները, որոնց մէջ նաեւ Բաղդապ, այդ կատակեղութեան մէջ փոխ-գատաւորներու, ղեւանադպիրներու, և այլն զերը կը կատարէին:

Անամօթը: Ինչո՞ւ զանոնք չէր կախեր պարզապէս. բացէ-բաց: Ինչո՞ւ զանոնք այդ ատեանին առջեւ կը հանէր, ա՛յնչափ հանդիսականներու, օտարներու. քաղաքակիրթ աշխարհին առջեւ: Կրնար զանոնք սպաննել, կրնար գաղտնապէս թունաւորել:

Եւ ըսել թէ՛ պաշտօնապէս սահմանադրական ազատութեան վարչութեան մը տակ կ'ապրինք: Ատեանը Սուլթանէն որոշ հրահանգ ստացած էր՝ իր արձակելիք վճիռին մասին: Ինչո՞ւ ուրեմն ամբողջ աշխարհքին կը ցուցադրէին այդ ազնիւ նախարարները, այդ անմեղները: Սուլթանի մը կը ներուխ՝ անպատուել, ի՛նչ կ'ըսեմ, այլսանդակ մտածուժով մը անպատուել փորձել մեր երկիրին

միակ վարչագէտները: Ինչո՞ւ Ազգը չլմբոտտանար մինչ Անգլիական Խորհրդարանը կ'ապստամբի այն կատակերգութեան ղէմ՝ զոր Մոլոյժ Սուլթանը մայրաքաղաքին մէջ իսկ կը խաղցնէ: Ի՛նչ ամօթալի կերպով անտարբեր ազգ: Վայրի անասունի մը պէս կը խոշտանգեն Սահմանադրութեան հիմնադիրը, լաւագոյն վարչագէտները, վերջապէս անո՛նք՝ որոնք պատիւ կը բերեն դարուն՝ և երկիրին, և ժողովուրդը չի՛ բողբեր: Այդ Երբորդի պալատը հաւատաքննական ատեանի մը և բանտի մը փոխակերպուած է:

Պարտէզին նկուղները գերեզմանոցներ են: Հոն կը թաղեն անմեղներ, հայրենիքին լաւագոյն գաւակները, և մա՛րդ բան չգիտեր, մա՛րդ չհամարձակիր հաշիւ պահանջել մենագարի մը, անբան վայրենիի մը արարքներուն համար:

Վերջապէս, սիրելի Միւրդի Իւէմա, Միթհատ և իր ընկերները, իր բարեկամները այդ կատակերգական ատեանին կողմէ գատապարտուեցան, սպաննած ըլլալուն համար... Ապտիւլ-Ազիզը!

Հանգուցեալ Սուլթանին մայրը, կիները, սիրականները տակաւին կ'ապրին: Անոնցմէ ո՛չ մէկը հարցաքննուեցաւ: Դատաւորները միայն կատարեցին այն զերը՝ զոր Սուլթանը իրենց սորվեցուցած էր: Հիմա, երէկուան դժբաղդ Մեծ-Եպարքոսը և այսօրուան գատապարտեալը դողի մէջ է. կը սպասէ վճռական վայրկեանին.

Մեծ հաւանականութիւնով հրապարակի մը

վրայ պիտի կախուրի : Բայց կ'ըսեն թէ՛ Անգլիայի Դեպարտմենտը ստիպողաբար այդ անմեղին արձակուժը կը պահանջէ : Միթէ՞ ստի կարծեցեալ մեղսակիցը : Միւթէրճիմ Ռիւչտի փաշա, այդ նախկին Մեծ-Եպարքոսը, որ Մադնիսա արքայութեան էր, մինչեւ հոս չէ կրցած հասնիլ՝ դատուելու համար. ճամբան Իզմիրի բանտին մէջ մեռած է ան : Այդ շինծու դատարանին մէջ, վիճարանութիւններու միջոցին, ինչ հակասութիւններ, ինչ խայտառակութիւններ, ինչ գայթակգութիւն : Այս բոլորը ինծի պատմեց խեղճ ներքինին՝ Ղանի աղա, ձեր բարեկամը, որ ձեզ իմ ջերմ յարգանքները կը զրկէ :

Ապտիւլ-Համիտ այդչափով ալ գոհացած չէ գեռ : Մըչափ աստե՛ն որ Միթհատ ողջ ըլլայ, ո՛րչափ աստե՛ն որ իր յիշատակը կենդանի մնայ, այդ մարդը պիտի տառապի : Ան մշտնջենական վախի մը մէջ կ'ապրի : Ամէ՛ն մարդէ կը կասկածի ան, իր է՛ն աղէկ կիներէն, ի՛ր իսկ անձէն :

Ասկէ ետքը, ան դատապարտուած է իր իշխանութիւնը քաշքշկու՝ դաւ դաւի վրայ բարդելով : Իր բոլոր հպատակները իր գործակալները դարձած են : Բարձրագոյն Դուռը, կառավարութիւնը, ամէ՛ն ողջմտութիւն կորսնցուցած են. անոնք պաշտէն իրենց ստացած այլանդակ հրամաններուն միայն կը հպատակին կուրորէն :

Այս միջոցին, այս Կայսրութեան մէջ, Մեծ-Եպարքոսը, նախարարները, զօրավարները, պաշտօնատարները, ուրիշ մտատուք չունին, բայց

եթէ կուրարար հնազանդիլ այս խորշկի խնկթին հրամաններուն : Այս մենագարը միանգամայն Սուլթան և Մեծ-Եպարքոս է, դատաւոր և պաշտօնատար, լրտես և գործակալ, ամէ՛ն բան : Դաւաղրութիւնը՝ իր կեանքն է : Լրտեսութիւնը իրեն անյափ անհրաժեշտ է, որչափ չնչառութիւնը կենդանի էակի մը : Իր խելքով, աշխարհը ուրիշ բան չէ՛, բայց եթէ վիթխարի դաւաղրութիւն մը : Կառավարութիւնը, հանրային գործերը, քաղաքականութիւնը՝ ուրիշ ո՛չ մէկ բանի այնչափ օգուտ ունին, որչափ դաւաղրութիւններու՝ իր իշխանութիւնը կանգուն պահելու համար : Երկու բանէ կը վախնայ. գահընկէգութենէն և սպաննուելէն : Մաղթե՛նք որ օր մը գահէն վար առնուի և սպաննուի :

Վերջին ուրբաթ օրը, Հարէմի պարտէզին մէկ շատ անձանօթ անկիւնը, իր քովն էի : Կը վախնար հովին չչնչունէն, աւազանին գորտերուն կռկռոցէն : Խոհուն, գաժան ու անզգայ կը կենար. իր հետեւորդ կիներէն ոմանք նուազ կը զարնէին : Ուշադրութիւն իսկ չէր ընել նուազին. խելքը ուրիշ տեղ՝ կը մտածրագրէր նոր դաւաղրութիւն մը, անշուշտ Մէֆիսթօֆէլեան նոր խորհուրդ մը :

Իր ներկուած մօրուքը, իր պճտուն աչքերը, իր կեռ քիթը, իր ոսկրեղ մարմինը, իր թաւ ձայնը, իր գոռոզ շարժուձեւերը՝ իրեն կու տային արիւնքսի մը, կորճի մը երեւոյթը : Ան կենդանի առեղծուած մըն է : Իր կիներուն ո՛չ մէկէն լրջօրէն

սիրուած է: Էարեբաղդութիւնն որ՝ ես իր կիներ չեմ և պալատին մէջ իբր չար և քմահաճ անուն հանած եմ:

Ա՛հ. եթէ զիս ելլարգէն փախցնէին, եթէ ես կատարեալ ազատութեան տիրանայի, անմիջապէս Թաիֆ կը թռչէի, ձեր քովը, ո՛վ իմ բարեսիրտ, խելացի և անուշ Միւրդի Իռէմս: Ես կը նախանձիմ ձեր ազատութեան, ձեր երջանկութեան: Այս նախանձութիւնը բառին սովորական իմաստովը մի՛ հասկնաք: Ո՛չ, միայն թէ կը բաղձամ որ՝ ձեզի չափ ազատ, ձեզի չափ երջանիկ ըլլամ: Պալատին մէջ ես ո՛չ մէկ բարեկամ ունիմ, թողէ՛ք որ պալատին մէջ լրտեսներ միայն կան հիմա և օրէ-օր աւելի կը խստացնեն մեր վրայ հսկողութիւնը: Իմ բոլոր նամակներս ձեզի կը զրկեմ Օրիորդ Շնայտէրի մեջոցով, պալատին ատամնաբուծը, չնորհալի և համակրելի ձրանսուհի մը: Շատ հազուադէպ կերպով կը ստանամ եւրոպական թերթեր և հանդէսներ:

Օր մը, պայուսակներուս մէջ գտան ժիւլ վէճնի գիրքերը... Անմիջապէս կենդանիներու գառագեղին մօտը գտնուող արգելարանը տարին զիս: Հոն երկու օր զիս հարցաքննեցին: Դահլիճները այս անգամ բաւականացան խարազանի տասը հարուածներ տալով և ա՛յդչափ: Չեր նամակները, այդ սիրուն գլուխ-գործոցները, այդ հմայիչ արձակը, անմիջապէս կը ջնջեմ: Ի՛նչ անսովոր դժբաղդութիւն. ինչո՞ւ օրինակները չէք պահեր: Զնջել

ձեր նամակները, սիրելի Միւրդի Իռէմս, արուեստի դէմ բացարձակ ոճիր մը գործել է: Այսօր սիրտս գէշ եղած է: Խեղճ Միթհատի դատապարտութիւնը զիս դառնօրէն վշտահարած է: Որո՞նք բռնամ սիրտիս դաւը: Ա՛հ, ի՛նչ կ'ըլլար եթէ զիս Թաիֆ աքսորէին: Ելլարզ գտնուող երիտասարդ գերուհի մը համար՝ Թաիֆը երկրային դրախտ մը պէտք է եղած ըլլայ, երանութեան լրուժը, խտեղ վայր մը, այնպէս չէ՞, ամենասիրելի բարեկամուհիս: Ես կը սիրեմ այդ տեղը, առանց տեսած ըլլալու, որովհետեւ դուք հո՛ն կը գտնուէք. ես կ'ուզէի հո՛ն մեռնիլ, բայց մանաւանդ հոն ապրել: Պոլիս, պալատին մէջ, գերուհի մը, կը ծնի, կը մեծնայ, տիրոջը հետ կը կարգուի, կը տառապի, կը մեռնի, միշտ ծածուկ, աննշմար. զայն գիչերանց կը թաղեն. և վերջագա՛ւ. մոռացուժը յաւիտենական կ'ըլլայ: Իր կեանքը կը սահի առանց բարեկամի, առանց սէրի, իրեն համար ո՛չ մէկ սիրտ կը բարախէ, ո՛չ մէկ հողի կը սարսուռայ իր հողիին հետ. Սուլթանը այդ բանը կ'արգիլէ իրեն: Մէկուն չի՛ պատկահար ան. եթէ թագաւորը կարենար՝ միտքի՛ն ալ անազատագրելի սահմաններ պիտի դնէր:

Եթէ այս բովանդակ աշխարհին կայսրութիւնը ինձի նուիրէին՝ կարմիր Սուլթանին հետ կարգուելու պայմանով, այդ նուէրէն պիտի հրաժարէի: Օ՛հ, աղւճր Միւրդի Իռէմս, ինչպէս ձեր անկողինին մէջ հանդուրժեցիք այդ կոշտ մարդը: Ըշմա-

բիտ սէր կրնա՞յ ունենալ ան: Շատ կը տարակուսիմ ատոր: Իր կիրքը բոլորովին անասնական ըլլալու է: Ես կը վախնամ իրմէ՛: ատոր համար է որ խնամք չեմ տանիր արդուզարդիս և ներկ չեմ քսուիր: Ես՝ կայսերական կանանոցին ամէնէն տկեղ, ամէնէն տձեւ արարածը պէտք է նկատուած ըլլամ:

Անցած օր, Ղօնչէ Ֆէմ սրբողած էր ինծի և երեսիս կը պօռար. «Միւրդի Իռէմ շո՛ւն»: Վերջերս Սուլթանին համակրութեանը արժանացած աղջիկ մը՝ որ Ֆրանսերէն անուն մը առած է վրան՝ «Ռօսսինեօը»՝ կը հարցնէր անոր. «Ի՛նչ ըսել է Միւրդի Իռէմ»:

«—Օ՛, սիրելի պզտիկս... պատասխանեց անոր Ղօնչէ Ֆէմ, ատիկա կին մըն է՝ որ Միթհատ փաշաի մեղսակիցն է և որ անոր հրահանգներուն վրայ՝ կ'ուզէր մեր յարգելի տէրը սպաննել: Ամէնէն անիծեալ կինն է ան՝ որ երբեք գոյութիւն ունեցած ըլլայ»:

Եւ ես, ձեր խեղճ Ռէզինը, կ'ըսէի ինքնիրենս.—
Ստախօս, զաւա՛ճան: Միւրդի Իռէմ մեր սեռին ամէնէն կատարեալ տիպարն է, ամէնէն անուշ, ամէնէն խտէալ, ամէնէն բանաստեղծական հոգին. ազնիւ ողին՝ որ իմ մտածումներս, իմ երազներս կ'ոգեւորէ... Եւ Միթհատը: Միթհատ այն ճշմարիտ հայրենասէրն է, այն հազուադէպ վարչագէտը՝ որ գիտցած է երկիրը օժտել այնչափ օգտակար հաստատութիւնով մը, Սահմանադրու-

թիւնով մը, որ աւա՛ղ, այսօր ջնջուած է, Կարմիր Սուլթանին, ոճրագործ Սուլթանին կողմէ ոտքի տակ առնուած է: Եւ զո՛ւն, Ղօնչէ Ֆէմ, կայսերական Հարէմին սարսափն ևս դուն, նենգութեան, վայրագութեան, սուտին կենդանի արձանը. դուն քու հօգիովդ՝ կը մարմնացնես տիրոջդ՝ Ապտիւլ-Համիտի նկարագիրը:

Տխուր եմ, հրեշտակս, և բաժանումիդ համար չեմ կրնար մխիթարուիլ. ինչպէս Քալիփսօ չէր կրնար մխիթարուիլ Բելիսի համար... Ո՛ւր կրնամ արդեօք գտնել ձեզ, ի՛նչպէս մինչև ձեր քովը գալ. ի՛նչպէս անցնիլ այն անջրպետները, այն ծովերը. կա՞յ արդեօք միջոց մը: Ո՛րչափ կ'ուզեմ թռչուն մը ըլլալ, թռչելով գալ ձեզ վերագտնելու համար, այդ հեռաւոր երկիրներուն մէջ: Ես կ'ուզէի ըլլալ այն պարիկներէն մէկը՝ որոնց համար ժամանակը և անջրպետը գոյութիւն չունին: Կ'ուզէի ըլլալ Հազար եւ մեկ Կիշերներու հէքեաթներու անձերէն մէկը, որոնք այնչափ դիւրութիւնով հրաշալի գործեր կը կատարեն.

Եւ արդեօք ձե՛ր յոյսերը և փափաքները ի՛նչ են: Եթէ ձեր փափաքն է Պոլիս խաղաղօրէն ապրիլ ձեր ամուսնինն հետ, ստույգով և զայրոյթով վանեցէ՛ք ձեր միտքէն այդ գաղափարը: Նախընտրեցէ՛ք Ապառաժ-Արաբիաի հրախանձ բնութիւնը և անապառային կլիման՝ Վոսիորի անուշ զեփեւեռէն, իր երկնապաղ անթիւ գմբէթներով և մինարէներով Սթանպուլի հմայիչ տեսարանէն: Պոլիսը անիծուած քաղաքն է. ան միշտ այն անբարոյ Բիւզանդիոնն է, որ օրրանը եղած է

բոնապետութեան, բոնակալութեան և խորհուրդ-
ներու: Ես խօսքը լսել չեմ ուզեր այդ քաղաքին,
ոչ ալ իր սքանչելիքներուն: Իմ երազներուս, իմ
խոհունեանքուս քաղաքը Թափֆն է: Հոն է որ
պետի ուզէի ես ապրիլ. ես հոն է որ կ'ապրիմ
երեւակայութիւնով: Ես սիրով քրէական յանցանք
մը պետի գործէի, հոն աքսորուելու և հոն ձեր
քով ապրելու համար: Բայց կրնայ ըլլալ որ՝ զիս
ուրիշ տեղ աքսորեն, Ֆիզան, Սահարաի արեւա-
կէզ աւազուտ անապատներուն մէջ, կամ կրնան
զիս բանտարկել Սուրբ Ժան տ'Առքի ամրոցներուն
մէջ: Աստոր վրայ խորհած ատեն՝ կը սարսուսմ:

Կայսերական պալատներու բոլոր ջլպային կիները
արդեօք ինձի պէս կը խնայեան:

Կրցածուղ չափ յաճախ գրեցէ՛ք ինձի, սիրելի
Միւրզի Իռէմ: այս աշխարհի վրայ ես ուրիշ
միջիմարութիւն չունիմ, բայց կ'իմէ կարգալ, ան-
գուլ վերջնութեանու և գոց սորվիլ ձեր նամակները:

Ներսիսի ձեզի կը զրկեմ՝ մագերէս խուրձ մը,
լաւագոյն բան մը չունենալուս համար: Կ'ուզեմ
որ այս նուէրս փոխադարձէ՛ք: Հետեւաբար, թան-
կագին և ամենասիրելի քոյրս, ձեր մագերէն ինձի
փունջ մը զրկեցէ՛ք: Թերեւս անոր հօտը զիս իմ
մենութեանս մէջ երջանակացնէ. թերեւս ատով
վայրկեան մը իմ գերի կեանքիս դառնութիւնը
մոռնամ:

Կանխիկ շնորհակալութիւն. Աստուծո՛յ սիրուն,
Միւրզի Իռէմ, մի՛ մոռնաք զիս, այն կիներ, որ
ամէնէն աւելի հոգին նուիրած է ձեզ և որ ձեզ
անասնամանորէն կը սիրէ:

Ձեր անձնուէր բարեկամուհին
ԻՆԷՅԻՆ

ԻՍ.

ՄԻՒՐԶԻ ԻՌԷՄԻՆ ՆԱՄԱԿ՝ ԲԷԶԻՆԻՆ

Անուշիկ Ռէզինս.

Ճշմարիտ հաճոյքով մը ստացայ ձեր նամակները
և ձեզի հետ տառապեցայ զանոնք կարդալով: Իուք
ստեղծուած չէք Ապտիւլ-Համիտի կանանոցին կեան-
քին համար, ծառայելու այդ հրէջին, գտնուելու
այդ արտառոց մարդուն մտերմութեանը և չըջա-
պատին մէջ: Ճակատագիրը ատոր չէ՛ սահմանած ձեզ:
Միջնատը կը հալածեն, իր կուսակիցները կը կա-
խեն, աղջնակ մը կը դաշունահարեն, Հարէմի կի-
ները կը չարչարեն, կը մեռցնեն, ամէ՛ն վայրա-
գութիւն կը գործեն. Սարային միւս կիները կը
շնորհաւորեն Սուլթանը. անոնք ուրախ են: Միայն
զո՛ւք, ամենասիրելի Ռէզինս, դուք կը տառապիք:
Ստիկա կը նշանակէ որ՝ գերընտիր բնաւորութեան
տէր մէկն էք: Ի՛նչ սարսափելի բան. Ձեզի պէս
նուրբ, ազնիւ, բացառիկ հոգի մը, ձեր նրբակերտ
մարմինը, իր կիներուն գեղեցկութիւնովը հոչա-
կաւոր ցեղի մը ամէնէ՛ն կատարեալ տիպարը, մէկ
խօսքով, էակ մը՝ որ պատիւ պետի բերէր իր
սեռին, իր կեանքի ընթացքին մէջ չհանդի-
գիպի ուրիշ ո՛րեէ հոգիի, զայն հաւնելու, սիրելու
և պաշտելու համար: Ճակատագիրը կո՛յր է և
բնութիւնը ո՛րեէ նպատակ չունի, ո՛հ, ատոր կա-
տարեկապէս համոզուած եմ:

Անուշ ու վեհանձն հոգիներ կան, զգայուն և համակրելի էակներ կան, որոնք պէտքը ունին ձեզի՝ նման գաղափարային կնոջ մը, հմայիչ ընկերուհիի մը, պէտք ունին ձեզի տիրելու, ձեզի գրաւելու: Անոնք անկարող են ընելու այդ բանը, անոնք ձեզ չեն իսկ ճանչնար: Անդու՞ թա՛ն չէ՞ աս, անողոք չէ՞: Եւ ի՞նչ անուն տալ այն խորհրդաւոր ձեռքին, այն անձանօթ, ապուշ ուժին՝ որ մեզ կ'առաջնորդէ, չգիտցուիր ո՛ւր...

Ի՞նչ է այս կեանքը, այս ճակատագիրը, ըսէ՛ք ինձի, սիրելի և հրաշալի Ռէզինա, եթէ գիտէք, եթէ կրցած էք թափանցել այդ գաղտնիքին: Եթէ ճակատագիրը ինձի չի վերապահեր նոր անակնկալ մը, ես հոս Թաիֆի մէջ երջանիկ եմ, գերագոյն աստիճանով մը երջանիկ, իմ ամենասիրելի քոյրս: Տեղը ցամաք է. ան ո՛րեւէ ինքնատուութիւն, ո՛րեւէ մասնայատուութիւն չի ներկայացներ. բայց էմիր Աթէշ ինձի համար կատարեալ աշխարհ մըն է, այո՛, աշխարհ մը՝ կ'ըսեմ, իր սքանչելիքներով, իր գոյներով, իր առեղծուածներով, իր սիրուն կողմերով, իր պատմութիւնով: Ան ինձի համար խո՛հալ մարդն է, խո՛հալ ամուսինն է, խո՛հալ բարեկամն է:

Ապտիւլ-Համիտն ալ ամուսինս էր, բայց ան երբեք բարեկամս չէ՛ եղած: Անոր հետ իմ կապերս բոլորովին կ'զո՞ծ էին, կը վստահեցնեմ՝ ձեզ: Ճիշդ է որ՝ ես չէի թերանար անոր դուռանքներ չուայելու, զայն չյոյելու, զուարճացնելու, իր վիշտերէն մխիթարելու, բայց այս բոլորը չինձու էին: Անկէ

ո՛րեւէ հաճոյք չէի առներ, ո՛րեւէ ախորժելի զգայութիւն չէի ունենար: Ան, հակառակ ինձի չուայած ոսկիին, հակառակ այն բարիքներուն՝ որոնցմով զիս կ'ողողէր, իմ հարստահարի՛չս էր, իմ սպաննի՛չս, իմ բռնաբարի՛չս, եթէ կրնամ այսպէս արտայայտուիլ:

Ո՛րչափ դժբաղդ էք դուք, սիրելի և գեղանի Ռէզինա: Ես բոլորովին երջանիկ պիտի ըլլայի, եթէ ձեզ ճանչցած չըլլայի, եթէ չունենայի Ռէզին անունով բարեկամուհի մը, որ կը տատապի և որուն ճակատագիրը այնչափ տխուր է: Ահ, երանի՛ թէ իմ սիրտս բաւական ձգողական զօրութիւն ունենար և կարենայի ձեզ միտով-ոտիորով փոխադրել հոս, Արաբիաի այս կորսուած անկիւնը... Ես կը սիրեմ պարիկներու հէքեաթները, Հազար և մէկ գիշերները: Պիտի ուզէի որ ձեզի հետ այդ երեւակայական աշխարհներու բնակչուհիներէն մէկը ըլլայի:

Էմիր Աթէշ, ամուսինս, ճի՛շդ իմ բնաւորութիւնս, իմ զգացումներս, իմ մտածումներս ունի. այս աշխարհն մէջ աղ իմ միակ մխիթարութիւնս է: Դուք զինքը լաւ չէք ճանչնար: Մարգարէին վերարկուն համրուրելու արարողութեան օրը դուք հազիւ ընդնշմարեցիք զինքը: Ան ասպետական հոգիի և ազնիւ սիրտի տէր է. և կ'արհամարհէ ամէն բան: Ան մինչեւ անգամ մոռցած է որ Սուլթանը զինքը հեծկազուղի զօրապետի աստիճանին բարձրացուցած է. ան կը ծաղրէ աստիկա: Ատիկա իրեն համար ուրիշ բան չէ եղած, բայց

եթէ նոր առիթ մը՝ գաղափար կազմելու համար այն անհաւասարալիւծին մասին: Եթէ ինք յանցաւոր է, ինչո՞ւ այդ աստիճանը. եթէ յանցաւոր չէ, ինչո՞ւ այս աքսորումը, այս պատիժները, այս շարչարանքները:

Սուլթանը ճաշակ չունի: Տեսնել կեանքով և եռանդով լեցուն գեղեցիկ զօրապետ մը, իր շողջողուն համագրեատովը սքանչելի ձիու մը հեծած, անդխտադրելի հմայք մը կը պարզեւէ աս: Ուրեմն Սուլթանը ինչպէս կրցած է գոհել զայն, Հաւասացեալներու Խշխանին այդ ազնիւ շառաւիղը: Սուլթանը, իր հայածուելու մենագարութեան չտրջիւ, կարող է, հակառակ իր խտէալ հեշտասիրութեանը, գգուանքներու միջոցին, իր ամուսնական անկողինին մէջ կտոր-կտոր ընել կիներուն ամէնէն գեղեցիկը, Եւաի ամէնէն հրեշտակային աղջիկը, անոր ամէնէն գինովցնող զիրքին մէջ: Ատանկ է ձեր տէրը. այն որուն ծառայելու դատապարտուած էք: Գաղափարի մը համար ան հարածեց ա՛յնչափ նախարարներ, ա՛յնչափ մեծանուն մարդիկ. ան մեր յոյսերուն աղբիւրը ցամքեցուց. ան ամբողջ երիտասարդութիւնը շիտակ ճամբէն չեղեցուց: Ուրիշ գաղափարի մը համար, ան կարող է, Ներոնի պէս, կործանել ո՛չ թէ քաղաք մը, այլ իր բովանդակ Կայսրութիւնը մէկ ծայրէն միւսը, կարող է բնաջնջել իր ամբողջ հպատակները:

Ինչո՞ւ համար ճակատագիրը զայն սահմանած է տիրելու՝ արեւին տակ գոյութիւն ունեցող ամէնէն

գեղեցիկ երկիրներէն մէկուն վրայ: Ինչո՞ւ միւլունաւոր մարդկային էակներ զատապարտուած են կրելու իր բռնութիւնը, իր վայրագութիւնը: Այս բոլորը, սիրելի և անուշ Ռէզինա, յուսահատեցուցիչ է: Մայրաքաղաքէն, ինչպէս նաեւ Կայսրութեան ուրիշ մասերէն շատ գէշ լուրեր կ'առնեմ: Կացութիւնը հեռո՞ւ է պայծառանալէ, և, ինչպէս կը հաստատեմ, թագաւորին՝ հիւանդութիւնը կը ծանրանայ: Բոլոր Օսմանցիներուն երջանկութիւնը և ապերջանկութիւնը, աշխարհի խաղաղութիւնը՝ ստորագատուած են Ապտիւլ-Համիտի հիւանդութեան:

Աթէշ Ալիի հետ երկրորդ կեանքս շատ պարզ է: Ա՛յ զաւազրութիւններ, նենգութիւններ, կեղծաւորութիւններ, չարախօսութիւններ չի կա՛ն: Նախապատեական ամոլի մը կը նմանինք մենք: Մեր երկուքին հոգիները մէկ եղամ են հիմա. անջրպետները, մահը իսկ չեն կրնար բաժնել մեզ: Օ՛հ, Աթէշ Ալի Ապտիւլ-Համիտի չի նմանիր. ո՛չ մէկ մարդէ վախ ունի ան. ո՛չ իսկ աշխարհի բոլոր զաջնակից ուժերէն, ա՛յնչափ արխատիրտ է ան: Այս վերջին օրերը, կը յուսայինք փախչիլ. մինչև անգամ պէտք եղած գումարը ունէինք, արտասահմանի մէջ չի նեղուելու համար. բայց ո՞ւր երթալ: Մեզի պէս անձերուն, գործնական կեանքը, ընկերութիւնը, մեծ քաղաքներու շարունակական եռուզեռը, զրամի հարցերը, շահագործումները, զբաղումները չեն յարմարիր: Արկած-

ներով լեցուն մեր կեանքը՝ մեզ փիլիսոփայ, ժողովալ դարձուցած է. մենք Թաիֆի մենութիւնը, խաղաղութիւնը, այդ անդորրութիւնը՝ կը նախընտրենք բոլոր խրախճանութիւններէն, պերճանքէն, մեծ մայրաքաղաքի մը հանդիսութիւններէն, հզօր թագաւորի մը արքունիքէն: Մենք իրարու կը բաւենք, մենք կ'ուզենք այս կերպով երջանիկ ըլլալ: Ինծի համար ամուսինս ամբողջ տիեզերքը կ'արժէ և կը հաւատամ որ՝ ա՛ն ալ նոյն գաղափարը կը տածէ ինծի հանդէպ:

Օրէ-օր, արկածներս մոռնալով, առողջութիւնս կը լաւանայ. քիչ մը գիրցած եմ. բայց վստահ եղէք, միշտ նոյնն եմ:

Մեզի թող չեն տար կանոնաւորապէս երթալ Մէքքէն տեսնել: Բնդհանուր կառավարիչը մասնաւոր կայսերական իրատէ մը կը պահանջէ, և որովհետեւ մենք կը ջանանք որ կայսերական իրատէները հռչակողը մեզ կատարելապէս մոռնայ, ո՛րեւէ զիմում չենք ընել: Թաիֆի և Մէքքէի մէջ, մեծ ու պզտիկ բոլոր պաշտօնատարները, բոլոր սպաները, խիստ ցանցառ բազաութիւններով, լրտեսներ են, որոնք է՛ն ետքը վտանգաւոր տեղեկատուներ կը գառնան: Ամուսինս անոնց հետ կը խօսի հնարաւոր ամէ՛ն զգուշաւորութիւնով, ամէ՛ն վարուելագիտութիւնով, իբր թէ զիւրաւագէտի մը հետ խօսէր: Ես կը սիրեմ անձնիչխանութիւնը. անոնցմէ հեռու կը փախչիմ ու

անոնք և իրենց կիները՝ զիս մարդատեաց կ'անուանեն:

Ի՛նչ տխմարութիւն ըրի, Պոլիս եղած ատենս Ապտիւլ-Համիտը գիշեր մը իր անկողինին մէջ չի խեղդելու. կրնայի՛ր ընել այդ բանը: Այդ Սուլթանը իմ ոտքերուս տակ շունչը պիտի փչէր. թերեւս զիս պիտի կախէին. բայց ազգը, մինչև իր վերջին սերունդը՝ երախտապարտ պիտի ըլլար ինծի. Հայրենիքին մեծ ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլայի: Օ՛հ, ևս զինքը չէի ճանչնար ա՛յնպէս՝ ինչպէս որ էր. — մարդկութեան և երկիրին համար վտանգաւոր խենթ մը: Չմոռնանք որ, ևս զինքը չափազանց հակակրեկի կը գտնէի, չարաչուք անձ մը, սոսկալի քմայասէր մը: Եթէ Միթհատի սուտ դատավարութեան միջոցին պայտալը գտնուէի և եթէ ան գաղտնի տեղի ունեցած չըլլար, վստահաբար ևս անողոքարար պիտի խեղդէի այդ հրէշը. ևս ինքզինքս բաւական զօրաւոր, բաւական քաջ կը զգամ՝ ամբողջ ժողովուրդ մը բռնակալէ մը փրկելու համար: Ո՛րչափ կը ցաւիմ: Միւրդի Իռէմ մը ամբողջ ազգի մը փոխան՝ ի՛նչ արժէք ունի, սիրեկինս: Ե՛ս միայն կոչուած էի այդ տեսակ բարերար ձեռնարկ մը յաջողապէս գլուխ հանելու: Հարէմի միւս բոլոր աղջիկները կամք չունեցող ոչնչութիւններ էին, որոնք բա՛ն մը չէին զգար, բա՛ն մը չէին գիտեր. անոնք միապետին ձեռքին մէջ հաճոյքի գործիքներ էին միայն:

եւ դուք, Ռէզին չէք կրնար աշխարհին երև-
սէն վերջնել այդ մարդը: Այո՛, շատ ազէկ գիտեմ
որ՝ այդ սուրբ գործէն ա՛նմիջապէս հաքը պիտի
գլխատեն իմ վեհանձն Ռէզինս, այդ արարածը,
աշխարհի վրայ այդ եզական հողին, որ պատու կը
բերէ իր սեռին և ցեղին. բայց, ո՛վ բարեկամուէնս,
ևս ձեզմէ կը նախընտրեմ ազգը, հայրենիքը: Թե-
րեւս, սպաննութենէն հաքը անո՛ր՝ որ մեզ կը
նահատակէ, զանազան մարդիկ նոր վեհապետէն
ձեր անպարտ արձակուելը պիտի խնդրեն, և թերեւս
Բէշատ էֆէնտի պիտի բաւականանայ, զինքը զա՛նը
բարձրացնելէն հաքը, ձեզ Թաիֆ զրկելով: Այն
ատեն, մենք հո՛ս ալ կրկին զիրար պիտի գտնենք և
ևս ինքզինքս ծառայութեանը պիտի նուիրեմ անո՛ր՝
որ աշխարհը փրկած է, ևս անոր պիտի նուիրուիմ,
անոր գերին պիտի ըլլամ:

Ասոնք, ամենասիրելի Ռէզինս, օգային խօսքեր
և բանդագուշանքներ չե՛ն: Դուք կարող էք ամէ՛ն
բան ընել, կարող էք Թուրքը ազատել այն վիշա-
պէն, որ զայն կը կրծէ, կը մահացնէ:

Ինծի կը գրէք թէ՛ մեր սիրելի Օրիօրդ Տօնժէն
մեռած է: Որչա՛փ կը ցաւիմ՝ երկու օր լացի:
Ան ո՛րչափ անուշ, ո՛րչափ անկեղծ, ո՛րչափ կարե-
կից էր ինծի հանգէպ, այդ սիրտի տէր կինը, և ևս
զայն գորովագին կը սիրէի: Իմ հոգեկան տագ-
նազներուս և մեծ վիշտերուս միջոցին, այդ խե-
լացի դաստիարակուէին քանի անգամներ մխիթա-
րած է զիս, հարազատ մօր մը պէս հարազատ

քրօջ մը պէս: Ան միայն զիս կը հասկնար, ա՛ն
միայն կը մտնէր զիս կրծող ցաւը: Ան էր որ
առաջին անգամ ինծի ներկայացուցած էր Տիկին
Վէրնըրը, խելացի և չտրճալի Ամերիկուէին: Այդ
կինը այս միջոցին Գահիրէ կը գտնուի: Զմեռը հոն
պիտի անցընէ, ուսումնասիրելու համար այդ
երկիրին բարքերը և սովորութիւնները, և մաս-
նաւորապէս եզիպտացի կինը: Բնագութիւն նամակ-
ներ կը ստանամ անկէ: Անշուշտ պիտի գար զիս
գտնել Թաիֆի աքսորանքիս մէջ, բայց ինչպէս
որ գիտէք, Հիւնազի հողին վրայ ո՛չ մէկ քրիստոնեայ
կրնայ ոտք դնել, բացի ձիտտէի նաւահանգիստէն:

Օրիօրդ Տօնժէի և Տիկին Վէրնըրի հետ մեր
տեսակցութիւններէն, մեր ասուլիսներէն, մեր
սքանչելի պտոյտներէն ա՛լ բան մը չէ մնացած:
Վէպ մըն էր ազ, երազ մը, ա՛յդչափ: Ամէն բան
կորսուած է, ամէն բան թռած է. անկէ անուշ
յիշատակ մը միայն կայ միտքիս մէջ:

Տիկին Վէրնըր Մահիկի հրաշապատում երկիրին
մէջ իր ճամբորդութեանը վրայ քմայք մը պիտի
գրէ. մենք ամէնքս ալ պիտի երեւանք իր զիրքին
մէջ, տողանցք մը պիտի ընենք աչքին առջեւէն
անգլիացի և ամերիկացի այն ընթերցողներուն և
ընթերցողուէններուն՝ որոնք հետաքրքիր են ճանչ-
նալու մեր աշխարհը, մեր սովորութիւնները,
մեր ապրելու կերպը: Ո՛րչափ պիտի ուզէի այդ
զէմքերուն մէջ գտնուել: Արդեօք չափազանց
միտմիտ, չափազանց արտակեղրո՛ն, թէ պար-

զապէս Մեծ-Թուրքին Սարային մէջ տարաշխարհիկ թողուն մը ներկայացուած եմ հոն : Տիկին Վէրնըր ամբողջ Արեւելքի աշխարհին մէջ, յաւերժական Բիւզանդիոնի մութ անկիւններուն մէջ, կրցած է արդեօք գտնել ուրիշ կին մը, որ ինծի նմանի, որ իմ նկարագիրս ունենայ, իմ՝ որ տարագիր մըն եմ : Ո՛վ գիտէ : Այդ նոր գիրքն է, այդ նոր ուսումնասիրութիւնն է որ՝ պիտի ցուցնէ ատիկա : Խնդճ Բէմալ պէյ, այն պաշտելի բանաստեղծը— ժամանակակից Թուրքիաի մեծագոյն բանաստեղծը— չէ՞ ըսած որ տեսնելու համար միայն աչքը կայ, բայց այդ աչքը իսկ ինքզինքը չի տեսներ :

Արդեօք տափակ բնաւորութեան տէր մէկն եմ, ուրիշներուն պէս աղջիկ մը, մասնայատկութիւն չունեցող և սեփական գրոշմէ գուրկ իմ հիւանդագին խառնուածքս, իմ խնկթութիւնս զիս քիչ մը գրաւիչ չե՞ն գարծուցած : Ամուսինս «այո՛» կ'ըսէ, բայց չեմ գիտեր թէ իմ մասիս անկողմնակալ է, թէ ամէն ուրիշէ բոլորովին տարբեր աչքով կը նայի վրաս :

Գալով ձեզի, իմ ազնիւ հայրենակիցս և զժբաղդութեան քոյրս, դուք պէտք ունիք բոլորովին ուրիշ կեանքի մը, բոլորովին տարբեր աշխարհի մը այն աշխարհէն՝ ուր կ'ապրիք, դուք պէտք ունիք սիրուելու, ինչպէս ես կը հասկնամ սիրելը : Աստուծո՛յ սիրուն, քանի որ ճակատագիրը ձեզ չէ ժպտած, գէթ սպաննեցէ՛ք սա սոսկալի Սուլթանը՝ որ ա՛յնչափ միլիոնաւոր էակներու սարսափին

առարկան է : Այն ատեն պիտի ըսեմ թէ՛ Ռէզին, չնորճի ու վեհանձնութեան գլուխ-գործոց մը, պարապ տեղը չէ՛ ապրած : Այո՛, սպաննեցէ՛ք զայն, ատոր համար ամէ՛ն ճիգ թափեցէ՛ք : Բարեկամուհի՛ս, ձեզի կ'ըսեմ թէ՛ այդ Մողոքը սպաննելու համար՝ ձեր ձեռքերը, ձեր մատները, ձեր եղունգները կը բաւեն : Դանալի կամ որևէ զէնքի պէտք չունիք դուք. խեղդեցէ՛ք զայն. ան տկար է, հիւանդկախ ու վախկոտ, հակառակ իր բարձր հասակին և ոսկրեղ մարմինին :

Մտերմացէ՛ք իրեն հետ. կ'արժէ որ քանի մը ամիս իր հոմանուհին ըլլաք : Թերեւս կարենաք առանց յայտնուելու, առանց օձիքնիդ ձեռք տալու՝ գործին մէջէն ելլել :

Սուլթանի մը կնոջ համար ամէն բան ներկի է : Մհ, երանի թէ այս գաղափարը յղացած ըլլայի իր կինը եղած ատենս : Սուլթանը իմ բնաւորութիւնս, իմ վրէժինդիր նկարագիրս կանխապես հասկնալուն է որ, հեշտութեան գիշերէ մը ետքը, յանկարծ, առանց աղմուկի զիս աքսորեց : Մեր ամէնէս աւելի նրբամիտ է ա՛ն՝ որ կրցած է ծուղակը ձգել մեր լաւագոյն վարչագէտը, հակառակ անոր խելքին, փորձառութեանը և տարիքին : Է՛հ, հակառակ այն քաջասրտութեան, յանդգնութեան, անձուրացութեան, որոնք ձեզ կը յատկանշեն, դո՛ւք ալ պիտի յաղթուիք այդ մարդաստղտողէն : Օ՛հ, այս գաղափարները զիս սրչափ կը հալածեն, կը խռովեն ու կը մահացնեն : Զի՛ պիտի կրնաք

գործել այդ երջանկաբեր ոճիբը, այդ բարեգործ մարդասպանութիւնը: Ձեզի կը մաղթեմ, սիրելի մեծանձն Ռէզին, այդ անյապի փաղաքիչ, անյապի ասպետական՝ Ապտիւլ-Համիտի Սպաննիչ տխուրը:

Հատածաճիւն էք ինձի, չէք անձկար այդ տխուրոսին: Եթէ դուք հին Ռէզինն էք իմ հին բարեկամուհիս, այն կուռասէր, ազնուահոգի և ազնուասիրտ աղջիկը, Կովկասի մեր լեռներուն ազատ և անկախ աղջիկը, այն ատեն վստահ եմ թէ՞ պիտի հանդիսանաք այն դէմքը՝ որ արժանի պիտի ըլլայ իր բոլոր նմաններուն ներքոյին, պիտի հանդիսանաք Պանծալին, Անմոռանալին: Սիրելի Ռէզին, սպաննեցէ՛ք Ապտիւլ-Համիտը, որովհետեւ ան արժանի՛ է ատանկ վախճանի մը: Եւ վստահ եղէք որ՝ իր յաջորդը, ան՝ որ ձեզ պիտի դատէ, իր եղբորը պէս վայրագ չէ՛, վայրենի չէ, և մեծ հաւանականութիւն կայ որ՝ ներում պիտի չնորճէ ձեզի:

Ձերդ անձնուէր՝

ՄԻԻՐՂԻ ԻՌԻՆՄ

ԻՌ.

ՈՒՐԻՇ ԵՆԱՄԱԿ ՄԻՒՐՂԻ ԻՌԵՄԷՆ՝ ՌԷԶԻՆԻՆ

Սիրելի քոյրս:

Պալատին մէջ հսկողութեանը օրէ-օր կը խստանայ: Ամիսներ կայ որ չեմ կրցած ձեզի նամակ գրելի: Թախի՛ի մէջ ոստիկաններ, լրտեսներ և պահապաններ միայն կան, զժբազդ փաշաներուն ներկայութեանը պատճառով: Մայթա-Քէօչկի կեղծատեսանին կողմէ դատասպարտուած բոլոր բարձրաստիճան պաշտօնատարները, Միթհատ, Տամատ Մանձուտ և ընկերները՝ վստաբար հոս աքսորուած են: Անոնց ժամանուածն առաջ, մեզ այնչափ խստորէն չէին հսկեր: Բայց յանկարծ կը տեսնեք որ՝ մեր պզտիկ քաղաքը պաշարուած է չորս-հինգ գումարտակ հրետազօրքերով: Այս բոլորը Միթհատը չփախցնելու համար է: Այս զժբազդին դատասպարտութեանը մասին գրած ձեր նամակը արդէն սիրտս բզբտած էր: Ահ, ո՛չ, ա՛լ երջանիկ չեմ. ամուսինս—գմալբելի էակ մը—ա՛լ չի բաւեր զիս հանգստացնելու: Ո՛վ կրնայ երջանիկ ըլլա՛լ տեսնելով անյապի մեծանուն մարդոց տառապիլը: Բռնակայներու շարքին մէջ ներոն ա՛լ առաջին կարգը չի գրաւեր: Իբր վաւերագիր, համառօտակի կը տեղեկացնեմ ձեզ՝ բովանդակութիւնը այն

քանի մը նամակներուն՝ զորս արժանաւոր նախա-
բարը՝ Միթհատ՝ յաջողած է իր ընտանիքին զրկել,
էմիր Աթէշի միջոցով: Այդ նամակները վեհանձ-
նութիւնով կը զեզուն: Առանց արցունք թափելու
չէք կրնար զանոնք մէկ ծայրէն միւսը կարգալ:
Կարգացէ՛ք զանոնք և ըսէ՛ք ինձի, ո՞վ իմ սիրելի
և զգայուն Ռէզինա, ի՞նչ որ կը հասկնաք մեզ կա-
ռավարող արտաւոց մարդուն նկարագիրէն: Նա-
խորդ նամակին մէջ, ձեզի խորհուրդ տուած էի
զայն սպաննելու, ի՞նչ որ ալ ըլլայ: Ո՛րչափ խենթ
էի: Ո՛չ, ալ այդ գաղափարէն չեմ: Ամուսնու-
թեանս առաջին ամիսները զառանցել տուած էին
ինձի: Այն միջոցին, էմիր Աթէշ ինձի համար
ամուսինէն աւելի բան մըն էր, երազային անձ
մըն էր ան... հիմա իմ ամուսինս, բարեկամս,
եղբայրս է: Մի սպաննէք Ապտիւլ-Համիտը: Այդ
թշուառ մարդը՝ անպատասխանատու է իր
արարքներուն: Ծշմարիտ պատասխանատուները
անո՞նք են՝ որոնք զայն Օսմանլիներու գահին
վրայ կը պահեն:

Ահաւասիկ, սիրելի Ռէզինա, ինչ որ Միթհատ
փաշա կը գրէր իր երկու կիներուն: Այդ նամակը
ամուսինիս յանձնուած է ազնիւ պահապանի մը
կողմէ, որ պատուանշան ունեցող տասնապետ մըն
է: Ամուսինս ալ, իր կարգին, զայն յանձնած է
Մէխա-Նուհի, որ Մալէզիացի յանձնակատար մըն
է և ուխտաւորներու առաջնորդը. բրիտանական
կառավարութեան կիսապաշտօն գործակատարը:

Արդէն այս վերջինին և Իզմիրի անգլիական հիւ-
պատոս Մ. Տընիսի միջև համաձայնութիւն կար:
Ետքէն տեղեկացանք որ՝ Տին. Տընիս նամակը
վախով-դողող և մեծ գաղտնապահութիւնով յանձ-
նած է Միթհատ փաշայի առաջին կտոջ՝ Նախէ
հանրմի:

Միթհատ իր երկու կիներուն կը պատմէ թէ՛
զինքը Պոլիս բանտարկած են Չատըր-Քէօշկի մէջ,
որ կը գանուէր Երլորզի իսկ մէջ: Մահմուտ փա-
շա և Նուրի փաշա ալ բանտարկուած էին ուրիշ
խորհրդաւոր տաղաւարներու մէջ: Ապտիւլ-Համիտ
կրկնապէս խենթեցած Մահմուտ Նէտիսի և ձէվ-
տէթի համար, կ'ուզէր այդ բարեկարգիչները մէջ-
տեղէն վերցնել. Բարձրաստիճան պաշտօնատար-
ները և Կայսրութեան իւլէմաները չէին հաւաներ
այդ անմեղներուն կախուելուն. այդ պատճառով
անոնք աքսորուեցան: Չատըր-Քէօշկի մէջ, Միթ-
հատ չէր տեսած Կարմիր Սուլթանը, բայց բռնա-
կալը ատեն-ատեն իր սիրականները կը զրկէր՝ նեն-
գամտօրէն լուր առնելու համար նախարարէն և
անոր հաղորդելու կայսերական իր բարձր բարե-
ները, յայտնելով թէ ինք Միթհատի փաստաբա-
նութիւն կ'ընէր, ազատելու համար այն անպատ-
ուիչ յանցանքէն՝ որուն կ'ուզէին ենթարկել:

Շատ մը բաներ կը խոստանային Նուրի փաշայի:
Կ'ուզէին որ ան խոստովանի թէ մասնակցած է
գաւազորութեան, և Սուլթանը, իբր վարձատրու-
թիւն այդ խոստովանութեան, ներում պիտի չնոր-
հէր անոր:

Անշնորհքը խոստովանած է այն՝ ինչ որ չէ գործած . յետոյ , փոխանակ ներումի արժանանալու . դատապարտուած է . հիմա ալ խնդրեցամ է :

Ապտիւլ-Համիտ , Միթհատի աքսորուած ատեն խոստացած էր զայն ազատ ձգել իր ընտանիքը հետ տանելու : Բայց , աւանդ , Միթհատ և իր ընկերները չէին զիտեր իսկ թէ՛ ո՛ւր կ'աքսորուէին : Իզգիսսին զբօսանալով իրենց գոյքերն ալ պիտի զրկուէին : Սուտ մըն ալ ազ : Միթհատ քաղաքէն մեկնած էր առանց չապիկ մը ունենալու , սուանց զգեստի : Այսպէս է որ ճամբայ ելած է երկու անգամ Մեծ-Եպարքոս եղոյ և Սահմանադրութեան հիմնադիր մեր հոչակաւոր վարչագէտը :

Գոյքերը պատրաստ էին : Միթհատ չկրցաւ զանոնք իր հետը առնել պզտիկ կառքին մէջ , որովհետեւ Կայսրը այդպէս հրամայած էր : Սուլթանը խոստացած էր զանոնք անմիջապէս չոզենաւ զրկել : Նորէն սուտ : Բայց ինչ կրնար ընել Միթհատ՝ այս չարանկեղութիւններուն մէջ : Թշուառ վիճակի մատուած , Փաշան ստիպուեցաւ չոզենալին մէջ բաւակրանալ մէկ գիշերնոցով , մէկ վերարկուով և իր ծառային զգակով : Երբ ճերմակեղէն փոխել ուզէր , իր խուցին մէջ մերկ կը մնար . իր ծառան աղտոտ լաթերը կ'առնէր . կը լուար զանոնք , յետոյ կը չորցնէր , և ժամն'ը ետքն է որ՝ խեղճ Սասրազանը կրնար իր զգեստները հագնիլ :

Միթհատ ամէն կողմ՝ զզուանքով և զայրոյթով բողոքեց այն ընթացքին դէմ՝ որով կը վարուէին իրեն հետ :

Սակայն Իզգիսսին ճամբայ կ'առնէր : Կալանաւորները բանտարկուած էին մասնաւոր խուցերու մէջ : Կարմիր Մուլին հասարակածային տաքը , մեքենաներուն տաքը , ճեմիչներուն արտաբերած գարշ հոտը , կը դժուարացնէին իրենց չնչառութիւնը : Նուրի փաշա միւսներէն քիչ մը աւելի երջանիկ էր , որովհետեւ բոլորովին կորսնցուցած էր իր խելքը :

ձիտտէ հասած ատեն է միայն որ հասկցան թէ՛ Թաիֆ կ'աքսորուէին : Չերքէզ Հասան հոչակաւոր մարդասպանին հօրը հսկողութեանը տակ գտնուող պահապան մըն է որ կ'առաջնորդէր կարաւանը մեծանուն կալանաւորներուն , որոնք կ'ենթարկուէին անարգանքներու , հայհոյանքներու և նոյն իսկ չարչարանքներու : Մէքքէի մէջ , անոնք արգելափակուեցան և իրենց թող չարուեցաւ վայրկեան մը իսկ զիտել Քասապան : Կայսերական հրամանով , այդ երկիրին Պէտէվներուն զգեստներուն նման զանազան զգեստեղէններ տրուեցան հոն իրենց : Բարերարզարար գթապիտ կին մը , եգիպտացի մը՝ Սալիֆէթ փաշաի կինը , անոնց հասցուց իրենց առաջուան հագածին նման ներքնազգեստներ :

Մէքքէի էմիրը , ինչպէս նաև նահանգին Ընդհանուր Կառավարիչը , խիստ ազդու հրաման ստացան անոնց կեանքը դժնդակ և անտանկի դար-

ճնելու և զանոնք կանոնաւորապէս հալածելու : Կարմիր Սուլթանը անոնց աստիճան, չքանչան, պատուանչան, զրամ կը խոստանար :

Մէքքէի էմիրը վայրագ մարդ մըն էր : Իր տիրոջը աչքը մտնելու համար, գիշեր-ցորեկ խելքը կը յոգնեցնէր՝ չարչարանքի և բռնութեան ուրիշ միջոցներ հնարելու :

Միթհատէն և Մահմուտէն զատ, բոլոր աքսորականները էմիրին հրամանով չլթալարկութեան զատապարտուեցան : Բայց այդ չլթաները ուրիշ տեսակ էին . ? դարբինին պատուիրուեցաւ այդ չլթաները անոնց շոտքերուն վրայ ամբարեւելել : Անոնք տկարացած, հիւանդացած և կիսամեռ դարձած էին : Այլ չէին կրնար հազորդակցիլ իրենց ընտանիքներուն հետ : Այդ անմեղներուն հետ այդպէս վարուել ո՞վ չգիտեր թէ՛ ինչո՞ւ կը դատապարտուէին և ի՞նչ էր իրենց յանցանքը : Անոնք իրենց կրած տանջանքներէն պիտի գերադասէին մահը : Ահաւասիկ, սիրելի Ռէզլիս, թէ ինչ անսկարազրելի կացութեան մէջ կը գտնուէի Միթհատ, մեր ազգին այդ պարծանքը : Բարեբաղդաբար իր կրօնական զգացումները զինքը կը գօտնադնէր : Ան Գուրանը կը կարդայ չարունակ, երկրորդ անգամը ըլլալով գայն գոց ըրած է : Իր ընտանիքին անդամներուն կը յորդորէ, իրենց տառապանքներուն մէջ նոյն գերագոյն միսիթարութիւնը որ դեգրել : Օ՛հ, սիրելի Ռէզլիս, եթէ կարդայիք այդ համակները Համակերպութեան ինչ զուլ-գոր-

ծոցներ են անոնք : Իր կիներէն կը խնդրէ քանի մը օխա ծխախոտ, ծխամորձ մը, Գուրանի մեկնութիւններու երկու հատորներ, նոյն գիրքին վրայ ուրիշ երկասիրութիւն մը, Պլուտարքոսի քանի մը հատորները : Բարեբաղդաբար քովը քանի մը գիրքեր ունէր : Իր բանտարգելութենէն առաջ, ուզած է Մէքքէ ուխտաւորութեան մը երթալ, բայց երկու արգելքներ կային ատոր . Համիտի ուրուականը և քօլէրան :

Ատենով, բանտին մէջ, փաշաները կ'ունենային իրենց ծառաները, խոհարար մը, նոյն իսկ մատակարար մը : Գէթ կրնային մնանիլ : Կուսակալը հիմա բացի խոհարարներէն այդ բոլոր պաշտօնեաները ճամբու դրած է և զեղչած է սնունդի քանակը : Բանտարկեալները հիմա ո՛չ ճերմակեղէն ունին, ո՛չ զգեստ, ո՛չ ալ զրամ : Անոնցմէ հարուստները(?) իրենց վարտիքները աղքատներուն(?) փոխ կու տան : Հապա այն խեղճ ծառաները : Անոնց կեանքը անտանելի է՝ իրենց տէրերուն երեսէն : Փաշաները ամէն ամսու գլուխ անոնց թոշակ կը վճարեն, և անոնք ստիպուած են իրենց ոռճիկին մէկ մասը յատկացնել առաջնակարգ ստիպողականութիւն ունեցող ծախքերու :

Բանտարկեալներուն շատերը՝ ուտելիք չգտնելուն պատճառով՝ ծով կը պահեն :

Ուրիշ տեղեր՝ գլթասիրտ անձեր բանտարկեալներուն կ'օգնեն : Հոս, աւա՛ղ, հարո՛ւստ չի կայ որ՝ անոնց գոնէ քիչ մը զրամ զրկէ : Ամուսինս

— աքտորական մը—չի կրնար զանոնք տեսնել և անոնց հետ խօսիլ . հետեւաբար, ո՛րևէ կերպով չի՛ կրնար անոնց օգնել : Մէկ-երկու անգամ միայն յաջողած է անոնց թղթակցութիւնը դիւրացնել : Եւ ատիկա՝ ճշմարտապէս քաջասրտութեան և դիւցազնութեան գործ մըն էր :

Ի՛ր վերջին նամակին մէջ Միթհատ Իզմիր բնակող իր կնոջմէն կը խնդրէր ըրեն զրկել քառասունի չափ գիրքեր և իր կեղծ ակումները . ապա թէ ոչ, կ'ըսէր . ստիպուած պիտի ըլլար ծախել իր ժամացոյցը և արծաթէ աման մը՝ զոր իր քով կը պահէր ջուր խմելու համար . . .

Առաջները, բանտարկեալները կրնային հազորդակցիլ իրենց կիներուն և զաւակներուն հետ, Մէքքէի էմիրին միջոցով : Էմիրը հիմա վերջ տուած է այդ շտրօնին :

Էսօմէր պէյ անունով զօրապետութեան աստիճանի բարձրացուած գնդապետ մը, պալատին կողմէ մասնաւորապէս զրկուած է՝ Փաշաները այս աշխարհքին երեսէն վերցնելու համար : Բարբարոս և աննկարագրելի կերպով վայրագ մարդ մըն է ան . Փաշաներուն ծառաներուն ըսեր է թէ՛ ազսա արծակուելու համար՝ պէտք է անմիջապէս սպաննեն իրենց տէրերը : Ան թեկադրեր է որ՝ Նուրի փաշա՝ որ խնթեցած էր, կրնար պատուհանէն վար նետուիլ . բանտին տնօրէնը, որ անգամ մը աստիէ կասկածած էր, պատուհանին վանդակ անցուցած էր : Էսօմէր պէյ հրաման ըրաւ բոլոր պա-

տուհաններուն վանդակները վերցնել, դիւրացնելու համար խնթին անձնասպանութիւնը :

Սակայն ծառաները իրենց տէրերուն հանդէպ հաւատարմութենէ չէին չեղեր : Ստիկա տեսնելով, բռնաւորը արգիւից անոնց դուրս կլլելը :

Օր մը, բանտարկեալներուն տրուելիք սուրճին մէջ բնամօրմ գնել տուաւ :

Ուրիչ անգամ մը կաթը թուռախառնուած էր : Ընդհանուր՝ առավարիչը մարաշխատի աստիճանին բարձրացուցաւ, թագաւորին հաւատարմօրէն ծառայած ըլլալուն համար : Այս առիթով, կառավարիչը ճամբել տուաւ Փաշաներուն խոհարարները . հիմա Փաշաները պատերազմի մէջ գտնուող զօրքերուն պէս կը մնանին :

Իրենց ձերմակեղէնները իրենք կը լուան Անոնք ո՛չ ածուխ ունին, ո՛չ օճառ, ո՛չ կաղամար, ո՛չ թուղթ : Ամէն բան վերցուած և գրասուած է :

Միթհատ, կոնակին վրայ քաղցիկ ունենալով, բժիշկ մը ուզեց . ատոր փոխարէն իր ծառան հեռացուցին քովէն : Բարերազդաբար բժշկուեցաւ : Բայց, սիրելի բարեկամուհիս, երեւակայիցէք տառանքները այդ զժբաղդին, հիւանդ, անօգնական, հեռո՛ւ իր ընտանիքէն, զուրկ ծառայէ, զուրկ բժիշկէ . . .

Ո՛րչափ զգածուեցայ իր վերջին նամակը կարգալով : Միթհատ հրաժեշտ կու տար իր կիներուն : Ճակատագրական վայրկեանը կը մօտենայ : Թերեւս այս նամակը ձեզի հասնելէ առաջ, մահուանս լուրը լսէք, կը գրէր :

Ի՛նչ դժբաղդութիւն, ազւոր Ռէզլի՛ն: Ամուսինիս քով քանի մը ամսուան անուշ, խաղաղ կեանքէ մը ետքը, հաւաստի՛կ ինծի տխրութիւն մը՝ տարաբաղդ Միթհատի ունեցած կացութեան դէմ: Ամուսինս և ես ջլատուած ենք. քուններնիս կորսնցուցած ենք: Ամէն ատենէ աւելի կ'անիծենք այն մարդը՝ զոր ես Կարմիր Սուլթանը կոչած եմ: Ապտիւլ-Համիտ ա՛յ արիւնասխանձ անզուսպ վագր մը դարձած է:

Ուրիշ թագաւորներ ի՛նչպէս չեն կարմրիր եղբօր կամ հօրեղբօրորդիի տեղ դնելով զայն, անոր ձեռքը սեղմելով, զայն պատուելով ո՛չ թէ իբր բռնակալ մը (ԺԹԷ՛ դարուն իսկ մէջ), այլ իբր թագաւոր մը: Ի՛նչ հեգնութիւն: Եւրոպան ո՛րչափ անկարեկից, անողոք կը մնայ մեզի համար:

Երէկ գիշեր, մեծ անակնկալ մը ունեցանք: Մէքքէի էմիրը, այդ վայրագ Ապտ-էլ-Մուլթալիպը, ամառանոց եկած ըլլալով՝ հոս Թաիֆ կը գտնուէր: Կէս-գիշերուն, իր ամառանոցը երեք հազար զինուորներու կողմէ պաշարուեցաւ, մինչ կը քնանար իր կիներուն հետ: Զայն գիշերնոցով տարին այն բանտը՝ ուր արգելափակուած էին Միթհատ և իր ընկերները: Ի՛նչ անհեթեթութիւն, այնպէս չէ: Ա՛ն՝ որ անխնայ կը հալածէր խեղճ Փաշաները, հիմա անոնց հետ բանտարկուած է նոյն բերդին մէջ: Հարիւր տարու է ան: Կ'ըսուի թէ ան շատ մտերիմ յարարերութիւններ ունեցած է Անգլիացիներուն հետ և Սա-

լիֆայութեան մասին նպատակներ սնուցած է, ջանալով վերահաստատել արաբական թագաւորութիւնը և Թուրք ցեղէ Հաւատացեալներու Սոաջնորդներուն ընտանիքը հալածել:

Մեր քաղաքական կեանքը, ազւոր Ռէզլինս, հակասական ղէպքերու շարք մըն է միայն: Այսօր կը ծափահարեն մէկը, վաղը զայն կը դատապարտեն:

Միթհատ փաշա, անզուգական նախարար մը, վարչագէտ մը, մեծանուն բարեկարգիչ մը, այս միջոցին կը մահանայ ողորմելի, խոնաւ խուցի մը մէջ, զո՛ւրկ լոյսէ, նեցուկէ, մխիթարութենէ: Ասիկա հարազատ պատկերն է այն տագնապին՝ զոր կը կրէ այդ մեծ մարդը, ա՛ն՝ որ իր երկրորդ մեծութիւնը և ազատութիւնը կ'երազէր և որ կ'ուզէր Կայսրութիւնը օժտել Սահմանադրութեան մը և Խորհրդարանի մը չափ անգին հաստատութիւնով մը:

Անիծուած ըլլայ այդ Կարմիր Սուլթանը, այդ սատանայատիպ հարստահարիչը, որ ի՛ր ձեռքերովը կը սպաննէ այլսարհի վրայ եզական այս Պետութիւնը:

Մնաս բարո՛ւ, սիրելի և վեհօգի Ռէզլին: Գիտեմ որ սիրտով մեզի հետ ես, և թէ արցունքներդ իմիներուս պիտի խառնես. բայց ես, եթէ քեզմէ հեռու եմ, գոնէ հեռո՛ւ եմ՝ նաեւ Ապտիւլ-Համիտէն և Երլտրզէն:

Իլիստ անկեղծօրէն քուկո-

ՄԻՒՐՂԻ ԻՌԱՆՍ

ՈՒՐԻՇ ԵՆԱՄԱԿ ՄԻՒՐՂԻ ԻՌԷՄԷՆ՝ ՌԷԶԻՆԻԵ

Անուշ Բոյրս .

Ձեմ գիտեր թէ՛ այս աշխարհին վրայ բոլորովին երջանիկ էակներ կա՞ն, երջանիկ ինչպէս ես կը հասկնամ երջանկութիւնը, որովհետեւ, իմ կարծիքովս, այս աշխարհի վրայ երջանկութիւն չի կայ: Այս շարաթը մեր հայրենիքին համար մէկն է դարուն ամէնէ՛ն դժխեմ շարաթներուն և մեր պատմութեան ամէնէ՛ն չարաշուք էջերուն: Պալատէն ստացուած խիստ հրամաններուն վրայ, Թախֆի բանտին մէջ, վատարար և շարանենգօրէն խեղդեցին Միթհատ փաշան և Սուլթանին աներծագը Մահմուտ ձէլալետտին փաշան: Նոյն խի գողցան անոնց ձգած քանի մը իրեղէնները և իբր աւար ծախեցին չուկային մէջ: Անգլիական պատուիրակին սնուումներուն չնորհիւ, Ապտիւլ-Համիտ Պոլիսի մէջ չէր կրցած կախել դժբաղդ մարդիկը, որուն հետեւանալով, այն ուրուատիպ դատարանը, որուն մասին խօսած էիք, անոնց իբր թէ ներում չնորհող վճիռ մը արձակած էր: Բայց ի՞նչ ներում:

Ապտիւլ-Համիտ կրնայ ներում չնորհել մէկու մը: Եթէ որեւէ ազնիւ զգացում ունենար, չի

պիտի չդանար Մայթա-Ռէօչի այդ թէ՛ շարաշուք և թէ՛ խեղկատակ ատանը: Ստացած էինք մայրաքաղաքի զանազան թերթեր ուր երկարօրէն կը խօսուէր Փաշաներուն չնորհուած ներումին մասին: Ի՞նչ հեգնութիւն: Այս շարթու, այդ տարաբաղդները խողխողուեցան, գիշերուան սոսկումին մէջ, համաձայն հրամանին անո՛ր՝ որ անոնց ներում չնորհած էր: Ապտիւլ-Համիտ թերեւս իր տեսակետովը իրաւունք ունի: Եթէ Միթհատ փաշա՝ այդ մեծ բարեկարգիչը՝ ողջ ըլլար. ի՞նչպէս պիտի կրնար ինք գործադրել ինքնակալութեան, բռնակալութեան, հալածանքի, աւերումի լ՛ը ընդարձակ ծրագիրը:

Հալածուելու մենամուրեթիւնը միապետին խելքը գլուխէն առած կ'երեւայ. աւելցուցէ՛ք տոտր Միթհատի ուրուակներ: Անշուշտ վեհապետին համար կրնան մեղմացուցիչ պարագաներ գտնել... Ինձի անանկ կու գայ որ՝ անձանօթ մնացած վայրագ ու արիւնարբու ցեղապետներուն պէս երկրորդական բռնաւոր մը ըլլալ չուզեր ան: Գիտէ՞ք, ազնիւ Ռէզինա, թէ ծուռնդով-ոճրագործները մեծ ոճիրներ կը սիրեն: Սպաննել անձանօթ ու խեղձուկ զինուոր մը, ոտակ կնիկ մը, ողորմելի ուսանող մը, պատիւ չի բերեր ինքզինքը գիտցող մարդասպանի մը, իր անունին արժանի աւագակապիտի մը:

Միթհատ կրնակին վրայ ունեցած իր ունեցքէն կը տառապէր: Ապտիւլ-Համիտ ալ օրը քանի մը

անգամ լուր կ'առնէր անոր մասին և հեռագիրով պէտք եղած հրահանգները կու տար անոր շուրջը գտնուողներուն՝ այդ հիւանդութեան առիթէն օգտուելու և այս աշխարհքի երեսէն վերցնելու բարեկարգիչներու ամէնէն արժանաւորը: Միայն ծառայէ զուրկ ըլլալուն համար ինչ տառապանքներ չի քաշեց այդ զժրագղ Փաշան, իր արգելանոցին մէջ: Ապտիւլ-Համիտ շարունակ հսկողները կը փութէր և նոր սպաներ կը զրկէր, ընաճնջուով և մարդասպանութեան գործը փութացնելու համար: Որոշուած թուականէն մէկ-երկու օր առաջ, բոլոր ծառաները հեռացուեցան զօրանոցէն: Բանտարկեալներուն յատկացուած անունը՝ չունեւորն չէր կրնար տրուիլ: Խեղճերը կը նախազգային իրենց վախճանը. կը գուշակէին կատարուած անհամար պատրաստութիւններուն ինչ ըլլալը:

Փաշաները մերժեցին ուտել պահապաններուն կողմէ իրենց հրամցուած թունաւոր կերակուրները: Բանտին տնօրէնը շարունակ կը յանդիմանէր պահապանները:

—Ա՛հ, կ'ըսէր ան, եթէ ես պարզ ոստիկան-զինուորի մը գաղտնարար հրաման տայի՝ այս խառնակիչները մէջտեղէն վերցնելու, առանց մեծ դժուարութեան պիտի կատարէր ան իր առած հրահանգը: Կարծես թէ կնիկ-մարդու սիրտ ունիք դուք:

Չանոնք կը ծաղրէր և կը զրգոյէր գործերնին տեսնելու: Բանտարկեալները եղբայրակցօրէն միա-

ցած էին: Անոնք է որ կը խնամէին Միթհատը, որ հիւանդութենէ կը տառապէր: Մէկերնին անոր ուտելիքը կը պատրաստէր, ուրիշ մը անոր վիրազարմանութիւնը կ'ընէր, երբորդ մը գիշեր-ցորեկ զայն կը մխիթարէր՝ անարին գլուխը: Բարեբաղդարար վերջապէս բժշկուած էր:

Սակայն Միթհատ երազներով չէր օրօրուեր: Օր մը, բանտին տոսկատեսիլ տնօրէնը՝ Պէքիր՝ մեկնումի պատրաստութիւններ տեսաւ. Միթհատ սա՛ խօսքերը ըրաւ անոր:

—Սուլթան Համիտ Ընդհանուր Կառավարիչը Մարաշախտի աստիճանին բարձրացուց, սակայն դուք զիտէք որ ես Պետութեան և Ազգին կարեւոր ծառայութիւններ մատուցած եմ: Ահա՛ իմ վարձատրութիւնս: Նկատողութեան առէք այն վիճակը՝ ուր կը գտնուիմ ներկային մէջ: Ինձի անձանօթ չէ՛ որ մենք պիտի ապանուինք, և դ՛ուք, դ՛ուք է որ պիտի կատարէք այդ եպերեկի գործը: Ըսի թէ Կառավարիչը Մարաշախտի աստիճանին բարձրացուած է. դուք ալ աստիճանի բարձրացում պիտի ունենաք, անոր պէս դուք ալ տեղակալ-գնդապետ, գնդապետ և զօրավար պիտի ըլլաք: Բերդին գնդապետ-հրամանատարն ալ աստիճանի բարձրացում պիտի ունենայ: Եթէ դուք Սուլթանէն առաջ մեռնիք, ձեր աստիճանները ձեր շիրիմներուն վրայ պիտի փորագրեն: Բայց եթէ Սուլթանը ձեզմէ առաջ մեռնի, այն ատեն, չեմ գիտեր... Ձեզի՛ կը մնայ ատոր վրայ խորհիլ. Յիշեցէ՛ք որ Ապտիւլ-

Համիտ Սուրուրի էֆէնտին դատաւոր և նախագահ կարգած էր այն արտասովոր ատեանին որ մեզ դատեց. բայց, այսօր Մաղնիսա աքսորուած է ան: Այդ Բարձրագոյն Ատեանին վերատեսուէն էր ձէլվտէթ փաշա. ան ալ իր քօնաքին մէջ բանտարկուած է այսօր: Աղէկ մտածեցէք բոլոր ասոնց վրայ: Այս բոլոր միջազէպերէն ես կ'եզրակացնեմ որ՝ մեր հարստահարիչները ուրիշ ծրագիրներ ունին: Ահա թէ ինչ գրուած է Գուրամի մէջ (*).

Իւրք պէտք է գիտնաք որ, շարունակեց Միթհատ, մեր Հիւսէին սուրբ մարտիրոսը սպաննուեցաւ իր պտեն տիրող Վահագնատին հրամանով... Դարերէ իվեր մարդիկ շարունակ անիծած են այդ վատ մարդասպանները: Անոնք անպատասխանատու չեն նկատուիր: Վերջին դատաստանին օրը անոնք խստորէն պիտի պատժուին: Կը խնդրեմ, գացէք այս բոլորը բսէք Նորին Վսեմութիւն Լ'նդհանուր Կառավարիչին:

Հրէջը ո՛րեւէ կարեւորութիւն չի տուաւ Միթհատ փաշաի ազգարարութիւններուն: Դահիճները շարունակեցին ապարդիւն կերպով թունաւորել բանտարկեալներուն ուտելիքը: Բանտարկեալները չէին կրնար վստահիլ ուտել կերակուր մը՝ որուն մահացու ըլլալը գիտէին:

(*). Իբր յարգանք՝ Գուրամի հատուածները չեն թարգմաներ: Ծնր. Հեղ.

Սուլթանը՝ հետզհետէ մտատանջ և անհամբեր կը դառնար: Օր մը, ստիպողական իրատէի մը վրայ, Մէքքէէն Թաիֆ գրկուեցան երկու ջոկատ զինուորներ, երկու թնդանօթներ, քանի մը հրետանիներ և գնդապետ մը, բերդը պաշարելու համար:

Աստուածս, ինչ միջոցներու կիրառում, երկու մարդ սպաննելու համար: Անոնց մէջէն քառասուն հոգի զատուեցան՝ միացուելու համար բանտին մասնաւոր պահակներուն: Գիշերը, Պէքիթ արթնցուց Տամատ Մանուտ փաշաի ծառան, հարցնելու համար թէ՛ որոշած էր իր տէրը սպաննել: Ծառան մերժեց: Յետոյ կարգը եկաւ Միթհատի ծառային Արիֆ ազաի: Սո՛յն արդիւնքը, Հագար ոսկի խոստացուեցաւ անոր՝ սպաննելու համար Միթհատը և վեց հարիւր ոսկի ալ՝ Տամատը անհետացնելու համար:

Հաւատարիմ ծառան անմիջապէս իր տէրերուն լուր տուաւ: Երեւակայեցէ՛ք այն սարսափը՝ որուն ենթարկուեցան այդ դժբաղդները: Դահիճները միութարակն խօսքեր ըրին անոնց, սաստեցին Արիֆ ազան և զայն ուրիշ տեղ մը բանտարկեցին: Հինգ չարթիէն ուրբաթ լուսնայիք գիշերը, հարիւրապետ մը Արիֆ ազան կանչեց և մէկէնիմէկ ըսաւ անոր. — «Այս գիշեր Միթհատ փաշան պիտի սպաննենք: Քեզի շատ մը թոյն տուինք և դուն բան մը չըրիր: Իուն Փաշաներուն քով կը քնանաս: Եթէ այս գիշեր դուռը չի բանաս, պիտի զոջաս: Ա՛լ դուն գիտես ընելիքդ:

—Ո՛չ, պատասխանեց քաջասիրտ ծառան, չե՛մ կրնար ընել այդ բանը, չե՛մ կրնար դուռը բանալ...

Մարդասպանները կը պնդէին: Փաշաները, մորթուելու սահմանուած կենդանիներու պէս, միջնասենեակին մէջ գիշերուան աղօթքնին ընկէ ետքը, իրարու քով եկան: Թրքական ժամը երեքին միջոցին, Արիֆ աղա տեսաւ որ Միթհատ փաշա սանդուղէն վար կ'իջնէր, իր սենեակը երթալ և հոն պառկելու համար:

—Ո՛վ տէրս, ըսաւ անոր Արիֆ աղա, այս գիշեր ձեզ պիտի սպաննեն, իրարու քովէ մի՛ զատուիք:

Միթհատ իր ծառային խօսքը մտիկ ըրաւ և նորէն իր ընկերներուն քովը գնաց: Որովհետև Արիֆ աղա բարձրաձայն կը խօսէր և ինքզինքը չէր կրնար զսպել, բանտարկեալներուն պահապանութիւն ընելու պարտականութիւն ունեցող սպայ մը գնաց Արիֆ աղային խօսքը տեղեկացնել գնդապետին: Գնդապետը՝ այդ ծառան անմիջապէս ուրիշ տեղ մը բանտարկել տուաւ և հրամայեց բանտարկեալները իրարու քովէ զատել: Գնդապետին հրամանով, Մէմիշ անունով դեր-տեղակալ մը եկաւ գտաւ բանտարկեալները և անոնց ըսաւ.

—Գնդապետը իր բարեւները կը զրկէ ձեզ. դուք ա՛լ իրարու քով չէք կրնար բնակիլ. կը խնդրեմ որ իւրաքանչիւրդ ձեր սենեակները քաշուիք:

—Ո՛չ, ըսին անոր Միթհատ և Տամատ. մենք իրարմէ չպիտի բաժնուինք և դուք բռնի կերպով միայն ըսածնիդ կրնաք գործադրել:

—Այդ ըսածնիդ Գնդապետին հաղորդեմ:

—Այո՛, գացէք ըսէ՛ք, պատասխանեց Միթհատ:

Այս միջադէպերուն վրայ, պահապանները իրենց պատիւին վրայ երդում ընելով ապահովցուցին Փաշաները թէ՛ ա՛լ վախնալիք բան մը չունէին, պայմանով որ զինուորները հնազանդէին իրենց ստացած հրահանգներուն: Ասոր վրայ, խեղճ նահատակները մեկնեցան հաւաքասենեակէն և իրենց առանձին սենեակները քաշուեցան: Միւս կողմէ, Արիֆ հաւատարիմ ծառան կը չարչարէին: Իրենց սենեակներուն մէջ Միթհատ և Մահմուտ իրենց կտակները գրեցին և իրենց վերջին բաղձանքները հաղորդեցին իրենց ընտանիքներուն:

Դուրսը, զինուորներուն փամփուշտ և ռազմանիւթ կը բաժնէին: Կէս-գիշերուան դէմ, Տամատի ծառան՝ Հաճի Շիւքրի իր տիրոջմէն անջատուեցաւ: Եւ Պէքիր իւրաքանչիւր դրան առջեւ մէկ-մէկ պահակ դրաւ: Նրբանցքները կը լեցուէին զինուորներով, ամէնքն ալ առանց ոտնամանի, աղմուկ չի հանելու համար:

Միթհատ իր սենեակին մէջ մինակ էր՝ Նամըզ փաշա զատէ Ալի պէյի հետ: Անոնք կը քնանալին: Կէս-գիշերին մօտ, Ալի պէյ դուրս կանչուեցաւ: Անմիջապէս չարաշուք անձերը մտան նախկին Մեծ-Եպարքոսին գտնուած տեղը:

Միթհատ ջանաց անոնց քանի մը սրտատուչ խօսքեր ուղղել :

—Մե՛ղք զինուորներուն, ըսաւ անոնց, որոնք Հայրենիքը պաշտպանելու պարտականութիւնը ունին և որոնք սակայն ասանկ ոճիրներու կը մեղակցին :

Շատ չանցած, ամէն բան ըննցաւ... Դանի մը վայրկեանի մէջ՝ վարչազէտը խեղդած էին : Յետոյ Տամատին զուօր խորտակեցին և անոր վիզը անցուցին ձէթի և օճառի մէջ թաթխուած չուան մը : Չարչարանքը մեծ եղաւ : Մէմիշ գաւազանով մը կտորեց բազուկը Տամատին, որ գահակալող Սուլթանին աներծագն էր : Այլ Պապա անուշով եպերելի արարած մը՝ զայն վայրագ միջոցի մը կնիթարկեց, անողոքաբար սեղմելով անոր ամորձիքները, մահը փութացնելու համար : Տամատ Մահմուտ կը ճչէր, կը պոսպուար, Աստուծոյ օգնութիւն կ'աղերսէր : Իր ձայնը զուրսէն կը լսուէր, և թաղին բնակիչները իրարու կ'ըսէին :

—Օ՛հ, Միւսլիմաննա՛ր : Ոճիր Մարդասպանութիւն : Փաշաները կը մեռցնեն : Անէ՛ծք բռնաւորներուն :

Կիները գլուխնին պատուհաններէն զուրս կը հանէին : Յուզումը աննկարագրելի էր :

Տամատ Մահմուտ վերջապէս հողին տւանդեց...

Դանի մը զինուորներ անմիջապէս ղեկախներ անկողիններու վրայ դրին և փոխադրեցին զինուորական հիւանդանոցին մօտը գտնուող տեղ մը՝ ուր մեռելները զագաղի մէջ կը դնէին :

Այդ գիշերը իսկ գերեզմանափորները փոսերը փորեցին :

Դահիճները գիշեր ատենով բռնադատեցին վաճառականին մէկը՝ որպէսզի իր խանութը բանայ և իրենց պատանք հայթայթէ : Բայց զուր ջանք, որովհետեւ ան ո՛րեւէ կերպով չի հաւանեցաւ առանկատեն մը այդ տեսակ մահաշուք ծառայութիւն մը մատուցանել :

Բանակին Իմամը՝ նոյն պատճառով չի յօժարեցաւ կատարել նուիրական արարողութիւնները : Հետեւաբար, երկու վարչազէտները մեծ գաղտնապահութիւնով թաղեցին սպանդանոցին մօտը գտնուող լքուած գերեզմաննոցի մը մէջ :

Բանտին մէջ, նախկին Շէյխ-Իւլ-Իսլամ Հայրուլլահ Էֆէնտի բոլորովին ուշափոքս եղաւ : Իր բոլոր գոյքերը զուտին ետեւը զետեղեց և վայրկեան մը իսկ չկրցաւ քնանալ այդ գիշերը : Փաշաներուն աղաղակները զինքը կը խնկեցնէին : Ուրիշ ամբաստանեալ մը : Ապտիւլ-Աղիբի նախկին առաջին սենեկապետը՝ Յասրի պէյ, իր խուցէն զուրս կ'ելլէր, երբ Տամատին դռուս-գոչումները լսեց :

—Չըլլա՛ր, արգիլուա՛ծ է, ըսաւ անոր կոչս զինուոր մը :

Խեղճ պալատական զարմիկը՝ զրեթէ խնկեցած էր : Յաջորդ առտուն, միւս բանտարկախներուն աղաղութիւնը մեծ եղաւ, երբ պահակները անհետացան : Անոնք ամէնքն ալ իրենց նախորդնե-

րուն պէս ստոյգ մահուան մը կը պատրաստուէին ,
և հետեւաբար , իրենց կտակները և ուրիշ զանա-
զան կարեւոր թուղթեր կը գրէին :

Լուրը ամիջապէս տարածուեցաւ Թաիֆի մէջ :
Այդ օրը իսկ խմբագրուեցան կեղծ տեղեկագիրները :
Բժիշկին խօսքով՝ Միթհատ մեռած էր ուռեցքէն և
քանի մը օր ետքն ալ Տամատ՝ թոքատապէ՛ն նոյն
իսկ իրենց չիբիւնը բացարձակապէս սուտ արծա-
նագրութիւններ կը կրէ այսօր :

Գնդապետը , բոլորովին ուրախ , այսօր զինուոր-
ներուն արտօնած է Ձեյպիֆի պարեր խաղալ և
անոնց տրամադրութեան տակ զրած է քաղաքին
նուագախումբը :

Ձէ՛ք հաւատար որ , բարեկամունիս , այս տեսակ
տակնոււրայութիւններու մէջ , մարդ զոգեր ան-
ցընէ :

Սոսկումի մէջ կ'ապրիմ : Մեր Միթհատ փաշան
ոչ և՛ս է : Ապտիւլ-Համիտ գտած է անհրաժեշտ
գործակիցները և զայն հետուէն սպաննած է : Եւ
ինչպէ՛ս կը խարէ ան իր գործակիցները : Այդ
արուեստին մէջ վարպետ է ան , հնարամիտ է :
Վստա՛հ եղէք որ՝ Ապտիւլ-Համիտ պիտի պատժէ
նաև մարդասպանները : Մարդասպան մը . բայց
ան կրնա՛յ Ապտիւլ-Համիտն ալ սպաննել :
Մէ՛կը՝ որ կրցած է արնափ նրբամտօրէն Միթհատը
սպաննել , ա՛լ ապրելու իրաւունք չունի , անգամ
մը այդ եպիբելի ծառայութիւնը իրեն մատուցանելի
ետքը :

Այսօր Միթհատի սպաննիչները մտահոգիչ և
ատելի են ալ : Ապտիւլ-Համիտ , իր մէթոտին հա-
մաձայն , հիմա կը պարսաւէ Ապտիւլ-Ազիզի և
Մուբատ Եբէի գահընկեցութիւնը :

Պիտի տեսնէ՛ք , չնորսալի Ռէզինս , որ Ապտիւլ-
Համիտ դեռ չպիտի հանգստանայ : Ամէն ատենէ
աւելի կասկածոտ պիտի դառնայ , իր Ելլաղէն չի
պիտի հեռանայ , ամէ՛ն մարդէ պիտի վախնայ ,
խիղճի խայթերէն պիտի վախնայ , և իր հոգետան-
ջութիւններու վայրկեաններուն , ուրիշ ոճիրներ
գործելով միայն պիտի հանգստանայ : Ի՛նչ դժբաղ-
դութիւն երկիրին համար : Վստա՛հ եղէք թէ՛ այդ
մարդը հետզհետէ ուրիշ բան չպիտի տեսնէ ամէն
կողմ , բայց եթէ Միթհատի սպաննիչը պատուհասել
ճգնող վրիժառուներ :

Ես կը ճանչնամ Ապտիւլ-Համիտս , ես զայն
հասկցած եմ , իր սիրական կիներ եղած ատենս .
բայց ճշմարտապէս հասկնալի՞ է ան : Ապտիւլ-
Համիտ իր նմանը չունի : Իր տեսակին մէջ եզա-
կան է ան : Ծիչդ է որ , շատ մը մենագարներ և
շատ մը ինքնակալ և բռնաւոր միապետներ կան ,
բայց Սուլթանը , ա՛ն , իր տարօրինակութիւննե-
րովը և հրէշութիւններովը , ուրի՛շ տեսակ էակ
մըն է :

Եօթը տարիէ իվեր ինչպէս կը հանդուրժեն
զայն : Ան գիտցած է ջնջել ազգային ամէ՛ն զգա-
ցում և իր բռնակալութեանը տակ խոնարհեցնել
իր հպատակները : Երկիրը իր խաղալիքն է , կ'ըտէք

ամուսինիս, յարգելի Գատը մը, որ հոս ուխտաւորութեան եկած էր:

Ես կ'ուզէի պզտիկ թռչուն մը ըլլալ և աննշմար մտնել պալատին այն սենեակը, ուր հիմա կը գտնուի Ապտիւլ Համիտ, կամ կ'ուզէի սատանայ ըլլալ, մտնելու համար իր հոգիին մէջ և գիտնալութէ՛ ինչ կը խորհի: Խաղաղա՛ծ է թէ վրդովուած, հանդարտա՛ծ է այս վատ մարգաստանութենէն, թէ ոճիր գործելու աւելի՛ վայրագ ու կատաղի դարձած: Ասոնք ինծի համար անորոշ հարցեր են, որոնք շարունակ զիս կը զբաղեցնեն, խռովելով հանգիստս:

Մնաք բարո՛ւ, սիրո՛ւնս, յիշեցէ՛ք միշտ զիս, ձեր Միւրդի Իռէմը, որ կրկին կը դժբաղդանայ, կը վշտատանջուի, հակառակ իր հանգստութեանը, հակառակ իր ամուսինին մխիթարիչ խօսքերուն, ա՛յնչափ բարձրօրէն համակրելի և փափկազգած այդ մարդուն յորդորներուն:

Մնաք բարո՛ւ, սիրելի Ռէզին, ձեզի աւելի գրելու ո՛չ ուժը, ո՛չ ալ կամքը կը զգամ ներսս. դո՛ւք ալ լացէք Միթհատի վրայ. Նոր-Թուրքիաի այդ հայրենասէրին, օսմանեան ազատութեան այդ նահատակին:

Ձեր ամենամոլորէրը

ՄԻԹԻՒՆԻ ԻՌԷՄ

Ի՛՛՛՛.

Ապտիւլ-Համիտի անբուժելի մենագարութիւնը՝ Թաիֆ խաղաղ և մենիկ պզտիկ քաղաքը կասկածելի քաղաքական մարդոց աքսորաւայր մը դարձուցած էր: Հարիւրէ աւելի աքսորականներ կային հոն: Միթհատի բարեկամներ, ծանօթներ, հիացողներ, ուսանողներ, կայսերական պալատներու նախկին բնակչուհիներ, և մանաւանդ մտաւորականներ և սպաներ: Մեծ թշուառութեան մէջ էին անոնք. անոնցմէ ոմանք քաղաքապետութեան մետուէին օրական 3 կամ 5 դահեկան կը ստանային. ուրիշներ ամէն տեսակ ազրիւրէ զուրկ էին և կը կերակրուէին 3 կամ 5 դահեկան ստացողներուն ծախքովը:

Բայց քաղաքապետութեան գանձը դատարկ էր և միջոցներ չունէր այդ դժբաղդներուն ծախսելու համար. նոյնպէ՛ս տեղին քաղաքապետին արդիւնուած էր Կառավարութենէն ամենաջնջին գումար մը խնդրել՝ աքսորականներուն համար: Երբեմն կ'արտօնէին, կամ աւելի ճիշդը կը հանդուրժէին անոնց հաւաքուիլը, բայց Մէքքէի էմիրը Նորին Վեհափառութեան կողմէ բարեւներ ստանալուն պէս, կը յիշէին զանոնք և անմիջապէս ծակը կը

թիւմէին, ոչխարներու պէս : Միւրդի Իռէմ' և Էմիր Աթէշ, որոնք ուրիշներու հետ բաղդատուելով չնորհով թոշակներ ունէին, անոնց կ'օգնէին և իրենց զժրադուլթեան ընկերներուն վիճակը կ'ամոքէին :

Այդ չնորհազուրկները շատ տխուր կեանք մը կը վարէին . մէկը իր տունէն նստակ մը կը ստանար, որմէ կը տեղեկանար ընտանիքի պետին ծանր հիւանդութիւնը . անկէ լուր չէր կրնար ստանել . եթէ ուզէր հեռագիր մը զարնել, հեռագրիչը վերին հրամանի համաձայն՝ առանց իշխանութիւններու անմիջական արտօնութեանը՝ զայն չէր ընդուներ : Եթէ իշխանութիւններուն ղրմէր, անոնք, իրենց ըմբոստացուցիչ անտարբերութիւնովը՝ իրեն կը պատասխանէին թէ՛ Պոլիսի հետ բանակցութեան մէջ էին, զիսնայու համար որ կրնային ընդունիլ այդ հեռագիրը : Եւ մայրաքաղաքը սովորութիւն ունէր չի պատասխանելու : Օրին մէկը, իշխանութիւնները արտօնութեանը արգիլեցին քաղաքապետարան մտնել : Ատիկա բռնակալութեան լրո՛ւմն էր : Անոնցմէ մէկը, Հուլքի պէյ, Բարիդի բարձրագոյն վարժարանէն վկայուած և արժանաւոր երկրաչափ, անձնապան եղաւ : Բանտարկեալներէն հարիւրին 38ը թոքախտաւոր էին և մահերու թիւը ամէն ուրիշ տեղէ աւելի շատ էր անոնց մէջ :

Այս մարտիրոսներուն վիճակը մեծապէս կը վշտահարէր Միւրդի Իռէմը և իր ամուսինը : Օր

մը, այս վերջինը ստացաւ 1000 ոսկինոց կտակը Ապտիւլ-Մէճիտի մէկ գերուհին, որ Մէտինէ աքսորուած էր և որ ատենով Շամիլի քով ծառայած էր : Երեւցածին համաձայն, Մէտինէի Գատըն շատ արդարամիտ մարդ մըն էր և բնաւ կարեւորութիւն չէր տար քաղաքականութեան և Համիտէն ստացած հրամաններուն : Իր ստորադասներուն ո՛րեւէ բան չըսաւ ան . կառավարիչին անգամ չի զիմեց և այդ հսկայ գումարը յարգելի հօճախ մը միջոցով հասցէին զրկեց :

Էմիր Աթէշ իր չուրջը հաւաքեց գլխաւոր աքսորականները և անոնց ըսաւ .

— Միբլի՛ բարեկամներս . գիտե՛մ որ գուք ինձմէ աւելի զժրադը էք, նորհիւ Աստուծոյ, կնոջս և ինձի յատկացուած են եկամուտներ՝ որոնք մեզի լայնօրէն կը բաւեն : Ես 1000 ոսկիի հսկայ գումար մըն ալ ժառանգեցի : Ձեր մէջէն 15 հոգիի տրամադրութեանը տակ կը դնեմ այդ գումարը, պայմանով որ անմիջապէս վախչիք : Գացէք Գահիրէի մէջ գտէք Տիկին Վէրնըր անունով զթասիրտ Ամերիկուհին, որ միշտ թղթակցութեան մէջ է կնոջս հետ . ան ձեզ յարարերութեան մէջ պիտի դնէ ուրիշ զժրադըներու հետ . անոնց օժանդակութիւնովը կազմելու համար զազոնի ընկերակցութիւն մը և պէտք եղածը ընելու՝ Միթհատի մահուան վրէժը լուծելու համար, ինչ որ ինձի և ձեզ բոլորի՞դ՝ կը նշանակէ սահմանադրական վարչութեան վերահաստատումը :

Անգլիական կառավարութեան կիսապաշտօն ներկայացուցիչը պիտի զիւրացնէ ձեր փախուստը. պէտք չի կայ միւսներուն մնաք բարով բնելու: Իրաւ է որ անոնք ազնիւ անձեր են, բայց դուք ժողովուրդին ընտրուածներն էք, մտաւորականները, որոնք կրնան երկիրին և ամբողջ ազգին օգտակար դառնալ: Կը յուսամ որ, Տիկին Վերնըրի շնորհիւ, ձեր փախուստն ալ մեծապէս պիտի զիւրանայ:

Տեղերնիդ գացէք, պատրաստութիւննիդ տեսէ՛ք. մինչև կէս-գիշեր ատեն ունիք: Եթէ պարտքեր ունիք, ես վրաս կ'առնեմ զանոնք վճարել: Զեզի համար ջորիներ պատրաստուած են: Պահապանները ձեռք առնուած են. բանէ՛ մը մի՛ վախնաք: Ահաւասիկ յանձնարարական նամակներու ծրար մը. զայն յանձնեցէք անգլիական գործակատարին, որ հոս տարերկրացիութեան օրինազերծութիւն կը վայելէ: Ահաւասիկ ծրագիր մը, զայն գաղտնապէս ուսումնասիրեցէք: Յտեսութիւն:

Պէտք էր տեսնել ուրախութիւնը այդ ազգս արձակուողներուն: Անոնք կը ցատկոտէին ազնուասիրտ էմիրին շուրջը: Անոնք կը գրկէին զայն. շնորհակալութիւննին կը յայտնէին անոր: Անոնցմէ մէկը ըստ էմիր Աթէշի.

—Բայց մենք պիտի փախչինք առանց ձեզ և ձեր կինը հեռերնիս ունեալու: Դուք մեր մէջը ամէնէ՛ն խելացին, ամէնէ՛ն կարողն էք: Մենք

մինամնիս ինչ պիտի ընենք եզկպտոսում, անծանօթ երկիրի մը մէջ: Դուք մեզ ամէնուս թանկագին Մենատըր մը կրնաք ըլլալ: Դուք մեծապէս պիտի զիւրացնէք մեր ծրագիրներուն յաջողութիւնը:

—Ո՛չ, պատասխանեց վեհօգի էմիր Աթէշ, ոչ, ես պէտք է Թաիֆ մնամ: Կարելի է այս աւանը դաւաճնարութեան կեդրոն մը դարձնել: Մենք մեր ուժերը պիտի միացնենք և հաւաքաբար պիտի գլուխ վերցնենք հոս, Ապտիւլ-Համիտի ինքնակալութեանը դէմ: Այն խռովութիւնները՝ որոնք պիտի սկսին հոս, Հիճազի սուրբ հողին վրայ, անչուշտ իրենց անդրադարձումը պիտի ունենան ամէն կողմ:

Այն ատեն, այդ ապստամբութիւնը չպիտի ըլլայ միայն Թուրքին ապստամբութիւնը մեր բռնակալին չարաշուք բռնապետութեանը դէմ, այլ բովանդակ Իսլամութեան ապստամբութիւնը:

Մենք կը սպասենք Գուրպան-Պաշրամի տօներուն. այն ատեն 300 միլիոն Մահմետականներու պատգամաւոր 300,000 ուխտաւորներ պիտի հաւաքուին Արաֆաթ լեռան վրայ: Հոնմէ՛ է որ բողոքի շարժումը պիտի սկսի: Աղօթքը ա՛լ Ապտիւլ-Համիտի անուամբ չէ որ պիտի կարդացուի, այլ իր եղբօրը՝ Ռեշասի անունով:

Եւ դուք, եզկպտոսէն, պիտի պատրաստէք հանրութեան միտքը, համախորհուրդ անոնց՝ որոնց հետ յարաբերութեան մէջ կը գնեմ ձեզ:

Այն ատեն, յեղափոխութիւնը ընդհանուր պիտի ըլլայ: Դուք պիտի տեսնէք որ, նոյն օրուան մէջ, թուրքիաի մէկ ծայրէն միւսը, և դեռ աւելին՝ բոլորովն մահմետական աշխարհին մէջ, Մօղղէպէ-Աքսաէն (Մարօք) մինչև Սօնտի կղզիները, Բագանէն մինչև Զանգիպար, իբր բողոքի նշան՝ վաճառատուները պիտի գոցուին: Այդ օրը նշանակի պիտի ըլլայ, և Կարմիր Սուլթանը՝ արթնցող Իսլամութեան անդրդուելի կամքին առջև գլուխ պիտի ծռէ: Այն ատեն, կա՛մ խանդավառ մէկուն գաշոյնին տակ պիտի սպաննուի ան, կա՛մ իրերու քնանկան բերումով՝ պիտի հրաժարի:

Խանդավառութիւնը չափ չունէր. կեցցէները անվերջ կը կրկնուէին. դժբաղդ մարդիկը բաժնուէցան մոլեգին ծափահարութիւններու մէջ:

Ամէն բան սրտորաստուած էր: Կէս-գիշերուն, անգլիական գործակատարը՝ Նուհ, ձիտտէի մօտ Կարմիր Ծովի ափունքէն, դէպի անձանօթ տեղ մը գանոնք ճամբայ կը հանէր: Այդ օրը, հոն չոգենաւ մը պիտի ժօտենար: Անոր գործակալը, Պարոն Հօու անունով մէկը, խոստացած էր չոգենաւը սպասցնել գիւղին դէմ, աքսորականները նաև տոնելու համար: Որոշուած ժամուն, առանց ուշ մնալու, նաւը կրեցաւ աւանին առջև: Աքսորականները ուրախութիւննուն կու լային, զմայրուն ակնարկով մը կը նայէին այդ փրկարար նաւին, որ զիրենք Սուէզ պիտի տանէր:

Երկրորդ նաւապետին առաջնորդութիւնով՝

նաւակ մը ցամաք ժօտեցաւ, ճամբորդները առնելու: Անոնք նաւակին մէջ նետուեցան, յարգակա-նօրէն բարեկերով ազնիւ նաւապետը, որ ա՛յնչափ փոթկտտութիւնով իրենց ծառայելու նուիրուած էր:

Նաւապետը հին ազատական մըն էր. ան տեղեկացած էր բոլոր ծրագիրին: Մալթա-Քէօչիի դատաւարութեան միջոցին, Պոլիս անգլիական զրօջի տակ նաւապետութիւն ըրած ըլլալով, այս նաւապետը շատ մօտէն հետեւած էր Ապախը-Համիտի քաղաքականութեանը և դայն կը ճանչնար: Ծոգենաւին պզտիկ սպանին մէջ, 15 փախստականները իրենց համար շտկուած սեղան մը գտան: Նաւապետը, 15 հողի ստոյգ մահէ մը փրկած ըլլալուն համար ուզախ, անոնց կեանքին դաւաթ պարտեց:

Մօտ երկու տարիէ իվեր, 15 փախստականները տ'րեէ խնջոյքի չէին գտնուած:

Իր խանդավառութեանը մէջ, նաւապետը նաւին մէջ գտնուող սպայի մը հրամայեց՝ նաւը անմիջապէս զրօշազարդել և մեծ կայմին վրայ պորզել օսմանեան զրօշը:

Ճամբան, տեսան թղթատար նաւ մը, որ հակառակ ուղղութիւնով կ'երթար: Այդ չոգենաւին մէջ չկրցան ըմբռնել սրարչաւ ընթացող անգլիական բեռնարարձի մը՝ զրօշազարդուած ըլլալուն նշանակութիւնը: Բեռնարարձը կը սուլէր, շարունակական կերպով կը սուլէր, երբ մեծ նաւին ժօտեցաւ: Իր կարգին միւս չոգենաւն ալ պատաս-

խաննց այդ կրկնակի բարեւեներուն, բայց առանց եղածէն բան մը հասկնալու: Կարծիր Մովէն անցքը սքանչելի եղաւ մինչեւ Սուէզ: Նաւապետը յուզումով կը դիտէր այդ եռանդուն երիտասարդները, որոնք Եգիպտոս կ'երթային՝ իրենց երկիրին ազատութիւնը ձեռք բերելու համար:

Տիկին Վէրնըր, քանի մը ազատական Թուրքեր, եգիպտական պատգամաւորութիւն մը, նուազախուսմբով, Սուէզի նաւամատոյցը կը սպասէին փախստական բանտարկեալներուն:

Ձանոնք ծափահարեցին և ազատութեան անունով բուն ճառեր արտասանուեցան. յետոյ ամբողջ խումբը շոգնաւ մտաւ, այցելութիւն տալու յարգելի նաւապետին, որ ա՛յնչափ մարդասիրորէն փութացած էր այդ երիտասարդները փրկել զարհուրելի հալածանքէ մը, բռնակալութեանէն և մահէն:

Եգիպտոսի մէջ, այս յեղափոխականները աշխատեցան տենդոտ գործունէութիւնով մը, աննման քաջասարտութիւնով և անձնուրացութիւնով մը. յարաբերութեան մէջ մտան ժընէլ, Բարիզ, Լոնտոն ապաստանած Ժէօն-Թիւրքերուն հետ, և շարունակաւ նամակներ ստացան Պոլիսէն: Քանի մը գլխաւորտ անձեր՝ Գահրէի մէջ իրենց կ'օգնէին, Պօնթի կեանք մը վարել կարենալու չափ: Մինչեւ անգամ անկեղծ գործակիցներ և բարեկամներ ունէին Սուլթանին շատ մօտը գտնուող անձերուն մէջ, նախարարներու Խորհուրդին մէջ: Մահմե-

տական աշխարհը անոնց շատ կ'օգնէր: Իրենց թերթը՝ Իլիթի, որ ամէն չարաթ կը հրատարակուէր թուրքերէն, արաբերէն և ֆրանսերէն լեզուներով, աշխարհի ամէն մասերուն մէջ հնորէքով ընթերցողներ ունէր: Օտար հիւպատոսները, բացի ուսական հիւպատոսներէն, յանձն կ'առնէին զազանապէս երկիր մտցնել այդ փրկազօրծ գրականութիւնը, որ բուն յարձակումներ կը ժայթքէր տիրող իշխանութիւններուն դէմ:

Էմիր Ալթէ, հնորիւ անգլիական պատգամաւորութեան և հոյանտական գործակատարներու բարեացակամ ծառայութիւններուն, կանոնաւոր թղթակցութիւն մը կը մշակէր իր պաշտպանեալներուն հետ: Ինք ալ իր մասին կ'աշխատէր Թաիֆի մէջ: Բոլոր Պէտէվին պետերը, զանազան Շէրիֆներ^(*) իրեն գաղափարակից էին: Էմիր Ալթէ շատ կը յարգուէր, իր խօսքը շատ ազդու էր: Նրբամիտ և խորամանկ, պաշտօնատարներու աչքին երբեք կասկածելի չէր երեւար. հակառակ 15 բանտարկեալներու համախումբ փախուստին, իրմէ չէին հաւատնէ: Գոհ կը ձեւանար իր քաջուած կեանքէն, մենութենէն, և Շէյխերու և իւլէմաներու, ինչպէս նաեւ հոռւոր երկիրներէ եկած անվնաս ուխտաւորներու այցելութենէն: Մինչ Միւրդի Իռէմ՝ անհամբեր էր և

(*) Մարգարէին շառաւիղներէն:

կ'ուզէր կարելի, եղածին չափ շուտով գործին վախճանին հասնիլ :

— Ի՞նչ պիտի ընեն, կ'ըսէր ինքնիրեն, Ապտիւլ-Համիտը, իր խորհրդաւոր ելլալը և իր Քամարիլլան: Ատոնք ամէնը հրապարակի մը վրայ պիտի կախեն: Բէշատ էֆէնտի ինչպէս գահ պիտի բարձրանայ, ամբոխին խելայեղ ուրախութեանը մէջ...

Միւրդի Իռէմ ա'լ նստակ չէր ստանար Ռէզինէն և մեծ անատուգութեան մը մէջ էր: Ի՞նչ ըրած էին այդ սիրուն Կոսկասցունին, Կ'ապրի դեռ, կ'ըսէր ինքնիրեն Միւրդի Իռէմ, խեղդած են զայն չարչարանքներով, ելլալով մէկ խաւարալուռ նկուղին մէջ, ինչպէս այնչափ ուրիշներ խեղդուած են Քէրքէզ Մէհմէտ փաշա անուն հոչակաւոր դահիճի մը կողմէ:

Օ՛հ, Միւրդի Իռէմ սրչափ անհամբեր էր լուր առնելու այդ երիտասարդունիին մասին, զոր Քրոջ մը պէս կը սիրէր:

Միւրդի Իռէմ գաղափարը ունեցաւ Քահիրէ Տիկին Վէրնըրի գրելու, խնդրելու համար անկէ՝ յարարելութեան մէջ մտնել իր ծանօթներէն մէկուն հետ, Պոլիս գտնուող արձակուած կնոջ մը հետ, գիտնալու համար թէ՛ իր սիրելի բարեկամ մունճին ողջ-առողջ էր և ինչո՞ւ իրեն չէր գրեր:

Եգիպտոսի մէջ, յեղափոխականները օրէ-օր ծաւալ կը գտնէին: Իրենց կուսակցութիւնը արդէն

73 գործօն անդամ և անհամար համախոհներ, գործակիցներ և բարեկամներ ունէր:

Կազմակերպութիւնը բովանդակ աշխարհին ծանօթ էր արդէն: Թայլոզ և Թաւս կրկար յօղուածներ կը նուիրէին այս իմաստուն և պարկեշտ նորակարգիչներուն գործունէութեանը և ծրագիրին: Անգլիայի մէջ, մինչև անգամ ազդեցութիւն բանեցուցած էին ազատականներուն վրայ, և անոնց յիշջոյններէն մէկը հաստատ խօսք տուած էր որ՝ իշխանութեան գլուխ անցնելուն պէս, անոնց դատը լըջօրէն ձեռք պիտի առնէր և ամէն միջոցներով պիտի բռնադատէր արիւնկղակ Սուլթանը հրաժարելու, այդ հրէջը, որ իր թուրքութեանը պատճառով 1877ին հայրենիքի նուերական հողին մէկ երրորդ մասը կորսնցուցած էր, այն հողին՝ որ գրաւուած էր իր պապերուն կողմէ, որոնցմէ մէկուն հետ, իրենց փառքի օրերուն, զաչնակցելով հպարտ կը զգար ինքզինքը Ֆրանսուս և. մը:

Այո՛, կ'ըսէր ազատական կուսակցութեան ազնիւ յիշջոյն, թրքական ինդիլը հանրային հարց մըն է, որ բովանդակ մարդկութիւնը կը շահագրգռէ: Կարելի չէ՛ թողուլ որ՝ երեսուն միլիոն բնակիչ ունեցող մեծ պետութիւն մը ուզածի՛ն պէս կառավարէ խենթ մը: Շա՛տ յանցաւոր են մեր պահպանողականները՝ ձեռք չառնելուն համար արդար դատը այդ զժբաղը օսմանցի ազգին:

Սակայն, հակառակ այս յայտարարութիւններուն, ո՛չ Եւրոպայի ազատական մեծ Պետութիւններու ներկայացուցիչները, ո՛չ ալ կարեւոր օսկանները, բան մը չըրին, օգնելու համար բարե-նորոգիչներուն: Նախ խոշոր դատարի խօսքեր-յետոյ, աւանդ, անտարբերութիւն, կամ աւելի՛ գէշը, թշնամութիւն և Ապրիլ-Համիտի հետ գաղտնի համաձայնութիւն:

Եւր.

Տարիները իրարու կը յաջորդէին և կազու-թիւնը նոյնը կը մնար: Ժողովուրդը նոյն անտար-բերութիւնը կը պահէր, ըմբոստացուցիչ անզգայու-թիւն մը՝ իր սեփական գործերուն իսկ հանդէպ: Մատ-նիչութիւնը բարձրու մէջ կ'արժատանար. լրտեսու-թիւնը առաքինութիւն մըն էր. ազգը ա՛լ միասին-տին ստրուկը դարձած էր: Այդ միասինն է որ կը վարէր ամէն բան իր պալատէն. նախարարները, Պետութեան աստիճանաւորները, պարզ գործակա-տարներու աստիճանին իջած էին: Ո՛րչափ հլու ըլլային և նուազ գործի խառնուէին, ա՛յնչափ աւելի չնորհներու կ'արժանանային:

Կառավարութիւնը Բարձրագոյն Գլուռէն կը փոխադրուէր Երլտըզի պալատին սրահներուն մէջ: Նախարարները հրաժարական տալու սովորութիւն-նին կորսնցուցած էին: Թագաւորը զանոնք սրկա-ներու, ստորին դասակարգէ մարդերու, ժէճոն-թիւրքերու, սահմանադրականներու տեղ կը դնէր, և անոնք, փոխանակ հրաժարելու, երկար խնդրա-գիրներ կ'ուղղէին Նորին Վեհափառութեան, անկէ չնոսճ կնդրելով:

Եւ մտաւորական կեանք չի կար: Զի կա՛ր Հա-

մալսարան, չի կա՛ր կաճառ, չի կա՛ր գիտական սրնէ ընկերութիւն, ո՛չ ալ բովանդակ կայսրութեան մէջ գեղարուեստական չրջանակ մը: Հաւաքումները արգելուած էին: Եթէ հազուադէպօրէն քանի մը հոգի հաւաքուէին նշանառքի կամ մեռելական արարողութեան մը համար, Ապսիւլ-Համիտ կը գրգռուէր, կը զայրանար և կազմակերպիչները քաղաքէն հեռացնել կու տար:

Համիտ բոլոր դործերը ելըլորդի մէջ մենաշնորհակնացուցած էր: Մեծ Դեսպանատունի մը թարգմանը՝ զիւանագիտական ամէնէն լուրջ գործի մը մասին՝ սենեկապետի մը հետ բանակցութիւն կ'ունենար Մապէլինի կասկածելի մէկ սենեակին մէջ: Մապէլինի մասնաւոր պիւժիէն մէջ, ուր սուրճը կը պատրաստուէր, պալատական քարտուղար մը մենաշնորհի կարեւոր բանակցութիւն մը կ'ունենար՝ Պելճիքացի հարուստ զրամատէրի մը հետ. և այսպէս ամէն կողմ:

Բոլոր նախարարներուն, բոլոր վարչագէտներուն, մեծ ու պզտիկ բոլոր պալատականներուն ամէնէն մեծ մտահոգութիւնը կը կազմէր՝ Նորին Վեհափառութեան տնձին մասին նռնակախոսքեր տալը:

Տարիները կ'անցնէին անփոփոխ:

Ժողովուրդն ալ չէր փոխուեր: Ատենով, ուրիշ վարչութեան տակ ապրած և ուրիշ չրջանի մը մարգիկը ճանչցած կարգ մը անձեր կային. բայց, ներկային մէջ, կարելի չէր որակել արդի Հաւիսեան սերունդը, որովհետեւ ան ծնած էր բռնաւորին թագաւորութեանը օրով և վարժուած էր միայն

անոր արտառոցութիւններուն զլուխ ծռել, անկէ բղխող ամէն բան սուրբ, վեհ և ազնիւ նկատել: Այդ սերունդը հանրային գործերը վարելու ուրիշ կերպ մը, կառավարութեան ուրիշ ձեւ մը չէր կրնար երեւակայել:

Ան որ կ'արտասանէր սա՛ տեսակ խօսքեր, Յեղափոխութիւն, Հակահեղափոխութիւն, Մահախոսք, Երեսփոխան, Ժողովուրդական, Ինկուրքիան, Ժողովրդային իշխանութիւն, Միքիս, Մուրս, եւ այլն, խստօրէն կը պատժուէր, կ'աքսորուէր, նոյն խակ կը կատուէր: Գրաքննութիւնը, խիստ և գերակայ, կը սպաննէր մամուլը: Մամուլին մէջ ուրիշ բան չէին կարգացուեր, բայց եթէ Սեղալըզի արարողութիւնը, պաշտօնաւորութիւնները, ասիական քաղաքացուները, պաշտօնական թաղանթները, ժամանակները եւ մեկնումները, մահերը, շոգեկաններու ժամանակացոյցները եւ ծանուցումները:

Ո՛չ մէկը, բացի զանազան մտաւորականներէ, և անոնք ալ միշտ գաղտնապէս, կրնար քննադատել ո՛չ թէ կառավարութեան, այլ նոյն խակ քաղաքագետութեան արարքները: Այս սովորութեան հետեւանքով է որ քաղաքացիները մոռցած էին իրենց իրաւունքները, և ինքզինքնին կը նկատէին թագաւորին գերիները, ստրուկները:

Յոյն-թրքական պատերազմը անխուսափելի էր: Էմիր Աթէշ, ուրիշ անունով զօրավար Ալի փաշա, իր աքսորավայրէն կը խնդրէր որ հրամանատար կարգուի հեծեկազօրքի այն զօրաբաժինին, որ

պատերազմին պիտի մասնակցէր: Արտասովոր լուր-
իր խնդրանքը անմիջապէս ընդունուեցաւ: Հետե-
ւաբար, Ալի փաշա՝ Միւրղի Իռէմը և իր զաւակը՝
12 տարեկան սիրուն մանչ մը՝ որուն անունը
Շիմչէք զրած էին՝ Թախի ձգելով, առաջին շոգե-
նաւով մեկնեցաւ Իզմիր, ուրիշ յիսունի չափ սպա-
ներու հետ: Սուլթանը չէր արտօներ անոնց Պոլիսէն
անցնել, ամէնքն ալ կասկածելի նկատելով: Իզմի-
րէն, անոնք ղիւրութիւնով Սելանիկ անցան:

Ապտիւլ-Համիտ, Ելլտրզի իր մենութեանը մէջ,
Ալի փաշաի և իր ընկերներուն մահը ծանուցանող
հեռագիրին կը սպասէր չարունակ: Ս.մէն անգամ
որ պահարան մը բանար, կը զողզար և ատոր
վրայ կը խորհէր: Իրեն անանկ կու գար որ՝ էմիր
Աթէշ վերջին մնացորդն է անոնց՝ որոնք կարող
էին գաւազդութիւն մը սարքել իր անձին դէմ:
Օր մը, Նորին Վեհափառութիւնը, իր պալատին
մէկ խորհրդապահ անկիւնը, շատ կը մտահոգուէր՝
զեռ էմիր Աթէշի մասին զինքը գոհացնող հեռագիր
մը ստացած չլլալուն համար: Էմիր Աթէշ, որ պէտք
է վրէժխնդրութիւն ունեցած ըլլայ ինձի դէմ,
որովհետեւ իրեն շատ չարիք հասցուցած եմ, իմ
զինուորներուս միտքը կը պղտորէ, կը խորհէր-
հասլաւ եթէ անոնք Պոլիսի վրայ քալեն, զիս գա-
հէս վար առնելու համար...

Սուլթանը անմիջապէս իր առաջին քարտուղարը
կանչեց. գոյն առնել տալով, հեռագիր մը տուն
տուտ, որ ծածկաղիր պիտի հաղորդուէր իրեն

վստահելի անձի մը, որուն պարտականութիւն-
տրուած էր գաղտնապէս հսկողութիւն կատարել
բանակին ընդհանուր հրամանատար էտէմ փաշաի
վրայ: Քանի մը ժամ ետքը պատասխան մը
ստացաւ:

Յաջորդ օրը, Վալէսթիւսի կռիւն միջոցին,
Համիտի լրտեսներէն մէկը, որ իբր զինուոր
ծպտած էր, էմիր Աթէշը կը սպաննէր, անոր գան-
կին գնդակ մը արձակելով: Ինասկին մէջ լուր
կը չրջէր թէ՛ էմիր Աթէշ յունական գնդակէ մը
զարնուած էր: Պատիւի դաշտին վրայ, այսպէս
հողին փչեց Շամիլի որդին, բայց աւանդ, ո՛չ թէ
յոյն կէզոնի մը գնդակէն, այլ վատ ձեռքէ մը
սպաննուելով:

Ուրախութենէն արբշլու, Ապտիւլ-Համիտ պաշ-
տօն յանձնեց իր անձնական ղիւանին՝ Միւրղի
Իռէմին ծանուցանել այս ա՛յնչափ ծանր պատա-
հարը, անոր յայտնելով իր կայսերական բարձր
ցաւակցութիւնները: Նոյն ատեն, Սուլթանը հրա-
մայեց որ Միւրղի Իռէմ Հոռոս փոխադրուի: Այս
առիթով, Միւրղի Իռէմի ղեռաթի որդին՝ Շիմչէք,
որ հազիւ 12 տարու էր, Նորին Վեհափառութեան
կողմէ հրետաղորդի հրամանատար և անձնապահ
գունդին թիկնապահ անուանուեցաւ, բայց այն
խիստ պայմանով որ՝ մօրը հետ Հոռոս կղզին
ընակի և յաճախէ հոնտեղի Սիւլէյմանիէ վար-
ժարանը:

Դժբանգը Միւրղի Իռէմ: Տղուն պէս, ի՛նք ալ

կը սպասէր յաղթանակի լուրի մը, իր ամուսինին Աթէնք մտնելը, կամ Պարթևներու բարձունքներուն գրաւումը: Միւրդի Իռէմ՝ իր ամուսինին համար ասպետական արկածներ և յիշատակելի յաջողութիւններ միայն կ'երազէր:

— Ազգը, կ'ըսէր ինքնիրեն Միւրդի Իռէմ, կողկասի կամ Հնդկաստանի ստրուկներուն ատրիճանին սխտի իջնէր, եթէ իր կենսունականութեան ասպացոյցը չի տար, հպարտօրէն ընդունելով այդ պատերազմը: Որչա՛փ պխտի ուզէի որ էրկիւմարդ հղած ըլլայի, էմիր Աթէնի պէս սքանչելի ձիաւոր մը, և կռուէի Թերմոպիլէի մէջ և իր հետը պանծալի ճակատամարտի մը մէջ:

Յետոյ աչքերը խոնարհեց իր կողքին կեցող տղուն վրայ և տեսնելով որ ան չափազանց կը նմանէր հօրը, զայն կուրծքին վրայ սեղմեց սրտազեղումով:

Յանկարծ, ծառայ մը եկաւ տեղեկացնել թէ՛ Սուլթանին կողմէ պատուիրակ մը կ'ուզէր խօսիլ իրեն հետ: Իր ամուսինին մեկնումէն իվեր առաջին անգամն էր որ պետական պաշտօնատար մը ոտք կը դնէր իր տունը: Չարաչուք նախազգացումներէ պաշարուած, Միւրդի Իռէմ ոտքի ելաւ և դիմաւորեց պատգամարեւը: Ի՞նչ կ'ուզէր Սուլթանը իրմէ՛:

Մտածկոտ, մօտեցաւ պաշտօնատարին, որ ծանրաչուք և հայրական վարք ունեցող մարդ մըն էր: Պաշտօնատարը, հարաւոր բոլոր վար-

ուելագիտութիւններով, հաղորդեց այն դժբաղդութիւնը՝ որուն կ'ենթարկուէր Միւրդի Իռէմ: Պաշտօնատարը կրցածին չափ մխիթարեց զայն և խօսքը վերջացուց ծանուցանելով որ՝ ազատ էր երթալ հաստատուել Հոռոս, որ աւելի աղէկ կլիմայ ունեցող կղզի մըն էր:

Վշտառիթ լուրին համար սիրտէն զարնուած, մանկամարդ կինը զեղեւեցաւ. բայց, իր սրարտականութեանը համար կորովի, գրկեց իր Շիմշէք զաւակը, որուն համար պէտք էր որ սպրէր ինք աստէ ետքը: Իրաւեցնէ՛, տղան հօրը կը նմանէր:

Պաշտօնատարը մեկնեցաւ: Միւրդի Իռէմ, գրեթէ ուշադրոյն եղած, կամաց-կամաց հասկցաւ որ՝ գէշ երազ մը չէ՛ր պատահածը, այլ մահացու իրականութիւն մը, անդամանելի կորուստ մը: Սկսաւ լուռ արցունք թափել և իր զաւակը սեղմեց սիրտին վրայ... Երկուքն ալ մխաքովին կը տեսնէին էմիրին համակրելի դէմքը, յողովութիւններէն հալումաչուած, վիրաւոր և մահամերձ, բայց փափկօրէն զիրենք մխիթարող:

Շիմշէք իր փափկաշնորհ և ազնուական ձեւերովը մայրը կը յիշեցնէր. մօրը ձիւքերը և մօրը աղւոր աչքերը ունէր. ժառանգած էր հօրը ազնուացեղ և հպարտ բերանը և անոր յանդուգն և վեհօղի նկարագիրը ունէր: Մայրը զայն խանդաղատազին սեղմեց կուրծքին վրայ. նոյն ինքն էմիրը տեսնել կը կարծէր:

Իր բովանդակ արկածալից կեանքը աչքերուն

առջևէն անցաւ: Դժբազդութեան զպրոցին մէջ մեծցած, ճակատագիրի հարուածներուն դէմ արիւնք և հօր հանդիսացաւ ան:

— Ի՞նչ որ կը դուշակէի՝ պատահեցաւ, մտածեց, զեռ ուրիշ դժբազդութեաններ ալ պիտի տեսնեմ արդեօք: Բայց կ'ուզեմ որ զաւակս փրկեմ, իմ սիրակսն Շիմշէքս, որ պէտք է ասկրի, իր հօրը և հայրնորդներուն վրէժը լուծելու համար:

Ամսուան մը սուգէ և անձկութենէ, թախիծէ և յուսահատութենէ ետքը, մայր և զաւակ մեկնեցան Թախիքէն, որ ա՛լ իրենց համար անցեալին հմայքը չունէր: Էմիր ա՛լ հոն չէր, իրենց ընկերները անհետացած էին, մեծ մասը աքսորուած, և այդ աւանը իրենց աչքին դերեզմաննոց մը կ'երեւար:

Տասնըջինգ օրուան ճամբորդութենէ՞ ետքը, հասան Հոռոզ: Միւրդի Իռէմ կղզին գտաւ ճիշդ անյայտ ինչպէս տարիներ առաջ տեսած էր, սիրուն իր մենութեանը մէջ, խաչակիրներէ և ասպետներէ մնացած իր զոհակներով:

Յիշեց իր կայքը այդ կղզին մէջ, Պոլիսէն յանկարծակի իր աքսորումին միջոցին: Այն ատենէն խիեր ի՞նչ զէպքեր պատահեր էին... Միւրդի Իռէմ ուզեց Միւր-Սէֆաի բլուրին վրայ հաստատուել, հանգիստ ապրելու համար, հեռու Կայսրութեան և գործերու խլացուցիչ աղմուկներէն, ապրելով իր յիշատակներովը, միտքը յառած սիրելի անհետացողին, սպասելով որ զթած մահը զիրենք յաւի-

տենապէս միացնէ: Շիմշէք պէյ, աշխուժ և ուշիմ, զպրոց կ'երթար: Միւրդի Իռէմ իր պարապի երկար ժամերուն մէջ զբազում մը ունենալու համար՝ իր կեանքին յիշատակները կը գրէր: Զանոնք գաղտնի կը պահէր. իր զաւակը այդ յիշատակները հասկնալու տարիքին մէջ չէր: Ա. հատորին առաջին էջին վրայ սա քանի մը տողերը կը կարդացուէին.

Իմ Շիմշէք զակիս, որդի էմիր Աքեշի, որ փսձնոքի մը պատկերած է Վալեսպիւսի պատիւի դաշտին վրայ եւ որ որդին է Հաւաստեալներու Մուրթան, Կովկասի իշխան անուան Շաւիդի:

Երբ 20 տարեկան ըլլայ:

Զաւակս. դուն կը ճանցես Զերու մայրդ. բաց երկիք չե՛ս ճանցնար Միւրդի Իռէմ մայրդ: Միւրդի Իռէմ, արարածներուն ամենէն դժբաղդը, Կովկասի մեջ ծախուած, Մուրթաններու պապսներուն մեջ բանտարկուած, Ապսիւր-Համիսի կիկը եւ անհաշ բշխամին, այդ արիւնաբու բուսարիկ խաղաղիքը, Թախիք աստուած: Էմիր Աքեշ հորդ հետ անուանուալով, ան կիկերուն ամենէն երջակիկը եղաւ: Իր անուսիկին պատկերելուն հետեւանով, նորէն հարուածուելով դժբաղդութեան, այս արիւնոս հոգերուն մեջ նկարագրեց իր նահապետ անուսիկին կեանքը: Ո՛վ զաւակս, եթէ Ապսիւր-Համիսի անհետանալին 25

սարի ետքը ողջ ըլլաս, հրատարակես այս մեռագիրը: Այդ հոգը քու գաւկիոյ յակձնե, երբ այդ ժահակակին առաջ գաս ինձի միակայ յարիսնակարևութեան մեջ:

Մայրո՛

ԶԷՀՐԱ.-ՄԻԻԲՂԻ ԻՌԷՄ

Մանկամարդ կինը չէր համարձակեր աւարտել իր օրագիրը: Իր կեանքը ա՛յնչափ բեղուն, ա՛յնչափ խոտոլայոյզ եղած էր որ, դժբաղդ կինը զեռ ուրիշ արկածներէ կը վախնար: «Բայց ասկէ աւելի գէշ ի՞նչ կրնայ պատահիլ ինձի», կ'ըսէր ինքներես: Սակաջն իր գաւկին համար հոգին կը դողար:

Շիմչէք, աքտորականութի մը զաւակը, աքտորական մըն ալ ինք, աղէկ աչքով չէր զեռուեր իր ընկերներուն կողմէ, Հոռոտսի մէջ: Բայց իր արտասովոր ուշիմութիւնը, իր անուշ և ագնուական նկարագիրը, ամէնուն համակրելի կը դարձնէին զայն: Հպարտ, եռանդուն, ուսումնասէր, քաղաքին ամէնէն նշանաւոր տղան կը նկատէին Շիմչէքը: Շիմչէք պաշտպանութիւնը և քաջակերութիւնը կը վայելէր բոլոր ուսուցիչներուն, բոլոր պաշտօնատարներուն և մանաւանդ «ժէժն-թիւրք» ձգտումներ ունեցող աքտորականներուն: Իր մայրը ամէնուն կողմէ չափազանց կը յարգուէր և ամէնուն հիացումը կը գրաւէր: Միւս աքտորեակներուն կիները, նոյն իսկ պաշտօնականներուն կիները, կը յաճատէին Սիւր-Աէֆա բլուրին վրայ գտնուող

իր տունը, որ հաստատուած էր Գոււ-Պուրնուի աւազակոյտերուն վրայ նայող մեծ պարտէզի մը մէջտեղը:

Ապտիւլ-Համիտ ալ, իր կարգին, չէր կրնար մոռնալ իր նախկին կինը՝ Միւրդի Իռէմը: Գիշեր չէր անցըներ՝ առանց այդ կնոջ վրայ խորհելու: Մօտաւորապէս 11 տարի կար ոտ Միւրդի Իռէմ կղզին կը բնակէր: Երբ իր զաւակը երկրորդական վարժարանէն առաջին ելաւ, 23 տարեկան էր: Բայց ան չէր կրնար Պոլիս երթալ՝ Հարպիէ մտնելու համար: Սուլթանը իրեն կ'արգելէր և մինչև անգամ անցագիր տալ կը մեղծէր՝ երթալ մայրաքաղաքը այցելելու համար:

Սակաջն Համիտ խիղճի խայթերէ կը տանջուէր: Ա՛յ չղիմանալով, օր մը Արչիպեղագոսի կառավարիչին հետագիր մը գարկաւ, հանցնելով թէ ինչ կ'ընէր մոռցուած այդ կինը հոն, Եգէական ծովին կորսուած մէկ կղզիին մէջ: Նոյն իսկ հարցուց թէ՛ իր բացառիկ գեղեցիութիւնովը կայսերական պալատներուն մէջ աստնով հոչակաւոր այդ չէրքէզ գերուհին զեռ կը պահէր հետք մը իր չնորհքէն:

Իր պատասխանին մէջ, կառավարիչը կ'ապահովցնէր Նորին Վեհափառութիւնը թէ՛ այդ չնորհազուրկ կինը, հակառակ իր տատապանքներուն և զառնութիւններուն, միշտ կը պահէր իր անցեալ թարմութիւնը. հազիւ 25էն 30 տարեկան կ'երևար ան:

Ապտիւլ-Համիտ կը զզջար: Ան Միւրդի Իռէմին

զրկեց 500 ոսկինոց առաջին նուէր մը և անոր զաւակին աստիճանը բարձրացուց: Յետոյ, անոր զրկեց կիներու յատուկ ժապաւինեալ մեծ պատուանշանը՝ Շեփագաթ:

—Ինչպէս կրցեր եմ ես զիս զրկել այդ երազային Սուլթանուէրին հրապուրներէն: Երեսուն տարիէ աւելի է որ ես կը գահակալեմ այս Կայսրութեան և ես ունեցած եմ հազարաւոր կիներ: Անոնց մէջ կայ մէկը՝ որ իր գեղեցիութիւնովը և հրապուրներովը կարենայ Միւրդի Իռէմի հետ մրցել: Ան զիս համակրելի չէր գտներ, անչուշտ չէր կրնար զիս սիրել, սակայն ո՛րչափ անուշ ու հաճելի էր ինձի հանդէպ: Եւ եթէ զիս համակրելի գտնէր, իր ներշնչումներուն աւելի՛ համապատասխան, վերջապէս իրեն հետ աւելի՛ ներդաշնակ, հազա՛ր անգամ աւելի՛ հաճելի, աւելի՛ գեղանի և աւելի՛ անուշ պիտի ըլլար:

«Կ'ուզեմ նորէն տեսնել այդ կինը, ըսաւ ինքնիրեն:

«Գեղանի, նրբամարմին, նրբամիտ է արդեօք նորէն: Ես խնկիմ էի ուրեմն՝ երբ հաւանեցայ իր ամուսնութեանը էմիր Աթէշի հետ: Այն մարդը որ այդ տեսակ կնոջ մը համար նախանձ չզգար, նոյն իսկ մա՛րդ չէ:

«Ինչ չնորհայի կայսրուէի մը պիտի ըլլար այդ խարտեալ Միւրդի Իռէմը եւրոպական պալատի մը մէջ: Ես կը սիրեմ իմ վաղեմի հոմանուէրս, ա՛յնչափ տարիներէ ետքը, որովհետեւ ան հրեշտակային արտրած մըն է»:

Սուլթանը անհամբեր էր իր նախկին հարձին տէր զառնալու: Արշիպեղագոսի կառավարելին հեռագիր մը զարկաւ, որով նորէն Միւրդի Իռէմի զաւակին աստիճանը կը զարձարցնէր, անոր վարտօնէր մօրը հետ Պոլիս գալ և զինուորական վարժարանը յաճախել:

Կառավարիչը, Նորին Վեհափառութեան որոշումը ծանուցանելով Միւրդի Իռէմի, անոր յանձնեց ճամբու ծախքը և ըսաւ թէ՛ երկու օր ետքը՝ Մէսսածըրի Մառիթիմի Գօնկօ շոգենաւը Պոլիս կը մեկնէր:

Շիւշէք, որ տակաւին Պոլիսը տեսած չէր և որ կարելի եղածին չափ շուտով զինուորական վարժարանը մանկու փափաքէն կը մրկէր, ուրախութենէն խնկիմ զարձած էր:

Իր մայրը ուրախ էր, որովհետեւ այդ կերպով կրնար լաւագոյն գաստիարակութիւն մը ապահովել իր զաւակին, որ արդէն մեծցած էր: Շարաթ մը ետքը, Սարային քիթէն նորէն կը դառնային:

Շիւշէք պէյ զմայրեցաւ Սթանպուլի և Կալաթի մեծասքանչ համայնապատկերին. և Միւրդի Իռէմ մեկամաղձոտ ակնարկով մը կը դիտէր Տօլմա-Պաղէի պալատը, Ֆէրիէի տաղաւարները և Վոսփորի ամբողջ ծովափը:

Մակեդոնիա խառնակուլած էր: Գրգուլթիւնը արագորէն կը ծաւալէր: Նագիֆ պէյ, սպայակոյտին պատկանող քաջարի, կորովի, մտացի, գեղեցիկ սպայ մը, Մանասթըր՝ «Միուլթիւն և Առաջգիմուլթիւն» գաղտնի Կուսակցութեան սրահին մէջ կը պտըտէր: Հրետապունդի տեղակալ-գնդապետի մը անձնական ընակարանին մէջ է որ նիստերը տեղի կ'ունենային սովորաբար: Սրահին մէջտեղը, փայտէ պարզ սեղանի մը վրայ, կային թղթածրարներ և քանի մը հեռագիրներ: Վարագոյրները գոցած, Նագիֆ պէյ իր սիկատէթը կը ծխէր և կը կարդար թուղթ մը, զոր սեղանին վրայէն վերցուցած էր: Յետոյ, բոլորովին ջգայնոտած, սկսաւ սենեակին մէջ մէկ կողմէն միւսը պտըտիլ: Այդ լռութեան մէջ, սրահ մտաւ Կուսակցութեան անդամ Մէճտի պէյ:

—Օ՛, բարե՛ւ, սիրելի Մէճտիա, ի՛նչպէս էք, աղէ՛կ էք, յարեց Նագիֆ պէյ:

—Հողիս շատ կը նեղանայ:

—Ի՛նչ կայ, խնդիրը ինչ է:

Երկու բարեկամները սկսան խօսիլ Կայսրութեան կացութեան, թագաւորներու յաջորդական

տեսակցութիւններուն, հայրենիքը բաժնելու ծրագիրներուն, Մակեդոնիաի ինքնօրէնութեան, Պետութեան գործերուն եւրոպական միջամտութեան վրայ

Նագիֆի տեսակ կը թուէր որ՝ Մէճտի կը չափազանցէր: Նագիֆ զայն չարիքի մարգարէ անուանեց: Մէճտի ուզելով ինքզինքը արդարացնել, իր ընկերակիցին ներկայացուց իր տեսութիւնները, երբ Սէլիմ էֆէնտի, հին պաշտօնատար մը և Շահին պէյ, իմաստուն տեղակալ մը, ներս մտան իրարու՝ ետեւէ: Երկուքն ալ Կուսակցութեան ամէնէն գործօն-անդամներն էին: Սէն-Բէթէրս-պուրկէն ստացուած թղթակցութիւն մը կը բերէին անոնք: Անոնք կանչեցին ծառան, իրենց դատին չափազանց անձնուէր և խիստ արթնամիտ ալպանացի զինուոր մը, որուն կարգ մը հրահանգներ տուին և դուռին նիզը զնկով կ'ոսկոյցին: Սէլիմ էֆէնտի բացարձակ լռութեան մէջ սկսաւ կարդալ հետեւեալ գրութիւնը.—

«Եղբայրներ.

«Բացարձակապէս սույգ աղբիւրէ մեծ ցաւով կը տեսնուիս թէ՛ միայնակերտ վերջին հաւատարմի մեջ մեր սիրելի հայրենիքին բաժանուելը որոշուած է: Երեկ գիշեր բաւարսն երկար տեսակցութիւն մը ունեցայ Պր՝ Շ. Պարֆիի հետ, որ անոյն բերանը գործածեց ևորէն: Բայց ան շատ անբարեկամիս դիմաւորեց և,

որոշ եւ նշանակալից բան մը չըսեցու հասար: Օրիորդ Քրափխաի ըսածին համաձայն, (ճարտեսական դասարանին կը տեղեկանամ այս բոլորը) բոլոր տեղափոխումները գաղտնի դաշնագիր մը ստորագրած են՝ օտնական կայսրութեան առաջին հաշտեարդութեանը մասին. նոյն անձին տեղեկութիւններուն համաձայն, պզտիկ տեղափոխումները՝ տեղեկանալով մեծ տեղափոխումներուն տուած որոշումին, ա՛յ չեն ուզեր հասկերեղ: Թող Կուսակցութիւնը ակնոր հատեալս շարժի: Պե՛տ է աճապարեղ, այս բէ ո՛չ՝ կայսրութիւնը կորստուած է: Ահա՛՛ բէ ինչպիս կը բացատրենք մեկն «Ճումասա-Պարս»ի միջադեպին պատճառները»...

Մէճտի պէյ ընդհատեց Սէլիմ էֆէնտի ընթերցումը:

— Ամէնէն արժանահաւատ ազրիւրներէ քաղած տեղեկութիւններուն համաձայն, Ապտիւլ-Համիտ իր հաւանութիւնը յայտնած է այդ համաձայնութեան, պայմանով որ իր թագը, իր կեանքը, իր ինչքերը երաշխաւորուին...

— Կայսրութեան բաժանումէն ետքը ինչ օգուտ ունի թագը. կ'ուզէ որ Ս. Թիվին կամ Հնդկաստանի Ռաճաներուն աստիճանին իջնէ, ըսաւ Նազիրի պէյ:

Սէլիմ պէյ շարունակեց իր ընթերցումը.

«Ամեն պարագայի մեջ, չեմ գիտեր բէ ճիշտ է աւ: Միայն կը համարձակիմ կասարեալ անկեղծութիւնով ըսել ձեզ բէ՝ երբ Սուրբակը հաւանած է այդ խայտառակ համաձայնութեան. կորստուած ենք: Հիւանդ կը զգամ ինքզինքս. չեմ կրնար գրել: Բարեւներ:

Յ. * * Պ. 12»

Շահին պէյ սահմուկած. անսահման ջղայնտուութիւնով մը, գոչեց.

— Ո՛վ սիրելի եղբայրներս. ա՛յ ընկիւք մը չունինք: Ամէն բան ըմոցած է: Անօգուտ է բողոքել: Հայրենիքին մահն է աւ: Արդէն անոր ժառանգները իրարու մէջ կը բաժնեն: Եւ մե՛նք, Մենք պարս'պ տեղը կը ջանանք անոր ազատագրութեանը համար պայքարիլ:

— Իրաւցնէ՛, կացութիւնը ծանր է, բայց ո՛չ յուսահատական, յարեց Սէլիմ էֆէնտի: Ա՛յդչափ շուտ մի՛ յուսահատի՛ք, խեղճ Շահին, աւելցուցան փափկօրէն, դառնալով Շահին պէյի կողմը, որ բոլորովին ընկճուած էր:

Նիստը յուզումնալից կը դառնար: Մէճտի պէյ կը ջանար միտքերը հանդատեցնել: Սէլիմ էֆէնտի չափաւորութեան հրաւիրեց:

— Ո՛րչափ ջղայնտ էք: Թրքական առած մը չըսեր թէ՛ մարդ մը ո՛րչափ ալ հիւանդ ըլլայ,

կրնայ՝ միշտ բժշկուել, պայմանով որ մեռած չլըլայ: Երկու թագաւորներու միջեւ կնքուած համաձայնութիւն մը նշանակութիւն չունի: Ես գիտեմ ո՛չ միայն համաձայնութիւններ, այլ ստորագրուած և վաւերագրուած դաշինքներ՝ որոնք գործադրուած չեն: Սհա օրինակ մը. Սան-Սթէֆանօի դաշնագիրը: Ես միշտ յուսալից եմ մեր երկիրին ապագային համար: Պէտք է զօրացնել Կուսակցութեան ազդեցութիւնը, կարելի եղածին չափ նոր գործակիցներ հաւաքել, ցուցնել վերջապէս ազգին թէ՛ ի՞նչ է երկիրին կացութիւնը, բացառել թագաւորներուն որոշումը, Ապտիւլ-Համիտի ընթացքը, և՛ վերջապէս, աստուածային օժանդակութիւնով, տապալել գահի այդ հարստահարիչը... Ո՛չ: Յուսահատութիւնը չա՛տ գէշ հորհրդական մըն է: Մենք պիտի յարատեւենք մինչև վերջին կէտը: Կեցցէ՛ «Միութիւն և Առաջդիմութիւն»ը...

Շահին պէյ Մէճաի պէյի երկարեց Սքանճարսի թիւ մը, որ Թուրքիաի գէմ՝ ծայրայեղ կերպով բուռն բացատրութիւններով խմբագրուած յօդուած մը կը բովանդակէր:

Սակայն նիստը կը շարունակուէր: Ներկաներէն մէկը կ'ըսէր թէ՛ երկիրը ա՛յլ աւելի վտանգաւոր ճգնաժամերէ անցած էր և կը յիշէր Քէօփրիւլիւ Մէհմէտէ առջի ժամանակաշրջանը, Սէլիմ Գօթի դարը:

Այս յուզումին մէջ, Նազիֆ պէյ ժողովը կարգի հրաւիրեց և հարցուց թէ՛ տեղեկութիւն մը ունէ՞ին

երկրորդ զօրարանակին մէջ գնդապետ Շիւքրի պէյէն և Երչտրզի մէջ պաշտօնատար Անձէտ պէյէն, որոնք երկուքն ալ Կուսակցութեան գաղափարակիցներ էին և ձերբակալուելով պալատին հաւատաքննական ատենանը առաջնորդուած էին: Ո՛չ մէկը բան մը գիտէր: Ասոր վրայ, Նազիֆ պէյ Կուսակցութեան անակնկալ մը ըրաւ, ներկայացնելով այս մասին Սուլթանին ուղղուած կարգ մը մտերմական տեղեկագիրներ:

Ներկաներուն զարմացումը մեծ եղաւ, կարգալով այդ շահեկան թղթածրարին պաշտօնաթուղթերը:

Շահին պէյ զայրացած, գոչեց իր տեղէն.

— Իրա՛ւ որ շատ աղէկ պիտի ըլլար ազատիլ այդ անիծուած Սուլթանէն:

Սէլիմ էֆէնտի հարցուց Նազիֆ պէյի թէ՛ ի՞նչ կերպով ձեռք բերած էր թագաւորին համար ա՛յնչափ փորձանարեր այդ վաւերաթուղթերը:

— Ինձի պաշտօն տուած չէիք հետազօտութիւն մը կատարելու, ըսաւ Նազիֆ պէյ:

— Այո՛, պատասխանեց Սէլիմ պէյ, բայց չէինք կարծեր որ պիտի կրնայիք Սուլթանին ամէնէն մտերմական թղթածրարները ձեռք անցընել: Կը չտրհաւորեմ ձեզ ասոր համար: Բայց ըսէ՛ք տեսնենք ի՞նչ կերպով յաջողեցաք գանտնք վերցնել:

Սէլիմ պէյ ընդմիջուեցաւ, մուտք գործելովը ծառայի մը, որ ժողովին ծանուց թէ՛ Վարզան անունով մէկը կ'ուզէր ներս մտնել:

Հրամայուեցաւ իրեն որ՝ սպասցնէ այդ Հայր :
Կուսակցութեան անդամները նորէ՛ն խնդրեցին
Նազիֆ պէյէն՝ տեղեկացնել իրենց թէ՛ ի՛նչ կերպով
տիրացած էր այդ պաշտօնաթուղթերուն :

Իրենց բուն պնդումներուն վրայ, Նազիֆ պէյ
պատմեց թէ՛ ի՛նչպէս միջոցը գտած էր Սուլթանին
քովէն այդ պաշտօնաթուղթերը վերցնելու :

— Կը ճանչնա՞ք հօրեղբայրս, Հաճի Սըտզը
էֆէնտին, սկսաւ :

— Ո՞վ է ադ Հաճի Սըտզը էֆէնտին, հարցուց
Մէճաթի պէյ :

— Մէկ հօրեղբայրս, որ սարայլըի մը հետ
ամուսնացած է և նախկին լրտես մըն է :

— Օ՛, ըսաւ Շահին, ուրեմն լրտես ազգական-
ներ ունիք :

— Այո՛, անշուշտ. սա պահուս ո՞վ կրնայ պար-
ծիլ թէ չունի : Բայց իմ լրտես հօրեղբայրս զղջումի
եկած լրտես մըն է :

— Իր կինը հիւրընկալած է Ռէզին անունով կին
մը, պալատի գերուհի մը, մեր դատին չափազանց
անձնուէր կին մը, որ ինքզինքը հիւանդ ձեւաց-
նելով կրցած է պալատէն դուրս ելլել : Արդ, ամէն
տեղ մտնող-էլլող, պալատին մէջ ամէնուն հետ
մտերիմ եղող և Սուլթանին գաղտնի յարկաբա-
ժիններուն մէջ մուտք ունեցող այդ կնոջ չնորհիւ է
որ՝ յաջողեցայ ձեռք բերել այս բոլոր պաշտօնա-
թուղթերը : Ճշմարիտ հայրենասիրուհի մըն է ան :
Պէտք է զայն տեսնել և լսել անոր հեծկտալը՝ երբ

իրեն կը խօսուի հայրենիքին դժբաղդութիւններուն
վրայ : Եթէ թող կու տաք, կրնամ զայն անմիջա-
պէս ներկայացնել յարգելի Կուսակցութեան : Ան
արժանի է մեր բոլորին վստահութեան :

Յամէնքը փափաք յայտնեցին տեսնել այդ անձ-
նուէր կինը : Վայրկեան մը ետքը, Ռէզին, քօղա-
ծածկուած, սրահ մտաւ : Զայն բարեւելէ ետքը,
Մէճաթի պէյ Ռէզինէն տեղեկութիւններ հարցուց
Սուլթանին վրայ, ինչպէս նաեւ իր ճամբորդու-
թեանը մասին մանրամասնութիւններ :

Ռէզին, յուզուած ձայնով մը, իր նորածանօթ-
ներուն պատմեց իր արկածները :

— Նազիֆ պէյի հրահանգին վրայ, հինգ անգամ
Պոլիսէն ճամբորդեցի : Իրարմէ տարբեր չորս ան-
ցագիրներ ունէի : Հինգերորդ անգամին՝ իր եւրո-
պացուհի ծպտեցայ : Նոյն ատեն Համիտի հաշուուն
ալ է որ կը ձեռնարկէի այդ ճամբորդութեան :
Պաշտօն ունէի Պուլկարները լրտեսելու : Շատ լա՛ւ
կը ճանչնամ ևս պալատը, ուր անցուցած եմ ամ-
բողջ կեանքս : Միհրիւմէն գալֆա, որ իմ պետս
էր, շատ միամիտ կին մըն է : Անոր միջոցով
Համիտին տեղեկատուութիւններ կը տեղագնէի :
Համիտ վերջապէս ինձի պաշտօն տուաւ յարարե-
րութեան մէջ մտնել կուսակցութեան մը հետ, որ իր
երեւակայութեանը մէջ միայն գոյութիւն ունէր . . .
Ինչպէս գիտէք, Նորին Վեհափառութիւնը աղէկ
կարդալ գրել չգիտեր : Ետքերը, ինձի պաշտօն
տուաւ ճողոնացիներ կարդալու և զանազան
պաշտօնաթուղթեր խմբագրելու :

Այդ ինքնատիպ մարդը, կիներու վրայ միայն ճշմարտ վստահութիւն ունի: Իր անձնական քարտուղարները, մտերիմ սենեկապետները՝ իր աչքին դաւաճաններ են: Ատոր համար է որ՝ մեծ վստահութիւն մը ընծայած էր ինծի: Ես գիտցայ շատ մը բանդազուշական դաւադրութիւններ և դաւաճանութիւններ հասրել: Այդ կերպով, յաջողեցայ իր կասկածները ձեր վրայէն չեղեցնել: Մահմուտ Հիքմէթ պէյէն շատ կը վախնայ: Իրեն ըրած բոլոր խոստովանութիւններուս շնորհիւ, Ապտիւլ-Համիտ ձեզ Պրուսաի մէջ միայն կը փնտոէ. նոյն իսկ իրեն ըսի թէ՛ իշխան Ռէչատ յարաբերութեան մէջ է այդ Կուսակցութեան հետ:

Վարդան անուշով Հայը ներս մտցնելու ժամանակը հասած էր: Կեդրոնական Կուսակցութեան «գործակից» այդ Հայը սրահ մտաւ Կուսակցութեան անդամներուն ծափահարութիւններուն մէջ: Շահին պէյ կը շարունակէր պատգամախօսել գէշ աղետներ: Ռէզին չափազանց կ'աշպանէր անոր անվստահութիւնը: Ռէզին մինչեւ անգամ անոր ըսաւ թէ՛ ա՛յդ աստիճանի հասցուած յուսահատութիւն մը՝ վայել չէր սպայի մը... Վարդան նոյն կերպով կ'արտայայտուէր և ներկաները կ'ապահովցնէր թէ՛ «Միութիւն և Առաջդիմութիւն» Կուսակցութեան անդրդուելի կամքին առջև՝ օտարները տեղի պիտի տալին և անոնց համաձայնութիւնը արգիւնք մը չպիտի ունենար:

Ռէզին անոնց ըսաւ թէ՛ Սուլթանին խօսք

տուած էր՝ չորս օրէն Պոլիս դառնալ, և աւելցուց որ, Վեհապետը, իր անվստահութիւնովը, զինքը հետապնդել կու տար շատ մը մարդոց միջոցով:

—Կը ճանչնա՞ք զանոնք, հարցուց Մէճտի:

—Այո՛, կատարելապէս. դո՛ւք ալ կրնաք անոնց անունը գուշակել:

Մէճտի խոստովանեցաւ որ տեղեկութիւն չունէր:

Ատոր վրայ, Վարդան առաջացաւ և ըսաւ.

—Թոյլ կու տա՞ք ինծի անոնցմէ մէկուն անունը քօղամերկել:

—Կատարելապէս:

—Մահիր պէյն է ալ:

Ռէզին չափազանց զարմացած, Վարդանի հարցուց թէ կը ճանչնա՞ր միւսներն ալ: Հայը դուրսի շարժում մը ըրաւ և փափկօրէն մօրուքը շոյելէ ետքը, կամաց-կամաց տուաւ անունները Հաճի Կիօրկիի և Էմին Էֆէնտիի, որոնք խիստ ականաւոր անձեր էին:

Սաիկա լսելով՝ մեծապէս ապշեցաւ Ռէզին:

Այս չանկեան խօսակցութեան միջոցին, ծառան թողտուութիւն խնդրեց խորհրդակցութեան սրահը մտցնելու Կուսակցութեան գործիչներէն մէկը: Պարզ լրարեր մըն էր ան: Կօշիկին մէջէն թուղթ մը հանեց և ներկաները բարեւելով քաշուեցաւ: Պոլիսէն նամակ մըն էր ան: Շահին զայն կարգաց. —

Միւրեյի եղբայրներ.

Ապսխաշ-Հարեօ հինսն պգսիկ ծանօթութիւններ մը ունի մեր վրայ: Եսքաք մը առայ Եռստոֆ Միւրեյի անբախտագար: Գիտե՞ք որ այդ տղան խիստ շարակաւ է. կ'երեւայ թէ՛ բուրքերանութիւններ մը ըրած է: Բարեբաղդաբար Թահսիկ փաշա անոր հանգուցեայ հորը բարեկամը ըղարով, գայն արձակած է առանց շատ սանջակի: Այդ տղան Մանասըր կանչեցիք, ապա թէ ո՛չ, հակառակ մեր դասին իր հաւատարմութեանը եւ իր մեծ պարկեշտութեանը, պիտի ստիպուիք գայն սնկեսայնել: Սուրբանը շարունակ ունկնդրութեան կ'ընդունի դեսպանները: Կը հաւատարմութիւն թէ՛ անոնց հետ դաշինք մը կնքած է:

Պարսիկ յրեաները ձեզ կը փնտնեն, բայց մեծ ժամանակ կը կորսնցնեն՝ աւելի երեւակայական դաւադրութիւններ հնարելով, քան դաւադրութիւններ գտնելով. այս պատճառով, սիրտերնից հանգիստ բող ըրայ:

72-39-4-75 վերջնականապէս ընդունուած են Կուսակցութեան մեջ յայտարարութիւն. կը խնդրեն ձեզնե՛ր անոնց անուանումը վաւերացնել: 55-Ճ.-40-Թ-Ռ կանոնական երդումը ըրին: Ես միշտ ծանօթ Թիւ 16 եմ: Ստացակ մեր նախ. 72-73-74 թիւ նամակները: Բարեւներ:

Թիւ. — 1500 — ՍԻՒՆՍ.

Թիւ 1 ը Սելանիկ կը գտնուէր: Կուսակցութեան ամէնէն կասկածելի թշնամին էր ան: Վարդան յանձն առաւ զայն սպաննել իր մարդոցմէն մէկուն միջոցով և Ռէզին ստանձնեց անոր ղէմ սոսկալի ճուռնալ մը ուղղել Սուլթանին, զայն ցուցնելով իբր ամէնէն կատաղի Ժեօ-Թիւրքը:

— Բայց, գիտե՞ք որ թիւ 1 ը շատ խորամանկ է. ըսաւ Նազիֆ Ռէզինին. և խիտ մտերիմ յարաբերութիւններ ունի Սուլթանին հետ. եթէ Սուլթանը անոր ցուցնէ ձեր ճուռնալը՝ ան ձեզ կը սպաննէ...

— Ստիչ ի՞նչ կ'ըլլայ: Ձէ՞ որ ես մեր դատին անձնուէր մըն եմ: Անդամ մը աւելի է եղեր կամ պակաս, կարեւորութիւն չունի ադ:

— Բայց մենք չենք ուզեր ձեզ կորսնցնել:

— Ես կը գոհ'մ անձս, կը բաւէ որ մեր դատին ծառայութիւն մը կարենամ մատուցանել:

— Բայց, սիրելի'ս, կնոջ մը տեսնելիք գործը չէ ադ, թողէ՛ք որ այրերը գործեն:

Բայց Ռէզին զայրոյթով բողբեց. Նազիֆ պէյ յափշտակութիւն մը կը զգար այդ սիրուն արարածին հանդէպ:

Նազիֆ պէյ որոշեց ընկերանալ Ռէզինի ճամբորդութեանը:

Ճամբան, Նազիֆ և Ռէզին զգացին որ զիրար անուշ սէրով մը կը սիրէին: Բայց երիտասարդուհին իր բարեկամին նկարագիրը չա՛տ տկար կը գտնէր և սպան իր աշխատակցուհին չափազանց յանդուգն կը նկատէր:

Պոլիս, անոնք նշանուեցան, բայց Ռէզին պայման մը դրաւ.— քիչ ատենուան մէջ յաջողապէս գլուխ հանել զաւազրութիւնը:

Ուրախ էին և ապագայի մասին յուսալից, և կ'աճապարէին յաջողիլ, որպէսզի ամուսնութիւն կնքէին:

— Բռնապետական վարչութեան մը տակ, անանկ ատեն մը, երբ հայրենիքը սուգի մէջ է, ես չեմ ամուսնանար, կ'ըսէր Ռէզին իր նշանածին:

Նազիֆ այդչափ մեծ չէր խօսեր, բայց բռնադատուած էր իր գաղափարը ծածկելու՝ երիտասարդուհիին հրաշալի թոփշքին հանդէպ:

Իւ:

Նոր Ռէժիմի տօնախմբութեան երրորդ օրն էր: Երլարզ, Չիթ-Քէօչիի ընդարձակ մէկ սենեակին մէջ, Ապտիւլ-Համիտ իր պալատականներուն հետ կացութեան վրայ խորհրդակցութիւն կը կատարէր:

Դուրսէն կը լսուէին շարունակ կրկնուող սա՛ աղաղակները.

Կեցցէ՛ Սուլթանը. կեցցէ՛ Ապտիւլ-Համիտ:

Կեցցէ՛ Ազատութիւն. կեցցէ՛ Սահմանադրութիւն:

Աղմուկի մը դէմ գտնուող ոգնի մը պէս անհանգիստ էր Ապտիւլ-Համիտ: Ան կը սարսուար՝ երբ կը լսէր այդ աղաղակները:

Խեղացնորիչ խուռն ամբոխ մը, վիթխարի դրօշակներ պարզած և առջեւը նուագախումբ մը ձգած, պալատ կ'երթար. չորհակալութիւն յայտնելու Ն. Վ. Սուլթանին, Երկրին Սահմանադրութիւն մը չորհել հաճած ըլլալուն համար: Այդ ամբոխը երթալով մեծցաւ և խռնուեցաւ Մալի-յիմի դուռին առջեւ: Ամբոխը ինդրեց որ Սուլթանը երեւայ:

— Մէկ քառորդ դար է որ, կը գոչէին խանդավար ճառախօսները, զաւաճաններ կ'արգիլէին

մեր ամենասիրելի Սուլթանը՝ իր հաւատարիմ և արձնուէր հպատակներուն հետ հաղորդակցելէ :

Պոլիսի ժողովորդը չէր գիտեր երբեք թէ՛ Սահմանադրութիւնը ի՞նչպէս ստացուած էր: Մեծահոգի վեհապետին մէկ յանկարծական արարքը կը կարծէր զայն: Հետեւաբար, ժարդիկը պարզմտօրէն կը ծափահարէին կարմիր Սուլթանը, որուն ձեռքերը տակաւին կը բուրէին ա՛յնչպի հազարներով թուրքերու, Հայերու և օսմանցի քաջագնիւ քաղաքացիներու անմեղ արիւնը :

Սանուլթները գոցուած էին, փողոցները նեղ կու գային խանդավառ ցուցարարներուն, ամէն կողմ, հանրային շէնքերու և պարտէզներու մէջ, ճառախօսները ամբոխին գլխուն քարոզ կը կարգային և երբեք չէին յոգներ :

Սուլթանը, խիստ դժգոհ, չէր կրնար հանդուրժել այդ աղաղակները: Կեզզե՛ Սուլթանը, և ետեւէն, Կեզզե՛ Սաննանադուրթխը :

Սուլթանը ծերուկ էր և այդ ցոյցը անմիջապէս զսպելու չափ կամք չունէր :

Տասը վայրկեանի մը չափ մտածփոփոկելէ ետքը, Ապտիւլ-Համիտ կանչեց իր մտերիմ ներքեւին՝ Միրաթ աղան և ըսաւ անոր .

— Գնա՛ տես ի՞նչ կընեն... ո՞վ են սա հաջողները :

Պալատին մտերիմ քարտուղարը ուզեց ապահովցնել Սուլթանը .

— Տէ՛ր, այդ խաժամուժին մէջ գանուողները տղաքներ են միայն...

— Բայց անոնք շատե՛ր են, պատասխանեց Սուլթանը :

— Կարեւորութիւն չունի՛ աղ, ըսաւ Սուլթանին երկրորդ քարտուղարը և սիրական սենեկապետը՝ Իզզէթ, իրողութիւնը ա՛ն է որ՝ պզտիկ սխալ մը գործուած է, ըսուելով որ՝ Երեսփոխանական ժողով պիտի գումարուի և ահա՛ բոլորը :

— Եթէ Ձեր վեհափառութիւնը կը հաճի հաւանել, համարձակեցաւ ըսել առաջին քարտուղարը գողգզալով, հրաման տանք մեր ստրուկներուն՝ ձերբակալելու բոլոր համախմբուիլ համարձակողները և զանոնք պատժելու է՛ն խիստ միջոցներով :

Ամբօխը, անհամբեր, կը շարունակէր ցոյցեր ընել, ուրախութեան աղաղակներ արձակել, վեհապետին երեւալը պահանջել :

Ձղաջնտտած վախէ հալածուած, Սուլթանը կը մերժէր պատշգամէն երեւալ :

Անուս, անուղղամիտ, խնկթ ու խելառ ձեւերով պալատական մը, Հաճի Մուրթազա, ապահովցուց Սուլթանը, ըսելով թէ ամբօխը կազմուած էր միայն բեռնակիրներէ, նպարավաճառներէ, նաւաւարներէ, և այլն :

Բայց Ապտիւլ Համիտ իր պալատը պաշարուած կը կարծէր և կը վախնար որ՝ պատուհան ելլելովը չըլլար թէ գնդակէ մը զարնուէր :

— Ի՞նչ կ'ուզեն ոռնացող այդ դատարկապորտները... ըսաւ Համիտ Մուրթազային :

— Տէ՛ր, պատասխանեց Հաճի Մուրթազա,

չե՛մ կրնար ըսել, անկարելի՛ է որ կարենամ ըսել:
Ո՛չ, ներողութի՛ւն, հազա՛ր ներողութիւն, չե՛մ
համարձակիր ըսել:

— Խօսէ՛ տեսնեմ, կ'արտօնեմ քեզի:

— Բայց Տէ՛ր, կ'աղաչե՛մ, ետքէն չկախէ՛ք զիս:

— Խօսէ՛ կ'ըսեմ:

— Անոնք կը պահանջեն... որ Ձեր վեհափառութիւնը իրենց երեւայ: Նուաստացուցիչ չէ՞ ազ:
Հրետազօրքի մարաջախտը, որ մինչեւ այդ վայրկեանը անտարբեր կը մնար. ոտքի ելաւ և ըսաւ.

— Ո՛չ, կարելի չէ ազ. այդ շուները այնչափ անմիտ են:

Դուրսէն աղաղակները կը կրկնուէին. նոր ցուցարարներ կ'աւելնային անոնց վրայ՝ որոնք արդէն պալատը պաշարած էին:

Մոլեգնած, ամբոխին կատաղի ծափահարութիւններուն անտարբեր, Համիտ կը պօռպօռ

— Այդ Բարձրագոյն Դուռը զաւաղիրներու ո՛րջ մըն է, ի՛նչ է: Իմ նախարարներս ի՛նչ անկարող արարածներ են: Ո՛ւր են իմ լրտեսներս, իմ տեղեկատուներս, իմ ոստիկաններս, ո՛ւր են անոնց տեղեկագիրները, Անոնք զիս կը խարեն միայն, ա՛հ, ապե՛լ-ախտոն՝ ըր, սրիկանն ըր, անիծեալն ըր:

Յանկարծ, Համիտ ոտքի ելաւ. լուռ պտըտկեցաւ, սեղաններուն առջեւէն վառարանին քով գնաց, թղթատելու ստուարածաւալ տեղեկագիրներուն, ճուռնալներու թղթածրարներուն

աս ու ան էջերո: Առաւ ասոնցմէ մէկ քանին, գետին նետեց զանոնք և շուրջիններուն ըսաւ.

— Ասոնց մէջ գրուածները բոլո՛րն ալ սուտ են, բոլո՛րն ալ խարէութի՛ւն են: Եթէ ժամանակին տեղեկացած ըլլայի նիւթուած դաւին, եթէ ինծի տեղեկացուածները ճիշդ ըլլային, երբեք Սահմանադրութիւն հռչակուած չպիտի ըլլար: Հակառակ նախարարներու չկամութեանը, հակառակ ժէժոն-թիւրքերուն մեքենայութիւններուն, ես մինակս պիտի զսպէի չարժուժը...

Ներքինի մը ներս մտաւ, վհատած ու ընկճուած.

— Ձեր հպատակները ըլլալիք շուները ձեզ տեսնել կ'ուզեն, Տէ՛ր, բայց անոնք կրնա՛ն իրենց կամքին հպատակեցնել ձեզ:

— Գնա՛ հասկցիր թէ ի՛նչ է ուզածսին, պատասխանեց Սուլթանը:

— Այս բոլորը Մեծ-Եպարքոսին գաղտնի մեքենայութիւնն է, ըսաւ մարաջախտը:

— Ես կը ճանչնամ այդ տիրահռչակ սրիկան, յարեց Սուլթանը:

Այս խօսակցութեան մէջոցին երիտասարդ թիկնապահ մը՝ Զիատ պէյ, եկաւ ծանուցանել Նորին Վեհափառութեան թէ՛ Բանկայթիի զինուորական վարժարանին կողմէ՛ ուսանողները և ուսուցիչները՝ զբօշ մը պարզած՝ կու գային զինքը չտորհաւորել, ազգին բարեգթաբար Սահմանադրութիւն չտորհած ըլլալուն համար:

—Անդադար ճշող շուներու կը նմանին անոնք, չարունակեց Ձիատ. շունչ չառած կը հաջնն կոր:

—Է՛ր ի՞նչ կը պօռան:

—Օ՛հ, Տէ՛ր, խննթ ու խելառ խօսքեր, ես կրնամ ձեր ներկայութեանը կրկնել զանոնք, ե՛ս, ձեր հաւատարիմ ծառան:

—Ըսէ՛, ըսէ՛, կ'արս օնն՛մ քեզի...:

—Վեհափա՛ն, անոնք ձեր օգոստափառ անձին անունը կ'արտասանեն, ուրիշ բառ մըն ալ կցելով անոր. Ազատութիւն, Արդեօք այդ բառերը կրնան հաշտուիլ:

—Ո՛չ, երբե՛ք, ըսաւ մարաջախտը: Այդ ուսանողները մոլորցուած ըլլալու են Ձիւլֆի փաշաին կողմէ: Վեհափա՛ն, այդ բոլոր դպրոցները ինծի չյանձնեցիք որ անկախաբար վարէի. ահաւասիկ այսօր տխուր արդիւնքը...:

Դուրսը ազատակները կը շարունակուէին:

—Ուրիշ միջոց չկայ զանոնք լռեցնելու, ըսաւ Իզզէթ, բայց եթէ այդ կատղածներէն մէկ քանին արգելանոցը դրկել և բանտարկել. ահաւասիկ Ձեր Վեհափառութեան հանգստութեանը միակ դարմանը և միակ կլքի ճամբան:

Երբ առաջին քարտուղարը սրահ դարձաւ, Սուլթանը դէպի ան խոյացաւ.

—Հանդարտեցա՞ն, թէ տակաւին կը մռնչնն, ըսաւ:

—Տէ՛ր, կ'ըսեն թէ եօթը ժամէ իվեր ձեզի կը սպասեն: Անոնք մեզ կը պարսաւեն ըսելով թէ՛ ձեզ կ'արդիւնք երեւայէ... կը պօռան նաեւ թէ

ծարաւ են: Եթէ Ձեր Վեհափառութիւնը պատուհան չելլէ, վստահաբար պալատը պիտի կոխեն... Համիտ ընդհատեց քարտուղարը.

—Անմիջապէս կանչեցէ՛ք Երլտըզի հրամանատարը:

—Բայց, Վեհափառ, թոթովեց մարաջախտը, անիկա Ձեզի հաւատարիմ չէ՛:

—Ո՛վ Աստուա՛ծս: Ի՞նչ կ'ուզեն ասոնք, ըսաւ Սուլթանը դառնօրէն:

Քարտուղարը, դող ելած, վախնալով որ ամբօխը չելլէ պալատը կոխէ, կը թախանձէր տիրոջը որ՝ տեղի տայ ժողովուրդին փափաքին: Սուլթանը ինքզինքէն կ'ելար:

—Էֆֆէնտի՛մ, Աստուծո՛յ սիրուն, հաճեցէք վայրկեան մը պատշգամէն երեւալ. սէլամ մը տուէք անոնց, և պօռչտացող վայրենիները գոհացած՝ պիտի դրուին: Այդ մարդիկը եկած չեն ձեզի չարիք հասցնելու, ո՛չ ալ ձեր վարչութիւնը պարսաւելու: Ո՛չ: Անոնք կ'ուզեն չնորհակալ ըլլալ ձեզ՝ ձեր կամքովը Սահմանադրութիւն չնորհած ըլլալնուդ համար:

—Ա՛յ ի՞նչ ըսել է. ե՛ս եմ որ ազատութիւն չնորհեցի անոնց. խննթ են այդ մարդիկը, ի՞նչ են:

—Ատան՛դ կը հասկանն խնդիրը, Տէ՛ր:

—Բայց ես պարզապէս բռնադատուեցայ Բումէլիցիներուն ըսել թէ՛ կը հաւանիմ Խորհրդարանի բացումին. ես երբեք Սահմանադրութիւն տալ չուզեցի. ա՛յ ով ըսաւ իրենց:

Ապտիւլ-Համիտ ա՛լ ինչ ընելիքը չէր գիտեր :
 Խննթ գարձած , հետզհետէ կը կորանցնէր ունեցած
 քիչ մը տրամաբանութիւնն ալ : Թիխնապահը և
 ներքինները չարունակ Սուլթանին կը տեղեկաց-
 նէին պատուաններուն տակ անցած-դարձածը :
 Առաջին քարտուղարը կը խնդրէր Վեհապետէն՝
 միայն վայրկեան մը երեսը ցուցնել : Միւս պալա-
 տականները կը բողոքէին : Սուլթանը կը գոչէր .

—Ո՛չ , ես գառագեղի անասուն մը չեմ որ
 ցուցադրուիմ : Ես չեմ երեւար :

Էնվէրի փաշա Ապտիւլ-Համիտի միակ ուզողա-
 միտ պալատականը , կը խորհրդակցէր «միթիւն»ին
 «խտրը»ներուն հետ . Սուլթանին պահանջումով ,
 զայն իր քովը մտցուցին :

—Տէ՛ր , ըսաւ Էնվէրի փաշա , զուարթ և գոհ
 չեչտով մը , ամբողջ ազգը Ձեր Բզոստափառ Վեհա-
 փառութեան գահին ոտքերուն կ'ուզէ մատուցա-
 նել իր խոր երախտագիտութեան և հաւատարմա-
 կան զգացումներուն հաւաստիքները , Սահմանադ-
 րութեան չտրհումին առիթով : Վեհափա՛ռ , ամբողջ
 ժողովուրդը ձեզ երախտապարտ է : Չգիտեր
 թէ ի՛նչպէս արտայայտէ այն անհուն ցնծու-
 թիւնը՝ զոր կը զգայ ինքզինքը ազատ գտնե-
 լով . և կ'ըսէ . մե՛նք ալ , ուրիշ ժողովուրդներու
 պէս , ազատական Վեհապետ մը ունինք :

Ապտիւլ-Համիտ կ'ապշէր իր ժողովուրդին յան-
 դգնութեանը : Պալատականները կը բողոքէին սե-
 նեկապետին գործածած ժեռ-թխրի յեզուին դէմ .
 ամբոխը կ'ուզէր դուռները խորտակել . այդ օրը

ամբոխը փախցնելու ուրիշ միջոց չի կար , բայց
 եթէ աղբիւրին ջուրը կտրել . իրաւցնէ՛ , օղը շատ
 տաք էր : Ապա թէ ո՛չ , կ'ըսէր մարաջախտը , թող
 Ձեր Վեհափառութիւնը արտօնէ որ ուժակոծեմ
 ըմբոստները . . .

Բժշկական ուսանողները , որոնք նուազախումը
 մըն ալ ունէին , միացան ցուցարարներուն : Զիատ
 պէյ այդ դէպքը իր տիրոջը ծանուցանելով՝ ըսաւ
 թէ զպրոցներու այդ ազտոտ ապականութիւնները՝
 նորին Վեհափառութեան սկզբունքներուն բացար-
 ձակապէս հակառակ վերտառութիւններով արտա-
 ոց զրօշակներ պարզած էին :

—Ի՛նչ գրուած է իրենց զրօշակներուն վրայ ,
 հարցուց Համիտ հետաքրքրօրէն :

—Մեծապանծ Բարերա՛րս , ի՛նչպէս համարձա-
 կիմ ըսել ձեզ՝ անոնց քուրջի կտորներուն վրայ
 գրուածը :

—Ըսէ՛ տեսնեմ :

—Շա՛տ գէշ բաներ , Տէ՛ր :

—Օրինակ :

—Անոնցմէ մէկուն վրայ . . . օ՛հ ո՛չ , Սուլթա՛նս ,
 սուկի՛ աղէկ է որ զիս կախէք , քան թէ այդ բանը
 հարցնէք :

Զիատ պէյ , իր տիրոջ դատին չափազա՛նց անձ-
 նուէր , քաշուեցաւ . առանց բան մը ըսելու : Ատոր
 վրայ , Էնվէրի փաշան զրկուեցաւ , որպէսզի կար-
 զայ զրօշակներուն վրայ գրուածը :

Քանի մը վայրկեան ետքը, Փաշան եկաւ ապա-
հովցուց Միապետը .

— Աղւոր բաներ են գրուածները, Վեհափառն,
ըսաւ ան. չորս դրօշակներ կան՝ որոնց վրայ
գրուած է .

Կեցցէ՛ Ապտիւլ-Համիտ :

Կեցցէ՛ Սահմանադրութիւն :

Կեցցէ՛ Աշատութիւն, Եղբայրութիւն, Հաւա-
սարութիւն, Արդարութիւն :

Կեցցէ՛ բանակ և նաւատորմ :

Ապտիւլ-Համիտ կը սոնչէր : Ի՞նչպէս իր անունը
կրնար կցուիլ Սահմանադրութիւն, Ազատութիւն,
Հաւասարութեւն, Եղբայրութիւն բառերուն,
որոնք ֆրանսական յեղափոխութեան խորհրդա-
նշաններն էին :

Նախարարներուն և ուրիշ աստիճանաւորներուն
պնդումներուն վրայ, շատ մը վարանումներէ
ետքը Համիտ վերջապէս հաւանեցաւ երեսը
ցուցնել իր հպատակներուն : Նախ շատ մը պատ-
րաստութիւններ տեսաւ, հրամանատարին հրա-
մայեց զինուորական ուժը պատրաստ կեցնել
ամէն պոտահականութեան դէմ :

Նահանգներու կուսակալներուն հետագրել
տուաւ որ՝ բանտերը պատրաստեն մեծ թիւով
զաւազիրներու համար :

Միւս կողմէ, խեղճ էնովերի փաշան ամբոխը կը
հանդարտեցնէր :

Այս դէպքին միջոցին, Ռէզին պալատը կը
գտնուէր Չեռք բերուած արդիւնքին համար չա-

փազանց ուրախ էր, բայց ստիպուած էր ծածկելու
իր գոհունակութիւնը :

Ապտիւլ-Համիտ երբ հաւանեցաւ ժողովուր-
դին երեւալ, յիշեց Ռէզինը : Հաճի Մուրթազաի
պաշտօն տրուեցաւ Ռէզինը Չիթ-Քէօչլ բերել :
Ցուցարարներուն երեւալէ քանի մը վայրկեան
ետքը, որոնք իրենց գոհունակութիւնը կը
յայտնէին անվերջ ծափահարութիւններով, Համիտ
զարձաւ այն սրահը՝ ուր ժողով գումարուած էր :

— Ես զերասա՞ն եմ, ըսաւ Համիտ խոնջարեկ :
Բանակը չի խառնակելու համար, ես հարկադ-
րուեցայ հաւանիլ Սորհրդարան գումարուելուն :
Այս լուրէն հետեւցուցեր են որ՝ ես Սահմանադ-
րութիւնը ընդունեմ ես, և կը գոչեն. «Կեցցէ՛
Ազատութիւն» :

Պալատականները երկիւղածօրէն գլուխ կը
ծռէին :

— Մամուլին ազատութիւն տուեր են, շարու-
նակեց Սուլթանը. առանց զրաքննութեան մա-
մուլ կ'ըլլայ : Ատիկա կը նմանի տղու մը ձեռքը
զանակ տալուն, Ինձի անանկ կու գայ որ՝ մայրա-
քաղաքիս մէջ ամբողջ ժողովուրդը խնջեցեր
կամ զինովցեր է :

Ռէզին, ուշադիր, կ'ունկնդրէր թագաւորը :

— Է՛, Ռէզին, ըսաւ Համիտ, նշմարելով երի-
տասարդուէին, ես բան մը չհասկցայ ձեր ցանկէն :

— Ա՛հ, Տէ՛ր, երանի թէ այդ ցանկին մէջ
գտնուող անուններէն գէթ տասնակ մը դաւա-
նաններ աքսորած ըլլայիք :

— Բայց ի՞նչ կ'ըսէք. ինչո՞ւ աքսորել, քանի որ այդ մատնանշուածները մեր լաւագոյն լրտեսներն են...

— Ճի՛շդ այդպէս, Տէ՛ր. ձեր լրտեսներն իսկ են որ դաւաճանած են ձեզ:

Մարաջախտը կը հաստատէր այս բոլորը:

Հագարաւոր նոր ցուցարարներ կը պաշարէին Երլտըզը. Ժողովուրդէն ատենաբաններ՝ կը ճառախօսէին փողոցին մէջտեղը, ամէնէ՛ն փշոտ խնդիրներուն վրայ: Ապտիւլ-Համիտ նորէ՛ն Զիատ պէյը ազատականներուն բանակին մէջ զրկեց, հասկալու համար թէ ի՞նչ կ'ըսէին այդ ատենաբանները Երլտըզի պատերուն տակ:

— Աղւոր խօսքեր, Վեհափա՛ռ, անոնք իրենց ճառերուն մէջ ձեր ներբողը կ'ընեն միայն:

Սուլթանը, սակայն, կը պարսաւէր Ռէզինը:

— Քիչ հնարամիտ լրտես չէք դուք, Ռէզին, դուք կ'ըսէիք թէ՛ Կուսակցութեան կեզրոնը Պրուսա է և թէ՛ ուրիշ մըն ալ կայ Շքոտրա, մինչդեռ այսօր գիտենք որ՝ կեզրոնը ուրիշ տեղ չէ, բայց եթէ Մանասթըր: Ատկէ զատ, գիտենք նաև թէ՛ Սելանիկ ալ զօրաւոր ճիւղ մը կայ, և նոյն իսկ խմբակցութիւն մըն ալ Պոլիսի կեզրոնը, Կալաթա, Վոյվօտա փողոց, Օսմանեան Պանքաին դէմը:

— Ձեզ կը խարեն, Վեհափառ, աճառասի՛կ ամէնէն ազգեցեիկ խռովարարներուն ցանկը:

Ռէզին Սուլթանին տուաւ ցանկ մը, որ փոխաւ նակ խռովարարներուն անուններուն՝ կը պարու-

նակէր միայն լրտեսներու անուններ Ռէզին հաւաստեց թէ՛ այդ («ապստամբութիւնը») կամ այդ «ցուցարաշութիւնը» զսպելու համար՝ պէտք էր իր ցանկին մէջ նշանակուած խռովարարներէն մէկ քանին կախել: Սուլթանը համոզուած երեւցաւ անոր հաւաստիացումին:

Համիտ պարտաւորուեցաւ նորէն ժողովուրդին երեւալ. այս անգամ ամբոխը աւելի՛ խուռն էր: Անոնք որ արդէն բռնադատած էին Սուլթանը երեւալու, կը քաջալերէին միւսները՝ պալատին պատերուն տակ ցոյց ընելու, երեւան հանելու համար Սահմանադրութեան կարևորութիւնը:

Մարաջախտը կը զայրանար: Պալատականները կը վախնային խռովարարներէն: Անոնք կ'ընդունէին թէ՛ զործերը երթալով կը գեշանային պալատական պաշտօնեաներուն համար և եթէ բոլորովին աւրուէին Ապտիւլ Համիտ զանոնք պիտի լքէր, մինչև անգամ հաւանելով անո՛ց կախուելուն: Կը բաւէր միայն որ իր ինք ողջ մնար:

Մարաջախտը Սուլթանին յիշեցուց ազատականներու զսպումը Մօսքուաի մէջ, երբ Ռուսիաի մէջ Սահմանադրութիւն հռչակեցին:

— Հրամա՛ն տուէք ինձի, ըսաւ ան Սուլթանին, և ես քաղաքը սպանդանոց մը դարձնեմ. Ձեր Վեհափառութեան մագին թեկին դպչող չըլար:

Այս միջոցին, սպայ մը եկաւ ծանուցանել Սուլթանին թէ՛ շարժումին պետերը որոշած էին պալատի պաշտօնէութիւնը մաքրել:

Սուլթանը, չափազանց գերազրգուած, իզգէթը կը փնտռէր: Իզգէթ արդէն այն շոգենաւին մէջն էր՝ զոր նոր գրած էր՝ սրտասանման երթալ հաստատուելու համար:

Համիտ լուր ստացաւ թէ, ժողովուրդը շինչի ենթարկած էր իր մտերիմ լրտեսը՝ Ֆէհիմ փաշան, փողոցներէն մէկուն մէջ Պրուսի, ուր աքսորուած էր:

— Ե՛րբ զիս գահէն վար պիտի առնեն, երբ պիտի կախեն զիս, կը գոչէր Սուլթանը:

Իր շուրջը գտնուողները զինքը կը միխթարէին, բայց Սարայէն մեկնելու ժամանակը հասած էր անոնց:

Մէմտուն փաշա, ներքին գործերու նախարարը, իր տիրոջ ճուռնալ մը կ'ուղղէր, որուն մէջ խստորէն կը քննադատէր վերջին ժողովին մէջ իր պաշտօնակիցներուն ունեցած ընթացքը: Չափազանց յարգականորէն կ'ըսէր թէ՛ այդ Սահմանադրութիւն ըստւած գէշ բանը երկրորդ անգամը ըլլալով անհանգիստ կ'ընէր Նորին Վեհափառութիւնը: Անոր վերջ մը տալու համար, պէտք էր միայն զսպել ազատական շարժումը և քանի մը հարիւր ցուցարարներ թխել զանազան գնտաններու մէջ:

Առաջին քարտուղարը, ձեռքին մէջ նամակներու և հեռագիրներու ծրարով մը, մտեցաւ:

— Ի՛նչ են ատոնք, հարցուց Համիտ, ճուռնալներն են:

— Աւա՛ղ, ո՛չ, Տէ՛ր, օտար Վեհափառներէ չնորհաւորական հեռագիրներ են:

— Ի՛նչո՞ւ այդ չնորհաւորութիւնները:

— Տէ՛ր, Սահմանադրութեան հոչ... ակումբն համար:

Ապտիւլ-Համիտ տժգունեցաւ: Շուրջը գտնուողները զայն կը սփոփէին, ըսելով.

— Բանէ՛ մը մի՛ վախնաք, Վեհափա՛ռ, հեռագիրները Սահմանադրութեան վերջնական նուիրագործումը չեն նշանակեր երբեք. երբ դուք յաջողիք զսպել ըմբոստութիւնը, այդ թագաւորները նորէ՛ն պիտի չնորհաւորեն ձեզ այդ առիթով:

Շէյխ Էֆէնտին, մարաջախտը, ակնաւոր սենեկապետ մը՝ խմբուած էին սեղանի մը շուրջը, խորհրդակցելու համար զսպումի ծրագիրին մասին:

— Բայց ի՛նչ պիտի ըսէ Եւրոպա, եթէ շարժումը զսպենք, ըսաւ Ապտիւլ-Համիտ:

— Ոչի՛նչ, պատասխանեց մարաջախտը, ատոր չպիտի տան այնչափ կարեւորութիւն, որչափ տուին Հայերու զսպումին, ասոնց քրիստոնեայ ըլլալուն պատճառով:

— Եւ մահմետական աշխարհը ի՛նչ պիտի ըսէ:

Շէյխը խիստ լուրջ դէմք մը առնելով, ծանր-ծանր ըսաւ Ապտիւլ-Համիտին.

— Ատիկա իմ գիտնալիք բանս է և միայն ինծի կը պատկանի:

Երբ Սուլթանը փոխ-գիր մը ստորագրեց զսպումի ծախքերուն համար, խափշիկ մը, լալագին, անոր ոտքերը ինկաւ:

—Ո՛վ Տէրս, թո՛թովեց, տղաքներէ և ծերերէ կազմուած խուռն բազմութիւն մը պաշարեց ձեր առաջին քարտուղարը... Զայն արգելանոց տարին արդէն: Ձեր Վեհափառութիւնը պէտք է փախչի և կեանքը ազատէ: Սպասաւորներուն գործը աւելի դէշ է...

Համիտ անզգայ և անբան դարձած էր: Ի՛նչպէս կը համարձակին ատանկ իմ առաջին քարտուղարս ձերբարկել, կ'ըսէր ինքնիրեն: Թուրք ցուցարարներուն պէս, Հայ կուսակցութիւններն ալ, պալատ կու գային, չնորձակալութիւն յայտնելու Սուլթանին Սահմանադրութիւն չնորձած ըլլալուն համար:

—Ես ընդունիմ Հայ կուսակցութիւնը, բայց կարելի՞ է ազ, ըսաւ Սուլթանը: Ես որ հրամայած եմ այդ ցեղին արմատական անխնայ ընաջնջումը, ինչպէս կրնամ այսօր զանոնք ընդունիլ: Հապա եթէ անոնց մէջ գտնուին անխլա՜նականներ՝ որոնք իրենց եղբայրներուն հալածուելուն վրէժը լուծել ուզեն, ի՛նչ կը պատահի ետքէն...

Եւ անոնք ինքզինքնին գործակից կը հռչակեն «կուսակցութիւններ»ուն, իրր թէ՛ այդ կուսակցութիւն մակղիրը պատուարեր բան մը եղած ըլլար: Տաքերութիւն մը կայ «քոմիթէճի»ին և «մարդաստղան»ին միջեւ:

Անդրազանդեան Կրօնալը-Քիւրֆիւրայ շոգենաւով եկած հարիւրաւոր զբօսաչըջիներ ալ, Անդլիացիներ և Հայեր, կ'ուզէին այդ առիթով իրենց չնորհաւորութիւնը ներկայացնել Սուլթանին:

Ընկճուած, Ապտիւլ-Համիտ գլուխը ձեռքերուն մէջ առաւ, վայրկեան մը երազեց, թոյլ, դողդղալով, խելակորոյս շարժումով մը ձեղունը ցուց-ձեղով բոլոր ուժովը պոսաց. «... Ողբի մը... իրա՛ւ կ'ըսեմ, ողբի մը՝ որ կը թռչտի...»

Պալատականները ջանացին զայն հանդարտեցնել. բայց անօգնէս:

«Ո՛չ, ո՛չ, չէ՛ք տեսներ այդ դէմքը, Ան է... Յ՛ն... հոգի՛ով-մարմինով: Օ՛հ, ես զայն աղէկ կը ճանչնամ, մինչդեռ դուք չէ՛ք ճանչնար զինքը. դուք դեռ երիտասարդ էք. դուք չէ՛ք յիշեր Ան. ճիշդ Ի՛նքն է... Միթ՛հատը, որ վրէժը կ'առնէ...»

Ի՞նչ.

Ապտիւլ-Համիտ, ծայրայեղօրէն գո՛՛ զինուորներուն հաւատարմական վերջին ցոյցէն, թիկնաթուփն մէջ ընկողմանած, իր պալատին մէկ խորհրդաւոր սրահին մէջ, հտաչըջականութեան նոր ծրագիրներ կը պատրաստէր:

Ալթըֆ պէյ Սահմանադրութեան հրատարակուած անսխալապէս կողմ անուանուած նոր սենեկապետ մը, անիրաւախո՛ն Վեհապետին չափաւորութեան և խոնականութեան խորհուրդներ կու տար, բայց աւա՛ղ, զո՛ւր տեղը:

— Ես գիտե՛մ որ Ձեր Վեհափառութեան խորհուրդ տալ քիչ մը յանդուգն բան է, կ'ըսէր ան, բայց կը թախանձե՛մ ձեզի, Տէ՛ր, գթացէ՛ք այս խեղճ ազգին, որ ձեզ կը ծափահարէ պարզապէս: Մոռցա՞ք Խորհրդարանի բացումի հանդէսին օրը: Հակառակ մէկ երրորդ դարու մօտ չըջանի մը միջոցին ձեր կիրառուած բռնապետական վարչութեան, այդ ազգը, իր խանդավառութեանը մէջ խոնարհարար ծունկի եկաւ ձեր առջեւ, երբ դուք Պալատէն Այա-Սօֆիաի հրապարակը կ'երթայիք, ձեր գահաճառը կարգացնելու համար հոն: Եւ երեսփոխաններուն ձեր տուած հացկերոյթին միջո-

ցին... ազգին բոլոր ներկայացուցիչները ձեր ոտքերը պագին: Ձեզ կը պաշտէին: Ո՛չ, Տէ՛ր, գթացէ՛ք այդ ազգին, կը թախանձե՛մ ձեզի, անոր ամենապզտիկ չարիք մը անգամ մի՛ հասցնէք:

Ապտիւլ-Համիտ նոր պալատականը նկարագիրով չա՛տ տկար կը գտնէր, չա՛տ անփորձ և ծածկապէս անոր վրայ կը խնդար:

Մնուս մարաջախտ մը, Թահիր փաշա, Նորին Վեհափառութեան կը տեղեկացնէր զօրանոցներուն մէջ իր ըրածները: Իրաւցնէ՛, Համիտ անոր պաշտօն տուած էր Սեյանիկէն եկած որսորդ զինուորները պառակտելու: Զօրավարը այդ ձեռնարկին մէջ յաղթանակած էր, բայց չէր կարծեր որ ազգաւական էր:

— Տէ՛ր, պէտք է գոհացնել նաեւ Բուսէլիցի զինուորները, կ'ըսէր, ինչպէս գոհացուցինք Կայսերական Մնձնապահ Գունդը:

— Այ կարելի չէ՛, պատասխանեց Համիտ, միլիոններ պէտք պիտի ըլլային մեզի, և սա անախտան սահմանադրական վարչութեան մէջ, որ ինձի համար չա՛տ չարաղէպ է, ելեմտական նախարարը ա՛լ չի հազարադիւր հրամաններուս:

— Ուրեմն, Տէ՛ր, պէտք է ո՛րեւէ միջոցով խառնակիս Մնատօլուի կացութիւնը և Բուսէլի զինուորները հոն զրկել. այդ կերպով է որ պիտի ապահովուինք թէ՛ Եւրոպական Թուրքիաի բանակները Պոլիս չպիտի գան, Սահմանադրութեան զօրավիճ ըլլալու համար...

—Այո՛, ըսաւ Վեհապետը, ճիշդ ատոր համար է որ ես ալ գաղափարը ունեցայ Պէտիտ փաշան Ատանա զրկելու, որպէսզի ծանր խռովութիւններ յարուցանէ հոն:

Աթըֆ պէյ կը թախանձէր բռնաւորին, լքել այդ սրբոր ծոցերները և ազգին ազատութեանը չզպչել:

Համիտ զայն միամիտի, կնամարդի տեղ կը դնէր:

Թա՛հիր փաշա, որ բնաւ կարեւորութիւն չէր տար խեղճ սենեկապետին ճառերուն, Նորին Վեհափառութիւնը կ'ապահովէր զինուորներուն և ոչ-դպրոցական սպաներուն ծայրայեղ հաւատարմութեանը մասին:

—Անոնք ճշմարտապէս Ենիշէրներու շառաւիղներն են, կ'ըսէր տեսակ մը հպարտութիւնով: Հրաման մը տալ կը ըսէ՝ որպէսզի անոնք Խորհրդարանի Պալատը օղբ հանեն: Պէտք է տեսնել, Վեհափա՛ռ, թէ այն հազարապետ Եուսուֆ ազան և հարիւրապետ Թէվֆիզ էֆէնտին ո՛րչափ անձնուէր են Զեր օգոստափառ անձին: Անոնք Թա՛հիր փաշաի տունին մէջ ձեր հրամաններուն կը սպասեն. աղէկ կ'ընէք եթէ անոնց ունկնդրութիւն մը չնորո՛ճք. այդպէ՛ս պէտք է քաջալերել ձեր ամէնէն ետանդուն կուսակիցները:

Աթըֆ պէյ վրդովուած, հրաժարական հրաժարականի վրայ կու տար, կը խնդրէր Վեհապետէն խնայել ազգին, բայց Ապտիւլ-Համիտ իր դժոխային

յամառութիւնովը ատոր ո՛րեւէ կարեւորութիւն չէր ընծայեր և կը ծաղրէր իր սենեկապետին յուզումը:

—Վեհափա՛ռ, կ'ըսէր Աթըֆ պէյ, ժողովուրդը զինուած է, նոր ռէժիմի հռչակումէն իվեր միլիոնաւոր ատրճանակներ մտցուած են Թուրքիա. պետական հարուածի մը պահուն, սոսկալի արիւնահզութիւն մը կրնայ պատահիլ...

—Մհ, ահ, գոչեց Նորին Վեհափառութիւնը, եթէ ժողովուրդը ատրճանակներով զինուած է, զինուորները Մալզէրներով զինուած են...

—Բայց կրնայ պատահիլ որ՝ ատանկ պարագայի մը, օտար տ'ըութիւնները միջամտեն մեր ներքին գործերուն և իրենց զինուորները ցամաք հանեն...

—Աւելի՛ աղէկ:

—Բայց այն ատեն երկիրը կորսուած է:

—Դուք միամիտ էք, Աթըֆ պէյ:

Համիտ խնդալէն կը մարէր, և չափազանց զուարթ, մարոկկնիկ իր թիկնաթոռին մէջ նստած, իր «թէսպին»ը միշտ ձերքին մէջ, կը ծխէր Բասնիթի արտադրութիւն իր սիկառէթը: Եուսուֆ աղա և Թէվֆիզ էֆէնտի սրահ մտան, այն միջոցին երբ Համիտ դաժան հեգնանքով մը իր չարարազը սենեկապետը կը ծաղրէր: Այս երկու անուս սպաներուն ալ մօրուքները ներկուած էին: Անոնք հին համազգեստներ և ծանր ու կոշտ կօշիկներ հագած էին: Ն. Վ. ը զանոնք ընդունեց

չատ ազնուօրէն. իր գոհունակութիւնը յայտնեց և անոնց աստիճաններ, պատուանշաններ, շքազրամներ ու վարձատրութիւններ խոստացաւ:

Անոնցմէ մէկը պետական հարուածէն անմիջապէս ետքը, Մարաջախտ պիտի անուանուէր. և միւսը զօրավար: Եռսուֆ աղա, ռամիկ ու ձախաւեր, սապէ՛ս խօսեցաւ Սուլթանին.

—Վեհափա՛ռ, մենք ձեր Արքայապատուութեան հացը կ'ուտենք և ո՛չ թէ Մօսկոփինը: Մենք երկուքս ալ ուսական պատերազմին մէջ կոռած հին զինուորներ ենք: Սակայն 15 տարիէ իվեր երբեք աստիճանի բարձրացում ունեցած չենք. «Երիտասարդ»ները մեզի կ'ըսեն թէ՛ մենք ո՛չ կարդալ գիտենք, ո՛չ գրել:

—Վայ սոսկալի:

—Տէ՛ր, այսօր բանակին մէջ բոլոր սպաները ազատամիտներ, ֆրան-մասօններ, կեալուռներ են: Հապա ան սպայակոյտը. անիկա ճշմարտապէս անհանդուրժելի է. եթէ ան եղած չըլլար 1877-78ի պատերազմին ատեն, մենք պիտի կրնայինք մինչեւ անգամ Մօսկոփներու քաղաքը (Մօսքուա) գրաւել. արդեօք սպայակոյտ կար՝ երբ թուրքերը գրաւեցին Պուտարէշթը: Հիմա թուրք բանակը անկումի մէջ է, որովհետեւ պատերազմները սուրով չեն մղուիր (sic). մեր թշնամիները հրացաններ, թմրդանօթներ, խորաընկեցներ հնարած են... Եթէ ասոնք թուրք բանակին կողմէ ընդունուած չըլլային, մենք միայն սուրով պիտի կրնայինք զիւրին

կերպով առնել Մօսկոփներու Փատիչահին թագաւորած քաղաքը...

Թնդանօթ, թօրփիլ... ասոնք սատանայի խելքեր են:

Երկու սպաները 200 ական ոսկի պարգեւ ստացան և ելան գացին ուրախ դուարթ:

Ասոնց մեկնուձէն ետքը, Թահիր փաշա մօտեցաւ Նորին Վեհափառութեան և սկսաւ Պէտիտ փաշաի գովասանքը ընել. ըսաւ թէ ան իր հօրը չափ խելացի՝ «Ֆեհմիլ» էր: Թահիր հաղիւ խօսքը աւարտած էր, երբ Պէտիտ Սուլթանին մօտեցաւ, անոր ոտքերը ինկաւ և արեւելեան անկապաչտ ձեւով սէլամներ ընծայեց անոր, սա խօսքերով.

—Ձեր Վեհափառութեան Բիրթիւն (չունի անուն մը) եմ ես, որ իր երեսները Վեհապետին ոտքերուն կը քսէ. Ձեր Վեհափառութեան ստրուկը՝ իմ նուաստ հայրս ալ նոյնպէս իր երեսները Ձեր Պալատին արտաքնոցներուն մէջ գտնուող հողաթափներուն կը քսէ:

Յետոյ, Պէտիտ փաշա գովասանքը ըրաւ Եաննաքի անունով դրամատէրի մը, որ մեծ ճարտարութիւնով պարզեւ բաժնած էր զօրքերուն և յաջողած էր անոնց միտքը պղտորել: Այդ խեղճ զինուորները «պանքնօթ»ներու տէր դառնալով ինչ ընելին չէին գիտեր. կեանքերնօ՛ւն մէջ «պանքնօթ» տեսած չէին:

Ներքինի մը, Նորին Վեհափառութեան թղթա-

ծրար մը երկարեց. ճուռնալ մըն էր : Թիկնապահէ մը կու գար : Աթըֆ պէյ անմիջապէս կարդաց զայն :

«Տե՛ր, Ձեր Վեհափառութեան կայսերական իրա-
սեկին հանձնայն, բոլոր Մեհրեպները (*) պարտեցայ :
Հօճակերուն զրաւ բաժնեցի : Ձեր Վեհափառութեան
դասին անձնուէր եւ անոնք : Ձեր հաւասարիւ ծառա-
կերը ստացած եւ արդէն այն Գեքվան, որուն հան-
ձայն Սահնանադրութիւնը ապօրէն, անօրինական է,
բացարձակապէս հակառակ յայտնուած «օրենքին»
«փերուան»ին տառին եւ ոգիին» :

Պէտիտ փաշա, հպարտանքով և յոյսով լեցուած,
Սուլթանին կը խօսէր այն լրտեսներուն մասին,
որոնց պաշտօն տուած էր հակելու «Միւլթիւն և
և Առաջդիմութիւն» Կուսակցութեան գործօն ան-
դամներուն վրայ :

—Ահ, Տէ՛ր, կը գոչէր ան, Սահմանադրութիւնը,
այդ Ֆրանսական նորութիւնը մեզի չի՛ յարմարիր .
ատոր համար է որ Ձեր Վեհափառութիւնը երկու
անգամ հակառակած է Սորհրդարան բանալու :
Օ՛հ, ո՛չ, հազար անգամ ո՛չ : Դուք պէտք չէ հան-
դուրժէք որ մեր գործերուն միջամտեն սրիկաներ՝
որոնք ընտրուած են ուրիշ սրիկաներու կողմէ . . .
Ահաւաստիկ Վահտէթին մեր զատին կ'աշխատի :

(*) Աստուածարանական Համուլտարան :

Ան իր կողմը ունի բոլոր կրօնաւորները : Պէտք է
որ շահագործէք այդ ուժը, որովհետեւ ուժ մըն է
աղ : Դուք անոնց կայլնփան էք : Մա՛րդ չի կրնար
այդ տխուրօին համար առարկութիւն ընել : Դուք
Մարգարէին Փոխանորդը և Աստուծոյ Շուքն էք :
Այդ Վահտէթին քանի մը հազար ոսկի գրկեցէք .
ան խելացի և անձուէր է . բառին բովանդակ
առուժովը սա «երեսասարդ վերացական»ներէն չէ
ան : Հայրս զայն կը յարգէ : Առաքեալ մը, սուրբ
մըն է Վահտէթի, որուն աշակերտը ըլլալուն համար
կը հպարտանայ և կը փառաւորուի հայրս :

Սյպէս է որ Պէտիտ փաշա կ'ապահովցնէր
Սուլթանը և զայն ընդդիմութեան կը զրգոէր :

Ապտիւլ-Համիտ, ուշադիր կերպով ունկնդրելով
Պէտիտ փաշան, չէր դադրեր մտածելէ Նազիֆ պէյի
և իր երեսասարդ կնոջ՝ Ռէզիսի վրայ, որ զինքը
խաբած էր :

—Ահ, կ'ըսէր հառաչելով, ա՛յ կը ծերանամ .
հիմա զիս զարմացուցիչ զիւրութիւնով մը կը խա-
բեն, ինչպէս պիտի խարէին տղայ մը :

Թահիր փաշա խորհուրդ տուաւ խեղդել Նազի-
ֆը և Ռէզիսը, բայց Համիտ չհաւանեցաւ ատոր,
միտքը զնելով զանոնք ձեռք անցընել և անոնցմէ
ուրիշ տեղեկութիւններ քաղել : Երկու երեսասարդ
անձերուն անհետացումը յուզած էր Կուսակցու-
թիւնը, որ զանոնք փնտռել կու տար, սակայն
ապարդիւն կերպով : Համիտ զանոնք պալատին

մէջ բանտարկած էր: Վայրագ և վրէժխնդիր, Համրտ կանչեց իր ներքինին, և ըսաւ անոր.

— Գնա ըսէ՛ Հալիլին որ՝ նորէ՛ն հարցաքննէ Նազիֆ և Ռէզին դաւաճանները. թող նախ խարազանի 50 հարուած տայ. եթէ չխոստովանին, անոնց անութներուն տակ տաք հաւկիթներ թող դնէ: Եթէ ա՛դ ալ արդիւնք մը չի տայ, այն ատեն թող «մամո՛ւլ»ը պատրաստեն, այն մամուլը՝ զոր կը գործածէինք հայկական խնդիրներու ատեն:

Ինչ մը ժամանակ ետքը, ներքինին եկաւ Սուլթանին ծանուցանել թէ՛ հակառակ գործածուած տանջանքներուն՝ անոնք բա՛ն մը չէին խոստովաներ: Գերին, խի՛ստ դայրացած, հրաման ուզեց Նորին Վեհափառութենէն որ՝ զանոնք կամուրջին վրայ կախել տայ:

— Ա՛հ, ո՛չ, ա՛յ կրաւունք չունիմ, իմ աղնիւ և հաւատարի՛մ ներքինիս: Սահմանադրութիւնը զիս կ'արգիլէ առաջուան պէս ուզած մարդս քմահաճօրէն կախելու: Բայց համբերեցէ՛ք քիչ մը, շարաթէ մը կրկին պիտի տիրանամ բովանդակ ազդեցութեանս:

Պահ մը ներքինին Թագաւորին մօտեցաւ և յարգալից կերպով անոր ըսաւ թէ՛ տանջանքի ենթակաները կը խնդրէին Նորին Վեհափառութիւնը տեսնել:

Վեհապետը հրամայեց զանոնք և տանջանքի գործիքները փոխադրել այն սենեակը՝ ուր ինք կը գտնուէր:

Աթրֆ պէյ ա՛յ չէր կրնար հանդուրժել այդ տեսարանին և կը թախանձէր Տիրոջը որ՝ մեկնելու արտօնութիւն տայ իրեն:

— Բայց եթէ հին ութօրի օրով եղածին պէս ձեզ սենեկապետ անուանեմ, ըսաւ Սուլթանը հեզնաբար:

— Աստուած չընէ որ ատանկ ըսն մը գայ գլխուս, Տէ՛ր:

— Հապա եթէ ձեզի պաշտօն տամ տանջանքը գործադրելու:

— Օ՛, սոսկալի՛ բան, Վեհափառ, կը թախանձեմ ձեզի բան մը չընել անոնց:

— Այդ տկարութիւնը կնոջ մը կը վայլէ, յարեց Սուլթանը արհամարհական կերպով:

Աթրֆ պէյ, սարսափահար, սրահէն դուրս խոյացաւ, մոռնալով բռնապետը բարեւել:

Նազիֆ և Ռէզին, մեռելատիպ, դէմքերնին կապուտացած, տառապանքէն այլակերպուած, հագուածին բզիկ-բզիկ եղած, այլանդակուած, քաչկոտուելով Սուլթանին առջիւ բերուեցան, երկու հրացանակիրներու և քանի մը ներքինիներու առաջնորդութիւնով:

Հագիւ ոտքի վրայ կրնային կենալ. բայց Սուլթանին ներկայութեանը բերուելուն պէս, զայն զինուորական ձեւով բարեւեցին: Սպառիւլ-Համիտ, ոտքի վրայ, իր համրիչին հետ կը խաղար:

— Է՛հ, ապուշներս, առած դասերնուդ գո՞հ էք, ըսաւ Սուլթանը անոնց: Կուսակցութիւնը լրտեսել

ձեւացնելով՝ անո՛ր կը ծառայէ՛ք, հա՛... դաւա-
ճա՛ններ: Չեմ գիտեր չէ՛ նաև որ, Կուսակցու-
թեան հովանաւորութիւնով ամուսնացած էք,
դաւադրութիւննիդ գլուխ հանած ըլլալ ենթադ-
րելով: Իմ ամէնէն հաւատարիմ վաստակա-
ւորներու վրայ կասկածիլ տուիք ինձի, ձեր
այն սուտ ամբաստանութիւններով, որոնցմէ չէիք
կարմրեր: Ի՛նչ չունչանորդիներ էք դուք: Բայց,
քե՛զ տեսնեմ Համիտ, միտքերնուզ մի անցընէք
որ՝ Կառավարութիւնը բարեկարգիչներուն ձեռքը
պիտի մնայ: Ազատութեան ոէժիմը Արեւին խա-
ւարումին կը նմանի: Ճշմարիտ ոէժիմը պիտի
վերերեւայ, և այս անգամ յաւիտենոսպէս:

Սուլթանը լռեց և երկու սրաչոսնաններ տան-
ջանքի գործիքները բերին: Երկու ամուսինները կը
դողդոջային, կ'ազաղակէին, կը հեծկտային, սակայն
ներկաները անկարեկից կը մնային:

—Անշուշտ կը կարծէք որ, չարունակեց Սուլ-
թանը արծամարհանքով, իշխանութիւնը աղւոր
խօսողներուն, յեղափոխականներուն պիտի մնայ:
Տղաքներ: Ե՛ս եմ միայն Տէրը և պիտի ապա-
ցուցանեմ ատանկ ըլլալը: Բայց ես վեհանձն եմ
և ձեզի ներում պիտի չտրհեմ, եթէ խելքերնիդ
գլուխնիդ ժողվելով՝ վերջապէս հաւանիք դաւա-
դիրներու ցուցակը տալ: Ըսէ՛ք ինձի թէ՛ ի՛նչ կը
դուէ՛ Մահմուտ պէյ: Կը ճանչնա՞ք Մահմուտ
պէյը:

—Ո՛չ, Տէ՛ր:

—Սակայն ես գիտեմ որ դուք տեսած էք
զայն:

—Այո՛, բայց անոր հետ ո՛րեւէ յարաբերութիւն
չունինք մենք:

—Ո՛ւր է ան:

—Բնաւ տեղեկութիւն չունինք Տէ՛ր:

—Տուէ՛ք ինձի ցուցակը:

—Ի՛նչ ցուցակ, Տէ՛ր:

—Դաւադիրներուն ցուցակը:

—Գլխացէ՛ք մեզի, Վեհափա՛ռ, քովերեսիս
ո՛րեւէ ցուցակ չունինք մենք:

—Կը կրինեմ, տուէ՛ք ցուցակը:

—Գլխացէ՛ք, Վեհափա՛ռ:

—Կա՛մ կու տաս ցուցակը, ըսաւ Սուլթանը
Նազիֆ պէյին, ինքզինքէն կլած, կա՛մ աչքե-
րովդ կը տեսնես կնոջդ տրուելիք վայրագ չար-
չարանքը:

—Գլխութիւն, Սուլթան: Կինս յանցանք չունի,
զիս տանջեցէ՛ք, ի՛նչ որ կ'ուզէք ըրէ՛ք ինձի, բայց
խնայեցէ՛ք դժբաղդ կնոջ: Երկու օրէ որ բանտն
ենք, գլխացէ՛ք մեր վրայ:

Երբ Ապտուլ-Համիտ հրամայեց տանջել Ռէզլինը,
Նազիֆ, բուռն յուզումի մը անձնատուր, ինկաւ
տախտակամածին վրայ:

—Յղի է ան, կրցաւ պոռայ Նազիֆ:

Բայց ներքինները կոպտաբար բռնեցին երի-
տասարդուհին և անոր սիրուն գլուխը մամուլին

երկու երկաթներուն մէջտեղը զետեղեցին և սկսան գայն սեղմել: Ռէզին սրտակեղեք ճիչ մը արձակեց և նուաղեցաւ:

— Յուցակը: Մահմուտ պէյի մասին տեղեկութիւնները, ոռնաց Համիտ: Յետոյ, վախնալով որ երիտասարդունին կը մեռնի, ինչ որ ընաւ յարմար չպիտի գար իր ծրագիրներուն, հրամայեց գայն արձակել և երկայն-աթոռի մը վրայ փոխադրել տուաւ խեղճ Ռէզինը, որ զգայազուրկ եղած էր: Արիւնը կ'ողողէր անոր այտերը. գլուխը, ետև ինկած, կը թուէր մարմինէն բաժնուել...

Իր ամուսինը, Նազիֆ պէյը, կասկապուտ կտրած, դողդոջուն, աչքերուն խորը յիմարութեան ցոլք մը, քաշքշեցին գաղտնի բանտ մը:

Իմ.

Թուրքերը երկրորդ անգամ ըլլալով Պոլիսը կը գրաւէին, և այդ օրը, քաղաքը ռազմադաշտ դարձած քաղաքի մը եզական տեսարանը կը պարզէր: Կը ուրակոծէին զօրանոցները, պահականոցները և նոյն իսկ զանազան հանրային շէնքեր: Ըմբոստ զօրքերը, վատ դաւաճանութիւնով մը՝ խմբովին կը սպաննէին պաշարող բանակին ազատարարները:

Հանրային կեանքը բոլորովին կասած էր: Ըմբոստ զօրքերուն ձերբակալումը տեղի կ'ունենար: Յաջորդ օրը, Ապտիւլ-Համիտի հետեւորդները, ելլալով պարտէզին մէջ գերի ինկած, ոչխարներու պէս առժամանակեայ բանտերը փոխադրուած էին: Այդ մարդիկը մայրաքաղաքին փողոցներէն կ'անցնէին՝ խայտառակուած և ամօթահար վիճակի մէջ: Անոնք՝ որոնց այդպէս Բերաի մեծ պողոտային սպանդանոց տարուող կենդանիներու պէս անցնիլը կը տեսնուէր, այն պալատականներն էին, որոնք վայրենաբարոյ բռնաւորներու պէս կը տիրապետէին զեռ քիչ ատեն առաջ, վարելով ամբարտաւան ու վայրագ կեանք մը, որուն նմանը հազուադէպօրէն կը տեսնուի պատմութեան մէջ:

Սակայն Ապտիւլ-Համիտ, ամբողջ աշխարհի

արհամարհանքին առարկայ, ամէնուն կողմէ, նոյն իսկ իր էն ջերմեռանդ ծառաներէն լքուած, միայն իր Երլարդի պալատին տէր էր, ուր գրեթէ բանտարկուած էր:

Անասնձ բռնաւորը խելք չէր կրնար հասցնել ըմբոսաներուն յանդգնութեանը և անոնց իրեն հանդէպ ցուցուցած չափաւորութեանը: Բուժելիէն եկած պաշարման բանակին հրամանատարը չէ՞ր հրատարակած յայտարարութիւն մը, որով կը ծանուցանէր թէ՛ ազատականները ղիտաւորութիւն չունէին երբեք Նորին Վեհափառութիւնը գահընկէց ընելու:

— Հետեւարար, «կա՛մ և կը մնա՛մ» (*), կ'ըսէր Վեհապետ ինքնիրեն:

Բայց կը զգար իր երեսանկութիւնը, նոյն իսկ իր չուրջիններուն մէջ: Իրաւցնէ՛, Երլարդ ամէն կողմէն զօրքերով պաշարուած էր:

Վերջապէս, օր մըն ալ, երկու Գերագոյն Ժողովները միացած՝ Ազգային Ժողով կազմելով, իր 33 տարուան բռնակալութենէն, բռնաւորութենէն և ջարդարարութենէն ետքը, գահէն վար առին գա՛յն՝ գոր կարմիր Մուշրանը յորջորջած էին:

Միւրդի Իռէմ և Ռէզին, սրոնք հանդուցեալ էն իր Աթէշին մէկ ազգականին տունը կը բնակէին, համբեղին թնդանօթի աւանդական 101 հարուածները: Ռէզին, ա՛յնչափ սոսկալի տանջանքներէ ետքը հիւանդ և վիրաւորուած, թնդանօթի խուլ

(*) «J'y suis et j'y reste».

աղմուկը լսելով, նոր կեանք կ'առնէր, նորէն կը զուարթանար, բայց իր անութիւն վէրքերը չա՛րուտակ կը սարսուացնէին զինքը: Միւրդի Իռէմ, Ռէզինի սնարին վերեւ նստած, կը յիշէր տղաքեալ Ապտիւլ-Ազիզի գահընկէցութիւնը. բայց Համաի գահընկէցութիւնը ժողովուրդին միահամուռ փափաքին աւելի՛ համապատասխան կը գտնէր: Աչքին առջեւ կը բերէր այդ արիւնի, արցունքի և աւերի բովանդակ գահակալութիւնը...

«Ապտիւլ-Համաի գահընկէց եղած»... Ո՛րչափ ընտանիքներ չունչ մը պիտի առնեն այսօր, կըսէր ինքնիրեն, — ո՛րչափ մայրեր, ո՛րչափ այրիներ, ո՛րչափ տղաք ուրախութենէ պիտի լան»:

Նազիփ պէյ և Շիմէյք պէյ, անբաժանելի բարեկամներ եղած, մէկտեղ տուն դարձան, ներկայ ըլլալէ ետքը Պիարի արարողութեան, նոր Սուլթանին գահակալութեան, Ռէշատ էֆէնտիի, որ գահ կը բարձրանար Իսլամնեշու և Թուրքերու ականջին ա՛յնչափ համակրելի անունով մը՝ Մեհմեթ Եր:

Ռէզին, թէեւ բոլորովին անհանգիտ, երկրորդ անգամը ըլլալով տեսակ մը հպարտութիւնով՝ իր ընկերուհիին կը պատմէր իր մարտիրոսութեան տեսարանը. Միւրդի Իռէմ, իր կարգին կը յիշէր անրան վայրենիին իրեն հանդէպ ունեցած արտատոցութիւնները:

Չէ՛ որ Համաի, հակառակ անժողովին անցեալի մը, հակառակ իր սուզին, հակառակ իր զաւկին, ուզած էր երկրորդ անգամը

ըլլալով իրեն տալ կայսերական հարձի ա՛յնչափ փաղաքչիչ տիտղոսը : Վեհանձն Չէրքէզուհին սարսափով և զզուանքով մերժած էր այդ նուաստացուցիչ տիտղոսը :

Համիտ այսօր ինկած, անպատուուած, վարկաբեկուած, կրկին փորձած էր անոր տիրանալ . իր նախկին գերուհիին ոտքերը ինկած, ներում խնդրած էր անկէ, զղջում յայտնած էր, ըսելով թէ բուռն խիղճի խայթեր կը զգար :

Բայց զղջում ունենալ կարելի չէր երբեք Համիտի նկարագիրը ունեցող մէկու մը : Այդ խայտառակ բռնաւորը, այդ գիշեր իսկ, քաղաքէն պիտի մնկնէր, Սելանիկի մէջ արգելափակուելու համար : Հակառակ իրեն վիճակուած դառնութիւններուն, տակաւին կը ջանար իր անասնական կիրքը գոհացնել : Ան ո՛չ զղջում կրնար ունենալ, ո՛չ ալ ազնիւ, մարդկային զգացումներ : Միայն արտասովոր կեղծաւորութիւնով մը՝ գիտէր նրբագած և քաղցրարարոյ ձեւանալ : Չէր հասկնար թէ՛ ինչո՞ւ համար Միւրդի Իռէմ իրեն ա՛յնչափ թշնամի էր . կը մոռնար որ Միւրդի Իռէմ չէր կրնար չգիտնալ թէ՛ Համիտն էր իր բոլոր տառապանքներուն պատճառը :

Միւրդի Իռէմ և Ռէզին նո՛յն դժբաղդութեան ընկերներն էին : Երկուքն ալ նո՛յն փորձութիւնները կրած էին . երկուքն ալ նո՛յն մարդէն բռնատիրուած էին և նո՛յն ցեղին աղջիկներն էին :

Իրար կը սիրէին քնքուշ սէրով մը և ինքզինքնին երկու քոյրեր կը նկատէին :

Իրարու մէջ դաղտնիք չունէին : Ռէզին, նոր գահակալութիւն օրերը ուրիշ սրտակից չէր ունեցած, բայց եթէ Միւրդի Իռէմը :

Այս վերջինը, երբ ազատեցաւ իր վայրենի ամուսնին ձեռքէն, ամիջապէս իր սիրելի Ռէզինին քացաւ սիրտը : Ապտիւլ-Համիտի ամբողջ այդ մեծ պալատին մէջ, ուր անոնք քով-քովի ապրած էին, Ռէզին միակը եղած էր զինքը հասկցող և սիրող :

Գաղափարներու և զգայութիւններու այն հեղեղը՝ որ կ'որոգէր խեղճ Ռէզինի ուղեղը, բարեբաղդարար մոռցնել կու տար իր ցաւերը : Իր տագոյն և տանջանքի հետքը կրող դէմքը, իր բարեկամուհիին ձայնին հնչիւնէն կամաց-կամաց կ'ամօքուէր :

— Էնանքը Բնչ տարօրինակ բան է, կը գոչէր Միւրդի Իռէմ, զուարթացնելու համար իր Ռէզինը :

« Ինչ որ երէկ նուիրական էր, Ռիրելի՛ Ռէզին, այսօր նզովելի է :

« Ապտիւլ-Համիտ, ա՛ն՝ զոր կը սրբացնէին, որուն առջև բովանդակ օսմանեան աշխարհը կը զոզար, լքելով իր ամէնէն թանկագին իրաւունքները և իր ազատութիւնները, ա՛ն՝ որ ստորերկրեայ բանտերու մէջ ա՛յնչափ զոհեր խեղդել տուաւ, զսպուած է : Ծիշդ է որ ողջ է ան, թէև հազար անգամ արժանի ըլլար իր ոճիրները քաւելու : Եթէ պատիւի ամենաչնչին զգացումը ունենար, այդ տեսակ անկումի մը խայտառակութենէն հետքը, անձնասպան պէտք էր ըլլալ : Ան նախընտ-

րեց ստորնացումը, նախատինքը և պիտի շարունակէ ապրել: Սակայն այդ կեանքը հազար անգամ աւելի՛ դառն պէտք է ըլլայ՝ քան մահը: Հիմա իր իր ապրելը աւելի յագուրդ պիտի տայ մեր վրէժին, քան իր մահը»:

Ռէզին Միւրդի Իոնէմը կ'ունկնդրէր ծայրայեղ ուշադրութիւնով մը և անոր խօսքերը կը հաստատէր իր տանջահար գլուխը շարժելով: Բայց բարի և զգայուն Ռէզին՝ զրեթէ խղճաց անկեալ բռնաւորին:

Եւ իրապէս սրտայոյզ էր տեսնել մեծամիտ, բիրտ, ամենազօր ինքնակալ մը, որ երկար տարիներ ամբողջ ազգը իր գերիշխանութեանը տակ առած էր, յանկարծ դատապարտուած բովանդակ աշխարհին լուսանքներուն ենթարկուելու, իր ժողովուրդէն անիծուելու, նման անոնց՝ որոնք Մարգարէին յաջորդները նահատակեցին:

Արդևօք անցեալն էր ազ, որ երազ մըն էր, թէ ներկան: Երկու բարեկամուհիները երբեմն ա՛ս կը հարցնէին իրարու, ա՛յնչափ գերայուզուած էին նոր յեղափոխութեան յուսատու չողջողուն կերպարանափոխութիւններէն:

Միւրդի Իոնէմ և Նազիֆ պէյ, զոր Միւրդի Իոնէմ իր հարազատ եղբայրը կը նկատէր, և իր զաւակը, հիւանդին անկողինին շուրջը խմբուած, կացութեան վրայ կը խօսակցէին և տնդոտ կերպով կը կարդային օրուան թերթերը:

Ապեցուցիչ և իրապէս չնական դիմակափոխու-

թիւնով մը՝ մամուլը լեզուն փոխած էր: Միապետական ոէժիմին ատեն, տեղական թերթերը միայն Ապտիւլ-Համիտը կը պանծացնէին: Ազատութեան հռչակումին ատեն, Համիտ ասպարէզը «Միութիւն և Առաջըլիմութիւն»ին ձգած էր. յետոյ այդ խմբակցութեան տկարացած ատեն, այդ նոյն թերթերը բուռն կերպով կը յարձակէին անոր վրայ և անոր թշնամիներուն կողմը կ'անցնէին:

Վերջին յեղափոխութեան ատեն, այդ առաջըլիմական թերթերը, այդ ազատամիտ մամուլը՝ կղերամիտ կը դառնային և նորէ՛ն Ապտիւլ-Համիտի գովքը կ'ընէին. այսօր անոնք նորէն կուսակցութիւնը կը ինկարկէին:

Իրաւցնէ՛, ազգին խղճմտանքը այդ թերթերուն նմանը կը դառնար: Ապտիւլ-Համիտի հազարաւոր լրտեսները, նոր ոէժիմին հետ, մասով, առաջադէմ ազատականներ դարձած էին: Ետաջրջակա-նութեան հետ, անոնք վերսկսան խօսիլ Վեհանութիւն իրաւունքներուն, խորհրդարանականներուն արտառոցութիւններուն և սահմանադրական զրութեան անպատեհութիւններուն վրայ:

Այդ նոյն անակզրուք և աննկարագիր անձերը՝ հիմա Ապտիւլ-Համիտի մենագարութիւններուն, անհեթեթութիւններուն և բռնապետութեանը վրայ միայն կը խօսէին, ինչպէս նաեւ իր ա՛յնչափ երկար գաճակալութեանը ընթացքին երկիրին հասցուցած չարիքներուն վրայ...

«Ի՞նչ կրնաք սպասել այդ կարգի մարդոցմէն, կ'ըսէր Միւրդի Իռէմ. անոնք ո՛չ արժանապատուութիւն ունին, ո՛չ ալ անձը յարգել տուող արժանիքին ճանաչումը»:

Բժիշկն ալ, Մանասթըրի Միւլեթիւն և Առաջգիմութիւն գաղտնի Կուսակցութեան նախկին անդամ զինուորական բժիշկ մը, նոյնպէս կը գտնուէր հիւանդին սնարին քով:

Ան պատմեց թէ՛ Կուսակցութեան ակումբին մէջ Ապտիւլ-Համիտի վերջին գոհին՝ Ռէզինի վրայ միայն կը խօսուէր: Բովանդակ Երիտասարդ Թուրքիան կը շահագրգռուէր վիճակովը այդ հերոսուհին, որ Նիազիի մը չափ քաջասիրտ և Միթնատի մը չափ դադափարին նուիրուած էր:

Բժիշկին պաշտօն յանձնուած էր Ռէզինէն լուր առնել և ամբողջ Կուսակցութեան անունով մեծաբել զայն:

Ռէզին, հակառակ իր ցաւերուն, մոտցած էր իր հիւանդութիւնը և վէրքերը: Երկիրին կացուցութիւնը զինքը աւելի կը շահագրգռէր: Հետեւաբար, բժիշկին հետ խօսակցութեան բռնուեցաւ քաղաքական հարցերու, Կուսակցութեան նոր ծրագրերին, նոր Սուլթանին և անոր տառապանքներուն, անգուլթ եզրօրը կողմէ անոր բանտարկուելուն և շատ մը ուրիշ օրուան զէպքերու մասին:

Արդէն, այդ զիշեր, ամէն ընտանիքներու մէջ, այդ զէպքերուն վրայ միայն կը խօսակցէին:

Սյդ զիշեր, հակառակ իր ընդդիմութեանը և

աղաչանքներուն, նախկին վեհափառը Սելանիկ առաջնորդեցին. բարերադրաբար այդ մեկնումը գաղտնի պահուեցաւ, ապա թէ ո՛չ, Պալատէն մինչեւ Սիրքէճիի կայարանը, ճամբուն վրայ կը սպաննէին զայն: Ինք ալ կը վախնար այդ ժողովուրդէն, զոր ատենով չարչրկած էր և որ այսօր գերագրգռուած և խելացնորած էր:

Երկար տարիներէ իվեր, առաջին անգամն էր որ՝ նախկին Սուլթանը՝ Ապտիւլ-Համիտ, կ'անցնէր Կալաթի կամուրջէն: Սարսափած, յուզուած, ամէն վայրկեան մահուան կը սպասէր. ո՛րեւէ աղմուկ, որչափ ալ թեթեւ ըլլար, ստիպում կը պատճառէր իրեն:

Իբր պարզ մահկանացու մը, Համիտ կայարանին սպասման սրահէն անցաւ, առաջնորդուած ոստիկաններէ և զինուորներէ: Մաստկապէս ծայրաւ էր:

Կայարանին պիւֆէն ուզեց ջուր խմել. հապա եթէ «ժոկոն-թիւրֆ»երը ջուրը թունաւորած ըլլային, ըսաւ ինքնիրեն: Սակայն քանի մը վայրկեանի վարանումէ և խորհրդածութենէ ետքը, դաւաթ մը ջուր ուզեց: «Իմ աքսորումիս մասին բան մը չեն գիտեր, ըսաւ, և, հետեւաբար ջուրը թունաւորելու միջոցներ չեն կրնար ձեռք առած ըլլալ»: Ջուրը խմելէ ետքը, որսորդ զինուորին 35 դահլիսն պարգեւ տուաւ:

Երեսուն տարիէ իվեր, Համիտ այդ տեսակ վիճակի մը մէջ գտնուած էր երբեք: «Զիս ինչ պիտի

ընեն ազատութեան քաղաքին մէջ՝ Սելանիկ, կ'ըսէր ինքնիրեն անընդհատ: Պիտի կախեն զիս, թէ հրացանի պիտի բռնուիմ:

«Մահէս առաջ դատաստանի և տանջանքի՞ պիտի ենթարկուիմ, թէ պիտի բաւականանան զիս անաղմուկ խեղդելով, ինչպէս ատենով ես շատ անգամներ ըրած եմ ուրիշներուն»: Ճամբան, չլրացաւ իրեն տրուած կերակուրները ուտել:

Քաղաքին մէջ աննկարագրելի և յորդազեղ ուրախութիւն կը տիրէր: Երկիրը յաւիտենապէս ազատուած կը նկատէր ինքզինքը. հալածանքէ, վատթարացումէ և ստորնացումէ:

Չափազանց ծանր, չափազանց վրդովիչ բևռ մըն էր որ կ'անհետանար Սթանպուլի մութ թաղերուն ամէնէն պզտիկ սրճարաններուն մէջ իսկ, քաղաքական հորիզոնէն յաւիտենապէս անհետացող բունակալին վրայ մանրավէպեր կը պատմէին մարդիկ: Այդ մանրավէպերուն մէջ շատ տարօրինակներ, շատ հետաքրքրաշարժներ կային, և անոնք պատմողներուն համաձայն կը փոխուէին: Սելանիկի ողորմելի ճամբորդը, ժողովուրդին կարծիքով՝ Ռուսերուն ծախուած մըն էր. պառաւնեններուն համար՝ դեւերու ծնունդ մը. մտաւորականներուն համար՝ վտանգաւոր հիւանդ մը. և իր կիներէն միայն ուսանց և իր ամէնէն թանձրամիտ պալատականներուն համար՝ անմեղ մը, սիրելիէակ մը:

Յաջորդ օրը, քաղաքը զրօշազարդուած և

լուսազարդուած էր, նոր վեհապետին՝ Մէհմէտ Երէպատիւին: Իր միւս եղբօրը պէս Համիտի կողմէ հալածուած դժբաղդ Մուրատ Երէ երբեք բռնաւոր մը չպիտի ըլլար, որովհետեւ ինքն իսկ երկար տարիներ բռնակալուած էր: Կ'ըսուէր թէ՛ ան անուշ, քաղցրաբարոյ, համակրելի և ամէն մարդու մտուցելի նկարագրի մը ունէր: Պիտի արարողութեան օրը, նահապետական վեհապետի մը երեւոյթը ունէր ան, նման Խիլիփալի-Ռաշիֆիներուն, այն առաջին չորս փառապանծ Խալիֆաներուն, ամենաչարգ Մարգարէին հոչակաւոր փոխանորդներուն, որոնք համբաւուած են իրենց բարութեան և պարզասիրութեան ձիրքերով:

Բէշատ էֆէնտի արգարապէս կը նկատուէր Համիտի հակապատկերը, որ ո՛րեք մարդու ամենապզտիկ չարիք մը հասցնելու անկարող էր: Կ'ըսուէր թէ՛ ան ձիւղ իր հանգուցեալ անդրանիկ եղբօրը նկարագրիւր ունէր: Արդէն, ձիւղ իր եղբօրը պէս, համիտեան չարաշուք չըջանին, պզտիկ պալատի մը մէջ բանտարկուած մնացացած էր, առա՛նց որեք հաղորդակցութիւն ունենայու արտաքին աշխարհին հետ: Ան՝ որ բացառապէս համարձակէր իշխան Բէշատի մօտենալ, իր ընտանիքովը կ'աքտորուէր կայսրութեան ամէնէն հեռաւոր ծայրերը, եթէ սակայն յաջողէր խուսափիլ խեղդամահութենէ:

Մէհմէտ Երէ, ի՛նք ալ, մաշտիրոս մըն էր, Համիտի սոսկալի և բարբարոս ուժիմին ամէնէն աւելի տառապողներէն մէկը:

Այս վերջին շարաթները ինչևր չէր քաշած ան :
 Վերջին խոսովութեան ատեն , Համիտ կրնար զայն
 սպաննել տալ այն զօրքերուն միջոցով , որոնք
 իրենց անդրդուելի հաւատարմութիւնը կ'արտայայ-
 տէին :

Բայց բարեբաղդարար այդ գաղափարը միտքը
 չինկաւ , երբ եօթը անդամ փորձուեցաւ վատա-
 բար սպաննել եղբայրը , աշխարհի ամէնէն անմեղ
 արարածը : Սորբրդարանի բացումի հանդէսին նա-
 խորդ օրն էր որ , Համիտ , իր գերագոյն վայրագու-
 թիւնով , վերջին անգամը ըլլալով փորձեց մահաց-
 նել Ռէչատ էֆէնտին , անոր պալատին պատերէն
 վեր հանել տալով իր կուսակիցները :

Այսպէս , բոլորուած խեղճ Ռէզինի անկողինին
 չուրջը , Միւրդի Իոէմ , Նազիֆ և Շիմշէք կը խօ-
 սակցէին իրենց հայրենիքը քանդող զէպքերուն
 վրայ :

I.

Այս անգամ ազատութիւնը յաղթութիւնով
 ձեռք բերուած էր , և ո՛չ թէ առջի անգամուան
 պէս , շնորհուած կեղծաւոր և վարձագ ինքնակալի
 մը կողմէ : Հետեւաբար , ան ճշմարիտ , կատարեալ
 և բովանդակ ազատութիւնն էր : Պաշարման բա-
 նակին գործունէութիւնը և անձնուրացութիւնը
 արդարապէս սքանչացուցած էր բովանդակ
 աշխարհը և ամէն կողմ՝ բարձրացուցած Օսմանցի
 Ազգին ասպետական վարկը :

Վատ ու ամօթապարտ բռնաւորը բանտար-
 կուած էր Սելանիկ՝ Ալլաթինի Դղեակին մէջ : Ա՛լ
 ուրիշ բան չէր ան , բայց եթէ կենդանի մեռեալ
 մը . իր բնակարանը գերեզման մըն էր , և ոչինչ
 աւելի : Ամէն կողմէ գիշեր-ցորեկ պաշարուած ,
 Ապտիւլ-Համիտ զատապարտուած էր կատարե-
 լապէս քաշուած , վճռապէս անշարժ կեանքի մը :

Միւրդի Իոէմ , միշտ գեղանի , հիմա աւելի
 փորձառու դարձած , գաղափարը ունեցաւ օր մը
 Սելանիկ երթալու և իր նախկին վեհապետին և
 նախկին ամուսինին պալատը մտնել փորձելու ,
 տեղեկանալու համար թէ ի՞նչ կ'ընէր ան , հետո՛ւ
 իր լրտեսներէն , հետու ձուռնախներէն և զանազան

տեսակ հաշարաւոր լրատուութիւններէն, որոնք ա՛յնչափ երկար տարիներու ընթացքին զբաղեցուցած էին իր կեանքը, թէ ի՛նչպէս կը հպատակէր իր լքուելուն, այդ թագաւորը, որ վարժուած էր հրամայելու և իր քմահաճոյքին համաձայն ու առա՛նց ամենաչնչին վերահսկողութեան՝ վարելու երկրագունդին ամէնէն գեղեցիկ թագաւորութիւններէն մէկը :

(Միւլթիւն և Սոաջղիմութիւն) Կուսակցութեան կեղծո՛ր բոլորովին բացառիկ կերպով Միւշդի Իոնէ՛մը յանձնարարած էր Դղեակը հսկելու պաշտօն ունեցող զինուորական իշխանութեան :

Իր Սելանիկ հասնելուն յաջորդ օրը . Չէրքէգունէին Ապտիւլ-Համիտի ընակալայրը կը մտէր : Շատ վրդովուած էր : Նախկին Սուլթանը ի՛նչպէս պիտի ընդունէր զինքը, կամ իր վաղեմի հարձին պիտի մերժէր որեւէ տեսակցութիւն :

Արդէն, ա՛յնչափ երկար տարիներէ իվեր արձակուած, յետոյ ներումի արժանացած, բայց միշտ իրեն թճնամի մտացող այդ կինը ինչո՞ւ ոտք պիտի գնէր իր խորհրդաւոր սարային մէջ . ի՛նչպէս պիտի յաջողէր հոն մտնել :

Նախկին վեհափառը իր նոր բնակավայրին մէջ ինքնասիւյ կեանք էր կը վարէր . Երբեմն շատ գո՛հ կըլլար իր բանտարկուելուն համար և ուրախութեանէնէն կը թռէր, ինքզինքը արգելափակուած գտնելով . «Ա՛հ, կըսէր ինքնիրեն, այսպէսով որչափ մտահոգութիւններէ զերծ եմ : Ի՛նչ

պիտի ընէի ես, եթէ զիս արտաքսէին . նոր յարձակումներու նշաւակ չի՛ պիտի ըլլայի : Հապա՛ եթէ դժո՛հ մը, անիշխանական մը, ապուշ վրէժ մը յագեցնել ուզէր) . . .

Ուրիշ անգամներ, իր բանտարկեալի կեանքը չափազանց զժնդակ կը գտնէր : Կը խորհէր որ եղբայրը կամ Կուսակցութիւնը յանկարծ կընային որոշել զինքը մահացնելու :

«Ո՛վ պիտի պաշտպանէ զիս այս պզտիկ պալատին մէջ, կըսէր ինքնիրեն : Ինքզինքս պաշտպանելու համար՝ առաջուան պէս հիմա ալ ունիմ պահապաներս, անթիւ թիկնապահներս, զինուորական պահակներս, անհամար ծառաներս, վերջապէս կաշերտական անձնապահ գունդս, իր հրացաններով և իր թնդանօթներով . որոնք հաստատուած էին ընտկած տաղաւարիս միջնայարիին մէջ) :

Համիտ, միշտ անձնատուր իր հսկելու մենամուրութեան, խիստ ճարտար կերպով մը լրտեսութիւն կազմակերպած էր Սլլաթիւնի Դղեակին մէջ :

Իր ժամանակը կանցընէր կա՛մ իր ատաղձագործական աշխատանոցին մէջ աշխատելով, կա՛մ իր հեռեւորդները հարգաքննելով՝ իր գերուհիներէն մէկուն կամ միւսին մասին :

Համիտ զգալապէս ծերացած էր . իր առողջութիւնը քայքայուած էր . ա՛լ աւելի ջղայնոտ ու տպաւորուող դարձած, մեծ գծուարութիւնով կը տանէր իր բանտարկութիւնը, և, յատկանշական գիծ մը իր բնաւորութեանը մէջ, չէր կրնար, սա-

կայն մտակերտել հիմա ուրիշ կեանք մը: Շատ կը սիրէր ատաղձագործութիւնը: Որովհետեւ մտաւորական մը չէր ինք, այդպէս փայտի վրայ աշխատելով, կը ջանար իր վիշտերը մոռնալ: Ձեռքը գայլիկոն մը, յանկարծ կը ծակէր դուռը այն սենեակին՝ ուր խմբուած կը գտնուէին իր կիները, գիտնալու համար թէ՛ իր բացակայութեանը ի՞նչ կ'ընէին:

Ո՛րևէ օտարական մուտք չունէր այդ չքեղ բնակարանին մէջ. մարդիկ անկէ հեռու կը փախչէին, իբր թէ դղեակը գեւերէ յաճախուած կամ ժանտախտաւորներու, բորոտներու կամ կատաղի խենթերու ապաստանարանի մը փոխակերպուած ըլլար:

Ապտիւլ-Համիտի քով մնացած քանի մը կիները չափազանց զարմացան, տեսնելով իրենց մէջ ժամանուժը Միւրդի Իոէմի:

Նորեկը Հարէմին կողմէ մեծ պատիւներով ընդունուեցաւ: Այդ կիները որչափ միամիտ էին, և իրենց պարզութիւնը, ինչպէս նաեւ տգիտութիւնը որչափ անհուն էր: Ապտիւլ Համիտ, այդ սոսկալի էակը, կամք չունեցող, նկարագիր չունեցող, սկզբունք չունեցող այդ արարածներէն մեծ մասին համար անակող մը, չհասկցուած մը, հալածուած զժբազդ մըն էր: Անոնք կը յայտարարէին թէ՛ Մէհմէտ եւ՛, այդ գահի կեղեքելը, քիչ ատենէն գահընկէց պիտի ըլլար և թէ՛ Նորին Վեհափառութիւնը յաղթականօրէն Պոլիս

պիտի դառնար: Այդ օրը, Ժէօն-Թիւրք «գիտըր»-ները մայրաքաղաքին հրապարակներուն վրայ պիտի կախուէին, Խորհրդարանը պիտի հրկիզուէր, ծերակուտականները և երեսփոխանները պիտի աքսորուէին, մամուլին բերանը պիտի կղզուէր, ազատութիւնները ևտ պիտի անուուէին և նախկին վաստակաւորները, Իզգէթները, Թահսիները, Մէմուհները, և այլն, պիտի հրաւիրուէին վերստանձնելու իրենց հին պաշտօնները, և հետեւաբար պիտի վերահաստատուէին իրենց զիրքին մէջ, ինչպէս սրատահած էր Ֆուատներուն, Իզմիրլեաններուն, և այլն, ազատութեան հռչակումին ատեն: Այդ կիները կ'ուզէին իրենց տէրը տեսնել իր ճուղակներուն, իր պալատականներուն, իր լրտեսներուն, իր սենեկապետներուն և թիկնապահներուն մէջ:

Անոնք ամէնքը Միւրդի Իոէմի ընդատաջ վազեցին և անոր խօսեցյան թէ՛ իրենց տառապանքներուն և թէ՛, մանաւանդ, իրենց վեհափառ և գերբարգեկի տիրոջ վրայ:

Այդ զղեակը ուրիշ ո՛չ մէկ զղեակի կը նմանէր, որովհետեւ անոր բնակիչները զուրսի աշխարհէն անջատուած, հետզհետէ իրենց մոլորանքներուն և նախապաշարումներուն խորը կը մխրձուէին: Այլաթիւնի Դղեակը, հակառակ իր պերճանքին և զարդարանքին, շատ կը նմանէր ամալի և վայրի ծովափի մը վրայ, ուրկէնտոսին մէջտեղը կորսուած

այն փարոսներուն, որոնց խեղճ պահապանները վերջապէս կը խնայեցնան:

Գերուհիները հարցունքներով կ'ողողէին Միւրդի Իռէմը և զայն կը հրաւիրէին իրենց հետ յայլու իրենց տիրոջ տառապանքին վրայ: Բայց ամէնքն ալ հաւատարիմ չէին նախկին Սուլթանին:

Անոնց մէջ գեղոհներու կուսակցութիւն մը կար, որ կը բաղձար անոր մահը, որպէսզի ազատութիւննին վերագտնէին:

Նորին վեհափառութիւնը, տեղեկանայով Միւրդի Իռէմի անսպասելի այցելութեանը, սարսուաց և մտայնորքներու մատնուեցաւ: Յիշեց այն անուշ գիշերները՝ զոր ատենով անցուցած էր այդ պաշտելի էսկին հետ. յետոյ յիշեց անոր շորհադրկութիւնը, էմիր Յիթէշի հետ ամուսնութիւնը, այդ քաջը սպաննել տալու իր կերպը, վերջապէս կողկասի այդ հմայիչ աղջկան արկածներով և տառապանքներով լեցուն բովանդակ կեանքը:

Համիտ կը վարանէր ընդունիլ Միւրդի Իռէմը: Կը դողդաղար, կը զղջար. Չպատասխանեց իր այն գերուհիներուն, որոնք Միւրդի Իռէմի համար տեսակցութիւն մը կը խնդրէին. զանոնք ամէնքն ալ վրնտեց:

Վարանումի երկար ժամերէ հտըը, իր չափազանց խիստ գաղտնապահութիւնովը ծանօթ գերուհիի մը հրամայեց իրենին քով գտնուող սեն-

եակի մը մէջ անկողին մը պատրաստել իր վաղեմի կնոջ համար:

Շատ մեծ շուարումի մէջ էր. սակայն այդ օրը՝ Ալլաթինի Դղևակին մէջ բանտարկութենէն խլեր իր էն խոտվայոյղ օրերէն մէկը եղաւ: Այդ օրը նոյն իսկ չճաշեց:

Միւրդի Իռէմ՝ Ապտիւլ-Համիտէն ընդունուելէ յոյսը կտրած, անկողին մտած էր և կը մտածէր այդ տխրահոշակ վեհապետին վիճակին վրայ: Յանկարծ դուռը բացուեցաւ. մանկամարդ գերուհի մը կը խնդրէր Միւրդի Իռէմէն, տիրոջը հրամանին համաձայն, երթալ այն սրահը՝ ուր սովորաբար Ապտիւլ-Համիտ իր անքնութեան երկար գիշերները կ'անցընէր իրեն հետ:

Համիտ, խոժոռաղէմ, քիչ մը աւելի մաշուած և խորապէս մեկամողձոտ, այդ կիսախաւար ընդարձակ սրահին մէջտեղը, սեղանի մը քովը, ոտքի վրայ էր:

Միւրդի Իռէմ զայն չբարեւեց անգամ, մինչդեռ նախկին Սուլթանը անհամար մեծարանքներ կը չոսայէր:

Իր նախկին կնոջ առած ձեւին վրայ, Համիտ նշան մը ընկելով ճամբեց իր սիրականուհին՝ որ դուռին քով ոտքի վրայ կեցած էր: Որով մինակ մնացին այդ հրաշալի սրահին մէջ, որ արդիւնքն էր Ալլաթիններու ճաշակին:

— Ապտիւլ-Համիտ, Ապտիւլ-Համիտ, ըսաւ Միւրդի

Իոնէմ դաժան շեշտով մը, դուն է՛ն դժբաղդ արարածն
 ես՝ որ գոյութիւն ունեցած ըլլայ, եթէ սակայն
 կրնաս ըմբռնել դժբաղդութիւնը և խայտառակու-
 թիւնդ: Ես քեզ շատո՛նց կը ճանչնամ, ա՛յն ասե-
 նէն երբ զեռ մտոցուած իշխանիկ մըն էիր՝ Բէյթ-
 Հանէի քէօչկո քաշուած: Ծնորճիւ ծագումիդ և
 խելքիդ, դուն կրնայիր իր ժողովուրդէն պաշտուող
 Սուլթան մը, աշխարհի մեծագոյն Կայսրութիւն-
 ներէն մէկուն հզօր տէրը ըլլալ: Երբ քու դժբաղդ
 եղբայրդ Մուրաս երբ քեզի ձգեց այս Պատու-
 թիւնը, անոր սահմանները կ'երկայէին Դանուբի
 բերանէն մինչև Սալ: դուն քու սխալովդ կորսն-
 ցուցիր ամբողջ Պուլկարիան և Արեւելեան Բու-
 մէլին, Տօպրուճան, արդի Աերպիտի մէկ մասը,
 աւա՛ղ, Պօսնա և Հէրսէք այն երկու գեղեցիկ
 նահանգները, Մծնթէնէկրօի Հրոսապետին ձգուած
 նահանգները, ա՛յնչափ գեղանի և ա՛յնչափ արդիւ-
 նարեր Թեասլիան. դուն կորսնցուցիր Մօրտո-
 վալաքիան, Աերպիտ և Մծնթէնէկրօ միացած
 իշխանապետութիւններուն վրայ ունեցած մեր
 գերիշխանութիւնը: Բու յաւիտեան անիծեալ
 գահակալութեանդ օրով էր որ մենք հսկայ Մօս-
 կոֆներուն թողուցինք Պաթուճը, Կարսը, Արտա-
 հանը, նահանգ մըն ալ՝ Ռօթուրը՝ տուինք Պար-
 սիկներուն և Կիպրոս կղզին և Եմէնի ինը նահանգ-
 ներ ալ Անգլիաի: Կրետէն քու երեսէգ ամենա-
 ցաւափ և ամենաճգնաժամային վիճակի մը մէջ կը

գտնուի: Եղիպտոսը Անգլիացիներէ զրաւուած է և
 Անգլիացիներէ կը կառավարուի: Եւ Թունո՛ղը:
 Մենք քու սխալներուդ համար Ռուսիաի իրր
 տուգանք վճարեցինք և զեռ պիտի վճարենք
 միլիոննէ՛ր: Մեր կլեմուտքը քաջքայուած է:

«Հապա մեր բարոյական վնասները: Անոնք
 չա՛տ աւելի մեծ են:

«Դուն քաջքայեցի՛ր հանրային կրթութիւնը,
 սպաննեցի՛ր մեր երիտասարդութիւնը, քո՛ւ ձեռ-
 քովդ հալածեցի՛ր մեր մտաւորականները և մեր
 հայրենասէրները:

«Մոռցար խեղճ Միթհատը, զոր սպաննեցիր և
 այն հազարաւոր Թուրքերը և Հայերը, որոնք քու
 զոհերդ եղան. Բու վրայէդ կը բուրէ՛ ծխացող
 արիւնի հոտը այդ նահատակներուն՝ որոնք քու
 մահուանդ կը սպասեն անդիլի աշխարհի մէջ...»

Ապտիւլ-Համիտ ինքզինքը ցնորքի մը առարկայ
 կարծեց: Թերեւս ազ Միթհատի ուրուականն էր,
 որ գիշեր-ցորեկ զինքը կը հալածէր, որ վերջապէս
 իրեն կ'երևար իրականօրէն: Համիտ սարսուաց,
 բայց Միւրդի Իոնէմ շընգհատեց իր խրոխտ ճառը:

—Ո՛վ Ապտիւլ-Համիտ, դուն ընաջնջեցի՛ր մեր
 կամքը և աշխարհի ամէնէն ասպետական ժողո-
 վուրդը՝ ստորնութեան և զաւանտարութեան խայ-
 տառակութեանը ենթարկեցիր: Թերեւս քո՛ւ յան-
 ցանքովդ մեր վերազարթնումը խափանուած է և
 մեր ապագան պղտոր... Ի՛նչ կը մնայ այս ազգին՝

իր անցեալ առաքինութիւններէն : Չե՛մ խօսիր քու մասնաւոր չարագործութիւններուդ վրայ, ո՛չ : Եւս վրէժխնդիր չեմ և կատարելապէս և յաւիտեան կը մոռնամ քու երեսէդ քաշած տառապանքներս : Բեզմէ՛ բան մը չեմ պահանջեր : Բայց բովանդակ ազգը, յաջորդ սերունդը կրնան ներել գարչելի մը որ Հայրենիքին մէկ երրորդ մասը կորսնցնել տուած է :

«Այդ Հայրենիքը, այդ օսմանեան սուրբ Հայրենիքը որ գրաւուած է մեր նախահայրերուն սուրբրօլը և ա՛յնչափ ճիգերու, ա՛յնչափ անձնուրացութիւններու և անձնագոնութիւններու զինով, այսօր մասով եղած է պուկարական, յունական, ռուսական և արեգլիական : Եթէ քու նախահայրերուդ, Սէլիմ Ա.ի, Մէհմէտ Բ.ու աշխարհակալի, կամ Սիւլէյման Շ.րեզի ուրուականները քեզի երեւնային և քեզմէ պահանջէին արիւնտտած Հայրենիքին այդ գեղեցիկ նահանգները, ինչ պիտի ընէիր, ո՞վ Ապտիւլ-Մէճիտի զաւակը Ապտիւլ-Համիտ : Եւ եթէ քու Վեհապառ Հայոց քեզմէ պահանջէր անդրանկի եզրայրդ, այն սղբացեալ Սուլթան Մուրատ Ե.ու, զոր արգելանցի մը մէջ բանտարկած էիր, ինչ պիտի ընէիր այդ զայրացած և սպաննացող հօր . . .

«Եղիկի՛ այս աշխարհի վրայ, դուն եղիկի՛ պիտի ըլլաս նաև միւս աշխարհին մէջ :

«Աստուծո՛յ Շուք», Յաւիտենականին առջև վերջին դատաստանին օրը ինչպէս հաշիւ պիտի տաս ոճիրներուդ համար :

«Մանկտական աշխարհը քեզ կը մեծարէր իր իր Սալիֆան, իրր իր Պետը : Դուն ունայնաբար զաւաճանցիր անոր :

«Բու երեսէ՛դ է որ այսօր ամէն տեղ Մանկտականները կը ճնշուին և կը հայածուին :

«Եւ դուն ինչէ՛ր չէիր կրնար ընել այն միջոցներով, զորս ճակատագիրը քու տրամադրութեանդ տակ կը դնէր, գահակալութեանդ տակն : Ողորմելի՛, ինչ չաճեցար ա՛յնչափ չարագործութիւններէն, ա՛յնչափ մարդասպանութեաններէն, ա՛յնչափ անստանձ և վատօրէն տխմար բռնակալութեանէն» :

Կիսախաւար սրահին մէջտեղը, զայրոյթի սքանչելի թոխչքով մը, այսպէ՛ս կը խօսէր Միւրդի Իոէմ, առանց նշմարելու թէ՛ տակալի բռնաւորը զինքը կը լսէր թէ ո՛չ :

Ապտիւլ-Համիտ, ուրուականի մը պէս մահագոյն, ինքզինքը յաւիտենապէս կորսուած կը զգար, կորսուած բովանդակ յաւիտենականութեան մէջ, մշտնջենական և անողոր տանջանքի մը դատապարտուած . . .

Համիտ կրեցաւ, յետոյ զգալազիտի ինկաւ . . .

Միւրդի Իոէմ, պարապ տեղը ճառախօսելէն խոնջած, նշմարեց որ իր վաղեմի վեհապետը և ամուսինը գետնին վրայ կը հեծկտար, ճգնաժամային տաղնապնդերու մէջ կը գալարուէր գրեթէ :

Միւրդի Իոէմ այն ատեն անոր օգնութեան փութաց, զինքը բոլոր էութիւնովը ցնցող թէ՛

կարեկցութեան և թէ՛ սոսկումի տագնապով մը
ըսելով ինքնիրեն .

— Ինչո՞՞ մարդ . ի՛րապէս պատասխանանա՞տ
է ան : Չէ՞ որ աւելի հիւանդ մըն է . անհաւասա-
րակչիւ մը : Լ՞նչ զատտիարակութիւն է ան՝ որ իր
միտքը և սիրտը սայթաքեցուց : Իր շուրջի խոր-
չիւ ժարդիկն ալ՝ իրենց ոճրապարտ հաճոյակատա-
րութիւնովը նո՛յնչափ պատասխանատու չե՞ն ապա-
զայ սերունդին առջեւ՝ Կարմիր Սուլթանին ոճիր-
ներուն համար :

ժամանակակից Օսմանեան Փատմութեան էջերը իր
գեշտտիչ մագիլներովը արիւնտառը Լոյսի թշնամի ոճրագործ
Բունուորի մը, տիեզերականապէս աննախընթաց և անհեռուորդ
եօթնագլուխ Հրէշի մը, մարդկային սերնդագործութեան մէջ
եզականօրէն տիպար մարդակերպ Յուցանքի մը, ակտուոր
այլստերութեան խեղադարձն արիւնարբու Բորենիի մը,
Օսմանեան Փատիշահներու Գահը դարձուորապէս անմուշ
վայրենութիւններով պղծող արիւնհղակ իենթի մը, դիւսխնօրէն
եղեւնագործ և գազանաբար աշխարհահամբաւ Սպանդարա-
նապետի մը բարբարոսաբար կարմիր կեանքը նկարակերտող
վիպական և պատմական մտանաւոր արժէքով այս վէպը
Ֆրանսերէն ընագիրէն հայտնելով Կարմիր Սուլթանին
Մոզքի լուծէն նահատակուած Հայ Հասարակութեան ծա-
նօթացնել գրական ծառայութիւն մըն էր մտածեց

Թ.Ա.Գ.ՄԱՆՆԻՉԸ

Ե Ն Ո Վ Ք Ա Ր Մ Է Ն



« Ազգային գրադարան



NL0382972

73.593

ԳԻՆ 10 ՂՐ.

ՀՐԱՏԱՐԱԿԻՋ

ՆԱԶԱՐԷԹ ԱՅՃԵԱՆ

ԿԵՂՐՈՆԱՏԵՂ «ՄՂԶԱԻԱՆՁ?»